

338.9

→ -24

LIBRARY

ИЗДАТЕЛЬСТВО  
МАСТЕРЪ  
Е. В. Теръ-Архангелъ  
Павловскъ 1917

Линия Рунг

101 - 101

№ 9441

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ

---

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

---

(3, 4, 5 ապրիլ 1909)

---

Բ Ի Տ Լ Ի Ս  
ԷԼԵՏՐԱԳՐԱԳՐ ՅՄԱՐՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆՅԱՆԻ, ՊՈԼԻՏ.  
1909

3 .06. 2013

31800

338.9  
224



ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ

300

1666-ԳԱ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

1003  
12495



(3, 4, 5 ատրիկ 1909)

Թ Ի Յ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐԱԿՐԱԳՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7  
1909

17 FEB 2010

## ՆԱԽԱՊԵՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութիւնը, ստանալով Համագումար կազմելու թոյլութիւն, հրատարակեց մի հրաւէր, որի մէջ առաջ էին բերուած Համագումարի ծրագիրը և այդ ծրագրին վերաբերեալ յատկապէս կազմուած բացատրական հաղորդագրութիւնը:

Այդ հրաւէրը ուղարկուեց տնայնագործութեամբ հետաքրքրուող հիմնարկութիւններին և անձնաւորութիւններին:

Ահա այդ հրաւէրը:

Ներկայ 1909 թուի ապրիլի 3-ին, 4-ին և 5-ին Թիֆլիսում տեղի կունենայ տնայնագործական մի Համագումար ժողով, որը քննութեան պէտք է առնի տնայնագործութեան ընթացիկ հերթական խնդիրները:

Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութիւնը, որի նախաձեռնութեամբ հրաւիրուած է Համագումար ժողովը, դիմում է բոլոր անձերին, որոնք հետաքրքրուած են տնայնագործական արհեստի զարգացման գործով, մասնակցել Համագումարի ծրագրի մէջ նշանակուած հարցերի պարզաբանութեան և լիակատար քննութեան:

Համագումարի ծրագրի կէտերը հետեւալներն են:

1) Գոյութիւն ու  
նեցող տնայնագործա- 1) Обзоръ и характеристика дѣятельно-

կան արհեստանոցների  
գործունէութեան  
պատկերը և բնորոշ  
գծերը:

2) Հերթական նշանակութիւն ունեցող  
կարիքները:

3) Տնայնագործական արդիւնքների վաճառքի կազմակերպութիւնը թէ կովկասում և թէ կովկասից դուրս:

4) Գործուածքների նմուշներ և զանազան նկարներ մատակարարելու և տարածելու խնդիրը:

5) Գործիքներ, մանուածք և այլ մթերք մատակարարելու խնդիրը:

6) Վարպետներ պատրաստելու և ինստրուկտոր ունենալու խնդիրները:

7) Մասնաւոր նախաձեռնութիւն և ձեռնարկութիւններ հանդէս բերելու կարևորութիւնը:

8) Պարբերական համաժողովներ հրաւիրելու

сти кустарных мастерских.

2) Очередные нужды кустарного промысла.

3) Организация сбыта предметов кустарного производства на Кавказѣ и внѣ Кавказа.

4) Вопросъ о снабженіи и распространеніи образцовъ и рисунковъ издѣлій.

5) Вопросъ о снабженіи кустарей станками, пряжей и другими матеріалами.

6) Вопросъ о подготовкѣ мастеровъ и содержаніи инструкторовъ.

7) Важность вопроса о вызовѣ частной инициативы и предприимчивости.

8) Значеніе периодическихъ съѣздовъ и

րելու կարևորութիւնը  
և նրանց կազմակերպութիւնը:

Համագումարի նիստերը տեղի կունենան կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում թէ ցերեկները և թէ երեկոյեան ժամերին:

Առաջին նիստը նշանակուած է ապրիլի 3-ին, ուրբաթ օր, առաւօտեան 11 ժամին:

Համագումարին կարող են մասնակցել բոլոր այն անձերը, որոնք հետաքրքրուած են տնայնագործութեան զարգացման խնդիրներով:

Զեկուցումներ կարգալ ցանկացողները պէտք է ներկայացնեն իրանց ղեկուցումները կամ նրանց համառոտութիւնը մինչև ապրիլի 2-ը Հայ Տնայնագործական Ընկերութեան վարչութեան նախագահ Ալէք. Քալանթարին:



# ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

(Բացատրական հաղորդագրութիւն)

Տնայնագործական համագումարի ծրագիրը բաղկացած է ութ կէտերից, որոնցից իւրաքանչիւրը պարունակում է իր մէջ բազմաթիւ հարցեր, վերաբերեալ տնայնագործական արհեստների զարգացման, արդիւնքների վաճառահանութեան և արդիւնազործութեան կազմակերպութեան:

Անհրաժեշտ է, որ համագումարին մասնակցողները կարող լինէին շօշափել տնայնագործութեան վերաբերեալ կարևոր խընդիրները և իրանց քննութիւններով ու խորհրդածութիւններով նպաստէին պարզաբանելու տնայնագործութեան արդի վիճակը և մշակելու միջոցներ նրա կատարելագործութեան և զարգացման համար:

Ուստի ցանկալի է, որ համագումարի համար պատրաստուողները նախօրօք վերլուծէին ծրագրի իւրաքանչիւր յօդուածը, քննութեան ենթարկէին այն խնդիրները, որոնք աւելի մօտ են իրանց Հանգամանքներին ու նկատումներին և, կազմած լինելով որոշ հայեացքներ նրանց մասին, կարողանային Համագումարում առաջ մղել իրանց հայեացքները և կարծիքները:

Եւ որպէսզի դիւրացուած լինի ծրագրի կէտերի քննութիւնը, մենք նշանակում ենք

իւրաքանչիւր յօդուածի տակ մի քանի հարցեր, որոնց թիւը անշուշտ կարելի էր աւելացնել և նոր հարցերով:

Առաջին յօդուածը հետևեալն է.

1) Գոյութիւն ունեցող տնայնագործական արհեստանոցների գործունէութեան պատկերը և ընտրող գծերը.

Իբրև պարզաբանութեան հարցեր կարող ենք նշանակել հետևեալ հարցերը՝

Ի՞նչ արհեստանոց է և ի՞նչ արդիւնքներ է պատրաստում: Ե՞րբ է սկսուել արհեստանոցի գործունէութիւնը: Ի՞նչ տեսակ և քանի՞ գործիքներ ունի նա: Որքան են աշակերտները: Ի՞նչ են պատրաստել մինչև այժմ: Ո՞ւմ են ծախում պատրաստած իրերը և գործուածքները: Որքան շահաւէտ է այս ու այն առարկայի պատրաստելը: Ի՞նչ բարեփոխութիւններ են մտցուած արհեստանոցի մէջ նրա գործունէութեան ընթացքում:

Գործադրելով նոյն եղանակը միւս յօդուածների վերաբերութեամբ՝ մենք ներկայացնում ենք հետևեալը.

2) Հերթական նշանակութիւն ունեցող կարիքները.

Ի՞նչ արհեստանոցներ բանալ երկրի այս ու այն կէտում: Ո՞ր արհեստներն են լաւ վարձատրում աշխատանքը: Որքան ծախք են պահանջում արհեստանոցները: Ի՞նչ մի-

Ջրոցներով ապահովել նոր բացուող արհեստանոցները և պահպանել նրանց մինչև հաստատ հողի վրայ կանգնելը: Ո՞րտեղից հրաւիրել այս ու այն արհեստի համար հմուտ վարպետներ: Ի՞նչ տեղական մարմինների միջոցով կազմակերպել արհեստանոցների գործերի ղեկավարութիւնը:

3) Տնայնագործական արդիւնքների վաճառքի կազմակերպութիւնը Թէ Կովկասում և Թէ Կովկասից դուրս.

Ի՞նչ հիմնարկութիւն կարող էր յանձն առնել պատուէրներ վերցնել տնայնագործների համար: Ի՞նչ դեր կարող են խաղալ տնայնագործական իրերի պահեստները: Ովքեր պէտք է լինեն պահեստի ղեկավարները և պատասխանատու անձերը: Տնայնագործական մուզէյների կազմակերպութիւնը առևտրական նպատակների համար: Ինչպէ՞ս հիմնել մի բիւրօ, որ զբաղուէր տնայնագործական իրերի վաճառահանութեամբ: Որքան նպատակայարմար է պարբերական վաճառահանդէս կազմակերպելը: Յուցահանդէսներ կազմելու կարևորութիւնը:

4) Գործուածքների նմուշներ և զանազան նկարներ մատակարարելու և տարածելու խնդիրը.

Կան արդեօք նմուշների աղիւսակներ և ալբոմներ: Որտեղից կարելի է նմուշներ

ձեռք բերել գործուածքներ սկսելու համար: Ո՞ր հիմնարկութիւնը նախաձեռնութիւն կը վերցնէ իր վրայ նմուշներ հայթայթելու կանոնաւոր կերպով: Ովքեր կարող են կազմել կովկասեան և մասնաւոր հայկական ոճերի հաւաքածուներ և մշակել նմուշներ բնորոշ գործուածքների համար:

5) Գործիքներ, մանուածք և այլ մթերք մատակարարելու խնդիրը.

Որտեղ կարելի է պատուիրել լաւ տեսակի ամուր գործիքներ: Ի՞նչ արժեն նըրանք: Ո՞րտեղից կարելի է ձեռք բերել էժանագին մանուածք զանազան նոսրների թելերով: Որտեղ կարելի է ներկել տալ թելերը չը խունացող գոյներով: Ի՞նչպէ՞ս կազմակերպել մթերքների վաճառումը գաւառական զանազան կէտերում, որպէսզի տնայնագործները կարողանան հեշտութեամբ նրանց ձեռք բերել:

6) Վարպետներ պատրաստելու և ինստրուկտոր ունենալու խնդիրը.

Ո՞ր դպրոցներում և արհեստանոցներում կարելի է պատրաստուել վարպետութեան, որքան ժամանակում և ի՞նչ պայմաններով: Որտեղից հրաւիրել պատրաստ վարպետներ: Ո՞ր արհեստանոցներում կարելի է սովորել մահուդի, քաթանի և զանազան կտորների պատրաստութիւնը: Որքան կարևոր է Ռուսաստան կամ արտասահման գնալ կատարելագործուելու համար: Ի՞նչ դեր պէտք է կատարեն հրահանգիչները (ինս-

տրուկտօրները) և որ շրջաններումն են նրանք անհրաժեշտ ներկայումս:

7) Մասնաւոր նախաձեռնումիւն և ձեռնարկութիւններ հանդէս բերելու կարևորութիւնը.

Ովքեր կարող են մասնաւոր ձեռնարկութիւնների գլուխ կանգնել: Առանձին անհատների և ընկերակցութիւնների կատարելիք դերը: Արհեստաւորների ընկերակցութիւններ կազմակերպելու ձևերը և պայմանները: Ինչպէս գրաւել մասնաւոր ձեռնարկուններին դէպի տնայնագործական իրերի վաճառահանումը:

8) Պարբերական համաժողովներ հրաւիրելու կարևորութիւնը և նրանց կազմակերպումիւնը.

Ինչ օգուտներ ունեն համաժողովները և խորհրդակցութիւնները: Ինչպէ՞ս կազմակերպել նրանց: Ո՞ր տեղերում գումարուել՝ կենտրոններում թէ՞ զանազան կէտերում: Ո՞վ պէտք է վերցնէ իր վրայ ժողովների կազմակերպութիւնը և ծրագիրների մշակութիւնը: Ե՞րբ և որտեղ նշանակել հետեւալ համագումարը: Արդեօք կապել նրան տնայնագործական ցուցահանդէսի հետ թէ՞ կազմել առանձին:

Ահա այս տեսակ են այն հարցերը, որոնք բղխում են համագումարի ծրագրից:

Դրանք կարևոր և հետաքրքրական հար-

ցեր են, որոնց պատասխանը ցանկալի է ստանալ համագումարից:

Կը տայ արդեօք այդ պատասխանը մանրամասնութեամբ, թէ՞ առաջին անգամ կարող կը լինի միայն մի քանի հարցեր քննել բաւարար կերպով և լուծել նրանց — այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Յամենայն դէպս կարևոր է, որ համագումարի գաղափարին համակրողները և նրա պարապմունքներին մասնակցել ցանկացողները զբաղուեն նախօրօք նրանց նախապատրաստական քննութեամբ:

Ով կարող է՝ թող ներկայացնի զեկուցում. ով այդ չէ՛ կարող անել, թող պատրաստուած լինի մասնակցելու վիճաբանութիւններին իր մտածուած խօսքն ասելու և համագումարի որոշումները վրայ ազդելու:

Ա. Քալանձար

## ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ - ԲԱՅՈՒՄԸ .

1909 թուի ապրիլի 3-ին, առաւօտեան ժամը 11<sup>1/2</sup>-ին Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում բազմամարդ երկսեռ հանդիսականների ներկայութեամբ, որոնց թիւը հասնում էր մօտ 150 հոգու, ի թիւս որոնց և օտարազգիներ, բացուեց Տնայնագործական Համագումարը:

Դահլիճի զանազան մասերում տեղաւորուած էին ջուհակութեան վերաբերեալ իրեր, որոնք կամ արդիւնք էին արհեստանոցների գործունէութեան, կամ հանդէս էին դրուած կրթական նպատակով:

Ամենից խոշոր տեղ բռնել էր Թիֆլիսի Հայ Տնայնագործական կենտրոնական Ընկերութիւնը, որը հանդէս էր դրել Թիֆլիսի իր նախկին արհեստանոցի իրերը, զանազան հաւաքածու-նմուշներ, նկարներ և հրատարակութիւններ: Ուշադրութեան արժանի էին ձօթերի, սրբիչների, սփռոցների, անձեռոցիկների, ուղիկների և ուրիշ գործուածքների նմուշները, այլ և ժակարդի մեքենայով պատրաստուած գործուածքները: Հանդէս դրած իրերը հետաքրքրական էին, իբրև կատարուած փորձեր, որոնցից շատերը բոլորովին աջողուած էին:

Շուշու արհեստանոցը հանդէս էր դրել շատ գեղեցիկ և բազմազան իրեր՝ գորգեր, խուրջլիններ, գոգնոցներ, պայուսակներ— բամբակագործ, բրդագործ և մետաքսագործ իրեր: Գորգերից մէկը պատրաստուած էր աններկ բնական բրդեայ թելերից, միւսները ներկուած էին բուսական ամուր, չը խունացող ներկերով: Աններկ գորգը ներկայացնում էր մի աչքի ընկնող գործ, որ առանձին հետաքրքրութիւն էր շարժում հանդիսականների մէջ: Շուշու գործուածների մէջ կային հմտութիւն և ճաշակ:

Գանձակի արհեստանոցը հանդէս էր դրել ջեշիմներ, գոգնոցներ և կտաւագործութեան զանազան նմուշներ:

Բագուի արհեստանոցը հանդէս էր դրել թէ բամբակեայ և թէ բրդեայ գործուածքներ, վերջիններս պատրաստուած գործարանական բրդաթելերից:

Համամիլի, Ղշլաղի, Պարնի գիւղի, Ղարաքիլիսայի, Ծուրղութի, Ուզունթալաի, Քարվանսարայի և Մանթաշապատի արհեստանոցները հանդէս էին դրել բազմատեսակ նմուշներ, մեծ մասը բամբակի թելերից պատրաստուած, ըացի Պարնիգեղի արհեստանոցից, որ ներկայացրել էր նաև բրդեայ գործուածքներ, պատրաստուած գիւղական մանուածքից:

Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտը հանդէս էր դրել տնայնագործական հում մթերքներ, գործիքներ և հրատարակութիւններ:

Յատուկ սեղան յատկացուած էր մամուլի ներկայացուցիչներին համար:

Կից սենեակում հանդէս էին դրուած երկու կատարելագործուած տօրքեր, մէկը Մեծ-Ղարաքիլիսայի բնակիչ Կ. Ղամբարեանցի՝ բնական մեծութեամբ, որի վրայ վարպետներէց մէկը գործում էր սրբիչներ, միւսը Մ. Թամրազեանցի՝ մօզեկի ձևով:

Համագումարին մասնակցում էին բացի Թիֆլիսի հայ Տնայնագործական Ընկերութեան անդամներէց, ընկերութեան գաւառական ճիւղերի պատգամաւորները, Թիֆլիսի զանազան հասարակական և կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները, վարպետ-վարպետուհիներ և կողմնակի հետաքրքրուողներ:

Թիֆլիսի հայ Տնայնագործական Ընկերութեան նախագահ Ա. Քալանթար, բանալով Համագումարը՝ յայտնեց հետեւեալը.

«Տնայնագործական Համագումար հրաւիրելու մտադրութիւնը Ընկերութեան վարչութեան մէջ դրուել էր իբրև հերթական հարց դեռ անցեալ տարի: Նոր գործը պահանջում էր մտքի փոխանակութիւն և գործողների փոխադարձ աջակցութիւն: Անցեալ 1908 թուի փետրուարի 28-ի վարչական նիստին ես պատիւ ունեցայ առաջարկել քննութեան համագումար հրաւիրելու հարցը: Քննութիւնը ցոյց տուեց, որ անհրաժեշտ է օգտուել զանազան տեղերում եղած փորձերից և աւելի նպատա-

կայարմար կազմակերպութիւն տալ տնայնագործական թէ ուսուցման նպատակայարմար կազմակերպութեան և թէ արհեստի տարածման գործին: Վարչութիւնը որոշեց հրաւիրել Գանձակի, Շուշու, ապա և Ալեքսանդրօպօլի գործիչներին Թիֆլիս համագումարի: Սակայն, մի քանի շաբաթից յետոյ, երբ վարչութիւնը դրականապէս վճռեց փոխադրել իր գործունէութիւնը դէպի գաւառները և բանալ գիւղերում արհեստանոցներ, այն ժամանակ բարեօք համարուեց յետաձգել մի տարով համագումարը, որպէս զի աւելանան նոր փորձեր և դիտողութիւններ և կարելի լինի համագումարում աւելի որոշ և շօշափելի հարցերի և փոքր ի շատէ մշակուած նիւթերի հետ գործ ունենալ, եզրակացութիւններ դուրս բերելու համար: Եւ արդարև, Ընկերութեանը աջողուեց մի տարուայ ընթացքում նկատելի կերպով ընդարձակել իւր գործունէութիւնը և միևնոյն ժամանակ լայնացնել իր դիտողութիւնների շրջանակը:

Առաջին գիւղական արհեստանոցը բացուեց Ուզունթալայում՝ 1908 թուի մայիսի սկզբին երկու ամիս ժամանակով: Իսկ յունիսի 1-ին Թիֆլիսի արհեստանոցը, իր սովորող եօթն աշակերտ-աշակերտուհիներով, եօթն տօրքով և իր բոլոր պարագաներով, տեղափոխուեց Փամբակի Համամլի գիւղը, ուր սկսեց գործը մեծ գիրքով:

Գիւղը ընդունեց արհեստանոցը մեծ հա-



մակրութեամբ և միանգամից տուեց ակելի քան 30 աշակերտ:

Այնուհետև յաշորդարար բացուեցին նոր արհեստանոցներ Ալեքսանդրոպօլի գաւառի Ախղուլա, Աշլաղ, Նալբանդ, Աարայ, Պարնիգիւղ (Բէգքեանդ), Մեծ Աարաքիլիսա գիւղերում, Աազախի գաւառի Քարվանսարայ գիւղում, Ախալցխայի գաւառի Ծուրղութ գիւղում, Վաղարշապատում, Օշականում (էջմիածնի գաւ.), Գէօմուրում (Նախիջևանի գաւ.), Մանթաշապատում (Բորշալուի գաւառ) և Բազում-Նախիկինների հետ մօտաւորապէս 19 տեղերում, որոնցից մի երկուսը բացուած էին ժամանակաւորապէս, իբրև շրջիկ արհեստանոցներ:

Ներկայ 1909 թուականի ընթացքում էլի բացուելու են Ալեքսանդրոպօլի գաւառի Քեշիշքենդ, Մնջուխլու, Բէղաբղալ գիւղերում, Գօրում և Յիխնվալում (Գօրու գաւառ), Բօրշալուի գաւառի Գիւլաղարակ, Շուլաէր գիւղերում, էջմիածնի գաւառի Մելիքքենդ, և մի երկու ուրիշ գիւղերում, Մեղրիում, Դիլիջանում: Ուրեմն մինչև տարուայ վերջը արհեստանոցներ բանալու փորձերի ընդհանուր թիւը կը հասնի 30-ի: (Ա. Քալանթարը, ի միջի այլոց, ծանօթացրեց ժողովականներին արհեստանոցներ բանալու ձևականութիւնների հետ):

Ահա այդ ժամանակ, երբ այն տեղերի թիւը, ուր ծանօթացել էին շուկահաւթեան արհեստի հետ հասան պատկառելի թուի, ևս ներկայացրի թիֆլիսի հայ Տնայնագործական Ընկերութեան վարչութեան

1003  
1921

Տնայնագործական Համագումարի ծրագիր, որը ընութեան ենթարկուեց Բնակչութեան ընդհանուր ժողովում, որտեղ և վերջնականապէս որոշուեց հրաւիրել ներկայ համագումարը:

Պաշտօնական թոյլտուութիւն ստանալուց յետոյ կովկասեան Փոխարքայից՝ մշակուեցին ծրագրի հիմնական կէտերի վերաբերութեամբ ակելի մանրամասն հարցակէտեր, որոնք ուղարկուեցին Ընկերութեան ճիւղերին, գանազան հիմնարկութիւններին, տնայնագործներին, բոլոր խմբագրութիւններին, մասնաւոր արհեստանոցների և զըպրօցների ձեռագործութեան վարժուհիներին:

Ահա Համագումարի ծրագիրը, բաղկացած ութ կէտից (կարգում է այդ ութ կէտերը (տես երես 3-5):

Համագումարի նիստերը պէտք է տեղի ունենան ապրիլի 3-ին 4-ին և 5-ին:

Համագումարին ներկայացուած են հետևեալ զեկուցումները:

- 1) Տնայնագործութեան հիմնական խընդիրները—Ա. Քալանթարի:
- 2) Գորգագործութեան զարգացումը Ա. Փարեմուզեանի:
- 3) Գորգագործութեան շահաւէտութեան աստիճանը Ե. Խարազեանի:
- 4) Տեղեկութիւններ պարսկական գորգագործութեան մասին՝ Ա. Քալանթարի:
- 5) Գորգագործութեան կենտրոնական ուսումնարան-արհեստանոցի կարևորութիւնը՝ իշխանուհի Մ. Թումանեանի:

6) Տնայնագործական հին կուլտուրայի գնահատելի ճիւղերը՝ Պ. Ղարախանեանի:

7) Տնայնագործական կազմակերպութեան խնդիրներ՝ Յ. Գենջեանի:

8) Գանձակի արհեստանոցը և տնայնագործական հարցեր՝ Յ. Աղաբաբի:

9) Շուշու շուլհականոց-դպրոցը և պատասխան համագումարի ծրագրի հարցերին՝ Նուշու վարչութեան:

10) Համամլիի տնայնագործական ընկերութեան զեկուցումը՝ Համամլուի ճիւղի:

11) Ղշլաղի արհեստանոցի վարչութեան զեկուցումը:

12) Պարնի գիւղի շուլհականոցի շուրջը՝ Ս. Բայաղեանի:

13) Մեծ Ղարաքիլիսայի ճիւղի զեկուցումը:

14) Տնայնագործական փորձը Վաղարշապատի շրջանում. Ա. Մակարեանի:

15) Տնայնագործութիւնը և Բագուի արհեստանոցը՝ Յ. Արիստակէսեանի:

16) Պատասխան ծրագրի հարցերին Ուզունլար գիւղից՝ Ե. Խարազեանի:

17) Տեղեկութիւն Ալեքսանդրօպօլի արհեստանոցի մասին՝ Պ. Բեզպալիի:

18) Բրզեայ գործուածքների նշանակութիւնը կովկասեան շուլհակութեան մէջ՝ Ա. Քալանթարի:

19) Տնայնագործութիւնը կովկասում և Ռուսաստանում՝ Մ. Սողոմոնեանցի:

20) Ձուլհականոցի կազմակերպութիւնը՝ Ա. Քալանթարի:

21) Կօօպերատիւ սկզբունքը Անդրկովկասեան գիւղի համար՝ Յ. Փիրալեանի:

22) Տնայնագործներին մթերքներ և գործիքներ մատակարարելու խնդիրը՝ Վ. Րօդզեվիչի և պ. Բեզպալիի:

23) Զեոքի աշխատանքի դասընթացքներ՝ տիկ. Վ. Վերմիշեանի:

24) Ոճը և ներկերը շուլհակութեան մէջ՝ Գ. Լևոնեանի:

25) Կատարելագործութիւնները տնայնագործութեան մէջ՝ տիկ. Ս. Փափագեանի:

26) Տարեկան վաճառահանդէսների կազմակերպութիւնը՝ Ա. Քալանթարի:

Այնուհետև Ա. Քալանթարը թուեց մի առ մի՝ թէ ինչ հաստատութիւններ և որտեղից մասնակցում են իրանց ներկայացուցիչներով և սիւքեր են լիազօրուածները:

1) Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից լիազօրուած է՝ Ի. Ն. Ե. Արզութեան:

2) Կայսերական կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կողմից Յ. Փիրալեան և Ի. Քուլթաթեյաձէ:

3) Կովկասեան Տնայնագործական Կօմիտէտի բիւրօյի կողմից՝ Վ. Րօդզեվիչ և պ. Բեզպալի:

4) Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան կողմից՝ տ. Յ. Առստամեան և Ս. Մելքումեան:

5) Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան կողմից՝ տ. տ. Ն. Ղամբարեան և Ե. Յարութիւնեան:

6) Ազգազրական Ընկերութեան կողմից՝  
Ե. Լալայեան:

7) Թիֆլիսի վաճառականների փոխադարձ  
ընկերութեան կողմից՝ Ա. Էնֆիաճեան, Ս.  
Յարութիւնեան և Գ. Խօջամիրեան:

8) Հայրենեաց Որբախնամ Ընկերութեան  
կողմից՝ օր. Բայսօղբեան և տ. Ս. Խօջա-  
միրեան:

9) «Լոյս» Ընկերութեան կողմից Գ. Լևո-  
նեան, Կ. Բարայեան և Ա. Մելիք-Այվա-  
զեան:

10) Ձեռքի աշխատանքի դասընթացընե-  
րի կողմից՝ տիկ. Վ. Վերմիրեան:

11) «Մշակի խմբագրութեան կողմից՝ Հ.  
Առաքելեան:

12) «Գիւղատնտեսի» խմբագրութեան կող-  
մից՝ Յ. Մելիք-Բախտամեան:

13) «Աղբիւր Տարաղի»—Տ. Նազարեան:

14) «Մեր Ձայնի»—Յ. Գասպարեան:

15) Գանձակի ճիւղի կողմից՝ տիկին Ս.  
Ստեփանեան և Յ. Աղաբաբ:

16) Համամլի ճիւղի կողմից՝ ուսուցիչ Յ.  
Շապոխնդեան և վարպետուհի Ա. Մարգա-  
րեան:

17) Դշլաղի արհեստանոցի՝ Մ. Ղազարեան:

18) Ծուղրութի ճիւղի կողմից՝ Օլգա և  
Յակ. Գենջեաններ:

19) Բազուի արհեստանոցի կողմից՝ Յով.  
Արիստակէսեան:

20) Ղարաքիլիսայի ճիւղի կողմից՝ օր.  
Հ. Յովհաննիսեան:

21) Մեղրիի ճիւղի կողմից՝ Լ. Դանիէ-  
լեան:

22) Պարնի գիւղի արհեստանոցի կողմից՝  
Ս. Բայաղեանց:

23) Մանթաշեանի արհեստանոցի կողմից՝  
Մ. Արիստակէսեան:

24) Թալիշի (Թարթարի շրջ.) ճիւղի կող-  
մից՝ տ. Եղիս. Մելիք Բեգլարեան:

25) Վաղարշապատի Բարեգործական ըն-  
կերութեան ճիւղի կողմից՝ Ա. Օհանջա-  
նեան:

26) Գէօմուրի ճիւղից կողմից՝ Պ. Ղարա-  
խանեան:

27) Քարուանսարայի արհեստանոցի վար-  
չութեան կողմից՝ Ա. Աթանասեան:

28) Տնայնագործական ընկերութեան  
կողմից՝ Վարչութեան ամբողջ կազմը:

Վերոյիշեալ նախնական տեղեկութիւն-  
ները տալուց յետոյ, Քալանթարը հրաւի-  
րեց ժողովականներին ընտրել Համա-  
գումարի համար նախագահ և անցնել հեր-  
թական աշխատանքներին:

Համագումարը միաձայն նախագահ ընտ-  
րեց պ. Ալ. Քալանթարին:

Ա. Քալանթարը շնորհակալութիւն յայտ-  
նեց ժողովականներին ցոյց տուած պատուի  
համար և մտնելով նախագահական պաշտօ-  
նի մէջ՝ կոչ արեց ժողովականներին ձեռ-  
նարկել համագումարի պարապմունքներին:

Մի քանի հաստատութիւնների ներկայա-  
ցուցիչները, նախ քան հերթական աշխա-

տանքներին անցնելը, ողջունեցին Համագումարի բացումը և նրա աշխատանքների սկզբնաւորութիւնը:

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան ներկայացուցիչ պ. Յ. Փիրալեան, խօսք խնդրելով, յայտնեց, որ Գիւղատնտեսական Ընկերութիւնը միշտ էլ համակրութեամբ և ուրախութեամբ է վերաբերուել ժողովրդական գրութիւնը, տնտեսութիւնը բարելաւելու համար հանդէս եկող օգտակար ձեռնարկութեան և արհեստների տարածման փորձերին, ներկայ դէպքում՝ տնայնագործական գործունէութեան խընդրում ևս՝ ջերմ համակրող է և աջակցելու ու հովանաւորելու պատրաստ, ուստի յիշեալ Ընկերութեան կողմից ողջունում է Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում այդ գեղեցիկ գործի համար համախմբուողներին:

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան անունից ջերմ խօսքերով շնորհաւորեց Համագումարը իշ. Ն. Ե. Արդուժեանը, վստահութիւն յայտնելով, որ Համագումարը կը նպաստի տնայնագործական արհեստի զարգացմանը և դրանով կուլտուրական մի ծառայութիւն կը մատուցանէ երկրին:

Բարեգործական Ընկերութեան կողմից Ս. Մելրուժեան ողջունելով տնայնագործական առաջին Համագումարը, շեշտեց, որ հայերիս մէջ տնայնագործութեան արհեստը վաղուց տարածուած է եղել և զանազան

երկիրներ գնացող գաղթականութիւնները իրանց հետ տարել տարածել են նրան ամենուրեք: Մինչև իսկ Հիւսիսային Կովկասում Թերեքեան ափերում գտնուող Եղեսիան մինչև օրս էլ պահպանել է իր հայրենիքից բերած տնայնագործական արհեստը: Ուրախալի է, որ Տնայնագործական Ընկերութիւնը հրաւիրել է ներկայ Համագումարը տնտեսական արդիւնագործութեան այդ ճիւղին զարկ տալու նպատակով: Բարեգործական Ընկերութիւնը, որը իր գործունէութեան մէջ մեծ տեղ է տալիս արհեստների, պատրաստ է չը խնայել իր աջակցութիւնը և պատրաստ է միանալ այդ գործունէութեանը: Ուստի և նրա անունից շնորհաւորում է սրտանց առաջին Համագումարը և աջողութիւն ցանկանում նրա գործունէութեանը:

Հայուհեաց Բարեգործական ընկերութեան կողմից տիկին Ե. Յարութիւնեան ողջունեց Ընկերութեան կողմից Տնայնագործական Համագումարի բացումը, յայտնելով, որ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը, որ նոյնպէս զբաղուած է արհեստներ ուսուցանելու խնդիրներով, ամենաջերմ կերպով ցանկանում է կատարեալ յաջողութիւն Համագումարին:

Հայուհեաց Որբախնամ ընկերութեան կողմից օր. Բայսօղլեան, արտայայտելով համակրութիւն Համագումարի նպատակներին՝ ընդգծեց, որ արհեստի զարգացման գործը ամենակարևոր կուլտուրական ան-

հրաժեշտութիւններէց մէկն է ներկայ ժամանակում:

Ազգագրական Ընկերութեան կողմից Ե. Լալայեան շնորհաւորելով Համագումարը և աջողութիւն մաղթելով նրա գործունէութեանը պապալում, ցանկութիւն է յայտնում, որպէս զի հայկական ոճ (ստիլ), վերցրած օրնամենտներից, մտցուեն տնայնագործութեան մէջ: Ընկերութեան անունից պատրաստակամութիւն է յայտնում նպատել տնայնագործութեանը և առաջարկում է շուտափոյթ գործել այդ ուղղութեամբ:

«Մշակի» խմբագրութեան կողմից Հ. Առաքելեան, ողջունելով Տնայնագործական Ընկերութեան առաջին Համագումարը, շեշտում է, որ «Մշակը» թէ Արծրունու օրով և թէ նրանից յետոյ միշտ էլ քարոզել է արհեստների տարածման անհրաժեշտութիւնը գիւղում, իբրև լրացուցիչ կողմնակի աղբիւրներով ապրելու մի գեղեցիկ միջոց առանց գաղթելու իր բնակավայրից: Ուստի ուրախութիւն է յայտնում, որ այսօր այդ քարոզները իրագործուում են արդէն և աջողութիւն է մաղթում Տնայնագործական Ընկերութեանը իր առաջիկայ գործունէութեան մէջ:

Տ. Նազարեան «Աղբիւր-Տարազի» անունից ողջունում է Տնայնագործական առաջին Համագումարը մեր երկրում և յոյս է յայտնում, որ տնայնագործական արհեստանոցները մեր գաւառներում ճիւղաւորուելու և բարգաւաճելուն՝ անհրաժեշտ ուղի-

ցոյց կը հանդիսանայ Տնայնագործական առաջին Համագումարը իր մշակուած ծրագրով և բարոյական աջակցութեամբ: Տարագը, որ ծառայում է արուեստներին, շատ անգամ է իր էջերը նուիրել տնայնագործական արհեստներին՝ տալով նմուշներ մեր երկրացիների ձեռքով կատարուած գործերի և ուրախ է, որ այսուհետև հնարաւորութիւն կունենայ աւելի ընդարձակ նմուշներ հանդէս դնելու, տեսնելով այսօր մեր Տնայնագործութեան անդրանիկ աջող ու ուշադրաւ գործերը:

«Գիւղատնտես» շաբաթաթերթի կողմից Յ. Մելիք-Բախտամեան ողջունելով Համագումարը, յայտնում է, որ «Գիւղատնտեսը» որոշել է ընդառաջ գնալ, աջակցել այդ գործունէութեան տարածմանը և բաց անել իր էջերը այն գործիչների առջև, որոնք կուզենան գործել այդ ուղղութեամբ: Շնորհաւորում է Համագումարը և աջողութիւն մաղթում նրա աշխատանքներին:

Բագուէի հայոց Կուլտուրական միութեան անունից, որը իր սեփական փորձով համոզուեց տնայնագործութեան օգտակարութեան մէջ, շնորհաւորեց Համագումարը, տնայնագործական արհեստանոցի վարպետ Յ. Արիստակէսեան:

Գանձակի ճիւղի և արհեստանոցի ու արհեստը սիրողների կողմից շնորհաւորեց Համագումարը Յ. Աղաբաբ, շեշտելով իր խօսքերի մէջ, որ կը գայ ժաժանակ և այդ հե-

ուս չէ, որ տնայնագործական արհեստա-  
նոցները մուտք կը գործեն հայ գիւղական  
բոլոր շրջանները և հնարաւորութիւն կը  
տան խեղճ, աղքատ գիւղացիներին սեփա-  
կան արտագրութիւններով թեթեւացնելու ու  
բարւոքելու իրանց թշուառ գոյութիւնը:  
Ուստի աջողութիւն է ցանկանում տնայնա-  
գործական գործունէութեանը, որպէսզի շու-  
տափոյթ տարածուի նա գիւղերում:

Իրանից յետոյ պ. Քալանթար կարգաց  
Մ. Սողոմոնեանի շնորհաւորական հետե-  
ւեալնամակը Մօսկուայից ուղղուած Տնայնա-  
գործական Համագումարի նախագահին. «Ող-  
ջունելով Թիֆլիսի տնայնագործական անդ-  
րանիկ Համագումարի բացումը, ցանկանում  
եմ նրան բեղմնաւոր գործունէութիւն: Թող  
այս Համագումարը խթան լինի գիւղական  
ազգաբնակչութեան, մի փոքր ցնցուելու իր  
դարաւոր անշարժութիւնից և սովորեցնելու  
նրան ժամանակի արդի պահանջների հա-  
մեմատ առաջ տանել իր ծով ցաւերով լի  
չարքաշ կեանքը»:

Ա. Փարեմուզեանը ուղարկելով զեկուցում,  
գրում է հետեւելը. «Ողջունելով Հայ Տնայ-  
նագործական Ընկերութեան ձեռնարկած  
Համագումարի բացումը, յաջողութիւն եմ  
ցանկանում նրան՝ հաստատ հիմքերի վրայ  
դնելու մեր յետամնաց տնայնագործու-  
թիւնը»:

Բժիշկ Ա. Բուդուղեանը Պետերբուրգից ու-  
ղարկել է համակրական ողջօյն, վստահու-

թիւն յայտնելով Համագումարի արդիւնա-  
ւէտութեանը:

Այնուհետև Համագումարը անցնում է իր  
ծրագրային պարապմունքներին:

Համագումարում կարգացուած զեկու-  
ցումները զետեղուած են ներկայ գրքոյկի  
33—247, իսկ նիստերի արձանագրութիւն-  
ները 248—335 երեսներում:

ԽՈՐՀՐԴԵԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԱԳՈՒ-  
ՄԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Տնայնագործական Համագումարի սկսելուց առաջ, Համագումարի ընթացքում և Համագումարի փակման հետևեալ օրերը տեղի ունեցան Ա. Քալանթարի նախագահութեամբ մի շարք մասնաւոր խորհրդակցութիւններ, որոնց մասնակցում էին ջուլհակութեան վարպետները և վարպետուհիները, գործիքներ շինողները և տեղական ղեկավարները:

Այդ խորհրդակցութիւնների ժամանակ շօշափուում էին տնայնագործական արհեստների վերաբերեալ ներքին հարցերը, քըննւում էին ուսուցման եղանակները, կատարւում էին պայմանախօսութիւններ այս ու այն բարեփոխութիւնը մտցնելու արհեստանոցների մէջ:

Ի միջի այլոց, հարց ծագեց ամարային դասընթացքներ կազմակերպելու ներկայ 1909 թուի յունիս, յուլիս և օգոստոս ամիսներում՝ նման անցեալ 1909 թուի ամարային դասընթացքներին, որոնք բացուած էին Փամբակի Համամլի գիւղում և որտեղ սովորեցնում էին ոչ միայն ջուլհակութիւն,

այլև գիւղատնտեսութեան մի քանի ճիւղերը:

Ամենից աւելի հաւանութիւն ստացաւ այն առաջարկը, որ դասընթացքներ լինեն այս տարի Մեծ-Ղարաքիլիսա գիւղում: Եւ Ա. Քալանթարը խոստացաւ բանակցութեան մէջ մտնել զանազան հաստատութիւնների հետ և աջողեցնել ամարային դասընթացքների կազմակերպութիւնը աւելի ընդարձակ ծրագրով, քան անցեալ տարի:

Մորհրդակցութիւնների ժամանակ առանձին ուշադրութեան առարկայ դարձաւ նմուշների խնդիրը: Արհեստանոցները և արդէն սովորած տնայնագործները պահանջ են զգում այնպիսի նմուշների, որոնց համաձայն նրանք սկսեն պատրաստել գործուածքներ մեծ քանակութեամբ: Առաջարկուեց ներկայ աշնան համար ժողովել նմուշներ մի կողմից շուկայի ներկայացուցիչներից, իսկ միւս կողմից ժողովրդի շրջանում գտնուող բնորոշ տիպիքական նկարներից և բաժանել նրանց վարպետուհիների վրայ:


Մորհրդակցութիւնների մասնակցողները ներկայացրին մի շարք դիտողութիւններ արհեստի իւրացման վերաբերութեամբ գիւղական արհեստանոցներում: Աշակերտութեամբ են սովորում արհեստը, բայց նրանց ընտանիքները դեռ ևս չեն վստահանում տօրքեր պատուիրել և իրանց տներում սկսել կանոնաւոր արդիւնագործութիւն, որովհետև դեռ շուկան որոշ և հաստատ

պահանջներ չէ առաջադրել նրանց այս ու  
այն գործուածքի վերաբերութեամբ:

Վարպետուհիները ցանկութիւն էին յայտ-  
նում այնպէս կազմակերպել կատարելա-  
գործութիւնների գործը, որ կամ վարպե-  
տուհիները որոշ ժամանակ այցելէին այս  
ու այն արհեստանոցը և իւրացնէին նորու-  
թիւնները և կամ յատուկ ինստրուկտոր  
ընկեր ու հաղորդէր նոյնը:

Սորհրդակցութիւնների ժամանակ քննու-  
թեան ենթարկուեցին մի քանի գործուածք-  
ներ և նմուշներ՝ պարզելու նրանց արժա-  
նիքը և պակասութիւնները:

Փորձը ցոյց տուեց, որ այդ մասնաւոր  
խորհրդակցութիւնները շատ օգտաւէտ են  
արհեստը ուսուցանողների համար և ցան-  
կութիւն յայտնուեց, որ նրանք կրկնուեն  
յաճախակի:



## ՀԱՄԱԳՈՒԾԱՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԶԱՆԱ- ԶԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Տնայնագործական Համագումարի անդամ-  
ները այցելեցին 1, Թիֆլիսի Շերամապա-  
հական կայարանը, 2, Կովկասեան Տնայնա-  
գործական կոմիտեոյը 3, Թիֆլիսի Հայու-  
հեաց Ընկերութեան արհեստանոցը, 4, տի-  
կին Վ. Վերմիշեանի «Ձեռքի աշխատանքի  
դասարանները» և 5, տիկին Մելիք-Բախտա-  
մեանցի գլխարկների արհեստանոցը:

Շերամապահական կայարանում առանձին  
հետաքրքրութիւն էին ներկայացնում այ-  
ցելուների համար մետաքսէ գործուածքների  
պատրաստութեան տորքերը, ոստայնները  
և միւս պարագաները:

Կովկասեան Տնայնագործական կոմիտեոյի  
գրասենեակը պարունակում է իր մէջ մի  
փոքր Տնայնագործական թանգարան, որտեղ  
ժողովուրդը են զանազան արհեստների ի-  
րեր: Այնտեղ կազմուած է Տնայնագործա-  
կան մի գրադարան և կան նկարների ալ-  
բոմներ: Գրասենեակը ունի թելի և ուրիշ  
մթերքների պաշարներ տնայնագործներին  
վաճառելու համար:

Հայունեաց Ընկերութեան արհեստանոցը ներկայացրեց կանօնաւոր շաւղի վրայ դըրուած մի գործ, որ տալիս է սովորողներին աշխատանքի աղբիւր:

Տիկին Վերմիշեանի արհեստանոցը ցոյց տուեց մի շարք նոր արհեստների սկզբնաւորութիւններ, որոնք կարող են զարգանալ մեր երկրում:

Տիկին Մելիք - Բախտամեանցի արհեստանոցը նոր է սկսել գործը և արդէն բաւական առաջ է գնացել:

Համագումարի անդամները, այցելելով զանազան արհեստանոցներ, եկան այն եզրակացութեան, որ միացեալ գործունէութեամբ և փոխադարձ աջակցութեամբ Թիֆլիսի հիմնարկութիւնները կարող էին մեծ զարկ տալ արհեստի զարգացմանը մեր երկրում և յայտնում էին իրանց գոհունակութիւնը Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեանը, որ ներկայ Համագումարի շնորհիւ սկիզբն դրեց գործողների շիփման, մաքերի փոխանակութեան և զարկ տուեց արհեստագիտական խնդիրների աւելի եռանդուն արծարծման:



## ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ա. Ք Ա Լ Ա Ն Թ Ա Ր Ի

(Կարդացված Տնայնագործական Համագումարի  
առաջին նիստում, 3 ապրիլի 1909 թ.)

### I

Տնայնագործութիւնը գիւղական պայմաններում.—  
Աշխատանքի լրացուցիչ աղբիւր.—Տնտեսական ար-  
ժէքը.—Համեմատական ուսումնասիրութեան կարեու-  
րութիւնը:

Տնայնագործութիւնն ասելով մեր խօսքը պէտք է լինի գիւղական արհեստի մասին:

Տնայնագործութիւնը մեզանում վաղուց գոյութիւն ունի և նրա որոշ ճիւղերը երկար ժամանակ էլ գոյութիւն կը պահպանեն մեր գիւղական իրականութեան մէջ:

Տնայնագործութիւնը արդիւնք է զանազան պայմանների և հանգամանքների: Գիւղի պահանջները, քաղաքի շուկան, որոշ շրջանների առանձնայատկութիւնները, իսկ երբեմն նաև պատահական ազդեցութիւնները յարմարութիւններ են ընծայել զարգացնելու գիւղում այս կամ այն արհեստը, որը լրացուցիչ աշխատանքի աղբիւր է դարձել գիւղացու համար՝ երկրագործութիւնից ազատ օրերում, մանտուանդ ձմեռ ժամանակ:

Տնայնագործութեան մի որևէ ձիւղ, որ զարօ  
գացել է գիւղում, անշուշտ, կարող է զարօ  
գացած լինել և քաղաքում: Օրինակ, կտա-  
ւագործներ, մահուղագործներ, ներկարար-  
ներ, պայտառներ և ուրիշ տեսակ արհեստի  
ներկայացուցիչներ կան և գիւղում, և քա-  
ղաքում. բայց գիւղի և քաղաքի պայման-  
ները տարբեր են աշխատաւորի համար:

Գիւղում տնայնագործ արհեստաւորի աշ-  
խատանքը ըստ մեծի մասին ունի լրացու-  
ցիչ նշանակութիւն ընդհանուր գիւղական  
տնտեսութեան մէջ. իսկ քաղաքում արհես-  
տաւորի համար իր արհեստը աշխատանքի  
միակ աղբիւրն է, որով նա իրան ապրեց-  
նում է: Գիւղը ապրում է գիւղատնտեսու-  
թեան և տնայնագործութեան միացեալ ե-  
կամուտներով, իսկ քաղաքի արհեստաւորու-  
թիւնը միայն արհեստի տուած արգելնը-  
ներով:

Ճիշդ է՝ գիւղում էլ կան մարդիկ, որոնք  
այլ ևս չեն պարապում գիւղատնտեսու-  
թեամբ և միայն զբաղվում են որոշ արհես-  
տով, բայց ընտանիքը, որին պատկանում է  
տնայնագործը, շարունակում է գիւղատնտե-  
սական աշխատանքները: Եւ նոյն իսկ եթէ  
պատահում են դէպքեր, որ գիւղական ար-  
հեստաւորը այլ ևս ոչ մի կապ չէ պահպա-  
նում գիւղատնտեսութեան հետ, այնուամե-  
նայնիւ նրա աշխատանքի և ապրուստի պայ-  
մանները տալիս են նրան որոշ յարմարու-  
թիւններ շարունակելու իր արհեստը այն  
ժամանակ, երբ քաղաքում նոյն արհեստը

այլ ևս չէ կարողանում ապահովել աշխա-  
տաւորին:

Գիւղական տնայնագործութիւնը, լինելով  
լրացուցիչ աշխատանք, կարողանում է մըր-  
ցել քաղաքի արհեստի հետ և գոյութիւն  
պահպանել ու դիմանալ աւելի երկար ժա-  
մանակ, երբ արհեստի պայմանները դառ-  
նում են անպատ և պատրաստված իրերը  
չափազանց էժանանում են:

Ահա այդ է պատճառը, որ մենք տեսնում  
ենք, թէ ինչու, օրինակ, գորգագործութիւնը  
պահպանվում է գիւղում, մինչդեռ քաղա-  
քում նա համարվում է բոլորովին ան-  
ձեռնտու:

Մենք առիթներ ենք ունեցել Երևանի,  
Գանձակի և Թիֆլիսի նահանգներում հարց  
ու փորձեր անել, պարզելու թէ ինչպէս է,  
օրինակ, վարձատրվում գորգագործի աշ-  
խատանքը, և եկել ենք այն տխուր եզրա-  
կացութեան, որ հա տալիս է աշխատաւո-  
րին 10 - 12 ժամ աշխատանքի համար 8—15,  
լաւագոյն դէպքերում 25 կօպէկ սեփական  
հացով:

Սա մի այնպիսի խղճալի և փոքր վար-  
ձատրութիւն է, որ, անտարակոյս, քաղա-  
քում չէ կարող գոյութիւն պահպանել և եթէ  
գիւղում մնում է՝ շնորհիւ միայն այն բանի,  
որ նա լրացուցիչ աշխատանքի ընաւորու-  
թիւն է կրում և զբաղեցնում է գիւղացու  
կամ մանաւանդ գեղջկուհու այն ժամերը,  
որոնք առանց այն էլ պէտք է պարապու-  
թեան մէջ անցի էին:

Այդ պատճառով գիւղական տնայնագործութիւնը պահպանում է գոյութեան իրաւունք և շարունակվում է այն ժամանակ, երբ քաղաքում նոյն արհեստը մրցութեան, մթերքների թանգութեան և գործարանական արդիւնքների էթանութեան շնորհիւ՝ ընկած և ոչնչացած է լինում:

Անտարակոյս՝ գիւղական տնայնագործութեան պայմաններն էլ կարող են դառնալ ժամանակով այնքան աննպաստ, որ նա կը դառնայ անարդիւնաւէտ և անձեռնտու, բայց նա աւելի երկար ժամանակ կարողանում է գիմանալ մրցութեան, քան քաղաքի արհեստը:

Մեր հոգատարութիւնն էլ ուղղված է դէպի գիւղական տնայնագործութեան զարգացումը, որի միջոցով կարելի է տարիների ընթացքում աշխատանք տալ գիւղացուն, մինչև ժամանակը ցոյց կը տայ աշխատանքի աւելի լաւ գործադրութիւն և կը ստեղծի եկամուտների նոր աղբիւրներ:

Սկզբից և եթ պէտք է կենտրոնանալ և կանգնել գիւղական տնայնագործութեան վրա, որպէս զի մինք պարզած լինենք մեր դիրքը և որոշած այն շրջանակները, որոնց սահմանում պէտք է տեղի ունենան մեր դատողութիւնները, մեր հաշիւները և մեր սպասելիքները:

Անկասկած՝ տնայնագործութեան բազմութիւ ճիւղերի մէջ կան աւելի և սակաւ ձեռնտուները, աւելի և քիչ զիմացողները, որոնց վերաբերութեամբ անհրաժեշտ են

տեղական գործնական ուսումնասիրութիւններ:

Եւ մեր առաջին պարտաւորութիւններից մէկն է այդպիսի ուսումնասիրութիւնների և համեմատական հաշիւների կազմելը:

Առաջարկելով և յանձնարարելով գիւղացուն մի որևէ արհեստ, մենք պէտք է կարող լինենք ասել նրան՝ թէ որքան օգուտ է խոստանում այդ արհեստը, ի՞նչպէս է վարձատրում նա աշխատանքը, ի՞նչ պայմաններում նա շահաւէտ է և կարող է աւելի արդիւնարար լինել և երբ է նա կորցնում իր գոյութեան տնտեսական իրաւունքը:

Այդպիսի ուսումնասիրութիւնները պէտք է կատարվին մշտապէս և խնդիրները պարզվեն թէ յատուկ ուսումնասիրողների ձեռքով և թէ արհեստին մօտ գտնվող գործողների խորհրդակցութիւններում, որոնց ձևերից մէկն է համագումարը:

Մենք, տնայնագործութեան զանազան ճիւղերով հետաքրքրված անձերս, պէտք է ժողովինք այդ նիւթերը, ներկայացնենք մի շարք հաշիւներ և խորհրդածութիւններ, որպէս զի հնարաւոր լինի պարզել արհեստների արդիւնաւէտութեան աստիճանը և այդ աստիճանի բարձրացման նպաստող պայմանները:

Եթէ իբրև օրինակ վերցնենք Նուրիակութեան արհեստը, մենք կը տեսնենք, որ սեփական մանուածք ունենալը էթանացնում է մթերքը, բայց այդ մանուածքը չէ

կարելի բաժանել նամերների, ինչպէս գործարաններից ստացվում է: Գործարանական բարձր նամերները թանգ են և նրանցից կարելի է միայն արժէքաւոր իրեր պատրաստել: Դիւղական սպառման համար աւելի ձեռնառու և գործնական կը լինի ունենալ էժանագին մթերք, օրինակ բամբակի մանուածքը 45—65 կօպէկով ֆունտը: Միևնոյն ժամանակ նշանակութիւն ունի ինքը գործուածքը. նոյն թելից կարելի է պատրաստել երկու գործուածք, որոնցից մէկը կը ծախվի լաւ, միւսը պակաս գնով: Մանաւանդ գորգագործութեան մէջ մեծ նշանակութիւն ունի պատրաստութեան եղանակը՝ նկարների ընտրութիւնը, գորգի չափը, գոյների որակը և դասաւորութիւնը: Ուսումնասիրողը պէտք է ուշադրութեան աննէ բոլոր հանգամանքները:

Թւաբանութիւնը, կշիռը, աշխատանքի երկարատևութեան հաշիւը, տեղական արժէքների պարզաբանութիւնը, դիւղական պահանջների առանձնայատկութիւնների ընդորոշումը պէտք է հանդէս գան լուծելու այն հիմնական խնդիրը, որ դրոած է մեր առաջ—տնայնագործութեան տնտեսական արժէքը և նրա զբլումեան իրաւունքի ոլքը:

Դա այն հիմնական խնդիրներից մէկն է, որ պատիւ ունեմ դնել տնայնագործական համագումարի քննութեան սեղանի վրա:

## II

Տնայնագործութեան արհեստների տարածման շըրջանները.— Տեղական մթերքների նշանակութիւնը.— Մակաւահողութեան աղղեցութիւնը.— Աւանդական, ազգագրական աղղեցութիւններ:

Տնայնագործական արհեստների տարածումը իրականութեան մէջ արտայայտվել է մինչև այժմ զանազան ձևերով, որոնք ըստ երևոյթին կարելի է կարծել թէ չեն ենթարկվում ընդհանուր կանոնի, բայց իրերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ արհեստի տարածման այդ զանազանակերպութիւնն ունի իր հասկանալի պատճառները:

Անշուշտ՝ բնական էր ենթադրել, որ մի որոշ շրջանում պէտք է զարգանար տնայնագործական այն արհեստը, որի համար կան հում նիւթ կամ մթերք այդ շրջանում: Օրինակ, բոլորովին տրամաբանական է, որ Լօռու բնակիչը օգտվելով անտառի և ծառի մօտիկութիւնից՝ շինէր թիակներ, բահեր, դգալներ, դարակներ, տաշաեր և տանէր նրանց դէպի ծառագուրկ Շիրակը, այնտեղ ծախելու համար: Եւ այդպէս էլ լինում է: Նոյնպէս տրամաբանական է, որ կաւի մեծ հանքեր ունեցող Աստապատ գիւղը տար մեծ քանակութեամբ բրուտային կերտուածքներ, կամ ճահճային և եղեգնուտ խոտեր ունեցող Համամլին, Որդնաւը, Աբարանաւը պատրաստէին հասիրներ և ուրիշ գործուածքներ խոտաբոյսերից,

ինչպէս և տեղի ունի իրականութեան մէջ: Այդ տեսակէտով բնական է սպասել շերամապահական այնպիսի կենտրոններէց, ինչպէս են Նուխին, Շուշին, Գողթանը, մետաքսեայ թելեր և գործուածքներ, իսկ Արաքսի աւազանում բամբակեայ մանուածք և գործուածքներ, ինչպէս լեռներում բրդէ պատրաստութիւններ:

Քայց իրականութեան մէջ մենք նկատում ենք և ուրիշ ազդեցութիւններ, բացի որոշ շրջանի մթերքների այս ու այն քանակից և որակից: Յիշենք նրանցից մի քանիսը:

Իւրաքանչիւր գիւղ, ինչ շրջանում էլ նա ապրի, պահանջ ունի մի քանի անհրաժեշտ արհեստաւորների, որոնք և լցուցանում են տեղական կարիքները: Այդ հիման վրա գիւղում գոյութիւն ունեն հիւաներ, փակահագործներ, պայտառներ, դարբիններ, քարտաշներ, աղիւս շինողներ և այլն: Մի ուրիշ տեղ տնայնագործութեան արհեստի ձեւերի վրա ազդում է մերձաւոր շուկայի պահանջը, օրինակ, քաղաքի մօտիկութիւնը թելադրում է շրջակայ գիւղերին զբաղվել անխաղործութեամբ, յարգեայ և ճիւղատեայ կողովների, ծաղկեփունջների և ուրիշ իրերի պատրաստութեամբ: Գետի, լճի կամ ծովի մօտիկութիւնը պահանջ է դնում ուսկանների, ցանցերի, նաւակների և մակոյկների պատրաստութիւնը, որով և զբաղվում են շրջակայ գիւղացիները. երկաթուղու կայարանների մերձաւորութիւնը դրդում է

պատրաստել զանազան անուշեղէններ և ճանապարհորդական գործածութեան իրեր:

Սակայն մի շարք ուրիշ շրջաններում վճռական դեր են կատարում ոչ տեղական մթերքների բնաւորութիւնը և ոչ տեղական շուկայի պահանջները, այլ իրան ազգաբնակութեան տնտեսական ծանր պայմանները: Արդարև, այնտեղ, ուր սակաւահողութեան պատճառով գիւղացին հնարաւորութիւն չունի ապահովել իրան գիւղատնտեսութեամբ, նա կամայ ակամայ ստիպված է իր ժամանակի և աշխատանքի մեծագոյն մասը նուրիս արհեստներին: Եւ այդտեղ այլ ևս տեղական մթերքը չէ դեր կատարողը, այլ որոշ արհեստի արդիւնաւէտ լինելը, որով նա կարող է զբաղվել: Եւ զարմանալի չը պէտք է թւայ, եթէ սակաւահող մի Գետաշէն, Ղարաքիլիսա, Ագուլիս զբաղվեն այնպիսի գործերով, որոնք բնաւ կապ չունեն տեղական արդիւնագործութեան հետ: Նոյն տեղական արդիւնագործութեան հետ: Նոյնպէս զարմանալի չը պէտք է համարվի, եթէ օրինակ Արարատեան դաշտի բամբակ արդիւնաբերող գիւղերը, ունենալով բարդ տնտեսութիւն, չը զբաղվեն մանուածքներով և կտաւագործութեամբ, իսկ այդ գործը իրանց վրա վերցնեն Աբարանի գիւղացիները, որոնք թէև բամբակ չունեն, բայց զբա փոխարէն շատ ունեն ժամանակ, որից զուրկ են բուն բամբակագործները:

Այս հանգամանքը կարևոր է յատկապէս ընդգծել, որովհետև շատ անգամ լսվում է կարծիք՝ թէ լեռնաստանի ժողովուրդը պիտի

զբաղվի բրդեայ գործուածքների պատրաստութեամբ, իսկ տափարակի ժողովուրդը՝ բամբակեայ:

Դա սխալ հայեացք է:

Եթէ միշտ այդպէս դատելու լինէինք, այն ժամանակ Մօսկվայի և Լօծիի շրջակայ գիւղացիները չը պէտք է զբաղվէին բամբակեղէնի պատրաստութեամբ, որովհետև այնտեղ բամբակ չէ բուսնում: Կամ թէ Քուլթայիսի մահուգագործները չը պէտք է իրանց արհեստով զբաղվէին, որովհետև բուրդը ստացվում է Թիֆլիսի նահանգից, կամ թէ Դաղստանի լեռնականները չը պէտք է պարսպէին երկաթագործութեամբ և պղնձագործութեամբ, որովհետև իրանց երկիրը երկաթ ու պղինձ չէ արդիւնաբերում և նրանք ստանում են մթերքը ուրիշ տեղերից:

Տնայնագործութեան մի քանի արհեստներ գոյութիւն են պահպանում աւանդաբար, որովհետև որոշ շրջանում կամ ազգաբնակութեան որոշ խաւերում նա ընդունված է եղիլ, օրինակ պղնձագործութիւնը Լահիջում, մաղագործութիւնը բօշաների մօտ և այլն: Եւ արհեստը, աւանդաբար անցնելով սերունդից սերունդ, դառնում է մի տեսակ թէ պարտականութիւն և թէ արտօնութիւն երկրի որոշ շրջանում կամ ազգագրական որոշ տարրերի մէջ:

Իսկ յաճախ տնայնագործական որևէ արհեստի տարածմանը մի որոշ շրջանի մէջ նպաստում է մի նախաձեռնող անձնաւորու-

Թիւն, որ առաջին անգամ զբաղվում է այդ արհեստով՝ գուցէ նոյնիսկ պատահաբար: Մի պահուխտ, սովորած լինելով օտար տեղում արհեստ, փորձում է վերաստեղծել նոյնը իր ծննդավայրում: Աջող օրինակը առաջ է բերում նմանողութիւն. շրջապատողները հետևում են նախաձեռնողին, և ահա ծագում է նոր տնայնագործական արհեստ: Նոյն հետևանքն է ստացվում, եթէ մի օտարական, հաստատվելով նոր տեղում, բերում է իր հետ իր զիտեցած արհեստը և յետոյ օրինակ դառնում ուրիշների համար: Այդպիսի դէպքեր շատ են եղել մեր երկրում, և յայտնի է, որ թիւրքաշայ և պարսկահայ գաղթականները հիմնողներ են հանդիսացել որոշ արհեստների մեր ժողովրդի մէջ:

Եւ այսպէս՝ մենք տեսնում ենք, որ տնայնագործութիւնը բաժանել շրջանների այնքան էլ հեշտ չէ ըստ բնական առանձնաշատկութիւնների: Եւ շատ անգամ մենք պարտաւորված ենք ընդունել նրանց այնպէս, ինչպէս նրանք կան, իբրև կեանքի փաստեր:

Անկասկած՝ վճռական դեր են խաղում այստեղ մի կողմից ազգաբնակչութեան պահանջը դէպի աշխատանքի նոր աղբիւրները, իսկ միւս կողմից թէ առաջին նախաձեռնողի վարակիչ օրինակը և թէ պատրաստած իրերի վաճառահանութիւնը:

Յամենայն դէպս՝ տնայնագործական արհեստների տարածման ժամանակ պէտք է առհասարակ դիւրութիւններ ստեղծել և

տալով որոշ ցուցումներ, խորհուրդներ, հաշիւներ՝ չը սահմանափակել մարդկանց նախաձեռնութիւնը և թոյլ տալ, որ կեանքը ինքը ևս ինքնորոշող դեր կատարի ներկայ դէպքում: —

### III

Արհեստի ուսուցման եղանակները.— Վարպեաների պատրաստութիւնը.— Գործիքների կատարելագործութիւնը.— Հրահանգիչների դերը.— Կենսաբանական դպրոցներ.— Իրադարաններ և հաւաքածոներ:

Այժմ անցնենք տնայնագործական արհեստների ուսուցման և տարածման հարցին:

Կան արհեստներ, որոնք արդէն գոյութիւն ունեն մեր իրականութեան մէջ և միայն կարօտ են կատարելագործութեան. կան և այնպիսիներ, որոնք անծանօթ են մեզանում, դեռ նոր պէտք է մտնեն մեր կեանքի մէջ և ուրեմն պէտք է ուսուցանվեն:

Իբրև օրինակ առաջին տեսակ արհեստների յիշենք գորգագործութիւնը: Նա գոյութիւն ունի մեր երկրի շատ մասերում. բայց նա ունի իր թերութիւնները, որոնցից կը յիշատակենք հետևեալները: Գորգագործական տօրքերը նահապետական են, շատ անյարմար են աշխատող մարդու գործելու համար և սակաւ արդիւնաբեր են: Նկարները չեն համապատասխանում որոշ համակարգութեան և բնորոշ ոճի: Նրանք շատ անգամ խառնուրդ են հնի և նորի անձաշակ կերպով: Ներկերը վերցվում են զանազան ամբողջութեան և դիմացկունութեան, ուստի գոր-

գի զանազան մասերը անհաւասար կերպով խոնանում են: Գորգերի չափը և կազմը չէ համապատասխանում շուկայի պահանջներին և այլն:

Հասկանալի է, որ այսպիսի պարագայում ղեկավարող և ուսուցանող հիմնարկութիւնները պէտք է հրահանգներ տան բարեփոխելու եղած գործիքները, ցուցումներ անեն նկարների և ներկերի վերաբերութեամբ և պատրաստեն եղած վարպետներին կատարելագործված արհեստի համար:

Ներկայ դէպքում ղեկավարող գործունէութիւնը աւելի հրահանգիչ, աւելի ինստրուկտօրական բնաւորութիւն է կրում, քան կրթական-արհեստագիտական:

Երկրորդ տեսակ արհեստները, լինելով նորութիւն երկրի մէջ, կարիք ունեն նոր մարդկանց, որոնք պէտք է սովորեն արհեստը և պատրաստվեն գործնական արդիւնաբերութեան համար: Այդպէս են ջուլհակութեան շատ ճիւղերը, կատարելագործված կաւամշակութիւնը, յարդեայ իրերի պատրաստութիւնը և շատ ուրիշ արհեստներ:

Այստեղ պէտք է կրկնակի գործ կատարել և արհեստը սովորեցնել, և պատրաստված իրերը կեանքի սեփականութիւն դարձնել: Նոր արհեստի, նոր հմտութեան և նոր գիտելիքների ներմուծումը պահանջում է փորձված ղեկավարներ և ուսուցիչներ արհեստանոցում և ապա հրահանգիչ գործունէութիւն երկրի զանազան մասերում նոր ար-

հետի աջող իւրացման և պատուաստման հասար:

Տնայնագործական արհեստների ուսուցման վերաբերութեամբ պէտք է աչքի առաջ ունենալ, որ աշակերտները լինում են թէ մանուկներէ թէ հասակաւորներ, թէ 12—15 տարեկան տղայ ու աղջիկներ և թէ 30—40 տարեկան կին ու տղամարդ: Այդպէս են եղել մեր արհեստանոցներում սովորողները Համամլիում, Ալլաղում, Մանթաշապատում, Աղղուլայում և այլն:

Այստեղ պէտք է նկատել, որ մեր Ընկերութեան ունեցած գործունէութեան փորձը ցոյց տուեց, որ գիւղական արհեստանոցներ հիմնելը ունեցաւ մեծ կուլտուրական նշանակութիւն և լուծեց գժուար խնդիրը շատ հեշտ կերպով: Գիւղական արհեստանոցում մեծ է սովորողների թիւը և սրանք իսկական աշխատաւորներ են, որոնք ոչ միայն չեն վախենում աշխատանքից, այլ և նրան որոնում են: Արհեստը սովորելուց յետոյ գիւղական աշխատաւորը դառնում է պատրաստ կուլտուրական ոյժ, որը զբաղվում է թէ իր գիւղատնտեսութեամբ և թէ իր նոր սովորած արհեստով: մինչդեռ քաղաքի արհեստանոցում սովորածը պահանջկոտ է, բծախնդիր և յաճախ մնում է անգործ, ստուարացնելով արհեստաւոր պրօլետարի շարքերը:

Գիւղական արհեստանոցները լուծում են տնայնագործական գիտելիքների տարած-

ման հարցը բաւարար և նպատակայարմար կերպով:

Տնայնագործական կրթական արհեստանոցի նպատակը կարելի է ձևակերպել հետևեալ խօսքերով: Արհեստանոցը պէտք է սովորեցնի իր աշակերտներին ընդունել պատուէրներ և նրանց ձշղապէս կատարել:

Իբրև օրինակ վերցնենք ջուլհակութեան արհեստը:

Աշակերտները պէտք է կարողանան տրված նմուշը կամ նրա նկարը վերլուծել, թելերը դասաւորել, հէնքը հիմնել և ճշգրտոյն կերպով արտադրել պատուէրը:

Երբ որ սովորած աշակերտները, ցրված՝ երկրի զանազան մասերում, ընդունակ կը լինեն հաղարաւոր արշիններով գործել որոշ տեսակի կտորներ, այն ժամանակ կը կազմվի վաճառանոցի համար ապրանք և ամբողջ գործը կարող կը լինի զբաւել ուշադրութիւն շուկայի և առևտրականների կողմից: Այն ժամանակ ինքը շուկան, իր պահանջների համաձայն, կարող կը լինի փոփոխել իր պատուէրները և ստանալ իր ցանկացած ապրանքները:

Եւ անա այստեղ հանդէս է գալիս այն խոշոր հարցը՝ թէ ո՞ր աստիճան պարզ կամ բարդ պէտք է լինեն պատուէրների պահանջները. արդե՞ծք նրանք պէտք է սահմանափակվեն կտաւագործական կտորներով, թէ՞ կարող են և աւելի բաղադրեալ նմուշների վերարտադրութիւնների վրա տարածվել, օրինակ՝ այնպիսիների, որոնց հա-

մար, օրինակ, անհրաժեշտ է ժակարդի մեքենան: Եւ անշուշտ՝ այդ պահանջների բաւարար կատարման համար անհրաժեշտ է, որ կրթական գործը լինի աւելի ընդարձակ և լիակատար: —

Յամենայն դէպս՝ իբրև հիմնական կանօն պէտք է ընդունել, որ բաւարար արհեստաւոր լինելու համար անհրաժեշտ է ոչ միայն արհեստի գործնականապէս իւրացումը, այլ և նրա հիմնական սկզբունքների տեսական դասաւանդութիւնը մի որոշ չափով, որ գործի աջող ընթացքի համար էական է:

Իւրաքանչիւր վարպետ պէտք է կարողանայ թէ հասկանալ տրված նկարը և նոյնը արտանկարել և թէ տրված նմուշը վերածել նկարի, որը և պէտք է ծառայի իբրև պատուէրի նշանակ:

Կրթական արհեստանոցը պէտք է տայ այդ հմտութիւնը:

Տնայնագործական այդպիսի արհեստանոցներ պատրաստելու համար հարկաւոր են ղեկավարներ և ուսուցիչներ, որոնք ունենան լուրջ և հիմնաւոր կրթութիւն արհեստի ուսումնասիրութեան վերաբերութեամբ:

Նոյնն էլ կարելի է ասել և հրահանգիչների կամ ինստրուկտորների մասին:

Կամ մեր երկիրն ինքը պէտք է ունենայ մի լաւ դպրոց այդպիսի ղեկավարներ պատրաստելու համար, կամ մենք պէտք է վերցնենք մասնագէտների, ղեկավարների և ինստրուկտորների ուրիշ տեղերից՝ Ռու-

սաստանի հիւսիսից կամ արտասահմանից:

Եթէ մասնաւորենք խնդիրը շուրհակութեան վրա, մենք կը տեսնենք, որ այդպիսի մասնագէտներ մեզ կարող են տալ Վըշնի-Վօլօչսկը և Սօսնեվիցը Ռուսաստանում, Լիօնը Ֆրանսիայում և այլն:

Յամենայն դէպս՝ ինստրուկտորներ և ուսուցիչներ ունենալու խնդիրը հերթականերից մէկն է մեր նոր սկսված տնայնագործական ուսուցման շարժման մէջ: Դա մի խնդիր է, որի լուծման վրա պէտք է կանգ աւանել:

Այդ խնդրի քննութեան ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ մի հանգամանք, որ առանձին նշանակութիւն ունի մեր երկրում: Դա տեղական լեզուների գիտնալն է: Տնայնագործական ղեկավարի գործունէութեան ասպարէզը գիւղն է, կամ գիւղական տարրերից կազմված արհեստանոցը: Այդ ղեկավարը պէտք է կարողանայ իր ցանկացածը յայտնել իր աշակերտներին և հասկանալ նրանց ասածները: Ահա դա է պատճառներից մէկը, թէ ինչո՞ւ Վըշնի-Վօլօչսկից եկած ուսուցիչները անկարող են լինում անմիջապէս գործել մեր երկրի խորքերում և յամենայն դէպս առանց թարգմանների քայլ չեն կարող անել մեր գիւղական աշխարհում:

Միևնոյն ժամանակ կարևոր է, որ արհեստանոցները կարող լինեն ստանալ նորագոյն, աւելի կատարելագործված գործիքներ, յետ չը մնան մրցութեան ասպարի-

դում և բեղմնաւորեն ժողովրդական աշխատանքը այն դիւրութիւններով և յարմարութիւններով, որ տալիս է արհեստագիտութեան առաջադիմութիւնը:

Այնուհետև՝ արհեստաւորները համար կարևոր է ստեղծել տնայնագործական արհեստներին վերաբերեալ գրադարաններ և հնարաւորութիւն տալ արհեստաւոր մարդուն կարգալու ձեռնարկներ, գրքեր, սուսնաստիբելու նկարների ալբոմներ, դանազան տեսակ ոճերի հաւաքածոներ:

Այդպիսի գրադարաններ պէտք է լինեն իւրաքանչիւր կրթական արհեստանոցի կից և նրանք պէտք է կրեն նաև մի տեսակ փոքրիկ թանգարանների բնաւորութիւն, որոնք ծանօթացնեն տնայնագործներին իրանց արհեստին վերաբերեալ բոլոր կրթական նիւթի հետ: Գրադարաններ կազմելու համար անշուշտ հարկաւոր են հրատարակութիւններ, որոնք եթէ չեն կարող լինել ինքնուրոյն աշխատութիւններ, պէտք է տան եղած գրքերից թարգմանութիւններ:

Այդպիսի հրատարակութիւններ մեղանում գոյութիւն չունեն: Եւ խնդիրը բոլորովին նոր է, որ միայն այժմ է դրվում հրապարակի վրա:

Վաճառահանութեան խնդրի նշանակութիւնը.— Մասնաւոր նախաձեռնութեան կարևորութիւնը.— Պատուէրներ հիմնարկութիւններից.— Տեղական ոճերի սուսնաստիբելեան և գործադրութեան խնդիրը:

Այժմ անցնենք ամենախոշոր և էական հարցերից մէկին տնայնագործութեան զարգացման խնդրում— պատրաստված իրերի վաճառահանութեանը:

Երբ որ վաճառահանութիւնը լաւ պայմանների մէջ է և պատրաստված իրը սպաւում է տեղնուտեղը կամ ծախվում է ապահով կերպով, այն ժամանակ արդիւնաբերութիւնը կարող է առաջ ընթանալ համարձակ կերպով: Եւ, ընդհակառակը, երբ պատրաստված իրերը չեն կարողանում վաճառահանվել, այն ժամանակ ամենագեղեցիկ և ամենանուրբ կիրտուածքները դառնում են ապարդիւն:

Ամենաբնականը և անմիջականը կը լինէր այն, որ պատրաստված իրերը սպաւվէին տեղնուտեղը, մերձաւոր շրջակայքում: Եւ մենք ունենք օրինակներ, թէ ինչպէս գիւղացին բրդից պատրաստում է տանը գիւղական շալեր և մահուղներ, որոնց սպաւողը լինում է ինքը կամ իր համագիւղացին: Նոյնը մենք տեսնում ենք ներկայումս նոր սկսված ջուլհակութեան արհեստի վերաբերութեամբ: Նրա պատրաստած առաջին կտորների սպաւողը մինչև

այժմ եղել են ինքը տնայնագործը և մեր-  
ձաւոր ծանօթները:

Բայց, անշուշտ, երբ տնայնագործական  
աշխատանքները կը ստանան աւելի մեծ  
ծաւալ դիւզում, երբ գիւղական ազատ  
մնացած ձեռքերը կը նուիրվին զանազան  
իրերի կանօնաւոր և անընդհատ պատրաս-  
տութեան, այն ժամանակ վաճառահանու-  
թեան հարցը կը ստանայ աւելի ընդարձակ  
նշանակութիւն և կը դառնայ այն առանց-  
քը, որի շուրջը կը պտտի ինքը արդիւ-  
նագործութիւնը:

Վճռական դեր է խաղում այստեղ այն,  
թէ ինչ տարբերութիւն է մնում պատրաս-  
տած իրի իսկական արժէքի և նրա շու-  
կայական գնահատութեան մէջ: Եթէ, օրի-  
նակ, շուկայի վրա իր պատրաստած կտո-  
րը արժէ 20 կօպէկ, իսկ սպառողները  
գնում են նոյն կտորը խանութում 30 կօ-  
պէկով, այդ 10 կօպէկ տարբերութիւնը  
այն օգուտն է, որ մնում է արհեստից, և  
եթէ մի օրվայ մէջ տնայնագործը կարող է  
դուրս բերել հինգ արշին այդ կտորից, այն  
ժամանակ նա իր տրամադրութեան տակ  
ունի 50 կօպէկ, որից պէտք է բաժին հա-  
նէ իր գործարանի ծախքերի տոկոսին,  
իր աշխատանքին և այն միջնորդ վաճա-  
ռականին, որ կանգնած է նրա և իսկական  
սպառողի միջև: Եւ անշուշտ, երբ այդ տար-  
բերութիւնը արժէքի ու գնի միջև աւելի  
լայն է, այն ժամանակ մեծ է և օգուտը, և  
ընդհակառակը:

Հասկանալի է, որ որքան էժան լինի  
մթերքը, որից պատրաստվում է տնայնա-  
գործական իրը, և որքան թանգագին է  
այն, ինչ տրվում է շուկային, այնքան բա-  
րեյաջող են արհեստագործութեան պայ-  
մանները:

Ուստի և հերթական հոգսերից մէկը  
ներկայանում է մեր առաջ աշխատել կա-  
րելին չափ նպաստաւոր պայմաններով  
ձեռք բերելու հում նիւթերը առաջին աղ-  
բււրներից, պակասեցնելով միջնորդների  
թիւը:

Միւս էական հոգսը պէտք է լինի այն,  
որ տնայնագործը տայ շուկային այն ապ-  
րանքը, ինչ որ յարգի է և պահանջվում է  
այդ շուկայում: Ուստի տնայնագործը պէտք  
է պարբերաբար ստանայ նոր պատուէրներ  
նոր նկարներով և նմուշներով:

Երբ որ գաւառական խանութպանը կը  
տեսնէ, որ ինքը հնարաւորութիւն ունի  
ստանալ տնայնագործից շուկայի պահանջ-  
ներին համապատասխանող ապրանք, որը  
միևնոյն ժամանակ ունի աւելի ամրութիւն  
և հարազատութիւն, այն ժամանակ նա  
համարձակ կերպով կը ձեռնարկէ տնայնա-  
գործական իրերի գնման, ունենալով միև-  
նոյն ժամանակ մի յարմարութիւն, որ նա  
կարող է փոխել իր պատուէրները ըստ իր  
ցանկութեան և ըստ գնողների պահանջի:  
Եւ պէտք է նկատել, որ այս վերջին հան-  
գամանքը ունի իր նշանակութիւնը, որով-  
հետև մեր երկրի զանազան տեղերում կան

և յատուկ տեղական պահանջներ, որոնք տարբերվում են միւս տեղերի պահանջներից:

Մեր գաւառական վաճառականները դեռ ոչ մի խոշոր քայլ չեն արել տնայնագործական նոր արհեստների վերաբերութեամբ և իրանք իրանց կողմից խրախուսողի, աջակցողի և նպաստողի նախաձեռնութիւն չեն ստանձնել: Մեզ յայտնի է, որ Ալեքսանդրօպօլի արհեստանոցի պատրաստած իրերը սկսել են գտնել ընդունելութիւն քաղաքի ազգաբնակչութեան. զանազան խաւերում և որ Փամբակի շրջանում գործող մի խանութպան մտադիր է այս ամառ փորձել ապրանքներ ձեռք բերելու նորաբաց ջուլհականոցներից: Անշուշտ, եթէ այդ և դրա նման փորձերը աջողութիւն ունենան, այն ժամանակ վաճառականների մի մասը ուղիղ գնող կը հանդիսանայ պատրաստ իրերի, իսկ միւսը կը մտնի աւելի սերտ յարաբերութիւնների մէջ արհեստաւորների հետ և կը վերցնի իր վրա գործի կազմակերպութիւնը, տալով նրանց կանխավճարներ և պայմանաւորվելով պատրաստված ապրանքների գնի վերաբերութեամբ:

Գործի սկզբնաւորութեանը և ազագայ զարգացմանը կարելի էր նպաստել, եթէ հնարաւոր լինէր այժմեանից ապահովել մի շարք պատուէրներ զանազան հիմնարկութիւնների համար, ինչպէս են դպրոցները, հիւանդանոցները, զօրամասերը և այլն:

Օրինակ, ահա երկու տարի է, որ մեր ջուլհականոցը պատրաստում է Թիֆլիսի դպրոցների ձեռագործութեան ուսուցման համար կրթական պատասաններ: Մի քանի պատուէրներ ունեցել են Գանձակի և Շուշու արհեստանոցները: Պատուէրներ ունեցել է նաև Համամլիի նորակազմ արհեստանոցը:

Սակայն դրանք միայն նախափորձեր են, որոնց պէտք է դարձնել կանօնաւոր և խոշոր պատուէրների գործ:

Նոյնպէս նպատակայարմար պէտք է համարվի և մի քանի պատուէրներ տալը մեր կենտրոնական ընկերութեան կողմից, որպէսզի նմուշները ուղարկվեն զանազան տեղեր՝ բանակցութիւններ սկսելու և յարաբերութիւններ ստեղծելու համար:

Անշուշտ, ապագայում որոշ դեր և նշանակութիւն կը ստանան այն իրերը, որոնք կրում կը լինեն որոշ ոճի կնիք իրանց վրա, որոնք կունենան թէ ազգագրական հետաքրքրութիւն և թէ ճաշակագիտական արժէք: Օրինակ, հայկական, պարսկական, վրացական և այլ արևելեան ոճերով պատրաստված իրերը ունեցել են, ունեն և կարող են ապագայում էլ ունենալ նշանակութիւն և ոչ միայն մեր երկրում, այլ և մեր երկրից դուրս: Եւ մեր կովկասեան արծաթաշէն իրերը, զանազան տեսակի զէնքերը, գորգերի մի քանի տեսակները, շալերը, տառատուկները, գլխի փաթթոցները, կօշիկները, սափորները և ուրիշ իրեր յայտնի

են ոչ միայն մեր երկրում, այլ և սկսել են հետաքրքրութիւն շարժել նաև մեր երկրից դուրս տեղերում: Այդ կովկասեան ընդոռոշ, ինքնայատուկ, ինքնատճ իրերի պատրաստութիւնը և վաճառահանութիւնը այն լուրջ հարցերից մէկն է, որի աջող լուծման համար պէտք է աշխատեն տնայնագործութեան զարգացման խնդիրներով հետաքրքրված հիմնարկութիւնները և զբաղված մարդիկ:

Տնայնագործական արդիւնքների թէ տեսնիկային կատարելութեան և թէ վաճառքի ընդարձակ զարգացման համար անհրաժեշտ են զանազան հիմնարկութիւններ, կազմակերպութիւններ և ձեռնարկութիւններ, որոնք պէտք է հանդէս գան աշակցողների և զեկավարների դեր կատարելով:

Այդ խնդրին կը նուիրենք մեր զեկուցման վերջին մասը:

## V

Զանազան հաստատութիւնների կատարելիք դիրք տնայնագործութեան զարգացման խնդրում.— Բազմաբային ինքնավարութեան, բօրսային կօմիտեան, տնայնագործական և այլ ընկերութիւնների աշակցութեան եղանակները:

Եթէ տնայնագործութեան զարգացման գործը թողնենք իրերի բնական ընթացքին, նա մատնված կը լինի պատահակա՛նութեան հաճոյքին, կարող է շատ խոչընդոտների հանդիպել և բացասական վախճանի

հասնել այնտեղ, ուր ընդհակառակը հիմք կայ աւելի աջող ելքի համար:

Արդարև, եթէ չը լինի հստատ զեկավարութիւն արժանաւոր իրեր պատրաստելու և նպատակայարմար կազմակերպութիւն՝ նրանց վաճառահանելու համար, գործը կանգ կաննի և կը խախտվի:

Այն հիմնարկութիւնները և կազմակերպութիւնները, որոնք կարող էին իրանց վրա վերցնել այդ գործը, զեմստվային հիմնարկութիւններն են, մասամբ քաղաքային ինքնավարութիւնները, այնպիսի ընկերութիւններ, ինչպէս մեր Տնայնագործականն է իր ճիւղերով, Կովկասեան Տնայնագործական Կօմիտէտը, Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը, բօրսային կօմիտէտը, տնայնագործների ընկերակցութիւնները, կօմիտիօնական գրասենեակները, գործակալութիւնները, առևտրի և արդիւնագործութեան միւստրութիւնը, արդիւնագործական թանգարանները և այլն:

Մենք չունենք զեմստվային հիմնարկութիւններ, ուստի կանգ կառնենք միւս կազմակերպութիւնների վրա:

Ի՞նչ կարող էին անել, օրինակ, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը և Թիֆլիսի բօրսային կօմիտէտը: Նրանք կարող էին բանալ, օրինակ, պահեստ-թանգարան տնայնագործական ապրանքների համար և հիմնել կրեդիտ տնայնագործների համար:

Մի քաղաք, որ ունի միլիօնից աւելի ելամուտի բիւջէ, որի ազգաբնակչութեան

մի նշանաւոր մասը արհեստաւորներ են, որի շրջակայքում ապրող ազգաբնակչութիւնը բերում է իր տնայնագործութեան արդիւնքները քաղաք՝ վաճառելու, մի քաղաք, որ միևնոյն ժամանակ թէ կենտրոնն է իր նահանգի և թէ մայրաքաղաքը ամբողջ Անդրկովկասի շատ հեշտութեամբ կարող է ծախսել գումար՝ պահեստ-թանգարան և գործավար պահելու համար:

Այդ պահեստ-թանգարանում կը լինէին տնայնագործական և արհեստաւորական իրերի նմուշներ՝ պատուէրներ տուողների և ապրանքներ՝ հետաքրքրվողների և գնողներին համար:

Այդ պահեստի ղեկավարութեանը կարող էին մասնակցել նաև Կովկասեան Տնայնագործական Կոմիտետը, մեր Ընկերութիւնը և ուրիշ համապատասխան հիմնարկութիւններ:

Հանդէս բերելով պահեստ-թանգարանի խնդիրը՝ ես դնում եմ համագումարի քննութեան առաջ, որպէսզի համագումարը դիմում անի Թիֆլիսի քաղաքային դումային և Թիֆլիսի բօրսային կոմիտետին և առաջարկի իրագործել պահեստ-թանգարանի ծրագիրը մօտաւոր ապագայում:

Պէտք է յուսալ, որ Թիֆլիսի աջող փորձը յետոյ կարող կը լինի օրինակ ծառայել նաև Անդրկովկասի ուրիշ քաղաքներին՝ Բագուի, Գանձակի, Շուշու, Երևանի, Բաթումի, Բուխարայի, Շուրայի և ուրիշների համար:

Պէտք է ցաւել, որ մենք մինչև այժմ Թիֆլիսում չունենք արդիւնաբերական թանգարան, որը գաղափար տար քաղաքի և երկրի արդիւնաբերութեան մասին: Տնայնագործական պահեստ-թանգարանը կը լինի ապագայ արդիւնաբերական մեծ թանգարանի առաջին աղիւմներէց մէկը, միևնոյն ժամանակ իբրև մշտական ցուցահանդէս և վաճառահանդէս:

Պահեստ թանգարանը կարող է վերցնել իր վրա կօմիտիօնական կամ գործակալական յանձնարարութիւններ և այդպիսով սերտ յարաբերութիւններ ստեղծել արդիւնագործողների և սպառողների միջև:

Պահեստ-թանգարանը կարող է որ ոչ շրջաններում կազմել վաճառահանդէսներ, երբ որ ոչ տեսակի տնայնագործական իրերը ժողովված կը լինեն ամենամեծ թուվ և քանակով:

Նոյնը կարող էին անել և գաւառական պահեստները, հանդիսանալով միևնոյն ժամանակ իբրև միջնորդներ՝ գործիքներ և թել ձեռք բերելու համար:

Մենք երկար կանգ չենք առնի ներկայ գեկուցման մէջ մեր Ընկերութեան և Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտի գործունէութեան ծրագիրների վրա: Նրանք կարող են նիւթ լինել ուրիշ գեկուցումների համար: Այդ հիմնարկութիւնները գործում են տնայնագործութեան ասպարիզում, և իւրաքանչիւր տարի բացվում են նրանց առաջ նոր և նոր պահանջների խնդիրներ:

Կարևոր է այստեղ ընդգծել, որ մեր Տնայնագործական Ընկերութեանը և նրա ձեռքերին վիճակված և վերապահված է կատարել զեկամարների պաշտօնները, լինել տեղական հոգատարներ և կազմակերպողներ, ինչպէս այդ արդէն աջողվել է այս երկու տարվայ գործունէութեան միջոցին: Եւ դա շատ կարևոր է: Որովհետև առանց այդպիսի հիմնարկութիւնների և գործօնների, միայն քարոզներով և յորդորներով շուտ չէ պատրաստվում նորը կեանքի մէջ: Նրանք կարողացել են մուտք գործել գիւղական ժողովրդի մէջ, արթնացնել նախաձեռնութեան ոգի աշխատարկների մէջ և հիմք դնել կազմակերպութիւնների, որոնք պէտք է գործեն ապագայում, եթէ մարդկանց թուութիւնները և ուրիշ արգելքներ խոչընդոտ չը հանդիսանան:

Մեր Ընկերութիւնը օգնել է գաւառական արհեստանոցներին, տալով վարպետներ, գործիքներ և թելեր, կատարելով յանձնարարութիւններ, դեկավարելով գործը: Շատ արհեստանոցներ ստացել են ձրի տօրքեր կամ ձրի վարպետներ որոշ ժամանակամիջոցի համար:

Այդպիսի օգնութիւնները էական նշանակութիւն ունեն թէ գործի սկզբում և թէ նրա շարունակութեան ժամանակ: Յաճախ աջակցութեան չը լինելու պատճառով խանգարվում և քանդվում են շատ օգտաւէտ և գեղնցիկ գործեր:

Ապագայում էլ թէ մեր Ընկերութիւնը և

թէ ուրիշ հիմնարկութիւններ պէտք է աշխատեն աջակցել նորաբաց արհեստանոցներին առաջին մի կամ երկու տարվայ ընթացքում նիւթական և մասնագիտական աջակցութեամբ: Ընդհանրացնելով խօսքը պէտք է յայտնենք, որ եթէ կառավարութիւնը դարձնի իր համար պարտաւորեցուցիչ կանոն՝ օգնել նորաբաց ջուլհականոցներին մի 200 բուբլի նպաստով, նա չափազանց դիւրացրած կը լինէր արհեստանոցների բացման և պահպանութեան խնդիրը:

Մենք կարծում ենք, որ Թիֆլիսի Բօրսային Կօմիտէտը և Վաճառականների Փոխադարձ Օգնութեան Ընկերութիւնը կարող էին աջակցութիւն ցոյց տալ տնայնագործական արհեստի և արդիւնագործութեան զարգացման: Եւ դա նրանց անմիջական պարտաւորութիւնն է: Եթէ ինքը արդիւնագործական դասը, վաճառականութիւնը և բօրսան չեն ցանկանում հետամուտ լինել այն ամենին, ինչ որ վերաբերում է արդիւնագործութեան և վաճառականութեան զարգացմանը, չը պէտք է զարմանալ, որ մենք շարունակում ենք մնալ յետամնաց վիճակի մէջ:

Միևնոյն ժամանակ չէ կարելի ցաւ և զարմանք չը յայտնել, որ մեր արդիւնագործների և վաճառականների մէջ չերևացին անձնաւորութիւններ, որոնք կրթված բուրժուազիայի դեր ստանձնէին և եւրօպական իրանց դասակիցների նման մեկի-

նասններ հանդիսանային այս ու այն արհեստի զարգացման համար:

Ինչ վերաբերում է տնայնագործների ընկերակցութիւններին, դրանք այն ցանկալի ձեռնարկութիւններն են, որոնց կազմակերպութեանը պէտք է նպաստել, տալով սկզբում նոյնիսկ որոշ օժանդակութիւն և դնելով նրանց արտօնեայ վիճակի մէջ: Պէտք է մշակել կանօնադրութեան մի քանի ձևեր, օգտովելով «նօրմալ» և ուրիշ կանօնադրութիւնների ծրագիրներից, որպէսզի ցանկացողները ղժուարութիւնների մէջ չընկնեն և կարողանան անմիջապէս դիմել կազմակերպութեան:

Ընկերակցութիւնները ոյժ կը տան տնայնագործներին, պաշտպանելով նրանցից իւրաքանչիւրին պատահականութեան քմահաճոյքներից, հնարաւորութիւն տալով միացեալ ոյժերով ձեռք բերելու էժան մթերք, բանակցութիւններ վարելու լուրջ առևտրական հիմնարկութիւնների հետ, վերցնելու պատուէրներ այնպիսի քանակով, որ զբաղմունք ներկայացնի շատ աշխատող ձեռքերի համար շաբաթների և ամիսների ընթացքում և օգտովելու էժան կրեդիտից, որը էական նշանակութիւն ունի մեր գիւղական անձայր պարտքերի տակ ճնշված զժբաղդ գիւղացիութեան համար:

Երբ մի կողմից հիմնարկութիւնները, միւս կողմից մասնաւոր նախաձեռնութիւնը, իսկ երրորդ կողմից ընկերակցութիւնները կը սկսեն եռանդով գործել, այն ժամանակ

տնայնագործութեան զարգացումը կընկնի առաջընթացութեան իր շաւղի մէջ և շուտով կը դառնայ մեր ժողովրդական տնտեսական կեանքի աչքի ընկնող արտայայտութիւններից մէկը:

Այն ժամանակ կը բաժանվին դերերը և կարելի կը լինի իմանալ, թէ ով է վերցնում իր վրա կազմակերպական գործը, ով է ղեկավարում ուսուցման գործը, ով է հոգում նկարներ, նմուշներ և ալբոմներ պատրաստելու գործը, ով է զբաղվում ինքնուրոյն ոճեր ուսուսմասիրելու խնդրով, ով է պարզում արհեստների համեմատական շահաւէտութեան աստիճանը և նրա վրա ազդող պայմանները:

Այդ կը լինի՝ եթէ մենք միահամուռ ոյժերով գործի ձեռնարկենք և լուրջ աշխատենք:

Սրանով ես վերջացնում եմ իմ ղեկուցումը:

VI

Եզրակացութիւններ և որոշումների համար մշակված կէտեր:

Եզրակացութիւնները, որոնք բղխում են իմ ղեկուցումից, հետևեալներն են.

1) Տնայնագործութեան արդիւնաւէտութիւնը պէտք է որոշել գիւղական կեանքի պայմաններում:

2) Պէտք է ուսուսմասիրել տնայնագործական արհեստների արդիւնաւէտութեան

աստիճանը երկրի զանազան մասերում և պայմաններում:

3) Տնայնագործական արհեստների շըրջանները պէտք է բաժանել ոչ միայն ըստ տեղական մթերքների առատութեան, այլ և ազգաբնակչութեան պահանջների և տնտեսական հանգամանքների համաձայն:

4) Արհեստանոցները պէտք է բանալ գլխաւորապէս գիւղական շրջաններում և օժտել նրանց՝ գործիքներով, գրադարաններով և նմուշների հաւաքածոներով:

5) Իւրաքանչիւր արհեստանոցի շուրջ պէտք է կազմել մի վարչութիւն կամ հոգաբարձութիւն, որը աջակցէր նրա գործունէութեանը: Նոյն նպատակին կարող են ծառայել և մեր Տնայնագործական Ընկերութեան տեղական ճիւղերը:

6) Պետութիւնը կամ հաստատութիւնները պէտք է իւրաքանչիւր գիւղական արհեստանոցի տան առաջին և գուցէ երկրորդ տարվայ համար օժանդակութիւն և օրինակ ջուլհակութեան համար ոչ պակաս, քան մի 200 ռուբլի, թողնելով ծախքերի միւս մասը գիւղերի վրա:

7) Արհեստանոցը պէտք է սովորեցնի աշակերտին ընդունել պատուէրներ և նրանց ճշդապէս կատարել:

8) Արհեստանոցների ուսուցիչներ պատրաստելու համար անհրաժեշտ է ունենալ տնայնագործութեան մի կամ մի քանի ճիւղերի կենտրոնական դպրոցներ յարմար կէտում բոլոր պարագաներով:

9) Այդ դպրոցների վարպետներից կարող են պատրաստուել հրահանգիչներ կամ ինստրուկտորներ որոշ փորձառութիւնից և կատարելագործութիւնից յետոյ:

10) Կենտրոնական դպրոցին կից պէտք է բանալ լրացուցիչ դասընթացքներ նոր գործիքների և կերտածքների հետ ծանօթացնելու համար:

11) Պէտք է քաջալերել թէ գործիքների և թէ արհեստների մէջ կատարելագործութիւն անողներին դրամական և այլ օժանդակութիւններով:

12) Միջոցներ ձեռք առնել ուսումնասիրելու կովկասեան ոճերը և պատրաստելու ալլոմներ հրատարակութեան և ընդհանուր գործադրութեան համար:

13) Վերցնել պատուէրներ զանազան հիմնարկութիւններից՝ դպրոցներից, հիւանդանոցներից, դորամասերից, ատեաններից և մասնաւոր գրասենեակներից՝ աշխատանք տալու տնայնագործներին:

14) Խնդրել թիֆլիս քաղաքի ինքնավարութիւնից և թիֆլիսի Բօրսային Կօմիտէտից, որ նրանք միասին, աջակցութեամբ Տնայնագործական Կօմիտէտի, Հայ Տնայնագործական Ընկերութեան և այլ հիմնարկութիւնների, ինչպէս օրինակ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան, բանան մի պահեստ-թանգարան՝ նման Մօսկուայի և Վեստկայի պահեստ-թանգարաններին:

15) Աջակցել դաւառական այն փորձերին,

որոնք նպատակ ունեն կազմակերպել տնայ-  
նագործական իրերի վաճառահանումը:

16) Նպատակ տնայնագործների ընկերակ-  
ցութիւնների կազմակերպութեանը և մշակել  
կանօնադրութեան ծրագիրներ:

17) Խնդրամատոյց լինել, որ թէ մասնա-  
ւոր տնայնագործների և թէ ընկերակցու-  
թիւնների համար հաստատուի էփան կրե-  
դիտ:

18) Պահպանել միութիւն տնայնագոր-  
ծական գործողների միջև և զարգացնել  
ներանց միջև յարաբերութիւնները համա-  
գումարներով, խորհրդակցութիւններով,  
ցուցահանդէսներով և հրատարակութիւն-  
ներով:



## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Արիս. Փարեմուզեանի

(կարգացում 3-ին տարիւի)

Իմ ներկայ զեկուցումով նպատակ ունեմ  
խօսելու գորգագործութեան մասին, որը,  
դժբաղդաբար, անուշադիր թողնուելու պատ-  
ճառով, այն օգուտը չի տալիս, ինչ որ կը-  
տար, եթէ մենք լուրջ ուշադրութեան ար-  
ժանացնէինք նրան:

Եթէ գորգագործութիւնը համեմատելու լի-  
նենք օր. շուրհակագործութեան հետ, կը-  
տեսնենք, որ գորգագործութիւնն ունի մի  
քանի առանձնայատկութիւններ: Իմ կարծի-  
քով գորգագործութեանը առաջին տեղը  
պէտք է տալ, իսկ շուրհակագործութեանը՝  
երկրորդ:

Ինչպէս երևում է պ. Քալանթարի զեկու-  
ցումից, Բագուի Կուլտուրական Միութեան  
մեկիօրատիվ սեկցիան շուրհակագործու-  
թեան ամեն մի գործիքի համար կարիք ունի  
մի քառակուսի սափէն տարածութեան և 40  
րուբլի ծախսի: Կարծեմ ամեն մի գործիքի  
վրայ կարող է աշխատել մի հոգի: Իսկ գոր-  
գագործութեան մի գործիքը կարելի է տե-  
ղաւորել  $\frac{1}{2}$  քառ. սափ. տարածութեան վրայ,  
ուսի 7 ը. ծախս և ամեն մի գործիքի վրայ  
կարող են աշխատել 3 հոգի: Այսպէս ուրեմն

3 քառ. սաժ. տարածութիւն ունեցող սե-  
նեակում կարելի է տեղաւորել՝

Ղուհակի 3 գործիք 3 աշխատողով և 120 ր.  
ծախսով.

գորգագործութեան 6 գործիք 18 աշխա-  
տողով և 42 ր. ծախսով:

Գուցէ լինեն ասողներ, թէ գորգագործու-  
թիւնը անօգուտ արհեստ է, որովհետև պատ-  
րաստուած գորգերը արժան են վաճառուում:  
Այն, այդպէս է թւում, երբ գորգագործու-  
թեանը նայում ենք արտաքինից, բայց եթէ  
լաւ ծանօթանանք այդ արհեստի հետ, կը-  
տեսնենք, որ այդպիսի չէ:

Գորգագործութեան արհեստին է վերա-  
բերում՝ բացի գորգերից՝ նաև կապերտի,  
սումախի, խուրջիւնի, մաֆրաշի, ուղիկների,  
բարձի և մութաքայի երեսների, սփռոցների  
և պատուհանի վարագոյրների գործը:

Եթէ ընդունենք, որ գորգագործը գորգից  
փրասուում է, այդ դէպքում կարող է պատ-  
րաստել վերոյիշեալներից այն, որն ատելի  
ձեռնասու է: Եթէ գորգագործութեան ղեկա-  
վարութիւնը, յանձնուի հմուտ և փորձուած  
վարպետի, գորգերից էլ փնաս չի ստացուի:  
Որովհետև, եթէ վերցնենք մի պուդ թել և  
տանք միևնոյն վարպետին, որպէսզի երկու  
խալիչա գործի իրարից տարբերակարներով  
կամ տարբեր երկարութեամբ ու լայնու-  
թեամբ, և վաճառքի հանենք, կը տեսնենք,  
որ, չնայած այդ երկու գորգերը միևնոյն  
վարպետի գործ են և հաւասար նիւթ ու  
ժամանակ է գործադրուած, բայց գները

տարբեր են: Այնպէս որ գործուած խալիչայի  
գինը կախուած է լինում նկարներից և խա-  
լիչայի երկարութեան՝ լայնութեան հետ ու-  
նեցած յարաբերութիւնից: Բացի այդ՝ տա-  
րուայ զանազան ժամանակներում գորգա-  
գործութեան համար գործադրուող թելի գինն  
էլ զանազան է լինում. ուստի իր ժամանա-  
կին թել գնողը խալիչայից ոչ մի դէպքում  
վնաս չի ստանայ:

Եթէ բացուի գորգագործութեան արհես-  
տանոց, կարելի է բանալ և մի խոսութ,  
որտեղ վաճառքի կը հանուեն արհեստանոցում  
պատրաստուած իրերը:

Գորգագործութեան համար կան նմուշ-  
ների աղիւսակներ և ալբոմներ, որոնց մի  
մասը կարելի է ձեռք բերել Թիֆլիսում: Իսկ  
առանձնապէս գորգերի համար կան ալբոմ-  
ներ «Узоры для ковровъ» մակագրութեամբ,  
որ կարելի է ձեռք բերել Մոսկվայից և  
Ռուսաստանի այլ բաղաքներից:

Գորգագործութեան համար գործիքներ  
կարող է պատրաստել ամեն մի հիւսն, և ա-  
մենամեծ գործիքը՝—տօրքը կը նստի 7 բուբ-  
լի: Բացի տօրքից հարկաւոր է գրչահատ,  
մկրատ և կտուտիչ: Վերջինս պատառաքա-  
ղի ձևով պատրաստուած մի գործիք է, որ  
կարժենայ ամենաշատը 50 կոպ.: Ամեն մի  
գործիքին բաւական է 3 գրչահատ, մի մըկ-  
րատ և մի կտուտիչ:

Աւելի ձեռնասու է բուբղ առնել և գոր-  
գագործութեան համար թելը նրանից պատ-  
րաստել:

Բուրգը մանելու համար աւելի յարմար է գործադրել ոտի ճախարակը, որ անհամեմատ լաւ է մեր նահապետական իլիկաւոր ջահրաններից: Ոտի ճախարակի վրայ աշխատում են՝ կանգնած կամ աթոռի վրայ նստած և մէկ ձեռքով մինչդեռ ջահրաներով թել մանելու համար անհրաժեշտ է գետնին կամ թախտին նստել և աշխատանքը երկու ձեռքն էլ: Ոտի ճախարակով աւելի շուտ է մանում և ստացւում է աւելի լաւ տեսակի թել:

Թելը պատրաստելուց յետոյ աւելի լաւ է ուրիշին չտալ ներկելու համար:

Չխունացող թելեր կարելի է ներկել «Фридрихъ Байеръ и К<sup>0</sup> въ Москвѣ» գոյներով: Այդ ֆիրման ունի գոյների պրէյս-կուրանտ, որի յառաջաբանում հայերէն, ռուսերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով մանրամասն բացատրւում է, թէ ինչպէս պէտք է թել ներկել: Այնպէս որ ամեն մի մարդ կարողով այդ պրէյս-կուրանտը՝ կարող է առանց ուրիշի օգնութեան ցանկացած գոյներով թել ներկել: Այդ պրէյս-կուրանտի մէջ 96 գոյնի թելի կտորներ կան կպցրած և ամեն մի գոյնի դիմացը նշանակուած է, թէ մի գրուանքա մանածի համար այդ գոյնից քանի մասալ է հարկաւոր:

Գորգագործութեան համար պատրաստի վարպետներ առ այժմ կարելի է հրաւիրել այն գիւղերից, որտեղ պարապում են այդ արհեստով:

Գորգագործութիւն կարող են սովորել 9

տարեկանից բարձր հասակ ունեցողները: Աւելի չտիպահանները գորգագործութիւնը կարող են սովորել 3—4 ամսում:

Բացի նոր իրեր պատրաստելուց՝ կարելի է նորոգել մաշուած, այրուած, ցեցակեր խալիչաներ, կապերտներ, սուժախներ և այլն: Գորգագործութեան այդ մի մասով թիֆլիսում պարապում են բազմաթիւ թուրքեր և մեծ օգուտներ ստանում:

Ուսուցիչ Սաչխերեթի հայոց դպրոցի  
Արխատակէս Փարեմուզեան

Սաչխերեթ, 23 մարտի 1909.



# ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՇԱՀԱԻԷՏՈՒ- ԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ե. ԽԱՐԱԶԵԱՆԻ

(կարդացուած Ապրիլի 3-ին)

Ողջոյն Տնայնագործական Համագումարին

Սրտանց համակրելով տնայնագործական՝ գումարուելիք համագումարի գաղափարին, իբրև այդ ձիւղով մասամբ պարապած անձնաւորութիւն, և միջոց ու ժամանակ չունենալով անձամբ ներկայ գտնուելու, ամենախոնարհաբար ներկայացնում եմ հետևեալ զեկուցումը գրաւոր, որը՝ եթէ արժան կը համարէիք՝ կարդացուէր համագումարում:

Լօռու ամբողջ շրջանում, որպէս և Ուզունլար մեծ գիւղում, թէև զեռ ևս մոտք չէ գործել նորոգ տնայնագործական արհեստը, որպէս օրինակ՝ Համամլիում, Դարաքիլիսայում ևայլն, սակայն Լօռու բոլոր գիւղերը, սակաւ բացառութեամբ, մանաւանդ Ուզունլար գիւղը միշտ պարապել են և պարապում են հին՝ նահապետական ձևով գորգերի, կարպետների, մաֆրաշների, խուրջիների և այլ գանաղան բրդեայ հիւսուածքների արտադրութեամբ, որոնք թէ ծառայել են տեղական պէտքերին՝ իբրև հարմնացունների բաժինք և տան կարասիք, և թէ վաճառահանուել են շրջակայ կենդ-

րոնները՝ որպէս վաճառքի՝ և հետևապէս շահաստացութեան առարկայ. սակայն գործը ոչ մի տեղ կանօնաւոր կազմակերպութեան տակ չէ դրուած, չըկան սպառելու համար մի յայտնի կենդրօն—չուկայ, չըկան ցուցահանդէսներ, նոր նմուշների պահանջներով արհեստը կատարելագործողներ ևայլն:

Ուզունլար գիւղը, որ Լօռու բոլոր գիւղերից ամենաբազմամարդն է, և դժբաղտարար տնտեսապէս բոլորից էլ ստոր աստիճանի վրա կանգնածը, բաղկացած է մօտաւորապէս 4000 երկու սեռի հոգուց: Սրա կէսը եթէ հաշուենք իգական սեռին պատկանողներ և նրա մի երրորդը աշխատանքի ընդունակ— 12—40 տարեկաններ, կըստանանք մի պատկառելի թիւ բանուոր ձեռքերի, այն է աւելի քան 600 հոգի. և եթէ այդ 600 հոգուն գործ տրուէր ձմեռուայ եօթ ամիսներում, որպէսզի իւրաքանչիւրը ստանար ամսական գէթ հինգ ըուրլի—հացը՝ իրանցից—ըստ որում առանց այն էլ տանը պարապ նստած հաց են ուտում—կըստացուէր աւելի քան 20,000 ըուրլի տարեկան—մի նշանաւոր գումար՝ որը կընպաստէր շինականի բերարարի կարիքներին զգալի չափով և հետևապէս տակաւ առ տակաւ կըզարգանար և կըկատարելագործուէր երկրի արդիւնարեւութիւնը:

Սակայն ռոպիսի հիմունքներով ու միջոցներով պէտքէ ձեռնամուխ լինել գործին, որ ցանկալի արդիւնքն ու հետևանքը ստացուի, անա իմ կարծիքով այդ պիտի լինի ՚ի մի-

Ղի այլոց համագումարի քննութիւնների առարկան:

Չմտած դեռ ևս համագումարին ներկայացուելիք ութը յօդուածներին մասին արուած հարցերին իմ կողմից պատասխանելու ասպարէզը, պատկանելի ժողովին պարտաւորում եմ ներկայացնել հետևեալը:

Ես, ստորագրողս, որպէս վերը յիշեցի, մասամբ պարապել եմ և սիրում եմ տնայնագործութիւնը: Իմ կինը և ամուսնացած երկու աղջիկներս վարպետուհիներ են զանազան բրդեայ գործուածքների, այն է կարպետ, գորգ, մաֆրաշ, խուրջին և այլն: Ես անցեալ տարուայ վերջերին մի կարպետ էի ՚ի ցոյց դրել վաճառելու համար «Մեղու» ընկերութեան ցուցահանդիսում—որը գուցէ թանգ լինելու պատճառաւ չըվաճառուեց (գնահատել էի 100, իսկ տուել էին 80 ռ):

Կարևոր եմ համարում այստեղ ներկայացնել մի հաշիւ, որը ուղիղ է, և հիմնուած փորձերի վրայ: Օրինակ դուք ցանկանում էք ունենալ մի կարպետ—որ և է նմուշի կամ ուզօրի—ձեր ննջարանի կամ դահլիճի պատը կամ յատակը զարդարելու համար: Այդ կարպետը, դիցուք, ունի 100 վերջոկ երկայնութիւն և 50 վերջօկ լայնութիւն, դուք մի այդպիսի կարպետին պէտքէ վճարէք 100 ըուրլի, այն է ամեն մի քառակուսի վերջօկին երկու կոպէկ. բացատրենք թէ ինչո՞ւ այդքան:

Մի այդպիսի կարպետի համար հարկաւոր է ունենալ 2 փութ բնական, ոչ մաքուր

բուրդ, որը յստակած, լուացած, երկու անգամ զգած ու մանած տալիս է մի փութ մաքուր թել, որը և գործադրում է կարպետի համար անմնացորդ:

2 փութ բուրդը միջին գնով	14 ռ.
Լուանալը և զգելը	4 ռ.
Մանելը և ուրրելը	8 ռ.
30 Ֆունտ թելի ներկելը (10 Ֆ. առէջը ներկել չէ ուզում)	6 ռ.

Գումարը 32 ռ.

Այժմ գործելավարձը.

Չորս լաւ սովորած բանւորուհիները մի այդպիսի կարպետից գործում են վեց օրուայ մէջ մէկ արշին, եթէ հաշուենք օրավարձ— իրանց հացովը—օրական 25 կոպէկ, մի՛ գործուած արշինը արժենում է 6 ռ. ուրեմն վեց արշինը

36 ռ:

Հինելը և ասպելը

2 ռ.

Գումարը 38 ռ:

Նախընթացի հետ 70 ռ.

Եթէ մենք մի այդպիսի կարպետ վաճառում ենք 100 ըուրլիով, վաստակում ենք միմիայն 30 ռ. որը պէտքէ բաժանուի վարպետուհու և միջնորդ վաճառողի մէջ, դուրս գալով նա և բնակարանի բրեճ և յանձնելու արժէքը:

Այս այսպէս պարզաբանելուց յետոյ՝ համագումարի անդամները կը համոզուեն, որ քառակուսի վերջօկին 2 կոպէկ գինը թանգ չէ, իսկ եթէ, օրինակ, Թիֆլիսում արտագրուէր մի այդպիսի կարպետ, անհամեմատ աւելի թանգ կ'նստէր մթերքների և բանուորուհիների թանգութեան պատճառով:

# ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՄԿԱ- ԿԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ալ. Բալանթարի

(Կարդացուած 3-ին ասլրիւի 1909)

Համաշխարհային շուկայում պարսկական գորգերը շատ յարգի են և վայելելով առանձին հռչակ, վաճառահանուում են աւելի արագ, աւելի մեծ քանակով և աւելի ապահով, քան ուրիշ տեղերի գորգերը, նրանց թւում և մեր կովկասեան գորգերը:

Ունի՞ արդեօք պարսկական գորգագործութիւնը մի որևէ գաղտնիք, որը թագուում է ուրիշ վայրերից և միայն յայտնի է իրանց պարսկաստանցիներին:

Ամենևին ոչ: Գաղտնիք չը կայ արհեստի մէջ և գորգագործութիւնը կատարուում է ազատ, առանց թագուատի մէջ ծածկուելու:

Եթէ կայ մի գաղտնիք, դա այն է, որ պարսկական գորգագործը վերաբերուում է իր գործին բարեխիղճ կերպով և աշխատում է, որ իր պատրաստած գորգը լինի կարելին չափ կատարեալ գործ:

Պարսիկ գորգագործը հաւատարիմ է մնում արհեստի պահանջներին: Նա վերցնելով մի որ և է բնորոշ նմուշ և նկար, որ ընդունուած և յարգի է երկրի մէջ, աշխատում է նոյնութեամբ վերարտադրել նրան, պահպա-

նելով ոճը և նկարի մասերի դասաւորութիւնը: Եւ չը նայելով այն բանին, որ նա գործում է հին, նահապետական կատարելագործութեան կարօտ տօրքերի վրա, նա շնորհիւ իր հմուտ աշխատանքի դուրս է բերում գորգեր, որոնք բարձր են զնահատուում շուկայում:

Իրաքանչիւր շրջան ունի իւր յատկանիշ նկարները, որոնց հետևում է գորգագործը, և իր ընդունած չափսը գորգերի համար: Գնողը հաճութեամբ զնում է բոլորը, միայն թէ նրանք հարազատ և հաւատարիմ մնացած լինեն որոշ ոճի, ունենան ամուր ներկեր և նուրբ պատրաստութիւն:

Պարսիկ գորգագործները խուսափում են խուճապող ներկերից և չեն գործածում անիլինի ներկեր: Դա նոյն իսկ արգելուած է կառավարութեան կողմից: Ներկելու համար մեծ մասամբ գործ են անում տեղական բոյսեր և նիւթեր, որոնք յայտնի են հին ժամանակից: Վերջերում սկսել են գործածել նաև ալիդարինի ներկեր, երբ համուղեցին, որ նրանք ամուր գոյն են տալիս, չը խուճապող:

Եթէ յայտնի է դառնում, որ մի որ և է տեղում պատրաստուում է գորգ խուճապող գոյներով, կառավարութիւնը արգելք է է դնում նրա արտահանութեանը, թողնելով, որ այդ գորգը գործ անուի երկրի մէջ:

Պարսկաստանի գորգերի ամենախոշոր արժանաւորութիւններն են: Գորգերի գործելու ժամա-

նակ պահանջուում է մատների շարժման հմտութիւն և որովհետեւ մանուկները աւելի քնքոյշ և դիւրագգաց մատնիւր ունեն, ուստի նրբագոյն գորգերի պատրաստութիւնը յանձնուում է մանուկներին: Իսկ երբ վերջիններս հասա՞ղ են առնում և նրանց մատները կոշտանում են, այն ժամանակնուրբ գորգագործութիւնը վերցնում են նրանց ձեռքից և յանձնում աւելի մատաղ սերնդին:

Պէտք է յուսալ, որ ժամանակով, երբ գորգագործութեան մէջ կը սկսեն մուտք գործել աւելի լաւ տօրքեր և կիւրացուեն մի քանի կատարելագործութիւններ, կարելի կը լինի թիթեացնել աշխատանքը. բայց ներկայումս արձանագրում ենք եղած դրութիւնը:

Պարսկաստանում գորգագործութիւնը առաջ է գնում նախկին գործիքներով և կատարելագործութիւններ դեռ չեն մտած:

Մի փոքր կատարելագործութիւն մտցրել է ևրոպական Յիզլեր առևտրական տունը, որը ունի արհեստանոց Սուլթանաբաղ կոչուած տեղում Համադանի կողմերում: Յիզլերը ինքը պատրաստում է բուրդ, գզելով, մաքրելով, ներկելով նրան, որը յետոյ ծախում գորգագործներին: Միանգամից մեծ քանակով ներկելը այն առաւելութիւնն ունի, որ թելերի որոշ գոյները ստանում են միատեսակ ոյժ և փայլ: Մինչդեռ փոքր քանակով թել ունեցած ժամանակ, դժուար է աջողուում երկրորդ և երրորդ նմուշները ներկել ճիշտ այնպէս, ինչպէս առաջինը: Գորգա-

գործները, գնելով նիւթը, պարտաւոր են իրանց պատրաստած գորգերը վաճառել բացառապէս միայն և միայն Յիզլերին: Միևնոյն ժամանակ գորգերը պատրաստուում են որոշ նմուշների համաձայն, որ բաժանում է նրանց Յիզլերը: Այդ նմուշները համապատասխան են պարսկական ընդունուած և յարգուած ճաշակի ու ոճի:

Այն գորգերը, որոնք պատրաստուում են կովկասում, նոյնպէս վաճառահանուում են Եւրոպա, բայց դրանք համեմատաբար աւելի կոպիտ են և չեն գոհացնում այն պահանջը, որին այնքան աջողութեամբ բաւարարութիւն է տալիս պարսկական գորգագործութիւնը:

Գորգերի նկարների, գոյների և չափսերի վերաբերութեամբ գնողները ունեն իրանց յայտնի պահանջները: Օրինակ՝ յայտնի է, թէ ինչպիսի գորգեր են պահանջուում, դիցուք, Ամերիկայի և ինչպիսիները Ֆրանսիայի կամ Անգլիայի համար:

Պէտք է նկատել, որ ներկայումս գորգերի մեծագոյն մասը վաճառահանուում է դէպի Ամերիկա: Կարելի է ասել արտահանուող գորգերի 70 տոկոսը ուղարկուում է անմիջապէս Ամերիկա: Եւ նոյն իսկ այն մնացած 20 տոկոսից էլ որ գնում է Անգլիա և մասամբ Ֆրանսիա, չէ մնում այդ երկիրներում և, օրինակ, Անգլիայից դարձեալ փոխադրուում է Ամերիկա:

Պարսկաստանի գորգագործութիւնը ուսանելի է միայն այն կողմից, թէ ինչպէս

հաւատարիմ մնալով որոշ պահանջները և բարեխղճօրէն ապրանք պատրաստելով, կարելի է բարձր պահել պարսկական գորգերի նշանակութիւնը և արժէքը: Ինչ վերաբերում է գործիքներին, աշուշտ, ցանկալի կը լինէր մտցնել որոշ կատարելագործութիւններ՝ թեթևացնելու գորգագործի ծանր աշխատանքը:

Մենք տուինք ներկայ տեղեկութիւնները, հիմնուելով պ.պ. Զաքարեանի, Նազարբէգեանի և ուրիշների հաղորդածների վրա. բայց ցանկալի է, որ յատուկ ուսումնասիրութիւն կատարուէր պարսկական գորգագործութեան վերաբերութեամբ, մանաւանդ որ պարսկական գորգը բնում է ներկայումս առաջնակարգ տեղ մեր շուկայում:

Միևնոյն ժամանակ մեզ հարկաւոր են գորգերի այն բոլոր նմուշները, որոնք յարգի են Պարսկաստանում և բարձր գին ունեն համաշխարհային շուկայում:

Չը նայելով մեր հարեանութեան, մենք բիչ տեղեկութիւններ ունենք պարսկական արհեստագիտութեան մասին: Սակայն, մենք լաւատեղեակ չենք նաև մեր երկրի արհեստների վերաբերութեամբ:

Այժմ, երբ արհեստը և արհեստի ուսուցումը ու տարածումը դարձել են հետաքրքրութեան առարկայ, ցանկալի է, որ օր առաջ կատարուի այդ ուսումնասիրութիւնը: Դա ունի գործական նշանակութիւն:

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ԱՐԿԵՍՏԱՆՈՑ ՀԻՄ-ՆԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Իշխ. Մ. Թումանեանի

(կարգացում 3-ին սպրիտի 1909 թ.)

Ամէն մէկը, որ համարում է իրան ժողովրդի բարեկամը, պիտի ձգտի ստեղծել այնպիսի դրութիւն, որ ժողովուրդը ստիպւած չլինի շարունակ ձեռք մեկնել օգնութեան, այլ կարողանայ անկախ աշխատանքով բարելաւել իր կենցաղը: Մեր երկիրը, որ այնքան հարուստ է ամեն տեսակ բարիքներով, ներկայումս մատնուած է աղքատութեան, որովհետև ժողովուրդը տառապում է տգիտութեան ճիրաններում և անընդունակ է շահագործել բնութեան հարստութիւնները: Գիտակից և ինտելիգենտ մարդկանց պարտականութիւնն է դուրս բերել նրան այդ մթնոլորտից և ցոյց տալ ազնիւ ու փրկարար աշխատանքի ճանապարհը:

Ինձ թւում է, որ տարածելով արհեստների գիտութիւնները, մենք մասամբ կը հասնենք այդ նպատակին, սովորեցնելով երիտասարդ ոյժերին գործադրել արդիւնաւէտ կերպով իրանց աշխատանքը և ընդունակութիւնները:

Խնդիրը նրանումն է, թէ ինչ տեսակ աշխատանք ստեղծել, որ 1) մատչելի լինէր մեծամասնութեանը, 2) մեծ ծախսեր չըպահանջէր գործիքների համար, 3) ոչ թէ մրցէր երկրում արդէն գոյութիւն ունեցող մասնաւոր աշխատանքների հետ, այլ ընդհակառակն բարելաւէր և զարգացնէր նրա արդիւնաբերութիւնը:

Չնորոշուած տեսակները բազմաթիւ են, կարելի է շահագործել փայտը, ուռնիին, բուրդը, բաժրակը, կաւը և այլն. բայց որովհետեւ ես ծանօթ եմ միայն գորգագործութեան հետ, ուստի այսօր կը շօշափեմ այդ հարցը:

Մի քանի տարի սրանից առաջ ես ունէի թիֆլիզում գորգագործութեան արհեստանոց, որի մասին մանրամասն զեկուցումն եմ տուել թիֆլիզում 1909 թ. կայացած համագումարին: Որովհետեւ այդ զեկուցումը տպուած է համագումարի աշխատութիւնների մէջ և հետաքրքրողները կարող են օգտուել իմ տուած նիւթերից, ես աւելորդ եմ համարում կրկնութիւն անել այստեղ, բայց կարճաժամ տեղեկութիւններ կը տամ այդ արհեստի վերաբերեալ:

Գորգագործութիւնը շատ տարածուած է կովկասում և կան վայրեր, օրինակ Ղարաբաղ, Ղուբա, Ղազախ, Դաղստան, Կաղզուան, Օլթի, Սուրմալու, Լենքորան և այլն... որտեղ յատկապէս դրանով են զբաղուած:

Ոչխարապահութիւնը տալիս է ժողովրդին բացի գլխաւոր միջոցներից՝ մսից ու

պանրից, ահագին քանակութեամբ բուրդ, որ համարուում է անհրաժեշտ պիտոյք օրական կարիքի մէջ: Բրդից շինում են չուաններ, խուրջիներ, գորգեր, քեչաներ, թաղիքներ, հափնջիներ, ոտնամաններ, գուլպաներ և այլն. բայց այնուամենայնիւ այնքան շատ է բրդի քանակը, որ ստիպուած են լինում նրան դուրս տանել օտար երկիրներ, գլխաւորապէս Մարսէլ: Բուրդի գինը առհասարակ բարձր չէ, իսկ շնորհիւ առևտրի վատ կազմակերպութեան, այսինքն բազմաթիւ միջնորդների գոյութեան, այնքան է ընկնում նրա գինը, որ բոլորովին ձեռնտու չէ ծախելը և միայն մեծ կարիքն է ստիպում անել այդ:

Այլքի առաջ ունենալով այդ հանգամանքը, ցանկալի է զարգացնել բրդի վերամշակութիւնը և սովորեցնել նոր տեսակ գործուածքներ դուրս բերել այդ նիւթից: Եթէ գորգագործութիւնը հիմնաւոր կերպով դրուի, նա ունի մեծ ապագայ, որովհետեւ ձեռքով պատրաստուած գորգերը աւելի ամուր են և աւելի բարձր են գնահատուում քան թէ մեքենայով գործածները:

Իմ երեք տարուայ փորձի հիման վրայ թոյլ եմ տալիս ինձ ասելու, որ գորգագործութիւնը յաջողութիւն կունենայ միմիայն գիւղերում: Քաղաքի պայմանները և քաղաքացիների պահանջները անհնարին են դարձնում այդ արհեստի տարածումը քաղաքներում: Բնակարանները թանգ, նիւթերը թանգ, օրավարձը չնչին... մինչդեռ գեղջ-

կուհին ոչ մի կողմէկ չէ ծախսում նիւթերի վրայ, բնակարանի վարձ չի տալիս և բաւականանում է ամենաչնչին օրավարձով:

Բայց գեղջկուհին, զուրկ լինելով ճաշակից, յաճախ ընդօրինակում է հասարակ չթերի նկարները, գործում է հին նահապետական գործիքներով, որոնց վրայ դժուար է դուրս բերել հաւասար, նուրբ գործուածքներ և խառնում է գորգերի մէջ էփանազին, խոնացող ներկեր: Այդ բոլոր հանգամանքները պցում են գորգերի գինը և այդ պատճառով գորգագործութիւնը չէ տարածուում լայն չափերով: Մեր գորգերը մեծ արժէք կունենան միայն այն դէպքում, եթէ պահպանեն հին նկարները և գործուին բնական, ամուր ներկերով:

Այդ նպատակին մենք կարող ենք հասնել, եթէ միայն ունենանք Թիֆլիզում մի կենտրոնական ուսումնարան, որը մի կողմից դեկավարի գեր կատարէր, իսկ միւս կողմից միջնորդ հանդիսանար աշխատողի և առնողի մէջ: Տնայնագործական արուեստներ մասամբ չեն տարածուում և այն պատճառով, որ շատ քիչ աշխատավարձ են տալիս:

Շնորհիւ այն հանգամանքի, որ լուրջ կազմակերպութիւն չըկայ մրցելու համար բազմաթիւ միջնորդների դէմ, սրանք ցեցերի պէս ուտում են գեղջկուհու աշխատավարձը, որ ձեռնտու չէ ոչ արդիւնաբերողի և ոչ առնողի համար: Կենտրոնական ուսումնարանում կը մշակուին կատարելագործուած գործիքներ, կը պատրաստուին գեղեցիկ նկար-

ներ, մանուածներ և ներկեր: Այդ ուսումնարանում աւարտող երիտասարդները և օրիորդները կը շրջեն գիւղեր և տեղն ու տեղը ցոյց կը տան ժողովրդին գործելու լաւ ձևերով կտորներ, գեղեցիկ, բնորոշ օրինակներ և այդպիսով կը բարձրացնեն գորգագործութեան արդիւնաբերութիւնը:

Նոյն ուսումնարանում կարելի է կենտրոնացնել տնայնագործական միւս արուեստները, օրինակ ջուլհակութիւնը, ասեղնագործութիւնը, հաբրագործութիւնը և այլն...

Այդ տեսակ ուսումնարանի ծրագիրը և նախահաշիւը ներկայացրել եմ 1909 թ. կայացած համագումարին, որը համակրանքով վերաբերուեց այդ մտքին, բայց իրանից անկախ պատճառներով չը կարողացաւ իրագործել: Այժմ ես նորից արձարձում եմ այդ հարցը, ինքս համոզուած լինելով նրա օգտակարութեան մէջ:

Մենք ամէն ջանք գործ պիտի դնենք ժողովրդին աշխատանք տալու գիւղերի մէջ, որպէսզի առաջը առնենք կորստաբեր ընթացք ստացած հոսանքին դէպի պանդխտութիւն:

Միջոցներից մէկը արհեստների տարածումն է, որի յաջողութեան համար և անհրաժեշտ եմ գտնում կենտրոնական ուսումնարանի հիմնելը:

Որովհետև ուսումնարան պահելու ծախսը մեր տնայնագործական ընկերութեան ոյժերից վեր է, ուստի ես կը խնդրէի յարգելի համագումարին միջնորդել կառավարութեան

առաջ, որ նա գլուխ բերի այդ գործը, կամ  
թէ որոշ գումար յատկացնի մեզ այդ նը-  
պատակի իրագործութեան համար:

Կարծառօտ քաղուածքներ ուսումնարան արհես-  
տանոցի ծրագրից և նախահարուից, որ գեկուցուած  
է եղել 1909 թ. համագումարում:

1) Թիֆլիզում հիմնուած է կանանց ուսում-  
նարան—արհեստանոց, որի նպատակն է տա-  
րածել Կովկասի տնայնագործական վայ-  
րերում գորգերի և ուրիշ բրդեայ ու բամբակեայ  
գործուածքներ գործելու կատարելա-  
գործուած ձևեր:

2) Այդ ուսումնարան—արհեստանոցում  
ընդունուած են աշակերտուհիներ Կովկասի  
զանազան վայրերից, գլխաւորապէս այն  
տեղերից, ուր տարածուած է գորգագործու-  
թիւն և ջուլճակութիւն: Գիշերօթիկ աշա-  
կերտուհիներ թիւը քսանից չպիտի անց-  
նի, իսկ երթեկներինը կախուած կլինի  
նիւթական միջոցներից և բնակարանի յար-  
մարութիւններից:

3) Թէ գիշերօթիկ և թէ երթեկ աշակեր-  
տուհի ընդունուելու համար պէտք է աւար-  
տած լինել ծխական դպրոցը և 14 տարե-  
կանից ոչ պակաս հասակ ունենալ:

4) Բոլոր հարկաւոր նիւթերը, օրինակ  
բուրդ, բամբակ, ներկեր և այլն... նմանա-  
պէս և գործիքներ մատակարարուած է ու-

սումնարան արհեստանոցը: Աշակերտուհի-  
ները բոլոր գործուածքները ուսումնարան  
արհեստանոցի սեփականութիւն են դառնում  
և նրանց ծախելուց զոյացած գումարը գոր-  
ծադրուած է հէնց գործի լայնացնելու հա-  
մար:

5) Դասատուութիւնը տեւում է 2 տարի,  
իւրաքանչիւր տարին 8 ամսից ոչ պակաս:

6) Ուսումնարան — արհեստանոցի ան-  
բուստը պիտի համապատասխանի գիւղա-  
կան միջակ օջախի սպորուստին:

7) Ուսումնարան—արհեստանոցում աշա-  
կերտուհիները սովորում են հետեւեալը՝

ա) Բուրդագիտութիւն, այսինքն բրդի  
վերամշակութեան բոլոր մանրամասնութիւն-  
ները, բրդի տեսակները, բրդի ջոկջոկելը,  
մաքրելը, լուանալը, չպխելը և այլն...

բ) մանելը զանազան գործիքներով, հաստ  
ու բարակ թելի կարեւորութիւնը գործուած-  
քին համեմատած, հէնքի համար գործած-  
ւելիք թելի և միջնաթելի մեծ նշանակու-  
թիւնը, թելի ամրութիւնը, բրդեայ և բամ-  
բակի թելի տարբերութիւնը և այլն...

գ) ներկելը՝ բնական ու արհեստական ներ-  
կեր, ներկելու զանազան ձևեր, գոյների  
նրբութիւններ, որոշումն այն քանակութեան  
թելի, որ հարկաւոր կլինի սկսուած գործ-  
ւածքի համար: Միանուագ ներկելու մեծ  
նշանակութիւնը:

դ) նկարչութիւն՝ գծերի և անկիւնների,  
նմանապէս երկրաչափութեան մասին զա-  
ղափար կազմելը: Յարմարացնել որոշ նկա-

ըը զանազան մեծութիւնների վրայ: Ուսումնասիրումն հին ասիական և հայկական ոճերի և բնորոշ նկարների: Կովկասի, Պարսկական և ուրիշ գորգերի ոճի զանազանումը: Անկիւնների և միջին նկարի համաչափութիւնը:

ե) Գորգագործութեան և ջուհակութեան կատարելագործածներ, լաւ գործիքներ, հաստ ու բարակ գործուածքներ, կարկատան, նոր տեսակների յօրինումն:

զ) Հաշուապահութիւն, որպէսզի տնայնագործները կարողանան հաշուել իրանց գործուածքի արժէքը, տալ գաղափար շուկայի և նրա պահանջների մասին: Ընկերակցական կազմակերպութիւնների առաւելութիւնը թէ նիւթեր առնելու և թէ գործուածքներ ծախելու համար:

8) Ուսումնարան — արհեստանոցին կից պէտքէ ունենալ պահեստ թէ գործուածքներ և թէ գործիքներ վաճառելու համար և մի մշտական նկարիչ, որը խիստ հսկէր բնորոշ ոճի պահպանութեան վրայ:

9) Այդ ուսումնարան — արհեստանոցում ժամանակ-առ ժամանակ դասնթացքներ կը բացուեն տնայնագործական արհեստների միւս ճիւղերի վերաբերեալ:

Նկատ. 1) Ուսումնարան արհեստանոցում պարապմունքները բացառապէս գործնական են, աշակերտուհիներին տրոււմ են միայն անհրաժեշտ տեղեկութիւններ ըմբռ-

նելու համար գործի վերաբերեալ գործնական ձևեր:

2) Ուսումնարան արհեստանոցի դեկավորները. ամէն ջանք գործ պիտի դնեն որքան կարելի է շատ արդիւնք ստանալ աշակերտուհիների գործուածքներից, որպէսզի դրանով ծածկեն օրական ծախսը:



### ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՆ ԿՈՒԼՏՈՒ- ՐԱՅԻ ԳՆԱՀԱՏԵԼԻ ՃԻՒՂԵՐԸ

Բ. Ղարախանեանի  
(Կարդացուած 4-ին սպրիլի)

Տնայնագործութիւնը, ժողովրդական տըն-  
տեսութեան այդ ձիւղը, նոր բան չէ մեզ  
համար: Այդ արհեստը (տնայնագործութեան  
մէջ հասկանալով և ձեռագործը) շատ աւելի  
բարգաւաճ ու ծաղկեալ վիճակ է ունեցել,  
քան այն, ինչ որ տեսնում ենք ներկայումս  
մեր ժողովրդական իրականութեան մէջ:

Անցէք Թիւրքահայաստան և դուք կը  
հանդիպէք վայրերի, ուր բաւական նուրբ  
ու ճաշակով, զանազանաձև ու բարդ թէ  
տեսքով և թէ գործուածքով տեղագործ կը-  
տորները կը հանդիպէք: Մեր հին ձեռա-  
գործները յաճախ հիացմունք են պատճառել:

Դժբախտաբար այդ արհեստը ինչ-ինչ  
պատճառներով, ձախող հանգամանքների  
շնորհիւ, բարձի է թողնուել և մոռացուել,  
վերածուելով պարզ ձևի, այն է կտաւագոր-  
ծութեան, որը հասարակ արհեստի կերպա-  
բանք է ստացել: Սակայն հենց աւելի զար-  
գացած արհեստների հետքերը դեռ բոլորո-  
վին չեն վերջացել: Ոչ միայն թիւրքահա-  
յաստանում, որ համեմատաբար աւելի ան-  
խախտ որօրան է եղել արհեստի համար, այլ

ուսահայերիս մէջ հիմա էլ, բացի կտաւա-  
գործութիւնից, պատրաստում են աւելի  
բարդ տեսակի կտորներ, և կան բաւական  
հմուտ վարպետ-վարպետուհիներ:

Յիշենք շալերի մի քանի տեսակը: Օրինակ  
գետնագործը, որ հինում և գործում են գետ-  
նի վրայ մեծ մասամբ կանայք: Դա կտաւի  
բարդ գործուածք է, ամենամուր կտորն է:  
Այդ տեսակին է պատկանում և ջեջիմը:  
Նոյն հէնքով, բայց աւելի բարդ գործուած-  
քով գործում են կանացի զանազան գօտի-  
ներ և կապոցներ: Կան վարպետներ, որոնք  
կտաւի հէնքի կամ, ուղիղ է ասել, տօրքի  
(ղազգեանի) վրայ գործում են այնպիսի  
բարդ գործուածքներ, ինչպէս են դիագօնալ  
(շեղ), բեկեալ դիագօնալ, Վաֆէլի տեսակը  
և այլն, երբեմն մի քանիսի խառնուրդը:

Այսպէս Արթիկ գիւղում (Ալեքսանդրօ-  
պօլի գաւառը) յայտնի է իւր գործուածք-  
ներիով Սարգիս Բօյանջեանցը, որ կտաւի  
տօրքի վրայ յիրաւի գործում է յիշեալ բարդ  
գործուածքներից 4—5 տեսակ: Նա այնքան  
հմուտ է այդ գործում, որ հասարակ աչքով  
զննելով, կարողանում է որոշել ամեն մի  
նրա համար անյայտ ու նոր կտորի գոր-  
ծուածքի ձևն ու եղանակը: Պատմում են, որ  
նրա հայրը որպէս թէ անկար շապիկ է գոր-  
ծել ու նուիրել ժամանակակից գաւառապե-  
տին ուս-Թիւրքական պատերազմի ժամա-  
նակ (պատմողները ականատեսներ են):

Շալէ գործուածքներով յայտնի է Արթի-  
կը, որի բնակիչները, որպէս արհեստաւոր

ժողովուրդ աչքի են ընկնում շրջակայքում: Գիւղի մեծ մասը հագնում է շալէ կտորներ: Տղամարդիկ, առաւելագէս երիտասարդները, դնում են թաղիքէ գլխարկներ, կրում են շալէ չուխա, շալէ արխալուխ, շալէ շարվար ու պաճիճներ և բրդէ գուլպաներ: Եւ կարելի է ասել թէ բացի տրեխներէից նրանց հագուստը ամբողջովին բրդից է պատրաստուում: Եւ Արթիկցիին ստեղծել է ուրոյն տարագ, որով նա ամեն տեղ ճանաչուում է:

Արթիկցուէն ճանաչում են առանց հարց ու փորձի, միմիայն տարագով: Իսկ կանայք գործում են շալէ գոգնոցներ ու գօտիներ: Այլ ևս չեմ խօսում գորգերի, քեշիմների, փալասների ու այլ կտորների մասին, որ համատարած են:

Շրջեցէք Շիրակը, Աբարան, Ղարաբաղ, Լօռի, Դարալագեազ, Ախալխալաքները, կը տեսնէք պառաւ կանանց, որոնք այնպիսի հմտութեամբ նուրբ թելեր են մանում բրդից և կտորներ գործում, որ կարելի է միայն սքանչանալ:

Այս բոլորը ցոյց է տալիս, որ տնայնագործութիւնը գոյութիւն է ունեցել հայերի մէջ և բաւական դարգացել: Նա մի ժամանակ ոչ միայն բաւականութիւն է տուել հայի առօրեայ անհրաժեշտ պահանջին հագուստի, փորուածքի և առհասարակ շորիզէնի նկատմամբ, այլ և հնարաւորութիւն է տուել զարդարանքի, ճոխութեան իրեր արտադրելու և այդ այդպիսով գեղարուեստի է վերածուել, որը ձախարդ հանգամանքների

շնորհիւ ժամանակի ընթացքում նսեմացել է և անյայտանալու վրա է:

Այստեղ հարց է ծագում. ի՞նչ պատճառով տնայնագործութիւնը մեղանում յետ է գնացել և մոռացւում է: Արդե՞ք կատարել—վերջացրել է նա իւր դերը մեր մէջ և բնական ճանապարհով տեղի է տուել գործարանային արտադրութիւններին, թէ քաղաքական ձախող պայմանների շնորհիւ հայը անկարող է եղել անընդհատ կուլտուրայով զբաղուել:

Այս հարցը շատ ջուր կը վերցնէ, պարզաբանութեան կարօտ է, կը պահանջէ երկար բացատրութիւններ, բայց ես իմ կարծիքը կարուկ կասեմ:

Տնայնագործութեան յետ ընկրկելու սկզբնական պատճառը, իմ կարծիքով, վերջին հանգամանքը, այսինքն աննպաստ պայմանները պէտք է համարել: Յիրաւի դարեր շարունակ կեանքի ու մահու խնդիրը Դամոկլեան սրի նման կախուած է եղել հայ ժողովրդի գլխին: Այդպիսի պարագաներում կուլտուրայով զբաղուել անհնարին է եղել և հայը անկարող լինելով ընդարձակ ծաւալով, հանգիստ խղճով զբաղուել արհեստով, կամաց կամաց ստուել է, մինչև վրայ հասաւ այն շրջանը, երբ հային ևս հնարաւոր դարձաւ մասն ու բաժին ունենալ գործարանային արտադրութիւններից: Այս շրջանը վերջին հարուածը կը տայ տնայնագործութեանը, եթէ ինքը տնայնագործութիւնը չլուրացնէ կատարելագործութիւններ և գործ չը դրուեն

առանձին ջանքեր կաղմակերպելու այդ արհեստը լաւ հիմքերի վրա:

Վերսկսելով տնայնագործութիւնը՝ ի դերև չէն ելնելու արդեօք մեր բոլոր ջանքերը այդ գործում: Կարող էնք արդեօք յաջող հետևանքի հասնել:

Արդեօք տնայնագործութիւնը ներկայիս ոյժ կունենայ դիմադրելու այն թափին, որով գործարանային արտադրութիւնները ողողում են մեր երկիրը:

Այն հանգամանքը, որ տնայնագործութիւնը բնական մահով չէ մեռել մեր երկրում, որ այդ արուեստը տուել է մեզ և գուցէ կըտայ աւելի արժէքաւոր իրեր, քան գործարանային արտադրութիւններն են և այն հանգամանքը, որ տակաւին մեր գիւղատընտեսութեան մէջ հում նիւթը չէ արտահանում ցանկալի չափով ու գնով, այդ ամենը հիմք են ծառայում եզրակացնելու, որ գոնէ առայժմ տնայնագործութիւնը հող ունի մեզանում:

Ուրեմն քանի այդ արուեստի մէջ հմուտ ձեռքերը կենդանի են, որ վաղը կարող են չը լինել, չէ որ դրանք մեծ մասամբ տարիքաւոր անձնաւորութիւններ են և կտրուած նոր սերնդին իրենց արհեստը հաղորդելու հնարաւորութիւնից, շտապենք վերանորոգել այդ արհեստը: Այսօր գործը աւելի արդիւնաւէտ կը լինի, քան վաղը: Մեր ծերունի արհեստաւորները մեզ դեռ քան ունեն սովորեցնելու: Այդ կերպ գուցէ կարելի կը լինի գիւղական տնտեսութեան խոր վէրքին

հանգստացուցիչ դեզ դնել: Հրաւիրենք ժողովրդին նորից կաշելու կուլտուրական այդ գործին և շահագործելու այն բոլոր արհեստները, որոնք դեռ պահպանել են գոյութեան իրաւունք:

Գեօմբի 23 փետ. 1909



ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-  
ԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Յ. Գննչեան

(Կարդացուած 4-ին ապրիլի)

Ներկայ համագումարը, եթէ չեմ սխալուում, առաջին համագումարն է, ուր հաւաքուել ենք խօսելու, քննելու և միջոցներ գտնելու բարձրացնելու հայ ժողովրդի տնտեսական վիճակը:

Ներկայ համագումարը առաջինն է, որը եկել հաւաքուել է ժողովրդի տնտեսական բարօրութեան ամենակարևոր խթան արհեստների և ձեռագործների արդիւնաբերութեան մասին խորհրդակցելու:

Եթէ մինչև հիմա մեր հայկական միտքը, հայկական գիտութիւնը զբաղուել է մի խորհնացու, մի Ղազար Փարպեցու գրուածքների «ըթի» կամ աւելորդ «ստորակէտի» վրայ, հաւատացած լինելով, որ դորանով առաջ է մղում հայկական կուլտուրան, հայկական գիտութիւնը, ներկայ համագումարը եկել է մի այլ մեծ գործ կատարելու, ասելու, որ հայ ժողովրդի հարստութեան, յառաջադիմութեան աղբիւրը «ըթի», «ստորակէտի» մէջ չէ, այլ «ասպի», «բրիչի», «ուրագի» և «գութանի» մէջը:

Ես մասնագէտ չեմ և ոչ մի արհեստի, չը

գիտեմ և ձեռքս գութան բռնել, բայց ցանկութիւն ունեմ խօսելու ներկայ յարգելի համագումարի առաջ, իբրև սոսկ դիտող, դիլլետանտ, սոսկ մէկը այն հազարաւոր անհատներից, որոնք նոյնպէս ցանկանում են հարստանալ, բարեռել իրանց տնտեսական վիճակը—լաւ ապրելու միջոցներ փնտրել և գործադրել այն «հնարը», այն «ուրագը», որը մշակելու է ներկայ համագումարը:

Մի քանի ամիս է, որ ղեկավար եմ Տնայնագործական Ընկերութեան գիւղում, իբրև վարչութեան նախագահ և ահա այժմ ես ցանկանում եմ բաժանել յարգելի համագումարի անդամների հետ այն դիտողութիւններիս նիւթը, որը ես դուրս եմ բերել մի քանի ամսուայ ընթացքում ջուհակութեան գործին մօտ լինելով:

Կը պատասխանեմ այն հարցերին, որոնք շօշափուած և առաջադրուած են Տնայնագործական համագումարի ծրագրում:

Գոյութիւն ունեցող տնայնագործական արհեստանոցների գործունէութեան պատկերը և բնորոշ գծերը շօշափելու համար ես միայն աչքի առաջ ունեմ մեր գիւղի ջուհականոցը, որի հիման վրայ լինելու են և այլ իմ դիտողութիւններս:

Պէտք է նկատեմ և շեշտեմ, որ ջուհականոցները այժմ զրուած են ամենապրիմիտիւ տեխնիկական հիմքերի վրայ: Գործիքները հասարակ են և տեխնիկական յարմարութիւնների կողմից հասցրած են մինիմումի: Չը գիտեմ ուրիշ ազգերի մէջ «кустарное

производство» ինչ հիմքերի վրայ է դրուած, բայց, կարծում եմ, որ մեր ջուլհականոցները գործիքները զուտ հայկական գործիքների վերարտադրութիւն են:

Ինչպէս երևում է, գործիքների կատարելագործման կամ նոր տիպի գործիքներ պատրաստելու ինդիատիւա չը կայ մեր մէջ, իսկ եթէ կայ, դա էլ տնաբոյս (доморостенный) բնաւորութիւն է կրում: Գիտական-տեխնիկական գիտութեան հիման վրայ աշխատանքներ չեն երևում:

Մեր կարծիքով այդ ուղղութեամբ հարկաւոր աշխատանքներ է պահանջուում ջուլհակութեան, առհասարակ տնայնագործական գործին զարկ տալու համար:

Այդ մտքով մենք առաջարկում ենք և կարևոր ենք համարում տնայնագործական ընկերութիւններին՝ պահել մշտական մի ինժեներ-տեխնոլոգ, որի պարտականութիւնը լինելու է ընդհանուր հսկողութիւն բոլոր ջուլհականոցների վրայ տեղերում և գործիքների զարգացման տեխնիկական տեսակէտից հոգատարութիւն:

Ինժեներ-տեխնոլոգը պիտի հնարաւորութիւն ունենայ ժամանակ առ ժամանակ, եթէ նա մասնագիտօրէն ծանօթ չէ տնայնագործական արհեստի և արդիւնաբերութեան հետ, գնալ Ռուսաստան այլ և այլ տեղեր, նոյն իսկ արտասահմանի տնայնագործական գործի և արդիւնաբերութեան հետ ծանօթանալու համար:

Բացի այդ, հէնց յարմարութեան և նոյն

իսկ տնտեսութեան կողմից ունենալ Տփլիսում կենդրոնական արհեստանոց, ուր նոյն ինժեներ-տեխնոլոգի ղեկավարութեամբ հրնարաւորութիւն ունենալ պատրաստել, եթէ ոչ բարդ, գոնէ մանր, հասարակ գործիքներ. նոյն արհեստանոցը պիտի լինի, մեր կարծիքով, բոլոր ջուլհականոցների տեխնիկական բիւրօն, որտեղից կարելի կը լինի ստանալ ամէն տեսակ տեխնիկական և գործնական տեղեկութիւններ, խորհուրդներ:

Հերթական նշանակութիւն ունեցող կարիքներից մէկը, ես համարում եմ կուլտուրական վարպետներ ունենալու հարցը:

Մինչև այժմ, որքան ես ծանօթ եմ գործին, մենք ունենք միայն ջուլհակ բանուորարհեստաւորներ, բայց չունենք ուսուցիչարհեստաւորներ: Ուսուցիչ արհեստաւորը պէտք է զանազանել բանուորարհեստաւորից:

Կարող է բանուորարհեստաւորը իւր արհեստը իմանալ կատարելապէս, բայց աւանդելու և գործին սիրահար դարձնելու, կուլտուրապէս յառաջ տանելու, զարգացնելու արհեստը, մտցնելով նորա մէջ գիտական-կուլտուր էլեմենտներ և միևնոյն ժամանակ ներշնչելու. ձգտում արհեստը սիրելու, կատարելութեան բարձրութեան հասցնելու թէ աշակերտուհիներին և թէ ժողովրդին՝ անկարող է:

Դորա համար անպայման հարկաւոր է կուլտուրապէս պատրաստուած և տեխնիկական հմտութիւն ունեցող վարպետներ:

Այդ կարիքին բաւականութիւն տալու համար մենք առաջարկում ենք Տփլիսում տեխնիկական բիւրօյին կից ունենալ օրինակելի դպրոց ջուլհականոց, մացնելով նորա մէջ հետզհետէ բոլոր տնայնագործական արհեստները:

Այդ արհեստանոց-դպրոցում ընդունուելու են անպայման որոշ կրթական պատրաստութիւն ունեցող աշակերտներ կամ աշակերտուհիներ և առնուազն մի տարուայ ընթացքում անցնելու են հիմնաւորապէս տնայնագործութիւնը թէ աէօրետիկապէս և թէ գործնականապէս:

Սօսք չըկայ, որ կուլտուրական-վարպետները յետոյ ասպարէզ կուեննան սպառելու իրանց գիտեցածը և անշուշտ նոցա աշխատանքի վարձն էլ կարող է և անհրաժեշտ է բարձրացնել, քանի որ նոցա տուած արդիւնքը անպայման շատ աւելի արագ, հիմնաւոր և բազմակողմանի է լինելու:

Միւս կողմից պիտի շեշտեմ, որ այն ժամանակ այդ վարպետ-ուսուցիչները չեն գնալ այս ինչ կամ այն ինչ տեղը 2—3—6 ամսով և գործի սաղմը գցելով հեռանալ, այլ ամէն մի Տնայնագործական Ընկերութիւն պէտք է մշտապէս վարձէ և ունենայ իւր ինստրուկտոր-ուսուցիչը, քանի որ տնայնագործութիւնը հետզհետէ ձիւղաւորուելու է և մտցնելու և ուրիշ արհեստներ, բացի այդ կուլտուրական-ուսուցիչը պիտի մշտապէս մնայ գիւղում, որ նա ինստրուկտորի դեր կատարի, անդադար առաջնորդելով տեղում

գտնուած մասնաւոր ձեռնարկութիւնները և անդադար գործի մէջ մտցնի թարմութիւն, նորութիւն. մի խօսքով մեր ցանկութիւնն է, որ տնայնագործութիւնը չը գնայ տարածուի գիւղական ժողովրդի մի քանի պրիմիտիւ, շարլօն մանուածքներով և պրիմներով, այլ դա շարունակ և մշտապէս կատարելագործուող և յառաջդիմող մի գործ լինի:

Անշուշտ հերթական պահանջ դառած հարց պէտք է համարել և տնայնագործական արդիւնքների վաճառքի կազմակերպութիւնը թէ կովկասում և թէ կովկասից դուրս:

Դեռ այժմ, երբ արհեստը նոր է մուտք գործում մեր գիւղերում և արդիւնաբերութիւնը քիչ լինելով՝ հնարաւոր է տեղում սպառել, բայց երբ արդիւնաբերութիւնը անցնի և ընկերութեան ջուլհականոցներից և ժողովրդի մէջ և ընդունի լայն չափեր, այն ժամանակ տեղական շուկան բաւականութիւն չի տալ՝ գորա համար մենք կը ծանրանայինք նոյն վերև յիշած կենդրոնական բիւրօյի օգնութեան վրայ:

Տփլիսում կենդրոնական բիւրօն պիտի ունենայ սպառող խանութ կամ սկլադ և միջնորդ հանդիսանայ բոլոր տեղերից եկած արդիւնաբերուած ապրանքները սպառելու:

Սօսք չըկայ, բիւրօն իւր ծախսերի համար վերցնելու է որոշ տոկոս, որը կարծում եմ ուրախութեամբ կը տայ ամէն ոք, ով ցանկանում է սպառել իւր ապրանքը:

Միւս կողմից բիւրօյի խանութը կուեն-

նայ և տեղատուութիւն, արտահանելով և մատակարարելով մանուածքի մթերքներ, գործուածքների նմուշներ, դանազան նկարներ, և այլն, որոնց ղեկավարողը լինելու է բիւրօյի ինժեներ-տեխնոլոգը:

Վարպետներ պատրաստելու մասին մենք վերևում խօսեցինք, իսկ ինչ որ կը վերաբերի ինստրուկտորների հարցին, դա մեր կարծիքով նոյն ինժեներ-տեխնոլոգի ղեկավարութեան գործն է. նա կունենայ գործին հմուտ մէկ կամ երկու օգնականներ, իբրև ինստրուկտորներ, որոնց գործը և պարտականութիւնը զուտ կազմակերպչական է լինելու, քանի որ գլխաւոր և մօտակայ տեխնիկական և արդիւնաբերական աշխատանքների վերայ բիւրօյի հսկելը ինժեների գործն է:

Գալով մասնաւոր նախաձեռնութիւն և ձեռնարկութիւն հանդէս բերելու կարևորութեան, մեր կարծիքով, այդ հարցում պէտք է շատ զգոյշ լինել, որ շահագործութեան տենդենցիա առաջ չը բերուի:

Երևակայեցէք այսպիսի մի բան. գիւղի մի հարուստ վաշխառու պատրաստել տուեց մի քանի տորքեր և առհասարակ ձեռք բերեց ջուլհակութեան կազմ և պատրաստ բոլոր գործիքներ և ջուլհակութիւն սովորած աշխատող ձեռքերը, սկսեց շահագործել ամենամանխիղձ կերպով, տալով նոցա աշխատավարձ արդիւնքի ամենաչնչին տոկոսը, որով ժամանակի ընթացքում տնայնագործական արդիւնաբերութիւնը բոլորովին կենդրոնանալով վաշխառու շահագործողների ձեռքում, բո-

լորովին վարկաբեկ անի արհեստի և ձեռարուեստի արդիւնաբերութեան յարզը և արժէքը ժողովրդի աչքում:

Հէնց դորա համար մասնաւոր նախաձեռնութեան գործը առնելու են իրանց վրայ տնայնագործական ընկերութեան ճիւղերը, այսինքն ջուլհականոցը աւարտած աշակերտուհիներին նպաստին, եթէ իրանք միջոց չունեն, տորքեր, գործիքներ, նոյն իսկ մանուածքի նիւթեր մատակարարելով, իհարկէ երկար ժամանակեայ կրեղիտով, դիղջ անելով այդ մասնաւոր նախաձեռնողներին սպառուած ապրանքներից կենդրոնական բիւրօյի սկլադոմ:

Կրեղիտ պիտի բանայ կամ դրամով կամ նիւթերով և կենդրոնական տնայնագործական վարչութիւնը մասնաւոր նախաձեռնութիւններին:

Սօսք չը կայ, որ բոլոր արդիւնաբերուած ապրանքը տեղական բիւօկին բաւականութիւն տալով, մնացածը գնալու է կենդրոնական բիւրօյի սկլադը սպառելու:

Այդպիսով մենք համոզուած ենք, որ շահագործման շանթարգելը արդէն գտնուած և ապահովուած կը լինի:

Վերջին հարցին՝ պարբերական համագումարներ հրաւիրելու և կազմակերպելու մասին՝ կասենք այսքան, որ այդ տեսակ համագումարներ անհրաժեշտ են իւրաքանչիւր տարի Տփլիսում, բացի դորանից ցանկալի են և րայօնական փոքրիկ համագումարներ զուտ սպեցիալ բնաւորութիւն կրող, օրի-

նակ մի որ և է գաւառում գործում են մի միայն խալիչաներ, միւս տեղ կտորներ, մի ուրիշ տեղում եղջերուներից զանազան իրեր և ահա միտնման, համաարդիւնաբերող տնայնագործակէսն արդիւնաբերողները հաւաքում են և լուծում, քննում տեղական արդիւնաբերութեան մասին եղած հարցերը:

Վերջացնելով խօսքս, ես գտնում եմ տնայնագործական գործին մեծ ապագայ, բայց և ոչ մի ապագայ, եթէ նա գնայ այն ճանապարհով, որով գնացել են մինչև այժմ բոլոր մեր կրթական, կուլտուրական հիմնարկութիւնները, իրանց շուրջը խմբելով թուղպամպերի նման մեր փոքրիկ, չնչին «եսերը»:

Աշխատանք և գիտութիւն պիտի լինի այն օղակը, որոնք պիտի կապեն արհեստի գործով հետաքրքրուող անհատներին գիւղում, ուր դեռ թագաւորում է Րօբինզօնի ուրազը և անդրջրհեղեղի գութանը:

Բայց եթէ ջուլհականոցը ևս լինելու է մի վիժեակա, որոնցից մենք ունենք շատ և շատ, այն ժամանակ ժողովրդի համար նա կը դառնայ նոյն՝ «Здѣсь продается чай, сахаръ и кофе» К. Киракосянцъ.

## ԳԱՆՁԱԿԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՅԸ ԵՒ ՏՆԱՅ- ՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Կարգացուած է 4-ին Ապրիլի)

Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութիւնը, որի նախաձեռնութեամբ հրաւիրւած է ներկայ համագումար ժողովը, թէ մասուլի և թէ առանձին կոչերի միջոցով դիմել է այն բոլոր անձերին, որոնք հետաքրքրուած են տնայնագործական արհեստի զարգացման գործով, մասնակցել համագումարի պարապմունքներին և նպաստել համագումարի ծրագրի մէջ նշանակուած հարցերի պարզաբանութեան և լիակատար քննութեան:

Գանձակ քաղաքում գոյութիւն ունեցող Ջուլհականոց-արհեստանոցի վարչութիւնն, իրրև այգօրինակ գործով հետաքրքրուող մի մարմին, խորին անկեղծութեամբ ողջունում է ներկայ համագումարի բացումը և հաւատալով սորա արդիւնաւոր ընթացքին՝ կարեւոր է համարում իմ և ջուլհականոցի վարպետուհու միջոցաւ, իր կողմից մի քանի հարկաւոր տեղեկութիւններ տալ համագումարի յարգելի հանդիսականներից, թէ մասնաւորապէս Գանձակի Ջուլհականոց-արհեստանոցի մասին և թէ ընդհանրապէս տնայնագործական արհեստի զարգացման մասին:

Ներկայ տեղեկութիւնները կը պատեն համագումարի ծրագրի մէջ առաջադրուած մի քանի կէտերի շուրջը և հնարաւորութեան չափով կամփոփեն այն ամեն իրողութիւններն, որոնք ձեռք են բերուած Գանձակի Զուլհականոցի գործնական կեանքում և բազմաթիւ փորձերի ընթացքում: Առաջ կը բերենք համագումարի ծրագրի կէտերը և զուգընթացաբար կը կցենք մեր տալիք տեղեկութիւններն՝ իբրև պատասխան այդ հարցերին:

## ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1.

— Գոյութիւն ունեցող տնայնադրձական արհեստանոցների գործունէութեան պատկերը և բնորոշ դժերը.

Գանձակի Զուլհականոց - արհեստանոցը հիմնել է տիկին Օհանեան, 1906 թուի մայիս ամսին:

Զուլհականոցը պահպանուել է անդամակցական միջոցներով և կառավարուել է հիմնարկութեան ժամանակ ընտրուած վարչութեան ձեռքով:

Հիմնադիրն իբրև գործին հմուտ անձնաւորութիւն՝ նպատակ է ունեցել զարգացնել ոստայնագործութիւնը թէ Գանձակ քաղաքում և թէ նրա շրջակայքում: Կարճ ժամանակի ընթացքում՝ նա արհեստանոցի համար ձեռք է բերել 17 հատ տորք-ստանօկ—իւր բոլոր մանրամասնութեամբ և հարկաւոր իրեղէններով, հաւաքել է մօտ քսան աշակերտօճիներ և սկսել է սովորեցնել նրանց ջուլհակութեան արհեստը: Նա աւելի քան ցանկանալիս է եղել՝ կատարելագործուած գործիքներով՝ կատարելագործել հայրենիքում իմացած զանազան գործուածքների գիտութիւնն՝ ինչպէս օրինակ—կարպետների, ջէջիմների, ջուլապուսների, դարձկարների և այլ գործուածքների տեսակները ազնուացնել: Սակայն, հազիւ մի տա-

րուց յետոյ՝ վախճանուելով տիկին Օհանեանը՝ նրա սկսած գործն իր բարեմիտ նըպատակով, մնում է չարաբախտ վիճակի մէջ:

Դեռ տիկնոջ կենդանութեան ժամանակ, նոյն գործով հետաքրքրուելիս է եղել տիկ. Եղ. Նաբաթեան և ահա նա, հիմնադրի մահից յետոյ, որպէսզի արհեստանոցը իսպառ չը փակուի՝ գործի գլուխ է անցնում և վարպետուհի Սոֆիա Ստեփանեանցի ու երբեմն էլ տիկ. Կատարինէ Նանասեանի հետ՝ գործը վերսկսում է 1908 թուի մարտից, որ և շարունակում է մինչև այսօր: Այս անգամ արհեստանոցի գոյութիւնը պահպանւում է մասնաւոր նուէրներով: Հիմնադրի մահուանը՝ պսակի համար հաւաքած 506 ռ. յատկացւում է նրա սկսած գործի բարգաւաճման, մի հարիւր ուրբի էլ նուէր է ստացւում պ. Եպիսկոպոսեանից և ահա 606 ռ. դրամագլխով շարունակում է ջուրհականոցի կեանքը: Այս անգամ աշակերտում են մօտ 16 հոգի, որոնցից մեծ մասը ստանում են՝ և՛ 15—25 կ. օրավարձ և՛ վարպետուհուց սովորում են արհեստը: Բացի այդ ծախսից, արհեստանոցին ամսական տալիս են 10 ռուբլի վարձ, վարպետուհին ստանում է ամսական 20 ուրբլի ոտճիկ: Այս ու միւս ընթացիկ ու զանազան ծախսերը միասին՝ ջուրհականոցը նստում է ամսական մօտ 100 ուրբլի:

Ջուրհականոցն իր գոյութեան ընթացքում աւելի քան պատրաստել է բրդէ թելի գործուածքներ, այնուհետև՝ սփռոցներ, ան-

ձեռոցիկներ, սրբիչներ, քաթան և այլն... Այդ ամենը ծախուել է պատահած անձի վրայ, ընդունել է նաև պատուէրներ: Ջուրհականոցն՝ որովհետև ծառայել է աւելի քան իբրև մի արհեստ սովորեցնող հիմնարկութիւն, իբրև մի դպրոց, նա ուշադրութիւն է դարձել այդ բանին և ոչ օրինակ՝ նիւթական շահին և օգուտին: Փորձը ցոյց է տուել, որ Գանձակի կողմերում աւելի յարմար է աւելի քան բրդէ գործուածքների պատրաստումը, քան օրինակ Սարփինկայի, որի զանազան տեսակներն աւելի է ժանդնով ծախուում են պատահած խանութում:

Բարեփոխութիւնների վերաբերմամբ կասենք հետևեալը. — Առաջ՝ մի օրևէ կտոր գործելու ժամանակ՝ տորքի վրայի թելի հիմքը յաճախ կտրւում էր և խանգարում էր աշխատանքի արագութեանը: Արհեստանոցը իր երեքամեայ փորձառութեան շընորհիւ՝ գտել է միջոց, որով «թելի կտրուելը» այլևս տեղի չէ ունենում կամ պատահում է շատ սակաւ:

Բացի դրանից, մեր ունեցած երկու մեծ տորքերը յարմարեցնել ենք տուել՝ «մակոյկներին» ինքնաշարժութեան: Փոխանակ մակոյկները ձեռքով անցկացնելու գործուածքների բերանի միջով, այժմ իրենց իրենց են անցուղարձ անում և աւելի քան շուտ-շուտ, ըստորում և գործել արագանում է:

Հերթական նշանակութիւն ունեցող կարիքները:

Հերթական նշանակութիւն ունեցող կարիքները մեզանում հետեւեալներն են.—նախ և առաջ, Գանձակի ջուլհականոցի հիմնադրի ցանկութեան համեմատ՝ բարելաւել Գանձակի ջուլհականոցի գոյութիւնն, որպէս գաւառի համար կենդրոնական մի հիմնարկութիւն: Սովորեցնել որքան կարելի է շատ աշակերտուհիների՝ այն էլ տանելի օրավարձով, զարգացնել տեղական հայրենիքի—տնային գործուածքների տեսակները, ճաշակն և յատկութիւնը: Հետզհետէ բարեփոխել գործիքներն և այդ նորանոր գործիքների միջոցով՝ աւելի հեշտացնել տնայնագործական արհեստը, որպէս զի՝ որքան կարելի է նա մօտ ազագայում ցանկալի արդիւնքը տայ՝ թէ բարոյական և թէ տնտեսական իմաստով:

Երկրորդ.—Հնարաւորութեան չափով, աշխատել Գանձակի գաւառամասում՝ ճիւղեր բանալ նոյն ջուլհականոցի շուրջը.—ինչպէս օրինակ՝ Գետաշէնում, Բանանցում, Փիրում, մի խօսքով Գանձակի չորս ոստիկանական շրջաններում... և որպէսզի այդ ճիւղերում ջուլհակութիւնը կարողանայ ցանկալի ընդունելութիւն գտնել արհեստի տնային յարմարութեան, գործուածքների նրբութեան և դիմացկունութեան կողմից՝ ուղարկել այնտեղ Գանձակի ջուլհականոցում մի քանի տարի փորձառութիւն ունեցող աշակերտուհիներ՝ որպէս վարպետուհիներ, հնար-

րաւորութեան չափով տալ նաև գործիքներից ամենահարկաւոր իրերը:

Եւ հէնց այս դիտաւորութեամբ էր, որ մեր արհեստանոցի երկրորդ տարում գիտուն աշակերտուհիներից մէկը՝ մի տորք վերցրեց և տեղափոխուեց Ղազախ, միւսը՝ Շուշի և երրորդը՝ Կարս—որպէսզի իւրաքանչիւրն իր տեղում, իր մերձաւոր շրջաններում ջուլհակութեան արհեստը հետաքրքիր դարձնի և եթէ հնարաւոր է իւրաքանչիւրն իր համայնքում պատճառ դառնայ մի-մի ջուլհականոց հիմնելու:

Գիւղական արհեստանոցների վերաբերեալ կասե՛նք հետեւալը.—Չնայելով մեր—Գանձակի-արհեստանոցի այնքան խնայուած ծախքերին՝ դարձեալ ամսական այդ ջուլհականոցը նստում է մօտ 100 ռ.: Գիւղերում, հաւանօրէն նոյնքան ծախքով կարելի կլինի աւելի ճոխ և մեծ գործարան պահել՝ այնևս ընկերական հիմունքների վրայ: Միայն, մինչև գիւղացիներին փորձով հասկացնելը ջուլհականոցի անհրաժեշտութեան մասին, հարկաւոր կլինի առաջին ամիսների ծախսը հոգալ նախաձեռնող անձի կամ ընկերութեան կողմից: Այնուհետև, երբ գիւղացիների համար կը պարզուի այդ գործի կարեւորութեան և օգտակարութեան խնդիրը, շատ հեշտ կը լինի գիւղական համայնքի կամ թէ մասնաւոր մի քանի անհատների ընկերակցութեամբ պահպանել ջուլհականոց-արհեստանոցի կեանքը:

Մեզանում աւելի հեշտ կը լինի մեր կող-

մերում—ըջանում—գիւղական ճիւղեր հիմ-  
նելը, քանի որ ունեցած անհրաժեշտ գոր-  
ծիքներին՝ օրինակ տորքիրից կամ ոստան-  
ներին կարող կը լինինք երկ-երկու կամ  
երեք-երեք հատ ձրիապէս տեղափոխել նոր  
բացուող գիւղական ճիւղ արհեստանոցները:  
Նոյնիսկ հնարաւորութիւն կունենանք մեր  
արհեստանոցի վարպետուհուն առնուապն  
մէկ-մէկ ամիս ուղարկել յիշեալ գիւղերը  
գործի նախնական անհնաժեշտութիւնն ու-  
սուցանել տալու:

Բացի դրանից, մեզ մօտ կան երեքական  
տարուայ փորձառութիւն ունեցող վից աշա-  
կերտուհիներ, որոնք ինքն իրենց կարող  
են դեկավարել գիւղական արհեստանոց-  
ներն, և որոնց վրայ կարելի է վստահանալ:  
Նրանց գիւղ գնալը մեր կողմերում աւելի  
մեծ օգուտներ կարող է տալ հէնց այն  
պարզ պատճառով, որ նրանք աւելի հմուտ  
են մեր գիւղական բոլոր թիւի գործուածք-  
ներ պատրաստելու մէջ: Այնուհետև նրանք  
քաջ իմանում են նաև բամբակեղէն բարակ  
ու նուրբ գործուածքների արհեստը—օրի-  
նակ՝ կտաւ, քաթան, հասարակ սարփին-  
կա և այլն:

Մեր կողմերի գիւղական ճիւղերը հեշ-  
տութեամբ կը կառավարուեն Գանձակի  
ջուլհականոցի վարչութեան և վարպետուհու  
միջոցով, որովհետև այդ գիւղերը կենդրո-  
նից շատ քիչ հեռաւորութիւն ունեն՝ հա-  
ղիւ 40—50 վերստ:

## 3.

Գործուածքների նմուշներ և գանազան նկարներ մա-  
տակարարելու և տարածելու խնդիրը:

Գործուածքների համար նմուշներ և կամ  
գանազան նկարներ ձեռք բերելու վերաբեր-  
մամբ՝ Գանձակի ջուլհականոցն սկզբից ի վեր  
մեծ նեղութիւններ է կրել, նամանաւանդ  
բոլոր գործուածքների համար: Նորանոր  
նկարներ չունենալու պատճառով, ջուլհա-  
կանոցի վարչութիւնը ստիպուած է եղել  
տեղական ժողովրդական գործուածքների  
վրայ եղած նկարները գործ ածել, հետզհե-  
տէ աւելի ազնուացնելով նոցա տեսակը,  
ճոխացնելով նոցա ձևերը, բազմացնելով  
ու յարմարեցնելով նկարների գոյները:  
Տարիների փորձերն ապացուցել են և  
այս բոլորիս էլ գործարանում եղած այդ  
բարեփոխուած ձևերի գործուածքները յա-  
կանէ անուանէ ցոյց են տալիս, որ դրանք  
բաւականին հետաքրքիր և դուրեկան են  
տեղացի անծանօթ աչքերի համար: Իսկ ծա-  
նօթ աչքերը փոփոխութիւն նկատելով հնի և  
այդ բարեփոխուածի մէջ՝ առաւելութիւնը  
տալիս են արհեստանոցի աշխատանքին:

Եւ ստեղծագործական արհեստն որքան  
դժուար է եղել մեր արհեստանոցի գործը դե-  
կավարող անձանց համար, այնքան ձեռնհաս,  
քանի որ մեր արհեստանոցն հնարաւորու-  
թիւն չէ ունեցել դրսից նմուշների և նկար-  
ների տեսակներ ու ձևեր ձեռք բերելու:

Այսօր ահա՛ մեծ ուշադրութեան առար-

կայ է այս խնդիրը մանաւանդ մեզ համար, որովհետև գործուածքի գեղեցկութիւնն ու դուրեկանութիւնը կախուած է ճաշակով ու գեղարուեստօրէն գործածուած նկարներից: Պէտք է հոգ տանել մանաւանդ բրդէ և բամբակէ գործուածքների տեսակները զարդարել բազմազան նկարների դասաւորութեամբ, որովհետև մանաւանդ մեր կողմերում որքան գործուածքներն աւելի նախշուն են և խայտաճամուկ, այնքան աւելի շատ ցանկացողներ ու մուշտարիներ են ունենում՝ ռամիկ գիւղացիների և գաւառացիների շրջանում: Նկարների գեղեցկութիւնը մեծ կապ ունի գոյների տեսակների հետ, որոնց մասին կը խօսենք յաջորդ հարցի պատասխանում:

## 4.

Գործիքներ, մանուածք և այլ մթերք մատակարարելու խնդիրը:

Այս հարցի ստորաբաժանումներից՝ մեզանում ուշադրութեան է առնուել հետեւեալ կէտը.— Որտե՞ղ կարելի է ներկել տալ թելերը չըխունացող գոյներով:

Գանձակի շուրհականոցն իր մօտ երեք տարուայ դոյութեան ընթացքում առաւել չափերով օգտուել է տեղական բազմազան գոյներից, որովհետև այդ գոյներն աւելի համապատասխան են եղել շուրհականոցում պատրաստուող որևէ բրդի կամ մետաքսի գործուածքների համար: Այդ գոյները՝ կարմիր, ալկարմիր, դեղին, կապոյտ, սև, նա-

բընջի, սոսանի, մանիշակի, փիրուզի, կանաչ, շագանակի, ծիրանի, սէրի, երկնագոյն և այլ տեսակի գոյներ պատրաստուել է տեղական միջոցներով, որոնց ներկելու հնարը գիտէ մեր արհեստանոցի վարչութեան անդամներից մէկը և հարկաւոր դէպքում, մեր վարչութեան միջոցով կարելի է իմանալ այդ գոյների պատրաստութեան եղանակը: Վերոյիշեալ գոյներով լաւ ներկում են բրդէ և մետաքսէ թելերը: Այդ գոյները մնայուն են և անխուսի. փորձը ցոյց է տըւել, որ այդ գոյնի թելերով գործուածքները՝ մաշում ու քրքրում են, բայց թելերի գոյները մնում են նոյնը: Եւ ընդհակառակը, շատ գործածուելու ընթացքում նրանք աւելի պարզում, աւելի նրբանում ու աւելի գեղեցկանում են: Այդ գոյներն որքան կը պչոզող և ներկող են բրդի և մետաքսէ թելին, այնքան թոյլ և չը կպչոզող են բամբակի և կանեփի թելերին: Այդ գոյներով գործուածքը եթէ համեմատելու լինենք նման, բայց ոչ տեղական գոյներով նոյնօրինակ գործուածքի հետ՝ տեսքի, փայլի, գեղեցկութեան մէջ՝ կը նկատուեն ահագին տարբերութիւններ:

Մեր ներկած գոյնի թելերով՝ շատ գեղեցիկ գործում են տեղական ջեջիմներ, կարպիտներ, պատուհանի և դռների համար վարագոյրներ, բարձի ու մութաքայի համար երեսացուներ և այլն. այդ ամենն ի հարկէ հին-ժողովրդական նկարներով: Յիշեալ գործուածքների թէ գոյներն և թէ նը-

կարներն հնութիւն արտայայտելուց զատ, այլև իբրև «խալիս գործուածք» կարելի է վստահութեամբ գնել ու գործածել. որովհետև, մեր ջուլհականոցում գործուած այդ օրինակ կտորները շատ զիմացկուն են լինում, անխուճի և սիւնդ:—Չնայելով այս բոլոր յատկութիւններին, այդ գործուածքները շատ դանդաղ են ծախուում և շատ սակաւ, որովհետև արհեստանոցի վրայ նստում են բաւականին թանկ, և հնարաւորութիւն չի լինում ամեն տեսակի գնով վաճառել այդօրինակ գործուածքները:

Եւ ահա, Գանձակի ջուլհականոց-արհեստանոցի վարչութիւնը՝ համագումարի յարգելի հանդիսականների ուշադրութիւնը դարձնելով այս հարցի շուրջը, ցանկանում է իմանալ, եթէ պատրաստուեն մեղանում այդ գործուածքներից, հնարաւորութիւն կը ստեղծուի՞ իր համար՝ ձեռնտու գնելով սպառել՝ թէ կովկասում և թէ նոյնիսկ կովկասից դուրս:—Նմանօրինակ գործուածքներ հաւանօրէն աւելիէժան կը նստեն, եթէ օրինակ միանգամից թուով շատ օրինակներ պատուիրեն:

\* \* \*

Այսքանից յետոյ, Գանձակի ջուլհականոցի վարչութիւնը, իր տուած մասնաւոր տեղեկութիւններից դուրս, այլև պատիւ ունի յայտնելու իր մի քանի ցանկութիւններն, որոնք պտտում են ընդհանրապէս տնայնագործական խնդիրների զարգացման շուրջը:

Նախ և առաջ.—Ընդունել և աշխատել ի կատար ածել այն սկզբունքն, որ՝ ուր հընաւոր է, այդ օրինակ արհեստանոցներին կից ունենալ դպրոց, որպէսզի արհեստ սովորող աշակերտուհիները հնարաւորութիւն ունենան՝ օրական գոնէ 3 ժամ ծանօթանալու տարրական կրթութեան հետ: Այսպիսի դպրոցների կարիքը աւելի քան մեծ է գիւղերում, ուր սովորաբար իրական սեռը շատ հազուադիւս դէպքումն է զըպրոցի երես տեսնում:

Երկրորդ.—Ջուլհակութեան գործը գիւղերում տանել ընկերական հիմունքների վրայ, աշխատել, որքան կարելի է տարածել այդ աշխատանքը ամեն տեղ և հնարաւորութեան չափով կապ պահպանել այդօրինակ հիմնարկութիւնների մէջ:

Երրորդ.—Խնդրել Թիֆլիսի հայ-Տնայնագործակ. ընկերութեան կենդրոնից, որ նա ամենայն տարի կազմակերպի Տնայնագործների համագումար, եթէ հնարաւոր է զանազան քաղաքներում, ուր հնարաւորութիւն ունենան ներկայ լինելու զաւտի արհեստանոցների վարպետուհիներն ու աշակերտուհիները:

Չորրորդ.—Կազմակերպել ցուցահանդէսներ արհեստանոցների ամեն տեսակի գործուածքներից:

՚ի զիմաց Գանձակի Ջուլհականոցի  
Վարչութեան՝ Յակ. Աղաբաբ:

### ՇՈՒՇԻԻ ԶՈՒԼՀԱԿԱՆՈՅ ԴՊՐՈՅԸ

և և պատասխան ծրագրի հարցերին

(կարգացում 4-ին ապրիլ)

1905 թուականի հայ-թրքական կոտորածները տնտեսական դառն վիճակի հասցրին Կովկասի հայ ազգաբնակչությանը: Շուշին այդ կոտորածների ընթացքում տնտեսական ամենամեծ հարուածը կրած լինելով, ունէր իւր տեղական նպաստամատոյց յանձնաժողովը, երկու սեռից բաղկացած անդամներով, որոնք պէտք է հաց և գործ մատակարարէին ճակատագրի հարուածով փողոց նետուած որբ ու այրիներին:

Ի նկատի առնելով, որ միանուագ բաշխուած նպաստը մշտապէս չէ փրկում կարօտեալին սովի ճիրաններից և ձրիակերութեան ընտելացնելով յաճախ բարոյական անկման պատճառ է լինում, նպաստամատոյց յանձնաժողովին մասնակցող մի խումբ կանայք գեղեցիկ միտք են յղանում բանալ Շուշում Զուլհականոց—գալոց, ուր ա) այրի կանայք և ծնողագուրկ օրիորդներ ազնիւ վաստակով օրական պարէնը կը հայթայթեն և բ) հմուտ վարպետների ղեկավարութեամբ կը զարգանար գորգագործութեան և մետաքսագործութեան արհեստը:

Սհա վերոյիշեալ կրկին նպատակներով

Շուշու ջուլհականոց—արհեստանոցը բացուում է 1906 թուի Յուլիսի 12-ին:

Նա սկսեց իւր գործունէութիւնը նախ գորգագործութեամբ ի հարկէ շատ համեստ շրջանակի մէջ, որը գնալով հետզհետէ աւելի զարգացել և կանոնաւորուել է: Այս բաժնում պատրաստում են բրդեղէն ամենատեսակ գործուածքներ, ինչպէս՝ ուղիկ (գործկա), խուրջին, կապերտ, բարձի երես, փորքաշ և այլն:

բ) 1907 թուի սկզբներին վարչութիւնս, ի պատասխան իւր գրութեան, ստանալով հանգուցեալ տիկին Օհանեանից ցուցումներ, բաց է անում ջուլհակային բաժին, ուր պատրաստում են սրբիչներ, սփռոցներ, վարագոյրներ, գոգնոցներ, անձեռոցիկներ, քաթանից և բրդից մանած (տեղական) թելից կտորներ:

գ) 1908 թուի յունուարից սկսում է մետաքսէ գործուածքը, տեղական ոստայնի վրայ, տեղական թելից, թուրք հմուտ վարպետի հսկողութեամբ: Այս մասում պատրաստում են վերմակի երեսներ, գոտիներ, ջէջիմներ, ալըշի և այլն:

Գորգային բաժանմունքը ներկայումս ունի հինգ ոստայն՝ մօտ 15 բանուորուհիներով, ջուլհակային՝ հինգ — հինգ բանուորուհիներով, իսկ մետաքսէ բաժինը մէկ ոստայն՝ մէկ բանուորուհիով: Հաշուելով նաև թուրք արպետին, արհեստանոց յաճախում են ամեն օր 22 հոգի:

Մշտական գնողներ (КЛИЕНТЫ) կամ շուկայ

շունենալով արհեստանոցի արդիւնաբերութիւնը չէ արտահանուում, այլ վաճառուում է Շուշում, մեծ մասամբ այցելուներին: Յաճախ լինում են նաև գորգերի պատուէրներ օտար քաղաքներում վերաբնակող շուշեցիներից:

Երեք տարուայ փորձը ցոյց է տալիս, որ միայն տեղական թելից պատրաստած բրդէ (գորգ և այլն) և մետաքսէ (գազ) գործուածքներն են շահաւէտ, իսկ ջուլհակային բաժինը, որտեղ գործ է ածուում դրանց ստացուած թելեր, առ այժմ դեֆիցիտ է տալիս:

Արհեստանոցը գոյութեան ընթացքում հարըստացել է նոր ձևերի ստալաներով գորգային բաժնում: Վարչութեան ջանքն է եղել նըրբացնել գորգերի գործուածքը և գորանից ու զանազան արմտիքներից պատրաստել չըխունացող գոյներ, որ և կատարելապէս յաջողուել է նրան:

Պէտք է խոստովանել, որ Շուշուայ արհեստանոցում պատրաստուած գորգերը շատ թանգ են գնահատուած և քիչ են վաճառուում: Դորա պատճառն այն է, որ բուրլը գզուում է նահապետական եղանակով, որը շատ թանգ է նստում, մինչդեռ մեքենայով այդ աշխատանքը կրճատուում և անհամեմատ էժան է նստում: Յանկալի է և վարչութիւնը հետամուտ է ձեռք բերել մի հատ գզիլու մեքենայ: Ղարաբաղի շրջանում նպատակայարմար է տարածել գորգագործութեան և ջուլհակային արհեստները, որովհետև կարելի է տեղն ու տեղը ձեռք բերել բրդէ և

մետաքսէ հում նիւթեր և մանուածքներ:

Մեր արհեստանոցի 3 բաժանմունքները պահանջում են տարեկան մօտ 3000 բուրլի, որպիսի գումարի շրջանառութեամբ կարելի է մշտական գործ ունենալ:

Նոր բացուող արհեստանոցը ապահովելու համար պէտք է անձեռնմխելի պահել մի մասն այն գումարի, որ յատկացուում է այդ արհեստանոցը բանալու համար, միւս մասով աննել գործիքներ և նիւթեր գործուածքների համար սամանափակ չափերով: Գործած իրերը գնահատել նստած արժէքով, հաշուել հղած անդարձ ծախքերը, մասնատրել իւրաքանչիւր գործուածքի վրայ համապատասխան չափով և ապա աւելացնել իւրաքանչիւր ապրանքին որոշ տոկոս իբրև գուտ արդիւնք: Ղարաբաղի շրջանում բացուելիք արհեստանոցների համար Շուշուայ ջուլհականոց—գպրոցը կարող է մատակարարել վարպետուհիներ: Արհեստանոցների գործերի ղեկավարութիւնը կարելի է կազմակերպել Կ. Հ. Բ. Ընկերութեան տեղական վարչութիւնների միջոցով, ուր կան այդպիսիները և գիւղական ուսուցիչների կամ տեղական ինտելիգենցիայի միջոցով:

Շուշուայ արհեստանոցի գորգերը ընդօրինակում են հին գորգերից, որոնք խիստ ընտրութեամբ ձեռք են բերուում մասնաւոր տներից. սակայն ցանկալի էր ունենալ հայկական կամ պարսկական ոճով գործուած գորգերի ալքօմ օրինակների համար:

Շուշում կարելի է ներկել թելերը չըխու-

նացող գոյներով, որտեղ գործադրում է տորոն և այլ արմտիք:

Շուշույ արհեստանոց-դպրոցում կարելի է պատրաստել վարպետուհիներ... գորգային մասի համար հարկաւար է մօտ երկու տարի, մետաքսէ մասի համար՝ մօտ երկու տարի, իսկ ջուլհակային մասի համար ոչ աւել քան վեց ամիս ժամանակ:

Ներկայացնելով Թիֆլիզում կայանալիք տնայնագործական համագումարին վերոյգրեալ համառօտ զեկուցումն, ուր ըստ չափու կարողութեան պատասխան է տրուած ծրագրի մի քանի կէտերին, վարչութիւնս լիայոյս է, որ համագումարը, կազմուած լինելով ձեռնհաս և իրազեկ անդամներից, կարող կըլինի մշակել մի լուրջ և կարևոր ծրագիր տնայնագործութեան վերաբերեալ, որի մասին և խնդրում ենք տալ մեզ ի տեղեկութիւն և ի գործադրութիւն:

Շուշույ ջուլհականոց դպրոցի վարչութիւն:

30/ III-909.

Շուշի.



## ՀԱՄԱՄԼՈՒԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ԶԵԿՈՒՅՈՒՄԸ.

(Կարգացուած 4-ին Ապրիլի)

1909 թ. Մարտի 22-ին, Համամլուի տընայնագործական Ընկերութիւնը քննելով Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան առաջիկայ ասլրիլի 3-4-ին գումարուելիք համագումարի ծրագրի մէջ շօշափուած հարցերը հետևեալն է առաջարկում:

1) Ընկերութիւնը իր վեցամսեայ գոյութեան ընթացքում բացել է միայն Համամլուում մի ջուլհակութեան արհեստանոց, որտեղ պատրաստուած գործուածքների նմուշները ներկայացնում ենք առանձին ալբոմ ցուցակով: Արհեստանոցում գըտնուում են միայն ջուլհակութեան վերաբերեալ գործիքներ—4 հատ տորք, մի հէնարան, երկու ճախարակ, մի վիլահան, կոճեր, մակոյկներ, մասրաններ և այլն: Մինչև այժմ պատրաստուած գործուածքները մեծ մասամբ ծախուել է տեղական ազգաբնակչութեան մէջ և մասամբ նահանգիս նահանգապետին, իր առանձին պատուէրով, որի բաւարար կատարման համար Ընկերութիւնը արժանացաւ շնորհակալութեան: Ընդհանրապէս նկատելի է, որ տեղական ժողովրդի մէջ մեծ չափով ծախուում է կը-

տաւ, քաթաններ, բամբակեայ բարդ գործուածքներ, սփռոցներ, երեսորբիչներ, սափ գործուածքներ:

2) Աչքի առաջ ունենալով միջավայրի ազգաբնակչութեան պահանջները և այն հանգամանքը, որ ընկերութիւնը իր տնայնագործական անկատարելագործ միջոցներով անկարող է այժմեան գործարանական արդիւնքների դէմ մրցել, նպատակայարմար է գտնում Ձուլականոցում բանալ գորգագործութեան և շալեգործութեան բաժանմունքներ: Ցանկալի է հաւաքել մանրամասն տեղեկութիւններ այս արհեստների նկատմամբ, առաւել ևս այդ արհեստներին տալ զուտ հայկական ճաշակ՝ օգտուելով նախկին հայկական գործուածքների նախշերից, կցելով դրանց հայկական քանդակագործութեան նախշ—փորուածքներ: Ցանկալի է, որ այս արհեստների վերաբերեալ տեղեկութիւններ ու կարծիքներ հաւաքուին կատարելագործ գործարանատէրերից ու մասնագէտ անձնաւորութիւններից: Գորգագործութեան ու շալեգործութեան ապահով գոյութիւնը պայմանաւորուած է տեղական ազգաբնակչութեան անչափ սպառումով: Բացի վերոյիշեալից կարելի է բանալ նաև թողագործութեան (վուշից), եղեգնագործութեան և զամբիւղներ պատրաստելու արհեստանոցներ: Ընկերութիւնը զուրկ լինելով մասնագիտական տեղեկութիւններից, անկարող էր նախատեսել վերոյիշեալ արհեստանոցների բացման վերաբերեալ կատարելիք ծախսերը,

իսկ այժմեան գոյութիւն ունեցող Ձուլակութեան Արհեստանոցին տարեկան ծախս պահանջուած է 7—800 ռուբ: Ընկերութեան եկամտի միակ աղբիւրը այժմ կազմում են անդամավճարները:

3) Ցանկալի է հիմնել Կովկասեան տնայնագործ—Բիւրօ, ընտրուած Կովկասում գոյութիւն ունեցող տնայնագործական Ընկերութիւններից, որին յանձնարարել տնայնագործական ընդհանուր գործի ղեկավարութիւնը, որի արամադրութեան տակ զընել տնայնագործական իրերի Կովկասեան պահեստը և պատուէրների ընդունելութիւնը, վերջինս ցրելով զանազան արհեստանոցների վրայ, համաձայն արհեստանոցների նիւթական ու տեխնիքական պատրաստութեան: Աչքի առաջ ունենալով ցուցահանդէսների բարոյական ու նիւթական շահաւէտութիւնը, ընկերութեանս համար ցանկալի է պարբերաբար ցուցահանդէսների կազմակերպութիւնը:

Ընկերութեանս անհրաժեշտ, էական կարիքն է ունենալ գործուածքների նմուշներ և ցանկալի է սրանց ձեռք բերելու նախաձեռնութիւնը յանձնարարել վերոյիշեալ բիւրօյին:

5) Ձուլակութեան արհեստի գործիքներ (տորքեր, հէնարան, վիլահան, ճախարակներ) ամուր շինուածքով կարելի է պատուիրել Համալիում, հէնց Ընկերութեան միջոցով: (Գների մասին առանձին համաձայնութիւն): Գաւառում մթերքների վաճա-

ուումը պէտք է իրանց վրայ վերցնեն դա-  
ւառական ենթարբւրօնները: Էթանագին մա-  
նուածքներ ձեռք բերելու միջոց է համա-  
րում Ընկերութիւնս, տեղական բուրդ և  
բամբակ ուղարկելը մանուածագործ գործա-  
րաններին, այն տեղից պատրաստի մա-  
նուածք ստանալու համար:

6) Ցանկալի է ունենալ շրջանային շրջիկ  
հրահանգիչ—մասնագէտներ, որոնց յանձնա-  
րարել գործի մասնագիտական բաժնի դե-  
կավարութիւնը:

7) Մասնաւոր ձեռնարկուններին դէպի  
տնայնագործական իրերի վաճառումը զբա-  
ւելու համար, անհրաժեշտ է գործուածք-  
ները պատրաստել համապատասխան տե-  
ղական ժողովրդի պահանջներին, տալ այդ  
գործուածքներին բնորոշ ձև ու հայկական  
առանձնայատուկ ճաշակ:

8) Ընդհանուր գործի առաջադիմութեան  
ու զարգացման համար միանգամայն ան-  
հրաժեշտ է տարեկան առնուազն միանգամ  
համագումար, եթէ հնարաւոր է կատարել  
ու կապել միաժամանակ տնայնագործական  
ցուցահանդէսների հետ: Համաժողովների  
հրաւիրելու նախաձեռնութիւնը և ծրագրի  
կազմելը յանձնարարել կողմ. Տնայն. Բիւ-  
րօին. իսկ համաժողովի տեղի որոշումը  
կատարել կենտրոնական պոնկտներում:

Համաժողովի ձեռնարկ վարչութիւն

## ՂՇԼԱՂԻ ԱՐԿԵՍՏԱՆՈՅԻ ՎԱՐՉՈՒ- ԹԵԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

( Կարգացում 4-ին սպրիւն )

1909 թ. Մարտի 26-ին Ղշլաղի ջուհա-  
կանոցի նպաստող անդամների ընդհանուր ժո-  
ղովը մանրամասն ծանօթանալով տնայնա-  
գործական համագումարում քննուող հարցե-  
րի հետ, կարևոր համարեց մի քանի գործ-  
նական որոշումներ անել:

1. Աչքի առաջ ունենալով որ մենք, հայ  
գիւղացիներս, գտնուում ենք տնտեսական  
քայքայուած դրութեան մէջ, որ մեր աննշան  
հողաբաժինը, կորցնելով իւր կենսական  
ոյժերը, նահապետական եղանակով մշակուե-  
լուց, անկարող է լրացնել մեր ծով—կարիք-  
ները, ուստի ներկայ տնտեսական ճգնաժա-  
մից կարող է ազատել օգտաւէտ արհեստնե-  
րի զարգացումը, որը շնորհիւ մեր կուլտու-  
րական յետաճացութեան չի մուտք գործել  
մեր երկրում: Ցանկալի է, որ Տնայնագոր-  
ծական ներկայ Համագումարը գոյութիւն  
ունեցող ջուհականոցները յարատե դարձ-  
նէր և նպաստէր մեր շրջանում գորգագոր-  
ծութեան, զամբիւղագործութեան, բրուզի և  
այլ օգտակար արհեստների տարածուելուն:

2) Աչքի առաջ ունենալով, որ Հ. Տ. Ըն-  
կերութիւնը մինչև օրս իւր հիմնած արհես-

տանոցների չափազանց բարձր գներով թե-  
լեր է մատակարարել, որ այդպիսի թելե-  
րից պատրաստուած կտորները, առանց  
նրանց վրայ թափուած աշխատանքը հաշուե-  
լու, շատ թանկ են նստում, ուստի շատ  
ցանկալի է, որ Տ. համագումարը երկար  
դադուէր այդ խնդրով:

3. Շատ ցանկալի է, որ կազմուէր մի  
մշտական բիւրօ, վերցնելու զանազան հիմ-  
նարկութիւններից և անհատներից և կտոր-  
ների պատուէրներ գոյութիւն ունեցող ար-  
հեստանոցների համար:

4) Հիմնել զանազան թելերի, անհրաժեշտ  
գործիքների մի կենտրոնական պահեստ:

5) Յանկալի է, որ բոլոր արհեստանոցնե-  
րի գործունէութեանը հսկէր մի մասնագէտ—  
ինստրուկտոր:

Արհեստանոցի Վարչութիւն

27 Մարտի  
Ղալտղ-դիւղ:

## ՊԱՐՆԻ ԳԻՒՂԻ ԶՈՒՂՆԱԿԱՆՈՅԻ ՇՈՒՐՁԸ

Ս. Բայաղեանցի

(Կարդացուած 4-ին ասլիւն)

Հայ Տնայնագործակաւն Համաժողովին

Պատիւ ունիմ յարգոյ ժողովիդ բարի ու-  
շադրութիւնը հրաւիրել այս թէև գոեհիկ,  
բայց ցաւոտ բովանդակութեամբ զեկուցման  
վերայ:

Կարիքի անհրաժեշտութիւնը ինձ ստի-  
պեց երկար ճանապարհի ահագին ծախ-  
քերն անելու, ոչ թէ ներկայ համագու-  
մարի ծրագրի աջողութեանը նպաստելու  
նպատակով, որին անկարող ենք, այլ այն  
դիտումով, որ հասկանալի անեմ թէ որ աս-  
տիճան մօտ է աղքատ ու աշխատաւոր դա-  
սակարգի շահերին ներկայ համագումարի  
ձգտումը բարելաւելու գիւղացու տնտեսու-  
թիւնը, և ինչ աստիճան կարող է աջակցել  
նրա գործունէութեան առաջադիմութեանը:  
Անցեալ տարի, երբ հայ տնայնագործական  
ընկերութեան նախաձեռնութեամբ բացուեց  
մեր գիւղում ջուրհականոց, դա մի աչքի  
ընկնող նորութիւն էր, և մենք նրա մէջ  
տեսանք մի որոշ աստիճանի փրկարար մի-  
ջոց, որ ստեղծուեց մեր գիւղում: Աղքատու-  
թիւնը մի կողմից, այդ գործի օգտակարու-  
թեան ձգտումը միւս կողմից, մեզ դրդում

են մտածել գործնական կազմակերպութիւն տալու արհեստների գործին, բայց մեծ քայլեր չենք կարողանում անել. թէև մեր հասարակութեան մէջ ունենք չորս հարիւր տուն բաղկացած երեք հազար հոգուց, բացի տասներկու հարեան գիւղերից:

Չունենք ուսումնարան, չունենք ընթերցարան, չունենք պարտաճանաչ քահանայ և չունենք մի ուժեղ ձեռք, որի ազդեցութիւնը լինէր կենսաբեր: Կղզիացած ամեն նորութիւններից, օրագիրներից և այցելողներից, մենք պապերից սկսած տանջանքի և կսկծանքի հայրենիք ենք դարձրել մեր երկիրը: Տուէք մեզ տնտեսական առաջադիմութեան բանալին՝ յետոյ վստահութիւն կարող եմ տալ, երաշխաւորելով հասարակութեան առաջադիմութեան մասին: Տուէք մեզ այդ և դուք հաւատացած եղէք, որ կան անհատներ, որոնք ժամանակի ոգուն ծարաւի լինելով, նոր ակոսներ կը բանան և այդ բեղմնաւոր նոր սերմերի սիրուն ծիւրերով կը դարձարեն մեր թշուառ հասարակութեան գարնան առաւօտները, այն հասարակութեան, որը սիրաբորբոք հովուի հարազատ սրնգի կանչին է սպասում և չունէ դէպի տնայնագործութիւն հրաւիրող քարոզը, բացատրութիւնը, դասախօսութիւնը, որոնք հոգի ներշնչէին կենդանի և փայլուն օրինակներով և օգնութեան բարի ձգտումներով: Անմշակ հողը պատրաստ է փխրուն շերտերով, ակոսող գութանի բաղցր ու ծլվլան եղանակով

հորովելն է պակասում բացուող արշալոյսի թռչունների դայլայլիկներով:

1908 թ. սեպտեմբեր ամսից մեր գիւղում Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան նախաձեռնութեամբ բացուած է ջուրհակութեան արհեստանոց: Բայց նոյեմբեր ամսից սկսած պահպանութեան հոգսը ընկել է մեր արհեստանոցի 10 աշակերտուհիների ծնողների վերայ:

Ամսական մօտ 40-50 բուրլի ծախսից մենք կարողանում ենք անագին դժուարութեամբ հասցնել միայն 30 բ. մի տամն բուրլի էլ տալիս է ամսական մեր ընկերութիւնը:

Գործի օգտակարութիւնը ըմբռնելուց յետոյ ամեն կերպ աշխատում են արհեստանոցի գոյութիւնը գոնեա վեց ամսով ապահովել. բայց մեր ոյժը հնարաւորութիւն է տալիս ամենածանր պայմանների մէջ մըտնելուց յետոյ ամեն մի աշակերտից վերցնել ամսական 3 բ. ուրեմն 10-ից 30 բ.:

Յայտնելով վերոյիշեալի մասին, սրանով խնդրում ենք այն հաստատութիւններից, որոնք ձեռնհաս են, չը մերժել 6 ամիս ժամանակով մեզ նպաստել 20-ական բուրլի:

Այդ է պահանջում գիւղական ժողովրդի ամբողջ 9 ամիս պարապութեան մատնուած թանկագին ժամանակը, որը պէտք է արդիւնաբերական աշխատանքի վերածել և ամեն աշխատաւորի օրական վարձը գնահատել 40-60 կ.:

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ

մեր արհեստանոցը մի նոր հոսանք է մըտ-  
ցնում գիւղերում, զարթեցնելով պահանջ  
նոր աշխատանքով զբաղուելու և որ դրա  
շուրջը խմբուած են լինում գիւղի փոքրի-  
շատէ բանիմաց երիտասարդութիւնը, խնդ-  
րում ենք քննութեան ենթարկելով մեր  
յայտարարութիւնը, աջակցել մեզ՝ տգիտու-  
թեան խաւարի մէջ թաւալուող գիւղական  
հասարակութեանը:

Ա.) Մեր արհեստանոցը բացուել է 1908 թ.  
նոյեմբերի 1-ից. բնակարանի տիրոջը վճա-  
րում ենք այս ու այն ուստելիքներով, որ  
գտնւում է մեր մէջ. վարպետուհու ոռճիկը  
ապահովելու համար սկզբում հինգ աշակեր-  
տով այդ մասին պատասխանատու էինք,  
բացի եղած ութը աշակերտուհիները 3-ը  
ձրի են, իսկ 5-ի ծնողները վճարում են սկը-  
սած ամսական 50-կոպէկից մինչև 1 ըուրլի:  
Առաջին  $1\frac{1}{2}$  ամսում, երբ ձրի էր վարպետու-  
հին և ստանում իր ոռճիկը Հայ Տնայնագոր-  
ծական Ընկերութիւնից, ձրի էին և աշակեր-  
տուհիները և նրանց թիւը հասաւ մինչև  
22, բայց երբ մտցրինք վարձատրութիւն,  
մեծամասնութիւնը շնորհիւ տգիտութեան  
և աղքատութեան հեռացան, — բայց հիմա կան  
ցանկացող աշակերտուհիներ, որոնց չենք կա-  
րողանում ընդունել տեղի անյարմարութեան  
պատճառով: Այդ մասին մտադիր ենք ներկայ  
զարնանս մի որ և է հնարով տեղ պատրաս-  
տել գոնեա 4 տօրքի իր պարագաներով:

Բ.) Աշակերտների թիւը այժմ 13-է:

Գ.) Պատրաստուած կտորների թիւը հաս-  
նում է 205 արշինի:

Ինչ վերաբերում է նմուշներին, ամեն  
կտորից ուղարկել ենք նմուշները փոքր  
կտորիկներով, բացի վերջին երկու կտորից,  
իսկ գիւղում բոլոր գործուածքները բանա-  
ցրել ենք և կտորի հաւաքածոյ չունենք,  
այսուհետև կը սկսենք ունենալ և կուղար-  
կենք իւրաքանչիւր կտորից արշինաչափ:  
Առայժմ ունենք կոստիւմի և պալտոյի  
ամենագեղեցիկ նմուշի գործուածք մի քանի  
կտոր, աւելացնելուց յետոյ կուղարկենք Ըն-  
կերութեանը:

Դ.) Մեր վարչութիւնը ոչնչից մուտք չէ  
ունեցել:

Ե.) Մեր մօտուսը ծրագիրն այն է, որ  
ապագայում հնար գտնենք մեզ կանոնաւոր  
ջուլհականոց պատրաստելու, եթէ օգնող կը  
լինի մի որ և է ընկերութիւն: Մեր արհեստա-  
նոցի վարչութեան ծրագրի համաձայն ան-  
հրաժեշտ է ունենալ նաև 15-ից — 20 փութ  
բուրդ, որի գործուածքների օգտակարու-  
թիւնը անագին է ճանաչուում: Մեր ծրագրի  
մի մասն էլ այն է, որ հնար եղածին չափ  
յարմարութիւն տրուի աշակերտ աւելացնե-  
լու ջուլհականոցում և ոյժ վարչութեան  
կազմին: Մենք մեր բոլոր ոյժով նպատակ  
ունենք առաջ տանել այդ գործը՝ որովհետև  
մեր ամբողջ գիւղերի ամենափրկարար մի-  
ջոցն է:

Մեր վարչութեան անդամներից կայ մէկը,  
որի վերայ կարողանում ենք յոյս դնել այս

ու այն կողմ, որպէսզի թէ մանկու հնար  
գտնենք և թէ ոտքերի և ասպերի շարժ-  
ւածքը ուղղել: Վերջինների մասին խնդրում  
ենք աչքի առաջ ունենաք, որով չխորտակ-  
ւեն մեր այն յոյսերը, որի մէջ մեր փրկու-  
թիւնն ենք գտնում և որից ամբողջ հասա-  
րակութիւնը սպասում է անկում կամ բարձ-  
րացում: Վերջացնելով զեկուցումը, կը խընդ-  
րենք ներել նրա պակասութիւնների համար:



## ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԻԻՂԻ ԶԵԿՈՒ- ՑՈՒՄԸ

(Կարդացուած 4-ին ապրիլի):

1908 թուի նոյեմբերի 15-ից, Թիֆլիսի  
Հայ Տնայնագործական ընկերութեան ու-  
ղարկուած ինստրուկտոր Մ. Սողոմոնեանի  
առաջարկութեամբ և տեղային դիտակից  
ուժերի աջակցութեամբ կազմակերպուեց  
Մեծ-Ղարաքլիսայում վերոյիշեալ ընկերու-  
թեան ճիւղը 80 անդամներով, տարեկան  
6 ր. անդամավճարով: Տեղիս ճիւղի առա-  
ջին գործը եղաւ բաց անել Մեծ-Ղարաքլի-  
սայում ջուլհակութեան արհեստանոց 7  
տօրքերով և մէկ հենարանով, որոնցից մէկ  
տօրքը և մէկ հենարանը ստացուել էր Թիֆ-  
լիսի ընկերութիւնից: Նոր կազմակերպուած  
ճիւղի վարչութիւնը վարձելով ընդարձակ  
շինութիւն երկու լուսաւոր սենեակներից  
բաղկացած և հոգալով վաղօրօք բոլոր հար-  
կաւոր գործիքները, բացեց արհեստանոցը  
նոյն թուի դեկտեմբերի 15-ից, որի համար  
նա ունէր կազմած հետևեալ տարեկան  
բիւջէն.

Վարպետուհու ոտճ. բնակարանով	360 ր.
Արհեստանոցի վարձ	» 72 »
Վառելիք	» 50 »
Լրուսաւորութիւն	» 18 »

Գումարն է 500 ր. տար.

Սկզբում վարչութիւնը մտադրուել էր ունենալ արհեստանոց միայն 2 տօրքով և մէկ հենարանով, որի համար նա կազմեց հետեւեալ նախահաշիւը.

Մէկ տօրքի վարձ 30 ր. երկրորդ տօրքը ստացուելու էր Թիֆլիսի ընկերութիւնից:

Մէկ հենարանի վարձ 20 ր.  
2 փութ թել 60 ր.

Ընդամ. 110 րուբ. որը ծախուելու էր միանուագ.

Ուրեմն գործը սկսելու համար պահանջուում էր ընդամենը առաջին տարին 610 ր. այդ ծախքը պէտք է ծածկուէր 480 ր. սպասելիք անդամավճարներից և պակասորդ 130 ր. լրացնուելու էր թատրոններից, երեկոյթներից և այլն, որոնք տեղի կունենան մի միայն ամառները:

Համաձայն կազմած արձանագրութեան իւրաքանչիւր անդամի տրուում էր իրաւունք ուղարկել իր կողմից ջուլհակութեան արհեստը սովորելու մէկ աշակերտ կամ աշակերտուհի և որովհետեւ ցանկացող սովորողների թիւը հասաւ մօտ 70, ու մէկ երկու տօրքը չէր կարող բաւարարութիւն տալ այդ բոլորին, ուստի վարչութիւնը ստիպուած եղաւ շեղուել իր վաղօրօք կազմած ծրագրից և ձեռք բերեց միանուագ 6 տօրք,

վարձելով միևնոյն ժամանակ աւելի ընդարձակ շինութիւն տարեկան 96 րուբլիով, որտեղ հնարաւորութիւն կար տեղաւորցնել բոլոր տօրքերը: Այդպէս անակնկալ պատճառներից ստիպուած վերոյիշեալ նախահաշիւը ենթարկուելով փոփոխութեան, ստացուեց հետեւեալը.

Վարպետուհու ոտձիկ 360 ր.  
Արհեստանոցի վարձ 96 » տարեկան  
Վառելիք 13 »

Ընդամենը 469 ր.

Աւելացնելով այս գումարի վերայ ծառայի վարձ 60 ր. տարեկան և պատրաստուած գործիքների ընդհանուր գումարը 134 րուբ., կտեսնենք, որ Մեծ-Ղարաքիլիսայի ջուլհականոցը մինչև այսօր ծախսել է և դեռ ծախսելու է 663 ր. առանց թելերի, որոնց համար հարկաւոր կլինի ունենալ տարեկան առ նուազն 100—150 ր. այնպէս որ կանոնաւոր և հաստատուն հիմունքների վերայ դրուած արհեստանոց-ջուլհականոցը պահանջում է տարեկան ամենաքիչը 700 ր. այնպիսի տեղերում, ինչպիսին է Մեծ-Ղարաքիլիսան. իսկ փոքր գիւղերում ի հարկէ այդ ծախքը քիչ կլինի:

Բոլոր սովորողները Մեծ-Ղարաքիլիսայի ջուլհականոցում բաժանուած են երկու մասի, որոնցից մէկ խումբ յաճախում է առաւօտեանները ժամը 9 մինչև 1, իսկ միւս խումբը կէս օրից յետոյ ժամը 2-ից մինչև 6:

Արհեստը ուսումնասիրուում է գործնական կերպով, իսկ գատիական տօներից յետոյ

մտադրութիւն կայ սկսել անցնել և արհեստի տէօրիան: Աշակերտութիւնը վերաբերում են գործին վերին աստիճանի սիրով և հետաքրքրութեամբ:

Անկասկած գործը խոստանում է լաւ ապագայ, եթէ միայն նորա աջող տարածմանը մեր երկրում արգելք չ'դառնան մի քանի հանգամանքներ, որոնց մասին աւելորդ չի լինի այստեղ շեշտել:

1. Անհրաժեշտ է որոնել հաստատուն աղբիւրներ, որոնցով հնարաւորութիւն ստացուի ընդ միշտ ապահովել ներկայումս բացուած և ապագայում բացուելիք ջուլհականոցներին գոյութիւնը:

Այդ խնդիրը հեշտութեամբ լուծում կարող է ստանալ, եթէ կովկասի վարչութիւնը յատկացնէ ջուլհակութիւնը տարածելու համար իւրաքանչիւր տարի մի խոշոր գումար գեմսկի փողերից:

2. Արհեստը յաջող տարածելու համար մեր երկրում հարկաւոր է ունենալ հմուտ պատրաստուած վարպետներ կամ վարպետութիւններ: Ամբողջ Ռուսաստանը ունի մի միայն մէկ հատ գալրոց-արհեստանոց Վիլնի-վոլոջօկում (Տվերի նահանգ) որտեղ, և պատրաստուած են այդ արհեստի վարպետներ այն էլ շատ սահմանափակ թուով—այն է գալրոցը կարողանում է դուրս տալ տարին ոչ աւել 8—10 վարպետներ. պարզ է որ այդ միակ գալրոց-արհեստանոցը չի կարող բաւարարութիւն տալ երկրի բոլոր մասերին:

Բացի այդ յիշեալ գալրոց-արհեստանոցից

դուրս եկած վարպետները անձանօթ լինելով մեր տեղական լեզուներին, կ'ըժուարանան նոյն իսկ աջող տանել այդ գործը մեր երկրում: Ուրեմն ինքն ըստ ինքեան պահանջ է առաջ դալիս ունենալ վարպետներ կամ վարպետութիւններ տեղացիներից և այդ պահանջը հնարաւորութիւն կլինի իրագործել, հիմնելով երկրիս կէտէրից մէկում վերոյիշեալ գալրոցի ծրագրով մի այդպիսի գալրոց-արհեստանոց կովկասի համար. ցանկալի էր, որ այդ գալրոց-արհեստանոցը բացուէր Մեծ-Ղարաքիլիսայում, որը կտար այդ հիմնարկութեանը շատ նպաստաւոր պայմաններ:

3. Հարկաւոր թելերը ներկայումս ձեռք են բերում ներքին նահանգների գործարաններից կովկասեան տնայնագործական կոմիտէտի միջոցով և պէտք է ասել, որ նստում են բաւականին թանգ: Այդ է պատճառը, որ գործուած կտորները նստում են համեմատաբար թանգ գներով, դարձնելով այդպէս ջուլհակութեան արդիւնքները անմատչելի մեր ազգաբնակչութեան համար. այն ինչ ջուլհակութիւնը իբրև մի տնայնագործական արհեստ, կարող է մեղանում ևս դառնալ ժողովրդի համար օգտակար միջոց նրա տնտեսական դրութիւնը բարելաւելու, եթէ միայն թելերը պատրաստելու համար մեր երկիրը ունենայ գոնէ մի հատ գործարան: Այն ժամանակ պէտք է յուսալ, որ թելերը կը նստեն շատ ատժան, մանաւանդ որ մեր երկիրը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ հում նիւթ, այն է

բամբակ, վուշ և կանեփ: Այդպիսի գործարանը ցանկալի կը լինէր ունենալ Երևանում, որտեղ բամբակի մշակութիւնը ստացել է լայն ծաւալ:

4. Ջուլհակութեան զանազան հարկաւոր գործիքներ պատրաստելու և էժան գներով ձեռք բերելու համար, Կովկասը անշուշտ պէտք է ունենայ իր կենդրոնական գործարանը և պահեստը:

5. Բացի Ջուլհակութեան արհեստը, երկրի գրութիւնը բարելաւելու համար, նպաստաւոր կը լինէր նաև տարածել աղգարնակութեան մէջ զանազան տնայնագործական արհեստներ, ինչպիսին են, կաւային, կաշուի, փայտեայ գործը և այլն: Մեր աղգարնակութիւնը, մանաւանդ գիւղական ժողովուրդը, ամբողջ ձմեռուայ ամիսները անց է կացնում առանց աշխատանքի, և այդպիսով նա, աննկատելի իր համար, աւելի ևս քայքայում է իր տնտեսական գրութիւնը: Այն ինչ մեր հարուստ երկիրը յիշեալ արհեստների համար ունի մեծ քանակութեամբ հում նիւթ, որը կարող էր տալ մեծ օգուտներ և կը նպաստէր բարելաւել գիւղացու նիւթական միջոցը:

6. Այդ բոլորը իրագործելուց յետոյ հարկաւոր է լուրջ զբաղուել տնայնագործական արդիւնքների վաճառքի կազմակերպութեան հարցով թէ Կովկասում և թէ Կովկասից դուրս: Եւ երբ այդ հարցը ստացաւ իր ցանկալի լուծումը ու դրուեց կանոնաւոր հիմունքներով վրայ, այն ժամանակ մեր ժո-

ղովուրդը որոշ չափով թեթեացրած կը լինի իր դառն վիճակը:

Մեծ-Ղարաբիլիսայի գիւղատնտեսական-տնայնագործական ընկերութեան վարչութիւն:



**ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՎԱՂԱՐ-  
ՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Արշակ Մակարեանցի

(Կարգացուած 4-ին Ասրիւն)

Վաղարշապատի ջուլհականոցը բացուել է ներկայ 1909 թուի 3 փետրուարի Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան նախաձեռնութեամբ: Առաջին ամսուայ ընթացքում աշակերտների թիւը հասաւ 45 հոգու:

Մի ամսից յետոյ, 1 մարտի, Վաղարշապատում գոյութիւն ունեցող Բարեգործական Ընկերութիւնը վերցրեց արհեստանոցը իւր հովանաւորութեան տակ: Ընդհանուր ժողովը որոշեց պահպանել արհեստանոցը, ստանալով Վաղարշապատում հղած հին Տընայնագործական Ընկերութեան ունեցած 218 ռ. փող, 2 պուդ թելը և զանազան գործիքներ, նաև Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան կողմից յատկացուած 45 բուրլին: Մնացած գումարն ինքն ընկերութիւնը պիտի հոգայ:

Երբ ջուլհականոցը յանձնուեց Բարեգործական Ընկերութեանը, այն ժամանակ աշակերտուհիներ թիւը պակասցրուեց մինչև 27 հոգու, որոնք հիմայ շարունակ գործում են 2 ամսուայ ընթացքում:

Արհեստանոցում աշխատում են 3 տօրքի վրայ: Գործուածքները հետևեալներն են՝ առաջին գործը 18 արշ. մոխրագոյն թելից դօրօժկա, 12 արշին թէյի սրբէշ խոլաս բամբակի թելից, 8 արշին կապոյտ զօլ կտոր և 3 արշին վաֆլիի երեսրբէշ:

Աշակերտները ծանօթացել են կտաւի գործուածքի հետ և նկարել են նրանց: Սովորել են փոքր ինչ և վերլուծումը:

Աշակերտուհիներից 4 հոգի են անգրագէտ, իսկ 23 հոգին ունին այնքան գրագիտութիւն, որ կարող են իբրև վարպետուհիներ պատրաստուել:

Ջուլհականոցը թողել է ժողովրդի վրայ լաւ տպաւորութիւն:

Գործուածքներ գնողներ շատ կան, բայց առ այժմ աշակերտուհիները իրանց համար են գործում:

Տեղական մանած թելից պատրաստել կարելի է երեսրբէշ վաֆլիի, իսկ ուրիշ գործուածքների համար թելը կոպիտ կը լինի:

Տօրքերի մէջ մի քիչ փոփոխել տուինք բեգուկատօրը, որը այժմ աւելի էժան և յարմար է:

Տնայնագործական կարիքները հետևեալներն են՝

1. Մանող մեքենայ թէ բամբակի և թէ մետաքսի.
2. Նմուշների և նկարների անհրաժեշտութիւնը.
3. Ինստրուկտոր և զպրոց վարպետներ պատրաստելու համար.

4. Եթէ միայն լինի Վաղարշապատում մանող մեքենայ, նա (Վաղարշապատը) կը տայ շատ էփան դնով թեկ իբրև մի կենսորոն թէ Վաղարշապատի և թէ Սուրմալուի գաւառների, որ բամբակի և մետաքսի առատ երկիր է:

5. Այստեղ կարելի է սկսել ծղնագործութիւն և ուռեգործութիւն:



## ՏՆՍՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱԳՈՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՅԸ

Յ. Արիստակէսեանի:

(Կարգացուած 4-ին ապրիլի)

Նախ քան Բագուի արհեստանոցի մասին տեղեկութիւններ տալը, ես պէտք է միջանի խօսք ասեմ ընդհանրապէս տնայնագործութեան մասին:

Տնայնագործական արհեստները արևելքի առևտրի մէջ մեծ դեր են խաղում. Պարսկաստանը նմանում է մի շուկայի, որտեղից արտահանւում են Ամերիկա, Եւրոպա հիանալի քիրմանի շալեր, գորգեր, եամանիներ և այլն: Տաճկաստանը յայտնի է իր մետաքսէ ու բրդէ գործուածքներով: Վանի շալերը, Կեսարիայի գորգերը, Սարբերդի մանուսան, Տիգրանակերտի մետաքսէ գործուածքները, նկարաւոր վերարկունները, Չմիռնիայի ու Բրուսայի մետաքսէ կտաւը ու բաղնիսի սրվոռոցները և այլն յայտնի էին դեռ ևս 50 տարի սրանից առաջ, երբ ևրոպական կտորները շատ չէին տարածուած երկրում: Բոլոր ժողովուրդը իր պիտոյքները ինքն էր հոգում իր ձեռագործներով և նահապետական տորքերով, հարիւր հազար մարդիկ ապրում էին ու մինչև այսօր էլ դեռ ապրում են այդ արհեստով:

Կովկասի հայ գիւղացին այսօր Թիֆլիսի հայ Տնայնագործական ընկերութեան շնորհիւ վերադառնում է իր նախնական արհեստին՝ անայնագործութեան: Եւ պէտք է ասել, որ ջուլհակութեան արհեստը խոշոր դեր ունի կատարելու մեր գիւղական կեանքում: Պարապ ժամեր գիւղացին շատ ունի, անգործութիւնը երբեմն մղում է նրան արատների գիրկը, մինչդեռ նա կարող էր մի կողմից այդ պարապ ժամերին պարապել արհեստներով ու զերծ մնալ արատներից, իսկ միւս կողմից իր համար ապրուստի նոր աղբիւր ստեղծել: Գիւղացիները առհասարակ մեծ քանակութեամբ բուրգ են ունենում, որը վաճառում են շնչին գներով: Եթէ այդ բուրգը նրանք կարողանան վերածել գործուածքների, կազատուեն վաշխուունների ճանկերից, մեծ արդիւնք կը ստանան ու կը հոգան իրանց անային պէտքերը: Սակայն ջուլհակութեան արհեստը շուտ տարածելու և հիմնաւոր հողի վրայ դնելու համար հարկաւոր են հմուտ վարպետներ և կանօնաւոր կազմակերպութիւն:

Եւ կարևոր եմ համարում ունենալ Թիֆլիսում մայր դպրոց—արհեստանոց, որը կարողանայ գաւառներին տալ վարպետներ ու վարպետուհիներ: Վերջիններս ամեն տարի 2 ամիս ժամանակով պէտք է զան Թիֆլիսի դպրոցում նոր կատարելագործութիւնների հետ ծանօթանալու և վարժութիւնների համար ու ապա վերադառնան իրանց պաշտօնավայրերը, իսկ եթէ պաշտօնում չեն՝

պէտք է աշխատեն մայր արհեստանոցում իրրե բանուոր և ստանան աշխատանքի արդիւնքի 600/0-ը:

Արհեստանոցներում ուսումը պէտք է լինի 8 ամիս և ապա 4 ամիս էլ իրրե բանուոր աշխատելու արհեստանոցում փորձառութիւն ստանալու նպատակով, ստանալով արդիւնքի 300/0-ը:

Դրանից բացի, փորձը ցոյց է տալիս, որ կարիք կայ հայախօս ու փորձուած, ժողովրդական կեանքին ծանօթ մի լաւ վարպետի, որին կարելի լինել յանձնել արհեստանոցների ընդհանուր ղեկավարութեան ու հսկողութեան գործը բոլոր շրջաններում: Այդ վարպետը պէտք է լաւ ուսումնասիրած լինի ջուլհակութեան գործը, նրա սորքերը, գործիքները, իմանայ նրանց շինելու, վերանորոգելու ձևը, աշխատի միօրինակութիւն մտցնել, միատեսակ գործիքներ տալ բոլոր դպրոց արհեստանոցներին և հոգալ նրանց բոլոր կարիքները և այլն:

Այժմ դառնանք բուն արհեստանոցի կազմակերպութեան գործին: Ամեն մի արհեստանոց պէտք է ունենայ հետեւեալ անհրաժեշտ գործիքները. մի սօրք իր բոլոր մասերով՝ 8 հատ ոտնափայտեր, 5 հատ երկաթեայ թէ նօսր և թէ խիտ, վերջօկի համաձայն, սանդրները ունենալու է 10,000 ասպեր թէ շարժական, թէ անշարժ, մի հատ երկաթեայ պետլի բաժանելու գործիք, մի ճախարակ, մի վիլա, մի նոր և հեշտ ձևի հէնարան, 100 հատ կոճեր, 5 հատ

երկաթէ մաքրքներ և թիթեղի մասուրայներ  
 30 հատ: Եթէ զբանցից որևէ մասը պակաս  
 լինի, գործը կաղալու է: Ահա այդ ընդհանուր  
 տեղեկութիւնները տալուց յետոյ, ես կանց-  
 նեմ իմ բուն զեկուցմանը, որ վերաբերում է  
 Բագուում բացուած ջուլհականոցին, ուր ես  
 վարպետ եմ: Բագուի ջուլհականոցը բաց-  
 ւել է 1908 թուի նոյեմբերի 15-ից: Սկզբում  
 նա ունէր 2 տորք. իսկ այժմ արդէն ունի  
 6 տորք կամ ոստայնակ: Այնտեղ սովորող  
 աշակերտ-աշակերտուհիների թիւը 17 է,  
 որից 14-ը օրիորդներ են ու տիկիներու:  
 Նրանք մինչև այժմ սովորել են 16 տեսակ  
 ուղորներ և 8 տեսակ բրդէ բարդ գործուածք-  
 ներ: Այսուհետև պէտք է աշխատենք սո-  
 վորեցնել մի քանի տեսակ մետաքսեղէն և  
 ապա վերնահագուստի (կաստիւմի) բարդ  
 կտորներ: Եթէ ուզենանք ծախել արհեստա-  
 նոցի պատրաստած գործուածքները, բոլորն  
 էլ կը վաճառուեն, իհարկէ, բայց մեր  
 նպատակն է եղել տարածել այդ արհեստը  
 գիւղերում, սովորեցնել գիւղացուն իր մը-  
 թերքներից պատրաստել համապատասխան  
 գործածական գործուածքներ իր համար  
 և նրանցով հոգալ իւր կարիքները: Այնուա-  
 մենայնիւ Արհեստանոցը այժմից արդէն կը-  
 տորներ պատրաստելու փորձեր է անում.  
 նրանց առաջին նմուշները այստեղ ցուցա-  
 դրուած են: Պարզուած է արդէն, որ 5 ֆունտ  
 բրդէ թելից դուրս է գալիս 16 արշին կտոր  
 22 վերշոկ լայնութեամբ, իսկ թելի ֆունտը  
 արժէ 1 բուբի 15 կոպէկ: Ուրեմն կտորի

ամեն մի արշինը նստում է մեզ վրայ 60  
 կոպէկ: Եթէ այդ կտորը համեմատենք Ռու-  
 սաստանում պատրաստած կտորների հետ,  
 կը տեսնենք, որ մերը էժան է և բացի  
 դրանից դիմացկուն: Սակայն այդ բոլորից  
 զատ՝ ամենամեծ օգուտն այն է, որ մեր  
 գիւղացիներին ազատում ենք իրան հարս-  
 տահարող վաճառականների ձեռքից:

Բագուի արհեստանոցում վարպետութիւն  
 սովորելու համար սահմանուած է 8 ամիս,  
 որը բաւականաչափ բաւարարութիւն կարող  
 է տալ գործնական ասպարիզում: Սո-  
 վորելուց յետոյ նրանք կուղարկուեն գա-  
 ւառները տարածելու այդ արհեստը գիւղա-  
 ցիների մէջ:

Բագուի Հ. Կ. Միութիւնը, հետևելով իր  
 ջուլհականոցի մի քանի ամսուայ գործու-  
 նէութեանը, եկաւ այն եղբակացութեան, որ  
 եթէ մեր գիւղերումը տարածուի Տնայնա-  
 գործական արհեստը, շատ օգնած կը լի-  
 նենք դրանով գիւղացուն:

Այս օրինակելի ու օգտակար գործի ձեռ-  
 ներեցութեան համար Բագուի Հ. Կ. Մ-ը  
 և ջուլհականոցի ղեկավար անդամները ի-  
 րանց պարտքն են համարում ողջունել թիֆ-  
 լիսի Տնայնագործական առաջին համագու-  
 մարը և ցանկալ աջողութիւն, որպէ՛զ ի  
 աւելի եռանդով զարկ տայ այդ արհես-  
 տի տարածմանը գիւղերում, դրանով նը-  
 պաստէ խեղճ գիւղացու տնտեսական ու  
 բարոյական զարգացմանը, և իր գործունէ-  
 ութեամբ օրինակ ծառայէ հարեան ազգերին:

Բ. Հերթական նշանակութիւն ունեցող կարիքները:

Ուզուելար գիւղում նպատակայարմար կը լինէր հաստատել կարպետի և գորգի գործարան:

Արհեստանոց հիմնելու համար երեք տօրքով կը բաւէ 300 ըուբլի, եթէ պատրաստած իրերը խկոյն վաճառուեն: Մի որ և է հին կամ նոր կազմուելիք ընկերութեան՝ կամ մասնաւոր կարողութեան տէր, մի կամ մի քանի մարդկանց նախաձեռնութեամբ արհեստանոցի գործունէութիւնը սկսելու և արհեստը գործնական շաւղի վրայ դնելու համար, սկզբում տեղական արհեստագէտները բաւական են: Գործին ընթացք տալու նպատակով գորգ, կարպետ և այլն պատրաստելու գործարանի ղեկավարութիւնը ես յանձն եմ առնում ձերիւրար կատարելու:

Գ. Տնայնագործական արդիւնքների վաճառքի կազմակերպութիւնը կովկասում և թէ կովկասից դուրս:

Անհրաժեշտ է, որ լինի մի հեղինակաւոր հիմնարկութիւն՝ որը յանձն առնէր պատուէրներ տալու գործը կազմակերպել: Այդպիսի մի հիմնարկութեան վրայ պէտք է մասնացոյց անէ համաժողովը: Հիմնարկութիւնը կարող էր ունենալ տնայնագործական շըրջաններում իր գործակալները:

Անշուշտ կենդրոնական շըջանային պահեստները մեծ դեր կարող են խաղալ այդ գործում, եթէ միմեանց հետ կապ և յարաբե-

### ՊՕՏԱՍԽԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՅԵՐԻՆ ՈՒԶՈՒՆԼԱՐ ԳԻՒՂԻՑ

Ն. Խարազեանի

(Կարգացուած 4-ին Ապրիլի)

Աչքի առաջ ունենալով Լոռու շըջանի Ուզուելար գիւղի պայմանները և հանգամանքները, պատիւ ունեմ ներկայացնել հետեւեալ պատասխանները այն հարցերին, որոնք շոշափուած են Համագումարի ծրագրի ութ կէտերում («Մշակ» № 53)

Ա. Գոյութիւն ունեցող տնայնագործական արհեստանոցների գործունէութեան պտտկերը և բնորոշ գծերը:

Մենք պատրաստում ենք Ուզուելարում կարպետ, գորգ, մափրաշ և խուրջին: Յատուկ կրթական արհեստանոց չը կայ մեր գիւղում: Արհեստի համար հարկաւոր գործիքները հետեւեալներն են՝ տօրք հին ձեւի, ճիւղոտ, ասպափէտ, վարանգեխան, կոտիտներ, կտուտիչ և բիզ, նաև մկրատ: Նախկին սեպերի փոխարէն այժմ գործ են անում երկաթեայ պտուտակներ: Ինչ վերաբերում է շահաւէտութեան աստիճանին, նա կարագրուած է իմ զեկուցման մէջ, որ ներկայացրել եմ Համագումարից:

րութիւններ պահպանեն: Նոյն նպատակով մուղէյների կազմակերպելը թէ կրթական և թէ առևտրական նպատակների համար, որքան հնարաւոր է լայն չափերով, անհրաժեշտ է: Կարևոր են նոյնպէս հանդէսներ, ցուցահանդէսներ, իրեղէնների պատկերազրութեան հրատարակութիւններ:

Գ. Գործուածքների նմուշներ և նկարներ տարածելու գործը:

Նմուշներ ունենալը էական կարիքներից մէկն է: Եթէ չը կան նմուշների ընդօրինակութիւններ, պէտք է կազմել և տարածել նմուշների ժողովածուներ, ալբոմներ և այլն:

Ե. Գործիքներ և այլ մթերքներ մատակարարելու խնդիրը:

Մեր տեղական պահանջների համաձայն տեղական վարպետները գեղեցիկ կերպով պատրաստում են մեր նահապետական տօրքերը, բայց նրանք կարող կը լինեն շինել և կատարելագործուածները, եթէ ցոյց տըրուեն օրինակներ: Տեղական մի տօրքը կարելի է պատրաստել բոլոր իր սարգ ու կարգով ընդամենը 10 րուբլով: Թելերը պէտք է պատրաստել և ներկել տեղացիների ձեռքով առայժմ, ըստ որում թէ ներկերն են բուսական՝ ուրեմն նաև ամուր, չը խունացող, և թէ դրանց մասին եղած ծախքերի արժէքները կրկին մնում են գեղջկուհուն:

Զ. Վարպետներ և կառավարիչներ ունենալու խնդիրը:

Մեր գիւղում մեր արհեստի համար այժմ նոր վարպետների հարկաւորութիւն չունենք, եթէ չենք ունենալ տնայնագործութեան մի այլ անձանօթ ճիւղ:

Է. Մասնաւոր նախաձեռնողներ:

Տողերիս գրողը խոստանում է մասնաւոր ձեռնարկութեան վարիչը լինել, եթէ մի քանի ընկերներ կօգնէին մեզ փոքրիկ զբամազ լիսով:

Ը. Պարբերական համաժողովների կարևորութիւնը:

Համաժողովները անպայման կերպով մեծ օգուտներ կարող են տալ տնայնագործական գործին, եթէ պարբերաբար գումարուեն զանազան կէտերում և կենտրոններում: Վայրերի մասին կը խորհէ և կը կարգադրէ ինքը ներկայ համագումարը:



### ԱԼԷԻՍԱՆԴՐՍՊՕԼԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՅԻ ՄԱՍԻՆ

Քաղուածք Պ. Քիզալալի զեկուցուսից

(Կարգացուած 4-ին ապրիլի)

Թիֆլիսի Հայ Տնայնագործութեան արհեստանոցի նախկին վարպետ Յ. Բեկպալի իր ճանապարհորդութիւնից յետոյ, որ կատարել էր դէպի Ալէքսանդրապոլ այցելելու տեղական ջուլհակնոցը, ներկայացրել էր մի զեկուցում, որից վերջնում ենք հետեւեալ քաղուածքը:

Ալէքսանդրապոլի արհեստանոցը բացուած է 1907 թուին 60 հոգուց բաղկացած մի ընկերութեան ձեռքով, որոնցից իւրաքանչիւրը մտցրել է ընդհանուր գրամարկղը 100-ական ռուբլի:

Շնորհիւ այդ գումարի և անդամների եռանդուն գործակցութեան հնարաւոր եղաւ կազմակերպել ընդարձակ արհեստանոց և տալ գործին կենդանի աւետրական բնաւորութիւն:

Ներկայումս արհեստանոցը ունի 16 տօրք Թիֆլիսի արհեստանոցի տօրքերից փոքրինչ աւելի անյարմար, բայց դրանից այնտեղ կայ ապպրիտուրի մեքենայ կտորների հարթման համար և ներկարան:

Արհեստանոցում բանում են 7 տղամարդ (որոնք առաջ սովորել են ջուլհակութիւն), 7 կին և 2 աղջիկ-աշակերտուհի: Իւրաքանչիւրի

չիւրի օրավարձն է 50 կոպէկից մինչև 1 ռուբլի 10 ժամեայ աշխատանքի համար:

Զուլհակութեան վարպետը տեղացի է գործնական մարդ, հին գիտութեամբ, ուստի և գործադրում է հին անկատար եղանակ:

Մահուդ պատրաստում է գլխաւորապէս տեղական և մասամբ գործարանական բըրդեայ մանուածից: Մահուդի արշինը արժէ 1—1 ռ. 30 կ. Զուլհակնոցը իր գոյութեան շնորհիւ պատրաստել է 1500 արշին: Ապպրիտուրան ունի ըստ երևոյթին մեծ նշանակութիւն: Արհեստանոցի բնակարանի վարձն է տարեկան 500 ռուբլ:

Ժամանակ չունենալով գործնականապէս ցոյց տալու, թէ ինչպէս պէտք է բարւոքել տօրքերը և գործավարութիւնը, ես տուի մանրամասն բացատրութիւններ:

Ընկերութիւնը մտադիր է շուտով ձեռք բերել բրդամանարան գործիք և աւելացնել տօրքերի թիւը, միևնոյն ժամանակ կազմակերպել վաճառականութիւնը»:

Վարչութիւնը, լսելով զեկուցումը, որոշեց աչքի առաջ ունենալ ապագայ յարաբերութիւնների ժամանակ հրաւիրել ալէքսանդրապոլցիներին մասնակցելու Համագումարին, երբ և կայանայ:

ճանը և արդեօք որտեղ և ինչ հանգամանք-  
ներում են նրանք յարմար արդիւնաբերու-  
թեան համար:

Ես իմ առաջին զեկուցման մէջ արդէն  
խնդիր էի դրել, թէ անհրաժեշտ է պարզել  
զանազան արհեստների շահաւէտութեան շա-  
փը և որոշել նրանց տնտեսական արժէքը:

Այդ խնդիրը դեռ պէտք է ուսումնասի-  
րուի:

Սակայն եղած փորձերի և դիտողութիւն-  
ների վրայ հիմնուած՝ այժմէն իսկ կարող ենք  
ասել, որ առհասարակ բուրդից գործուածք-  
ները աւելի շահաւէտ են քան բամբակինը:

Այն շալերը, որոնք հանդէս են գրուած  
այստեղ այս դահլիճում Համագումարի ա-  
ռիթով և որոնց մասին խօսեցին գաւառա-  
կան ներկայացուցիչներից մի քանիսը, ցոյց  
են տալիս, որ նրանց պատրաստութիւնը  
կարող է ձեռնտու լինել: Պարնի գիւղի փոր-  
ձը ցոյց է տալիս, որ բրդից պատրաստած  
շալերը էժան են նստում արհեստանոցի վը-  
րայ՝ համեմատած այն գներին, որոնցով  
նրանք կարող են ծախուել: Այստեղ գործա-  
ծուող բուրդը տեղական գիւղական է և մա-  
նուածքն էլ պատրաստուում է իրենց ձեռքով:

Ալեքսանդրօպօլ քաղաքում կազմակեր-  
պուած է ջուլհականոց, որ յատկապէս զբա-  
ղուած է շալերի և հասարակ մահուղների  
պատրաստութեամբ: Այնտեղ արհեստանոցի  
վարիչները առնում են բուրդը, մաքրում,  
մանում, նրանից կտորներ պատրաստում և  
վաճառում: Բոլոր ծախքերը դուրս գալուց

ԲՐԴԵԱՅ ԳՈՐԾՈՒԱԾՔՆԵՐԻ ՆՇԱՆԱ,  
ԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԶՈՒԼՀԱԿՈՒ-

ԹԵԱՆ ՄԷՋ.

Այ. Քալանթարի.

(Կարդացուած 4-ին Ապրիլ)

Իմ ներկայ զեկուցումը ես մտադիր էի  
անել համագումարին մի փոքր ուշ, երբ կար-  
գացուած կը լինէին բոլոր արհեստանոցնե-  
րի և ճիւղերի կողմից ներկայացուած զեկու-  
ցումները:

Բայց որովհետև բրդէ գործուածքների  
առիթով այստեղ վէճ է սկսուած, ուստի իմ  
զեկուցումը կանեմ հէնց այժմ:

Ջուլհակութեան համար մեր երկրի մի  
ըջանում կայ մեծ քանակութեամբ այնպի-  
սի մթերք, ինչպէս բամբակն է, օրինակ  
տափարակային ոռոգուող վայրերում, մի  
ուրիշ ըջանում, օրինակ լեռնային անաս-  
նապահական խաշնարածային տեղերում ար-  
դիւնաբերուում է մեծ քանակութեամբ բուրդ,  
երրորդ ըջանում մետաքս, վուշ, կանեփ:  
Այդ բոլոր նիւթերից պատրաստուում են զա-  
նազան տեսակի գործուածքներ:

Հարց է. ո՞ր մթերքից պատրաստուած ի-  
րերն են այժմ ձեռնտու և արդիւնաւէտ,  
ինչպէս է նրանց շահաւէտութեան աստի-

յետոյ, նրանք մի քիչ էլ օգուտ են վերցնում: Եւ անշուշտ՝ այդ օգուտը աւելի կը լինէր դիւղական շրջանում, ուր բուրդը յաճախ լինում է սեփական տնտեսութեան մէջ և աշխատաւոր ոյժը աւելի էժան է:

Բրդեայ գործուածքներ պատրաստողները դժուարութիւններից մէկը բրդեայ լաւ մանուածք ստանալն է:

Ինչպէս յայտնի է, բամբակի թելերը, որ մինչև այժմ մենք գործ ենք ածել մեր արհեստանոցներում, բերուել են Մօսկուայի և ուրիշ տեղերի մանարաններից: Նրանք զանազան աստիճանի նրբութիւն ունին, որը նշանակուած է յատուկ համարներով: Բրդի վերաբերութեամբ էլ պահանջ է զգացուում այժմ ունենալ մանուածք որոշ նրբութեան, որպէս զի կարելի լինէ՛ միատեսակ կտորներ պատրաստել:

Երբ ես անցեալ տարի Մօսկուայումն էի այցելեցի Պուշկինօ կայարանի մօտ գտնուող Գէորգեանների գործարանը ու ծանօթացայ բրդի պատրաստութեան գործի հետ: Այդ գործարանը գնում է բուրդ զանազան տեղերից և ի միջի այլոց նաև Անդրկովկասից: Տեսակների բաժանելուց յետոյ, գործարանը զգում է այդ բուրդը, մշակում և ապա թելեր պատրաստում, որը և ծախում է սպառողներին: Գործարանի պատրաստուած թելերը մեծ մասամբ հաստ տեսակիցն են և յարմար են գորգերի, գուլպաների, ֆուֆայկաների և ուրիշ դրանց նման գործուածքների պատրաստութեան համար:

Այդ թելերի նմուշներից Գէորգեանների գործարանը յետոյ ուղարկել էր ինձ: Այդ նմուշներից կարելի է օգտուել որոշ նրբութեան թելեր բերել տալու գործուածքների համար:

Բագուի արհեստանոցը արդէն փորձել է գործուածքներ պատրաստելու այդ թելից և պատրաստուած գործուածքները հանդէս են դրուած ներկայ համագումարում (ցոյց է տալիս Բագուի գործուածքները):

Այնուհետև կարող եմ յայտնել, որ հայ վաճառականներից մէկը, որ մշտական յարաբերութեան մէջ է Լօձիի հետ, մտադիր է առաջիկայում Ղարաքիլիսայի շրջանում մանարան բանալ:

Այդ անձը (Զ. Ապրեսեան) արդէն 4000 ըուբլի ծախս է արել և էլի պատրաստ է մենակ կամ ուրիշների գործակցութեամբ ծախսել 10—15000 ըուբլի բոլոր գործիքները բերել տալու և գործը կազմակերպելու համար:

Պէտք է ի միջի այլոց նկատեմ, որ բրդի լաւ թել ունենալու հոգսը սկսում է ընդհանրանալ և կառավարութիւնը ցանկանալով նպաստել միջին-ասիական գորգագործութեան, գնել էր անցեալ տարի իր հաշուով մանած բուրդ Գէորգեանների գործարանից մօտ 300 պուդ քանակութեամբ և ուղարկել անդրկասպեան երկիր, իբրև փորձ, բաժանելու գիւղերում գորգագործներին պորգեր պատրաստելու նպատակով:

Այս տարի Անդրկասպեան երկրից սկսուեց յայտնուել բրդի մանուածքի պահանջ մեծ

քանակութեամբ թէ հիմնարկութիւնները  
և թէ մասնաւոր անձերի կողմից և Գէորգ  
գեանները ծախել են 800 ից աւելի պուգ  
բրդեայ մանուածք իրանց գործարանից:

Մեզ համար բերել տուած թիւերը թանկ  
են նստում: Բայց քանի որ մեր երկրում չու-  
նենք մանարաններ, պարձեալ ստիպուած ենք  
լինում բերել տալ հեռաւոր գործարաններից:  
Եթէ աջողուի բանալ բրդէ մանարան զի-  
ցուք Ղարաքիլիսայում և աւելի էժան մա-  
նուածք պատրաստել, այն ժամանակ գործը  
մի փոքր կը դիւրանայ այդ շրջանի համար:  
Գործարանը կառնի բոլոր բուրդերը և  
պատրաստելով մանուածքներ, կը տայ ջուլ-  
հակութեան մթերք մեր գիւղացիներին:

Մի քանի գիւղերում գիւղացիները կար-  
ծում են, թէ նրանք կարող են գործարանին  
բուրդ տալ և նրա փոխարէն ստանալ մա-  
նուածք, ինչպէս այդ անում են գիւղական ձի-  
թահանքերում կամ ջրաղացներում. դա ան-  
կարելի է: Բուրդը պէտք է առնէ մանարանը  
դրամով և վաճառէ դարձեալ դրամով, այլպէս  
նա շրջանառութիւն չէ կարող անել, որով-  
հետև բրդի իւրաքանչիւր կտորը չեզոքանում  
է գործարանում և մշակում է միւս բրդերի  
հետ միասին:

Ներկայումս Մոսկուայի բրդի թիւը բերել  
տալիս մեզ վրայ նստում է 70 կ.—1 ր. 20 կ.  
ֆունդը: Իսկ հիւսիսային կովկասից 45—60  
կոպէկ:

Ի՞նչ կը նստի նոյնը այստեղի մանարան-  
ներում, դա ապագան կը լուծէ: Անշուշտ

ենթադրեալ նոր հիմնուելիք մանարանները  
մեզանում կը լինին անհամեմատ փոքր,  
քան իմ յիշատակածն է Մոսկուայի շրջա-  
նում, որը հարիւր հազարների արժողու-  
թիւն ունի:

Պէտք է նկատել, որ կովկասում կառա-  
վարութիւնը ինքն էլ զգալով բրդէ մանա-  
րանի կարեւորութիւնը, հարց է դրել թիֆ-  
լիսում մանարան բանալու մասին: Նոյն  
իսկ մի այդպիսի գործարանի նախահաշիւը  
(մօտ 45,000 բուրլի արժողութեան) պատ-  
րաստ է հաստատութեան ներկայացնելու հա-  
մար: Այդպիսով մենք տեսնում ենք, որ  
մանուածքի խնդիրը այսօր հերթական է  
դարձել և հատանօրէն կը լուծուի մօտիկ ապա-  
գայում: Եթէ մեր համազումարն էլ իր կողմից  
կորոշի զիմուքն անել՝ փութացնելու պետա-  
կան հաշուով բացուելիք մանարանի հիմ-  
նադրութիւնը կամ խնդրելու աջակցու-  
թիւն մասնաւոր ձեռնարկողների համար,  
նա արագացրած կը լինի մանարանի բա-  
ցումը:

Այն բրդեայ գործուածքները, որ հանդէս  
են դրուած ներկայ համազումարում և  
պատրաստուած են Մոսկուայից բերուած թի-  
լերից, տալիս են հետեւեալ ցուցումները  
նրանց շահաւէտութեան մասին: Ահա մի  
գործուածք, որի երկու և կէս արշինը պատ-  
րաստուած է մի օրում մի ֆունտ մանուած-  
քից: Այդ գործուածքի արշինը արժէ ոչ  
պակաս, քան մի բուրլի, ուրեմն ընդամենը  
2<sup>1</sup>/<sub>2</sub> բուրլի, մինչդեռ մի ֆունտ մանուածքը


արժէ միայն 1 ր. 20 կ.: Ուրեմն զանազան ծախքերի՛ն աշխատաւորի համար մնում է 1 ր. 30 կօպէկ մի օրում: Անշուշտ եթէ հում նիւթը լինէր աւելի էժան, իսկ պատրաստուած կտորը աւելի նուրբ և թանգագին, այն ժամանակ օգուտը կը լինէր աւելի ևս մեծ: Եւ մեր արհեստանոցների փորձերը, նաև Ալեքսանդրապօլի արհեստանոցի ցուցումները, իրաւունք են տալի ասելու, որ բրդեայ գործուածքների պատրաստութիւնը ունի տնտեսական արդարացում իր գոյութեան և զարգացման համար:

Այդ բոլորից յետոյ ես ներկայացնում եմ համազումարին հետևեալ թեղիսները.

1). Աջակցել ամեն կերպ պատուաստելու տնայնագործների շրջանում բրդէ գործուածքների պատրաստութեան լաւադոյն եղանակները:

2). Նպաստել այդ բոլոր ձեռնարկութիւններին և միջոցներին, որոնք կարող են ապահովել էժան և լաւատեսակ մանուածքների հայթայթելը և

3). Կազմակերպել բրդէ գործուածքների տարածումը:



ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
ԵՒ ՌՈՒՍՍՄՏԱՆՈՒՄ ԵՒ ԱՊԱԳՍՅ  
ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Մ. Սողոմոնեանցի

(Կարգացուած 4 ին սպրիւն)

Մինչև վերջին ժամանակներս տնայնագործութիւնը մեզանում երեսից ընկած մի գործ էր համարուում, որը չը զիմանալով արդի կատարելագործուած միջոցներով պատրաստուած ապրանքների մրցման, կամաց-կամաց իւր նշանակութիւնը կորցնելով իսպառ մոռացութեան էր հասնում:

Բարեբաղդաբար թէ հասարակութիւնը և թէ կառավարութիւնը զիտակցելով տնայնագործական արհեստների և զիւղական ազգաբնակութեան իրար հետ ունեցած սերտ կապը, միահամուռ ոյժով աշխատում են դուրս բերել մոռացութեան փոշու տակից եղած արհեստները և նրանց ուղիղ ճանապարհի վերայ դնել:

Ասպարէզ են գալիս նախ Կովկասի անայնագործական կօմիտետը և ապա Թիֆլիզի հա տնայնագործական ընկերութիւնը, որոնք իրենց նպատակ ունենալով վերա-

կանգնել տնայնագործական արհեստները, այդ ուղղութեամբ մի շարք ձեռնարկներ են սկսել, որոնց մասին անշուշտ Թ. Հ. Տ. Ը. արդոյ վարչութիւնը կտայ իւր պատշաճաւոր գեկուցումը:

Չցանկանալով կանգ առնել Տնայնագործական արհեստների պատմական ընթացքի վերայ, կուգէ՛ր ունկնդիրների ուշադրութիւնը հրաւիրել մի հանգամանքի վրայ:

Շատերին թուում է, թէ անայնագործութիւնը ժողովրդի տնտեսական բիւջէի մէջ շատ աննշան դեր է խաղում և չէր արժի նրանով այնչափ էլ զբաղուել: Այս խօսակցութիւնը տեղի է ունեցել ինձ հետ կովկասում մի քանի անգամ գործին ոչ տեղեակ պարոնների կողմից. նոյն առարկութիւնը և բոլորովին նոյն խօսքերով վիճաբանութեան նիւթ է դառել տասնեակ տարիներ առաջ Մօսկուայի նահանգական գեմստւոյի ընդհանուր ժողովում. բայց երբ ստատիստիկական իրական փաստերով զինուած ասպարէզ է գալիս, այլ ևս վիճարանութեան տեղ չի մնում և տնայնագործական արհեստի հակառակորդները խոնարհուում են վիճակագրութեան առաջը: Իուրս է գալիս, որ Մօսկուայի նահանգում տնայնագործական արհեստով պարապող ընտանիքների թիւը հասնում է 60,000-ի 140,000 աշխատաւոր ձեռքերով. դրանք տարեկան պատրաստում և վաճառում են 38 միլիոն

րուբլու անպրանք—տնայնագործական—և զուտ արդիւնք վերցնում  $1\frac{1}{2}$  միլիոն ռուբլու: Եթէ արդիւնքը վերածելու լինենք տոկոսների, կտանանք հետեւալ պատկերը.

Մօսկուայի գիւղական ազգաբնակչութիւնը բոլոր եկամուտի

45<sup>0</sup>/<sub>0</sub> ստանում է երկրագործութիւնից

18<sup>0</sup>/<sub>0</sub> տնայնագործութիւնից

12<sup>0</sup>/<sub>0</sub> գործարանի բանուորական աշխ.

6<sup>0</sup>/<sub>0</sub> սալապանութիւն և կառուպանութիւնից

19<sup>0</sup>/<sub>0</sub> այլ և այլ ոչ մշտական աղբիւրից

100<sup>0</sup>/<sub>0</sub>

Այս հաշիւն աչքի անցկացնելուց յետոյ՝ անուրանալի է դառնում տնայնագործական արհեստների էական նշանակութիւնը ժողովրդի տնտեսական հարցերի նկատմամբ. ուստի ընդունելով տնայնագործութեան ունեցած մեծ ազդեցութիւնը գիւղական ժողովրդի առանց այն էլ քայքայուած տընտեսութեան վրայ, ըստ ամենայնի պէտք է աշխատել կատարելագործելով նրան, զարգացման ուղիղ ճանապարհի վերայ դնել:

Ափսոս որ նոյն տեսակ վիճակագրական տեղեկութիւններ պակասում են մեր կովկասի գիւղացու վիճակը բնորոշելու: Բայց չէ որ նրա անտանելի նիսա ու կացը, բնակարանը, հագուստը և ուտելիքը միշտ մեր աչքի առաջն են: Եթէ պակասում են վիճակագրական տեղեկութիւններ, դրա փոխարէն կայ առողջ դատողութիւն, որը մեզ թեկադրում է. գիւղացին քայքայուած է և

հիւժուում, առանց մի բոլոր անգամ կորցնելու պէտք է միջոցներ ձեռք առնել նրան մարդավայել պայմանները մէջ դնելու և առաջիկայ կործանումից ազատելու:

Տնայնագործական արհեստները զարգացնելով գիւղում, մենք գիւղացուն մասամբ օգնում ենք ոտի կանգնելու և եթէ դրա հետ միասին ուշադրութեան են առնում տնտեսութեան փնայած բաժիններն էլ ու նրանց մէջ էլ հարկաւոր կատարելագործումներ մտցնում, այն ժամանակ, հաստատ կարելի է ասել, որ գիւղացին կարող է ոտի կանգնել, կազդուրուել թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս և իրեն ապրուստի համար իրաւական ճանապարհ հարթել:

Այժմ հարց է առաջ գալիս, թէ ինչ ձևով առաջ տանել տնայնագործական արհեստի զարգացման գործը:

Նախ քան այդ հարցին պատասխան տալը ծանօթանանք Ռուսաստանի զեմստվոյի 25 տարի առաջ այդ ուղղութեամբ արած քայլերի հետ.

Ինչպէս յայտնի է, Ռուսաստանում առաջին անգամ տնայնագործական արհեստի զարգացման վրայ լուրջ ուշադրութիւն է դարձնում Մոսկուայի նահանգական զեմստվոն, որ 1882 թ. պատահաբար սկսելով իր տնայնագործական աշխատանքների վերաբերեալ ուսումնասիրութիւնը, խիստ զրահան և ուսանելի հետեանքների է հասնում. կազմակերպելով Մոսկուայի զեղարուեստական-արդիւնաբերական ցուցահանդիսում

տնայնագործական բաժին, նա կարողացաւ ամփոփ դադարաւ տալ տնայնագործական արհեստների տնտեսական խոշոր նշանակութեան և մի շարք այն կատարելագործումների մասին, որոնցով կարելի է վերակազմել ժողովրդական աշխատանքի այդ բաժինը:

Ցուցահանդէսը երևան հանեց մի բոլորովին մոռացուած դասակարգի, հարիւր հազարաւոր տնայնագործ աշխատաւորների գոյութիւնը և հերթական նշանակութիւն զուեց նրանց տնտեսական վիճակի բարելաման խնդրին: Վերջապէս այդտեղ պարտուեց, որ գիւղական ազգաբնակչութիւնը երկրագործութիւնից յետոյ իւր ապրուստի մի խոշոր մասը, այն է մօտ <sup>1</sup>/<sub>5</sub>-ը, տնայնագործական արհեստներով է հայթայթում:

Նահանգական զեմսկի ուպրաւան իւր այս եզրակացութիւնները հիմնած բազմակողմանի ուսումնասիրութեան և յատուկ ստատիստիկայի վերայ, յայտնում է զեմսկի ընդհանուր ժողովին և իւր կողմից հետեւեալ առաջարկութիւնն անում.

Մտցնել զեմստվոյի գործունէութեան նախահաշուի մէջ տնայնագործական արհեստների կատարելագործման խնդիրը և կազմել մի մասնաժողով, որ զբաղուէր տնայնագործական արդիւնաբերութեան յաջող վաճառքի, շուկայի և հում նիւթեր մատակարարելու խնդրով:

Առաջարկը ընդունւում է միաձայն:

Անմիջապէս Մոսկուայի զեմստւոյին հաստատութեան մէջ յատկացուած է մի սենեակ տնայնագործական: ապրանքների վաճառքի համար և նշանակուած է այդ գործով զբաղուող յատուկ պաշտօնեայ. 5) տարի գործը այս ձևով տանելուց յետոյ, որոշուած է մասնագէտ վարպետներ ուղարկել աշխատանքի տեղերը, որոնք մի փոքր կատարելագործութիւն մտցնէին արդիւնաբերութեան մէջ. ապա բացուած են արհեստանոցներ և այսպէս աստիճանաբար յառաջադիմելով ներկային Մոսկուայի զեմստւոն բացի տանեակներով շրջիկ և մշտական վարժոցարհեստանոցներ պահելուց, միայն տնայնագործական ապրանքների առուտուրի մասի շրջանառութիւնը հասցնում է տարեկան կէս միլիոն ըուրլու:

Մոսկուայի կենտրոնում բաւական շարժուն փողոցներից մէկի ընդարձակ մի բնակարանի մէջ զեմստւոն ի ցոյց ունի զբաժնէ Մոսկուայի և թէ Ռուսաստանի մնացած նահանգների տնայնագործական արդիւնաբերութեան ապրանքների հարուստ կուլիկցիաներ: Այստեղ դուք կգտնէք ապրանքների հետեւալ բաժիններից. 1) խաղալիքներ, 2) գեղարուեստական ~ առաջագործական կահ-կարասիներ, 3) կողովագործութեան, 4) ջուլհակութեան ապրանքներ. 5) կանանց ձեռագործի բարձրակար իրեր, 6) կաւային ամանեղէններ, 7) կրուժեաներ և այլն:

Դա Մոսկուայի նահանգական զեմստւոյի

տնայնագործական մուզէյն է, որը ձգտում է հետեւալ նպատակին.

ա. Սպառող հասարակութիւնը անմիջապէս այդտեղ կարող է ծանօթանալ տնայնագործական արդիւնաբերութեան այլ և այլ ձևերի հետ, և հենց այդտեղ էլ կարող է գնել իւր ցանկացած իրերը.

բ. Տնայնագործ գիւղացին առանց տեղերից շարժուելու իրենց շինական կամ գաւառական զեմսկի վարչական հանգստութիւնների միջոցով իրենց ունեցած բոլոր ապրանքները կարող են ուղարկել այդ մուզէյը, որի փոխարէն նրա արժէքի  $\frac{2}{3}$  մասն անմիջապէս, իսկ  $\frac{1}{3}$  մասը վճարում է ապրանքը ծախելուց յետոյ. եթէ արհեստաւորը ցանկանում է, ապրանքի ամբողջ արժէքի դէմ կարող է ստանալ հում նիւթեր: Մուզէյը իւր միջնորդութեան համար ստանում է չնչին  $\frac{0}{10}$ , որը և ծածկում է բնակարանի, ճանապարհածախսի և ծառայողների ահագին շատտի ծախսի կէտերը:

Մուզէյի երրորդ նպատակն է յատուկ մասնագէտ տեխնիկների ղեկավարութեամբ տնայնագործական արդիւնաբերութեան որակը բարձրացնել, որի համար բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ տեխնիկները շրջագայելով նահանգի զանազան մասերը, իրենց փորձառու ցուցումներով հարկաւոր փոփոխութիւն են մտցնում արդիւնաբերութեան մէջ:

Առանձին ուշադրութիւն է դարձուած գիւղացիների գեղարուեստական ճաշակը

զարգացնելու համար, այդ նպատակով արհեստանոցներին կից հիմնուում է նոյն իսկ նկարչութեան դասընթացքներ:

Մուզէյում ցուցադրուած ապրանքների նկարագրութեան յլրայ կանգնառնելով չեմ կարող չընդգծել մի հանգամանք, որ Կովկասից անայնագործական ապրանքների նըմուշ չունենալը աչքի էր զարնում. համարեա ամեն մի նահանգ Ռուսաստանի ամեն անկիւնից այդտեղ ունէր իրենց տեղական արտահանութեան նմուշները աւելի կամ պակաս յաջողութեան աստիճանում. բացառութիւն էր կազմում միայն Կովկասը, որը բացի մի գորգից ուրիշ ոչինչ չունէր այդտեղ:

Մուզէյի կառավարիչ պ. Շտամպը գորգը ինձ ցոյց տալիս առանձնապէս շեշտեց այդ հանգամանքը իբրև պակասութիւն տեղի գիտակից ինտելիգենցիային:

Կար Սուչինսկի զեմստվոյից ուղարկած մի բաւական կոպիտ գործած գորգ  $4\frac{1}{2} \times 3$  արշ. մակարդակով, որը գնահատուած էր 260 ռ: Ըստ իս մեր տեղի գործերը այստեղ կարող կլինէին շատ լաւ գնով ծախուել և թէ գաղափար տալ ուս հասարակութեան մեր գորգերի մասին:

Առանձին ուշադրութիւն էին գրաւում ձեռագործ բարձրակար իրերը, որոնք թէպէտ և այնքան էլ գեղարուեստական նշանակութիւն չունէին, բայց և այնպէս ծախուում էին մեծ մեծ գներով: Թւում է որ այս մասուէն էլ Կովկասի ձեռագործներն էլ ի-

րենց մրցակիցը չեն ունենայ մուզէյում, եթէ ուշադրութիւն դարձնող լինէր՝ թերևս մեծ ընդունելութիւն գտնէր այդ ապրանքը այստեղ:

Պաղալիքների մէջ աչքի էին ընկնում գլխաւորապէս ռուսական ազգային տարազով հագնուած տիկնիկները, փայտից շինած զանազան ինստրումենտների մօզէյները, ընտանեկան նիստի ու կաց այլ և այլ պատկերներ, կաւից շինած սեղանի զարդեր, ամաններ:

Չուկհակութեան բաժինը, չընայելով մասնութեանը, իրենց դիրքի վրայ են. գները, ինչպէս ուղարկածս նմոյշներից կտեղեկանաք, մերից նոյնիսկ թանկ են:

Մուզէյի դահլիճներից մէկում առանձին ինամքով պատրաստուած էր այցելուների և սպառողների համար գտակական բաղարը, որտեղ դարսուած էր անհամար քանակով, փայտէ, մարմարէ, պերլամուտի և տպակեայ ձուաներ վրան զանազան նկարներով, որոնց մէջ աչքի էին ընկնում իրենց գեղեցիկ շինուածով Սերգիևսկի պասադում պատրաստած ապակէ ձուաները, վրան ձեռնապակուց գունաւոր և գեղեցիկ քանդակներով հին ու նոր ուխտի բովանդակութեան սըրբերի պատկերներով. ամեն ձուան ծախուում է 1 ռ.-3 ռ:

Մուզէյի կաւէ ամանների բաժինը շատ աղքատ էր, թէև ես շուկայում հանդիպել եմ

գեղեցիկ և բաւական ճաշակով պատրաստած կաւէ այլ և այլ պարագաների:

Կողովագործութեան և ատաղձագործութեան վերաբերեալ ուղարկում եմ մուզէի պատկերազարդ կատալոգը, որը ամփոփ գաղափար կտայ իր բաժնի վերաբերեալ: Մընացած բաժինները կատալոգ չունեն:

Մուզէի վարչութեան անխոնջ աշխատանքի շնորհիւ կարճ ժամանակում ապրանքները վաճառքի են հանուում Պետերբուրգ, Օդեսսա, Ռաստով, Վարշաւա և ուրիշ քաղաքներ: Գործը այն աստիճան է լայնանում, որ Եւրոպական շուկայի ուղագրութեան նիւթ է դառնում Ռուսաստանի Տնայնագործական արդիւնաբերութեան ապրանքները, սկսում է առուտուր Եւրոպայի հետ և դրանցից՝ 1906 թ. ծախւում է Եւրոպա 28098 ռ. 83 կ. 1907 թ. » » » » 33527 ռ. 57 կ. 1908 թ. » » » » 27436 ռ. 24 կ.

Անշուշտ այս թուերը պերճախօս ապացոյց են ապրանքի կայուն շուկայ գտնելուն, և թէ արհեստի կատարելագործման համար գործ է դրում հարկաւոր խնամք:

Գալով Թիֆլիսի Հայ Տնայնագործական ընկերութեան գործունէութեան, պէտք է նշկատել, որ գործի մի խոշոր մասը արդէն կատարուած է: Այն, ինչ որ Մոսկուայի դեմատվոն գործը սկսելուց 10 տարի յետոյ իրականացրեց, Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութիւնը հենց սկզբից զրա վրայ հիմնեց իւր ապագայ անելիքը: Եւ այժմ ընկերութիւնը իւր ձեռքին ունի աշխատաւորների

րեղերով: Մնում է կազմակերպել նրանց աշխատանք հայթայթելու և ապրանքն սպառելու խնդիրը:

Որովհետեւ ընկերութիւնը մինչև այժմ միայն շուկակութեան արհեստի տարածման գործով է պարապել, դրա համար էլ ես կանգ եմ առնում շուկակութեան վերայ. այս իմ առաջարկը կրում է սկզբունքային բնաւորութիւն բոլոր արհեստների նկատմամբ. կարևոր եմ համարում այս հանգամանքը շեշտել առանձնապէս, որպէս զի նա չըհասկացուի առաջարկ միայն շուկակութեան համար:

ա) Աշխատանք հայթայթելու և ապրանքն սպառելու համար անհրաժեշտ է Թիֆլիզում ունենալ տնայնագործական ապրանքների մի պահեստ, որտեղ հասարակութիւնը կարողանար թէ պատրաստ ապրանքները գնել և թէ ցանկացած նորերը պատուիրել:

բ. Հարկաւոր է թէ Թիֆլիզի պահեստում և թէ գիւղի արհեստանոցներում ունենալ հում նիւթերի պաշար, որպէս զի պահանջուած դէպքում վարպետը մի կտոր թելի կամ մի մակոյկի համար օրերով չսպասէ:

գ. Ընկերութիւնը պէտք է ունենայ մի շրջիկ մասնագէտ գործակալ կամ վարպետուհի (թէկուզ առայժմ օր. Աննա Մարգարեանը) որը շրջելու և ղեկավարելու է արհեստանոցների գործունէութիւնը, տալով հարկաւոր դէպքում պահանջուած գործնական ցուցումներ:

դ. Վարչութիւնը հարկաւոր մարմինների

հետ խորհրդակցելուց յետոյ ընտրուած է մի քանի շուտ ծախուող գործուածքներ թուով ոչ աւելի 10, ից և մեծ քանակութեամբ աւամեն մէկից պատրաստել է տալիս ապագայում նրանց ծախելու մտքով և ի ցոյց է դնում այդ ապրանքները թէ Թիֆլիզի պահեստում թէ զիւղերի արհեստանոցներում:

Ե. Վարչութեան որոշմամբ աշխատաւոր կանանց համաձայն իրենց պատրաստած կըտորի աշխատավարձ է տրուում իւրաքանչիւր արշինին 5—15 կ. կամ եթէ պատրաստուին երեսուրբիչներ և անձիոցներ, հատին 10—15 կ.

Տնայնագործական ընկերութեան այս նոր օպերացիայի համար հարկաւոր կլինի մօտաւորապէս հետևեալ գումարը

1. Թիֆլիզի պահեստի ընակադանի վարձ . . . . . 300 ր.
2. Կառավարչին ոտճիկ, որ և կատարում է
3. պահեստի հաշուապահի ու ընկ. քարտուղարի պաշտօնը . . . 720 ր.
4. ծառայ 120 ր, վառելիք և լուսաւորութիւն . . . . . 240 ր.
5. առևտրական ազատ գումար, որը ծառայելու է հում նիւթերի գնման և գործիքների. . . . . 2000 ր.
6. ոտճիկ շրջիկ վարպետուհուն . . 360 ր.
7. ճանապարհածախս նրան . . . 120 ր.
8. չընախատեսուած ծախսեր. . . 110 ր.

Գումար 3850 ր.

Այսպիսով ընկերութիւնը ծախսելով յիշեալ 3850 ր. գումարը, միաժամանակ 3 գործ կատարած կլինի. նախ նա սխտեմատիկ գործ տուած կլինի արհեստաւոր ջուհակներին և նրանց աւելի սերտ կապով միացնում սկսած գործի հետ, որի յաջողութեանը դեռ մինչև օրս էլ քչերն են հաւատում:

Երկրորդ՝ գործը կլինի անցած 1908 թ. Փաճրակի շրջանում ունեցած փորձնական պլոպագանդայի գործնական շարունակութիւնը.

Եւ երրորդ՝ սպառող հասարակութիւնը վերջապէս կիմանայ թէ որտեղ, ում միջոցով և ինչ բաներ կարելի է պատուիրել ըստ իր ճաշակի և ցանկութեան:

Մ. Սողոմոնեան



ՉՈՒԼՆԱԿԱՆՈՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-

ԹԻԻՆԸ

Այ. Բաղանթարի

(Կարգացուած 4-ին ապրիլի)

Մեզ շատ անգամ դիմում են հարցով թէ ինչպէս պէտք է կազմակերպել ջուլհակութեան նախնական արհեստանոցը, ինչ պարզանքի պէտք է նա ունենայ և որքան ծախք կը պահանջի անաջին կէս կամ մի ամբողջ տարում:

Այդ հարցը տալիս են նաև հիմնարկութիւններ՝ դպրոցներ և ընկերութիւններ:

Այդ հարցը մի քանի անգամ տրուեց ինձ և ներկայ համագումարին մասնակցող անձերից:

Մասնաւոր դիմումներին տրուել են իմ կողմից ցանկացած տեղեկութիւնները: Ներկայումս օգտուում եմ Համագումարի անդամների յարուցած հարցից հաղորդելու մի համառօտ տեղեկութիւն այդ մասին:

Այն գիւղը, որ ցանկանում է ջուլհականոց բանալ, պէտք է յարմարեցնի այդ նպատակի համար մի այնպիսի սենեակ, ուր կարելի լինէր դնել երեք տօրք և մի քանի մանր գործիքներ: Անտարակոյս, կարելի է գործ սկսել և երկու տօրքով և նոյն իսկ մի տօրքով, բայց փոքր ի շատէ բաւարար արհեստանոց ունենալու համար, ուր կարո-

ղանային սովորել մի 9—12 աշակերտուհիներ, անհրաժեշտ է ունենալ գոնէ երեք տօրք:

Տօրքերը սկզբում պէտք է բերուեն ուրիշ տեղից, իսկ յետոյ նրանք կարող են շինուել և գիւղում, եթէ այնտեղ կայ փոքր ի շատէ դիտցող հիւան: Տեղական շինուածները անշուշտ աւելի էժան կը նստեն և կարող են մի 5 ըուբլի աւելի քիչ ծախք պահանջել:

Վարպետները, որոնք գնում են գիւղ սովորեցնելու ջուլհակութեան արհեստը, ստանում են ձրի բնակարան և ամսական երեսուն ըուբլի ոտճիկ: Եթէ նրանք մի վեց ամսում սովորեցնեն նախնական արհեստը, առանց բաղադրեալ գործուածքների, կը վերցնեն 180, իսկ ճանապարհածախքով մօտ 200 ըուբլի: Անշուշտ՝ արհեստի լաւ իւրացման համար աւելի լաւ կը լինէր դասընթացքը շարունակել 10—12 ամիս և յետոյ կառավարուել առանց վարպետի: Այդ խնդրի լուծումը թողնում է գիւղերի բարեհայեցողութեանը, բայց կարևոր է նկատել, որ եթէ նիւթական միջոցները ներում են, պէտք է ուսուցումը սահմանել մի տարով:

Արհեստանոցի մէջ վարպետի աւելի ժամանակ մնալը կը պահանջի ծախք միայն վարպետի համար, իսկ ուրիշ նոր ծախքեր չեն լինի, բացի մի փոքր աւելացած պահանջներից թելի վերաբերութեամբ և կարկատաններից:

Ներքև բերուած են հաշիւներ երեք տօր-

քային արհեստանոցի ծախքերի վերաբերու-  
թեամբ վեց, ինն և 12 ամսուայ համար:

Եթէ արհեստանոց բացողները և պահող-  
ները ցանկանան աւելացնել տօրքերի թիւը,  
պէտք է համապատասխան կերպով աւելաց-  
նեն և այդ ծախքերը:

Բերուած թուանշաններից պարզ է, որ  
երեքտօրքեան արհեստանոցը առանց բնա-  
կարանի և ծառայի վարձի՝ կը պահանջէ

վեց ամսուայ համար 400 ըուրլի

ինն » » 550 »

12 » » 670 »

բնակարանի և ծառայի համար պէտք է հոգայ  
գիւղը: Եթէ նրանց էլ հաշուի առնելու լինենք,  
այն ժամանակ վեց ամսեայ ծախքը պէտք է  
աւելացնել մօտաւորապէս 100, իսկ մի տա-  
րուանը 200 ըուրլիով: Սակայն միւս կող-  
մից պէտք է նկատի ունենալ, որ թեւի վրայ  
արուած 49 կամ 70 ըուրլի ծախքը վը վե-  
րադառնայ, որովհետև գործուածքը կարժե-  
նայ յամենայն դէպս ոչ պակաս, քան այդ  
թուանշանները:

Ահա այդ թուերը և պէտք է աչքի առաջ  
ունենալ արհեստանոցներ բաց անելու  
ժամանակ:

Եթէ կառավարութիւնը կամ ուրիշ հաս-  
տատութիւններ օգնութեան գային գիւղին  
և օրինակ տային վեցամսեայ արհեստանո-  
ցի պահպանութեան համար 200 ըուրլի, այն  
ժամանակ քննարկուած կէսը կարելի կը լինէր  
հայթայթել գիւղի կամ ջուլհակութիւն սո-  
վորողների սեփական միջոցներէր: Եւ եթէ,

օրինակ, մի քան ընտանիք, որոնք ցանկա-  
նում են արհեստ սովորեցնել իրանց տանի-  
ցիներին, համաձայնեն տասնական ըուրլի  
տալու, կը հասնէին իրանց նպատակին,  
մանաւանդ որ գիւղում կը մնային արհես-  
տանոցի ըսլոր գործիքները նրանց մշտա-  
կան տրամադրութեան տակ: Միևնոյն ժա-  
մանակ չը պէտք է մոռանալ, որ պատրաս-  
տած իրերը կարելի է վաճառել և ստա-  
ցած փողով նորից թել գնել գործը շարու-  
նակելու համար:

Իմ ներկայացրած ծախքերի մանրամասն  
ցուցակը կազմել եմ ներկայ ժամանակի գը-  
ներով: Նրանք կարող են փոփոխուի թիւննե-  
րի ենթարկուել մի որոշ աստիճանով, բայց  
նրանց համազուտաբը մերձաւորապէս մօտ  
կը լինի ներկայ հաղորդագրութեան ցուցում-  
ներին:

Անունները հս նշանակել եմ հայերէն և  
ուսներէն, որպէս զի Կովկասեան Տնայնա-  
գործական կօմիտեիին գիմողները կարող  
լինեն առանց մեծ գժուարութիւնների  
պատուէրներ անել:

Վերևում ես ասացի, որ այդպիսի արհես-  
տանոցում կարող են սովորել 9-12 աշա-  
կերտ: Դա մեծ թիւ է: Դա նշանակում է, որ  
իւրաքանչիւր տօրքի վրայ պէտք է աշխա-  
տեն 3-4 հոգի: Աւելի բնական և օգտաւէտ  
կը լինէր, որ իւրաքանչիւր տօրքի վրայ  
աշխատէր միայն մի հոգի, կամ երկու հո-  
գի, որոնցից մէկը կը զբաղուէր թել պատ-  
րաստելով, հենելով և առհասարակ գ-

ժանդակ գործեր կատարելով: Բայց արհեստանոցների նիւթական միջոցների պակասութիւնը ստիպում է տօրքեր ունենալ քիչ թուով և իւրաքանչիւրի վրայ բանեցնել 3-4, իսկ մի քանի դէպքերում նոյն իսկ 5-6 և աւելի աշակերտներ: Դա ցանկալի բան չէ, որովհետև շատ աշակերտներ եղած ժամանակ, նրանց մեծագոյն մասը մնում է պարապ կամ եթէ հաստատուած է լինում հերթապահութիւն, իւրաքանչիւրի վրայ ընկնում է աշխատանքի շատ քիչ ժամանակ և մի գործուածք կտորի պատրաստող հանդիսանում են շատ մարդիկ, մինչդեռ ցանկալի է, որ սովորող աշակերտը կարողանայ ինքը ինքնուրոյն սարքել տօրքը, սկսել գործը և նրան հասցնել մինչև վերջ:

Այդ պատճառով արհեստանոցի ղեկավարը պէտք է առանձին ուշադրութիւն դարձնի սովորողների հերթապահութեան վրայ և այնպէս կարգադրի, որ իւրաքանչիւրը մի քանի անգամ առիթներ ունենայ անցնել արհեստի բոլոր ելևէջները:

Իսկ անշուշտ աւելի ևս լաւ կը լինէր, եթէ միջոցները ներում են, աւելացնել տօրքերի թիւը:

Ահա և ծախքերի մանրամասն ցուցակը.

## ԾԱԽՔԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ

### ՅՈՒՑԱԿ

3 տօրք կամ ոստայն  
20 վերջօկանոց, 6  
դլանով, 3 շրջանա-  
կով, 3 սանրատնով  
(չըֆա), 12 ոտնա-  
փայտով և 36 լծա-  
կով՝ տեղ հասցնե-  
լու ծախքերով (3  
станка на 20 верш-  
ковъ съ 6 валами,  
3 каретками, 3 ба-  
танами, 12 поднож-  
ками и 36 рычагами  
съ доставкой на

Руб. К. Руб. К.

մէստո) . . . . .	90 —	96 —
6 սանր (6 гребней или бердъ), հատը 1 <sup>1</sup> / <sub>2</sub> —		
2 ը. . . . .	9 —	10 —
9 մակոյկ (9 челноковъ),		
1 ըուրլանոց. . . . .	9 —	9 —

6000 սայ (6000 галлеւ ремизокъ) . . . . .	10 20	12 —
1 երկաթեայ կեռ (1 же- лѣзный крючекъ) . . . . .	— 20	— 20
1 հինասանր (1 рядокъ)	8 50	10 —
10 կոճ-կծիկ մեծը 5-7 կողէկանոց (10 кату- шекъ большихъ) . . . . .	— 50	70 —
30 կոճ-կծիկ փոքր 3 կո- պէկանոց (30 катушекъ мелкихъ) . . . . .	— 90	90 —
1 իլիկ (1 веретено) . . . . .	— 30	50 —
60 մարտ (60 цѣвокъ или шпулекъ), հատը 1 <sup>1</sup> / <sub>2</sub> կ. . . . .	— 90	90 —
2 ճախարակ (2 прялки), հատը 3 ը. 50 կ. . . . .	7 —	7 —
1 վիրակ (1 размотка) . . . . .	4—5—	4—5
1 հինարան (1 сно- вальня) . . . . .	5—7—	5—7
2 Մախաթ (2 шила) . . . . .	— 20	— 20
1 Շրջանակ (1 шпуля- ня) . . . . .	2 50	2 50
մետաղաթել հաստ (про- волоки толстой) . . . . .	— 50	— 50
թուկեր (веровокъ) . . . . .	1 —	1 —
մանուածք 6 ամսուայ հաճար (пряжи на 6 мѣсяцевъ) . . . . .	40 —	40 —
վարպետուհի ամսական 30 ըուրլիով (масте- рица) . . . . .	180 —	180 —

անակնկալ ծախքեր, կար- կատաններ (непредви- дѣнные расходы, по- чинки) . . . . .	20 —	20 —
Զուհականոցը վեց ամ- սում առանց բնա- կարանի և ծառայի 389 ը. 70 կ. 405 ը. 40կ.		
միջին թուով . . . . .	400 ըուրլի	
բնակարանով և ծառայով	500 »	
վարպետուհին դարձեալ 3 ամիս և ուրիշ ծախ- քեր . . . . .	120 »	
մանուածք . . . . .	30 »	
դարձեալ 3 ամիս . . . . .	120 »	
ընդամենը մի տարում առանց բնակարանի . . . . .	670 »	
ընդամենը մի տարում բնակարանով . . . . .	870 »	

ԿՕՕՊԵՐԱՏԻՒ ՍԿՁԲՈՒՆՔԸ ԱՆԴՐ-  
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ

Յ. Փիրալեանի

(Կարդացուած 5-ին ապրիլի).

Անդրկովկասի բոլոր կողմերից տեղեկու-  
թիւններ են ստացուում, թէ գիւղը սկսում է  
աղքատանալ: Այդպիսի զանգատներ առանձ-  
նապէս յաճախ հասնում են լեռնային շըր-  
ջաններին, ուր խիտ աղգարնակութեան  
շնորհիւ զգացուում է սակաւահողութիւն,  
իսկ լեռնային ուժասպառ հողը նախնական  
երկրագործական տեխնիկայի պատճառով,  
վատ բերք է տալիս: Իբրև ընդհանուր եզ-  
րակացութիւն այս բոլորից անկասկած ներ-  
կայանում է այն, որ վերջին ժամանակս  
նկատի չափով ընկել է հացահատիկների  
միջին բերքը, շատացել են անբերրի տարի-  
ները և պակասել է անասունների քանակը  
գիւղացիական տնտեսութեան մէջ-կերա-  
կուրի միջոցների պակասութեան պատճա-  
ռով:

Ընդ սմին միաժամանակ աճում է հետա-  
բերութիւն դէպի Տնայնագործական ար-  
հեստները, որոնք օժանդակիչ աշխատանք  
են տալիս գիւղի աշխատուող աղգարնա-  
կութեան:

Տեսնելով իր անյուստալի-վատթար տնտե-

սութիւնը, գիւղացին հրամայողական պահանջ  
է դում սովորել կատարելագործուած տեխ-  
նիկայի պայմանները, գնել երկաթէ գութան  
կամ որեւէ մեքենայ, խոտի և հացի լաւ տեսակի  
սերմեր, օգտակար գրքեր: Տնայնագործն  
աշխատում է ձեռք բերել բարելաւած ջուլ-  
հակութեան, ճախարակագործութեան և ու-  
րիշ տորքեր, անհրաժեշտ նորագոյն յարմա-  
րութիւններով, գոյներ, նկարներ և ամեն  
տեսակ գործիքներ և մեքենաներ իր տը-  
նային փոքրիկ արդիւնաբերութեան համար:  
Նա ծարաւի է տեխնիքական գիտութեան՝  
գոյութիւն ունեցող արհեստների հնացած  
ձեւերը վերանորոգելու և նոր, կեանքի պա-  
հանջներին համապատասխանող, ձեւեր հաս-  
տատելու համար:

Կեանքի այս բոլոր այրող հարցերի առաջ  
գիւղացին, իր թոյլ գրագիտութեամբ և գըլ-  
խովին տգիտութեամբ, շինական առողջ  
գաղափարական ինտելիգենցիայի չափա-  
զանց սակաւութեան պատճառով, զգում է  
իրան անօգնական, բոլորովին կտրուած այն  
կեանքից, ուր գիտութիւնը և լուսաւորու-  
թիւնը հրաշքներ են գործում, յեղաշրջում  
կատարելով ժողովուրդների տնտեսական  
կեանքում...

Միացած ամբողջ աշխարհի հետ կապող և  
ընդամին նրան նրանից անջատող միակ օ-  
ղակ հանդիսանում է տեղական խանութ-  
պանը, որից գիւղացին թանգ գնով գնում  
է վատ ապրանք և պորտաբոյժ հարուստը,  
որ իբրև սեղանաւոր կրիտիքական ըրպէին

փողեր է փոխ տալիս նրան տնտեսական դէպքերի համար անագին տոկոսներով:

Կեանքը հրամայողական կերպով պահանջում է սիստեմատիկ համաչափ աշխատանք գիւղացիական տնտեսութեան արտադրութիւնը զարգացնելու նկատմամբ: Այդօրինակ պահանջ զգացւում է իւրաքանչիւր աշխատաւոր ընտանիքում, իւրաքանչիւր գիւղական խրճիթում, իւրաքանչիւր գիւղում: Այդ պատճառով այդ պահանջը այնպէս մեծ, այնպէս անսահման է, որ արտաքին միջոցներով, որոնք ըղխում են կառավարական մարմիններից, տեղական ղեմստվային կազմակերպութիւնների ջացակայութեամբ բարարութիւն ստանալ չի կարող: Այդ դժուարին խնդրում կառավարութիւնը և զէմստվոն որոշ գեր ունին կատարելու, սակայն այդ դժուարին խնդիրը կարող է փոքր ինչ բաւարար մտքով լուծուել միմիայն համայն աշխատաւոր ազգաբնակչութեան ինքնագործունէութեամբ, երբ ամեն մի աշխատաւոր, միանալով իր աշխատող համագիւղացու հետ, կաշխատէ միահամուռ ջանքերով գոհացումն տալ իր տնտեսութեան հասունացած պահանջներին. ուրիշ կերպ առած, երբ գիւղացիները կը հաստատեն ընկերակցութիւններ, դաշնակցութիւններ, միութիւններ, ընկերութիւններ, կազմելով կօօպերացիա առաջին իսկ ձեռքից գնելու համար ընտանեկան պիտոյքների և տնտեսութեան մէջ անհրաժեշտ միանգամայն լաւ տեսակի ապրանք, ամեն տեսակ գիւղատնտեսական և

անայնագործական—արդիւնաբերող կատարելագործուած մեքենաներ և գործիքներ, սերմեր, պարարտացնող նիւթեր և այլն իրանց անդամներին էժան գնով վաճառելու համար:

Այդ միութիւնները, եթէ նրանք բաւականին շատ են, կարող են ոռճիկով, թէկուզ ժամանակաւորապէս հրաւիրել, իրանց պէտքերի համար իբրև ինստրուկտօրներ գիւղատնտեսութեան ու տնայնագործական սրհեստների զանազան ճիւղերի հմուտ մասնագէտներ, հիմնել շինական փոխատու—խնայողական ընկերութիւններ, և բանկեր՝ իրանց անդամներին անհրաժեշտ կրէդիտ բաց թողնելու համար, վաճառքի հանել այդ գիւղում կամ շրջանում արտադրած ապրանքը և այլն:

Կօօպերատիւ սկզբունքի մտցնելը մեր գիւղական կեանքինիստ ուկացի մէջ կարևոր է ամենից առաջ այն տեսակէտից, որ մեր գիւղերի սակաւաթիւ ինտէլիգէնցիան, հակուելով այդ կազմակերպութեան, հնարաւորութիւն կստանայ ծառայել աշխատաւոր ժողովրդի շահերին, որ իր առօրեայ կեանքում այնքան մեծ կարիք է զգում ուղղակի դրագէտ մարդու աջակցութեան, դեռ չենք խօսում այն մասին, որ այդ դրագէտ մարդը կարող է միևնոյն ժամանակ լաւ ինստրուկտօր կամ ուսուցիչ լինել Գիւղացիական միութիւնների ինտելիգենտ անդամները միայն կարող են գիւրացնել մի ամբողջ գիւղի կամ անգամ մի շարք գիւղերի յա-

բարբրութիւնները այն հաստատութիւններին ու անձերին հետ, որոնք իրանց գիտելիքներով կարող են նպաստել գիւղի տնտեսական զարգացման: Գիւղացուն հարկաւոր է գութան, ջուլհակութեան տորք, սեպարատոր կամ որևէ գործիք իր տնտեսութիւնը բարելաւելու համար. նա չը գիտէ ում դիմէ, ինչ արժէ, ինչպէ՞ս ստանայ, ինչպէ՞ս անէ որ չըխաբուի: Եւ ահա նա դիմում է մօտակայ քաղաքը և, դեկավարուելով գլխաւորապէս ծանօթ խանութպանի ցուցմունքներով, գընում է գութան կամ ուրիշ իրան անհրաժեշտ իր չափադանց թանգ գնով. և եթէ հաշուենք ճանապարհածախսը, ժամանակի կորուստը, կը տեսնենք, որ մի գութանը նրան նստեց 1 $\frac{1}{2}$ -2 անգամ աւելի թանգ, քան նա կարող էր ստանալ այդ իր տեղական ընկերութեան, կօօպերատիւ միութեան միջոցով:

Գնուած իրի թանգութեան հետ գուցէ կարելի կըլինի հաշտուել. բայց ձեռք բերելու այդպիսի եղանակով, որ առանց այն էլ քիչ է մատչելի գիւղացիութեան մեծամասնութեան, չափազանց դժուարանում է որևէ բարելաւում մտցնել իր տնտեսութեան մէջ:

Երբ ես խօսում էի ծանօթ գիւղացիներից միքանիսի հետ՝ թէ անհրաժեշտ է միութիւն և ընկերակցութիւն կազմակերպել իրանց կարիքներին բաւարարութիւն տալու համար, ինձ պատասխանում էին, որ այդ տեսակ միութիւնները չեն կարողանայ առւտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւն ու-

նենալ և չեն ձեռք բերի այնպիսի հաստատուն վատահութիւն վաճառականների շըրջաններում, ինչպիսին անհրաժեշտ է այդ գործի համար:

Բայց չը պէտք է մոռնալ, որ կօօպերատիւ միութիւնը դասակարգ չէ ճանաչում և կամաւոր է: Այդտեղ կարող են մտնել շինական աղգարնակութեան ամենազանազան խաւերի մարդիկ, մտցնելով այդ միութեան մէջ իրանց գիտցածը, առւտրական փորձառութիւնը և դրամական միջոցներ:

Ինչպէս ցոյց է տալիս միւս երկիրների օրինակները, կօօպերատիւ միութեան մէջ մտնում են ամենից առաջ առաջաւոր, աւելի մտնում են ամենից ոգով տոգորուած և գործունեայ տարրերը, որոնք իրանց գրաւելով շինական աղգարնակութեան աւելի յարակայ (инертный) մասին, կենդանացնում են ամբողջ գիւղի արդիւնաբերական տնտեսական կեանքը:

Միացնելով բաժան-բաժան ոյժերը-մի ամբողջութեան մէջ, կօօպերատիւ սկզբունքը զարթեցնում է աղգարնակութեան ստեղծագործիչ ոյժը և ինքնագործունէութիւնը, որոնք գիւրութեամբ յաղթէին գործի բուրդը դժուարութիւններին: Մեր գիւղացիութեանը օտար չէ կօօպերատիւ սկզբունքի գործադրութիւնը իր տնտեսական կեանքի միքանի գէպքերում: Կովկասեան ժողովուրդներին մօտ դեռ հին ժամանակներից ծնունդ են առել փոխադարձ օգնութեան ձևերից միքանիսը, որոնք շատ հետաքրքրական են

իրանց ինքնուրոյնութեամբ, սակայն, դըժբախտաբար, նրանք դեռ ևս ունումնասիրուած չեն: Մի փոքր ինչ մենք տեղեկութիւն ունենք փոխատու-խնայողական ընկերակցութիւնների մասին:

Դեռ անցեալ դարի 70 ական թուականներին մեր երկրի մի քանի գիւղերում կազմակերպուեցին միութիւններ մանր վարկի հաստատութիւններ կազմելու համար փոխատու-խնայողական ընկերակցութիւնների նման: Բայց այդ ընկերակցութիւնները շուտով վերջ դրին իրանց գործունէութեանը, որովհետեւ ամբողջ զանձարկղը ամենասկզբից արդէն դատարկեցին իրանք անդամները, ստացած փողերը իր ժամանակին վերադարձնելու մասին ոչ ոք չէր մտածում, և վարկային հաստատութիւնները, որոնք հնարաւորութիւն չունէին փողի բացակայութեան պատճառով փոխատուութիւններ տալ, դադարեցրին իրանց գոյութիւնը, ոչ մի ազդեցութիւն չանելով գիւղացիական տընտեսութեան արտադրութեան աստիճանի վրայ: Ներկայումս մանր վարկի տեսչութիւն հաստատելու հետ միասին, գիւղերում վերստին ջանքեր են լինում կազմակերպելու մանր վարկի հաստատութիւններ, բայց նո՛ւ է նրանց շրջանառութիւնները սերտ կապով կապուած չը լինին գիւղական տնտեսութեան արդիւնաբերող և արտադրող գործունէութեան հետ, այն դէպքում մեր գիւղացիները հազիւ թէ հնարաւորութիւն ունենան երկար ժամանակով

միացեալ ջանքերով բարձրացնել գիւղի կործանուող տնտեսական հզօրութիւնը:

Վարկային ընկերութիւնները պէտք է հաստատուեն բացառապէս նպատակ ունենալով հնարաւորութիւն տալ իրանց անդամներին բարելաւում և կատարելագործութիւն մտցնել իրանց տնտեսութեան մէջ:

Ես սկսեցի այն ընկերութիւններից, որոնք նպատակ ունին իրանց անդամներին հայթայթել էժան կրէդիտ իբրև շինական կենցաղին աւելի ծանօթ հաստատութիւններ: Վաշխատուի ծանր պարտքը ստուերի նման հետեւում է աշխատաւոր գիւղացիութեան, և շինական բանկ հիմնելու նպատակայարմարութիւնը առաւել քան հասկանալի է նրան:

Բայց գոյութիւն ունին այնպիսի միութիւններ և ընկերութիւններ, որոնք ուրիշ նպատակներ էլ ունին: Այսպէս, սպսողական ընկերութիւնները իրանց կազմակերպութեամբ հանդիսանում են աւելի հասարակ կազմակերպութիւններ և նպատակ ունին հայթայթել իրանց անդամներին տնային նիստուկացում անհրաժեշտ բարեխիղճ ապրանքներ էժան գներով: Էժանութիւնը ստացւում է առաջին ձեռքից ապրանքը գրնելով և միայն անհրաժեշտ ծախքերը աւելացնելով:

Մի փոքր բարդ իրանց կազմակերպութեամբ հանդիսանում են այն ընկերակցութիւնները, որոնք արտադրութեան հետ միասին կազմակերպում են նաև վաճառականութիւնը: Այդ տեսակ հաստատութիւննե-

րից ամենահետաքրքիրը այս Համագումարի համար հանդիսանում են Ռուսաստանում յայտնի այսպէս կոչուած Տնայնագործական արտէշները:

Բոլոր այդ կօօպերատիւ կազմակերպութիւնները, միացնելով մարդկանց՝ փոխադարձաբար աշխատանք տալու համար, հընարաւորութիւն են տալիս հիմնել առևտրական տեսակէտից հաստատուն և միանգամայն վարկ ունեցող կազմակերպութիւններ գիւղական անիրաւութեան, բռնութեան դէմ կռուելու համար և թեթեւացնում են անտեսական կենցաղը բարելաւող գործնական գիտութիւններ ձեռք բերելը: Կօօպերացիան նոր մի հզօր ոյժ է մեր այժմեան անօգնական գիւղի անտեսական կեանքի վերաշինութեան համար, գիւղի, որ կարող է վերակենդանանալ սոսկ աշխատաւոր փոխադարձ օգնութեան ճանապարհով:

Յօգուտ կօօպերատիւ կազմակերպութիւնների գիւղացիական միջավայրում սկսուած շարժումը Արևմտեան Եւրոպայում առաջինը նկատուում է 80 ական թուականներին, սրանից մօտ 25 տարի առաջ: Այդ միութիւնների հետևանքները շատ և շատ բարեյաջող երևացին. գիւղը այնպիսի լուրջ թեթևութիւն զգաց բռնցքային-վաշխատուական կօալիցիայից, որ այդ շարժումը ամենաընդարձակ չափեր ընդունեց:

Ներկայումս Վ. Տօտոմեանի տեղեկութիւնները համաձայն, Գերմանիայի շինական ազգաբնակչութեան կէսը արդէն մաս-

նակցութիւն է ցոյց տալիս կօօպերատիւ ընկերութիւններին: Անգլիայի ընդհանուր ազգաբնակչութեան մօտ քառորդը մտնում է միայն սպառողական ընկերութիւնների կազմի մէջ, որոնք 1906 թուին ունեցան 630 միլ. բուբլու շրջանառութիւն, ըստ որում զուտ արդիւնքը հասաւ 100 միլիոն բուբլու: Հետաքրքրականն այն է, որ այդ ահադին օգուտի մի մասը դործադրուեց կուլտուրական կրթական նպատակներով: Անգլիայի սպառողական ընկերութիւնները միութիւնը ունի իր սեփական բանկը, որ իր անդամներին փոխատուութիւններ է տալիս տարեկան  $3\frac{1}{2}$   $\frac{0}{10}$  ով:

Կօօպերատիւ շարժման նոյն տեսակ ապշեցուցիչ հետևանքներ ստացում են Ֆրանսիայում, Իտալիայում, Բէլգիայում և Եւրոպայի ուրիշ երկրներում:

Մեր փոքրիկ Ֆինլանդիան, Օ. Բրեմերի տեղեկութիւնների համաձայն, վերջին վեց տարուայ ընթացքում (1902—7) կարողացաւ կազմակերպել 1263 կօօպերատիւ ընկերութիւններ 85000 անդամներով և 60 միլիոն տարեկան շրջանառութիւններով: Զարմանալի է, որ համարեա բոլոր կօօպերատիւ կազմակերպութիւնները արևմուտքում, հետամուտ լինելով բացառապէս անտեսական նպատակների, պահում են լիակատար քաղաքական և կրօնական չեղոքութիւն: Շատ մասնագէտներ այդ չեղոքութեան մէջ տեսնում են կօօպերատիւ շարժման «մեծ ոյժը և հզօրութիւնը»:

Ես այլևս ձեզ չեմ յողբցնի այն բաղմաթիւ զարմանալի փաստերի յիշատակութեամբ, որ ստացուել են կօօպերատիւ շարժումից Եւրոպայում: Իմ այս հակիրճ գրուածքի նպատակն է համոզել կովկասեան գիւղի ներկայ եղող գործիչներին և նրանց բարեկամներին, թէ անհրաժեշտ է որ մենք էլ նմանապէս ընթանանք այդ փորձուած ուղիով մեր գիւղի տնտեսական կեանքն էլ վերանորոգելու համար: Զանազան տեսակների կօօպերատիւ միութիւններ կազմակերպելու համար կան մի շարք հանրամատչելի բրօշիւրներ և օրինակելի կամոնադրութիւններ:

Ես իմ կողմից ներկայիս աւելի նպատակայարմար միջոց կը համարէի-հաստատել մի յատուկ յանձնաժողով՝ մեր գիւղերում կօօպերատիւ միութիւններ կազմակերպելու գաղափարը տարածելու և այդ կազմակերպութիւնների իրականացման գործում գործունեայ աջակցութիւն ցոյց տալու համար: Համագումարը գուցէ այս միջոցը անհրաժեշտ գտնի:

Իմ զեկուցման սկզբում ես մատնանշեցի, որ մեր գիւղացիութիւնը միանգամայն անօգնական վիճակի մէջ է իւր այժմեան կենցաղով: Մեզ մօտ յոյս ունէին, թէ նախագծուող զէմստվային հաստատութիւնները կազատեն նրան ճնշուած կացութիւնից: Սակայն զէմստվօ դեռ չըկայ: Ապա ուրեմն առայժմ կազմակերպուենք միութիւններով, աշխատանքով, փոխադարձաբար օգնելու համար, որպէսզի գոնեա այդ ճանապարհով ա-

ռաջ մղենք մեռած կէտից մեր գիւղի տնտեսական վերածնութիւնը...

Գիւղական փոխատու-խնայողական և արդիւնաբերական ընկերակցութիւնների կօմիտէտի Պետերբուրգի բաժանմունքը, բացի իր հրատարակութիւններից, որոնք յիշատակուած են բաժանմունքի գրացուցակում, վստահութեամբ խորհուրդ է տալիս բաժանմունքի միջոցով բերել տալ տեսական և գործնական կօօպերացիային վերաբերող հետևեալ առաւել գնահատելի գրքերը.

Труды 1 го Всероссийскаго кооперативнаго съѣзда . . . цѣна 2 р. 50 к.  
 В. Тотоміанць. Общества потребителей. Теорія, исторія и практика. 2-ое изд. . . . . " 2 " — "  
 В. Тотоміанць. Сельскохозяйственная кооперация. Очерки съ приложеніемъ русскихъ и иностранныхъ уставовъ . . . . . " 2 " — "  
 М. Слобожанинъ. Смотръ кооперативныхъ силъ . . . . . " 1 " — "  
 А. Глѣбовъ. Трудовыя артели . . . . . " — " 5 "  
 А. Кулыжныі. Какъ вес-

ти дѣла кредитнаго товарищества . . . . .	” — ” 10 ”
В. Зельгеймъ. Въ единеніи сила . . . . .	” — ” 15 ”
М. Кечеджи - Шаповаловъ. Кооперативные идеалы . . . . .	” — ” 25 ”
А. Кулыжный. Крестьянство и союзы . . . . .	” — ” 10 ”
В. Поссе. Идеалы кооперации . . . . .	” — ” 5 ”
И. Озеровъ. Что такое о-во потребителей, какъ его основать и вести . . . . .	” — ” 35 ”
В. Торгашевъ. Потребительныя общества на Западѣ . . . . .	” — ” 30 ”
М. Брагинъ и М. Мининъ. Кооперативы . . . . .	” — ” 20 ”
И. Никольсонъ. Общее дѣло. Разказы о кооперации въ Англіи . . . . .	” — ” 12 ”
А. Кулыжный. Откуда крестьянину достать денегъ за небольшой % для улучшения и оборота въ сельскомъ хозяйствѣ . . . . .	” — ” 5 ”
А. Глѣбовъ. Сельско-хозяйственныя общества . . . . .	” — ” 5 ”
Г. Ллойдъ. Копартнершипъ . . . . .	” — ” 60 ”

Ш. Жидъ. Кооперация . . . . .	1 ” 25 ”
В. Тотоаимнцъ. Фурье и кооперация . . . . .	— ” 7 ”



СЪ ЗАКАЗАМИ ОБРАЩАТЬСЯ ПО АДРЕСУ:

**Спб. Отдѣленіе Комитета о сельскихъ ссудо-сберегательныхъ и промышленныхъ товариществахъ**

СПБ. Невскій пр., 120.



ՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՅ-  
ԹԱՅԹՈՒՄԸ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻՆ

Վ. Բօճնվիչի եւ Պ. Բեզպալիի

(Կարգացուած 5-ին ապրիլի)

Կանկածից դուրս է, որ տնայնագործական արհեստը աւելի է օգուտնէր բերում տնայնագործին, երբ վերջինս գործում է իր տընտեսութեան մէջ ստացուող մթերքներով: Այդ հում մթերքների մշակումն ու ստանալը հնարաւորութիւն է տալիս օգտագործել գլխաւոր ընտանիքի ամբողջ աշխատող ոյժը և ազատում է նրան մթերքների գնման ժամանակ միջնորդների թանգ արժեցող ծառայութիւններից: Ուստի մեզ մօտ Կովկասում ամենից աւելի շահաւէտ է ներկայանում բրդեգործութիւնը (шерстяной промысел), որովհետեւ բուրդ ունենում է գլխաւոր ընտանիքների մեծ մասը և գնահատուած է շատ էժան, իսկ շուկայում, ընդհակառակը, Կովկասեան բրդից պատրաստած գործուածքները, օրինակ, Կովկասեան մահուդները լաւ համբաւ են վայելում և երկար անցեալի հետ են շաղկապուած:

Իրդէ գործուածքներ պատրաստելով, Կովկասեան տնայնագործը ամեն մի արշին կտորում կարող է վաստակել շատ աւելի,

քան, օրինակ, բամբակի գործուածքում, որը ժամանակի ընթացքում, Կովկասում գոյութիւն ունեցող առևտուրի նախնական պայմանները փոխուելուց և այստեղ բամբակէ գործուածքների ֆաբրիկաներ հիմնելուց յետոյ այնքան կարժանանայ, որ նրա պատրաստելը տնայնագործական եղանակով համեմատաբար քիչ վաստակ կը տայ:

Շնորհիւ այդ հանգամանքի, վերին աստիճանի կարեոր է թուում այն հարցը՝ թէ կովկասեան տնայնագործը սրտեղ կարող է ստանալ բրդէ թելեր կամ մանածներ էժան գնով, եթէ որ նա չէ կարող պատրաստել ինքը իր մօտ՝ տանը:

Ներկայումս բրդէ թելերի մի քանի տեսակները, որոնք գործ են անում Կովկասեան մահուդներ ու բրդէ կտորներ պատրաստելիս, նոյնպէս և գորգագործութեան մէջ, մատակարարում է համեմատաբար էժան գնով Ի. Վ. Կապինի մանարան-գործարանը, որ գտնուած է վլադիկաւկազեան երկաթուղու Նեվինոմիսի կայարանում: Այդ մանածների տեսակները և նրանցից պատրաստած գործուածքները և նրանց գները (15 ը. 16 ը. և 18 ը. 50 կ. պուգը) դուրս կարող էք տեսնել այստեղ (Համագումարում): Այդ մանածները բերիլ է տալիս և մատակարարում տնայնագործներին Կովկասեան Տնայնագործական Կօմիտէտը: Բայց որովհետեւ պրակտիկան ցոյց տուեց, որ տնայնագործների մէջ պահանջ կայ բրդէ մանած-

ների նաև ուրիշ շատ տեսակների, միևնոյն ժամանակ ներկուած զանազան չը խունացող գոյներով, ուստի Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտը կովկասեան երկրի համար զեմատվային գումարներից յատկացուող միջոցներով հիմնելու է իր մանարաններ կարարական արհեստանոցը, որտեղից տնայնագործները կարող են ստանալ մանածներ ոչ միայն կանխիկ վճարելով, այլ և բրդի կամ նրանից պատրաստուած գործուածքների հետ փոխելով: Այս վերջին հանգամանքը, վերևում յիշածների հետ միասին, հարկադրուած է մեզ անպատճառ յանձնարարել տարածելու Կովկասում նախ և առաջ բրդէգործութիւնը, որը միևնոյն ժամանակ, արդէն գործադրուած է այստեղ համեստ չափերով, բայց ամենանախնական գործիքների օգնութեամբ:

Նմանապէս կարելի է յանձնարարել և վուշից ու թարայից (ժգուտի) գործուածքներ պատրաստելը, սակայն այն պայմանով միայն, որպէսզի միաժամանակ տարածուի Կովկասի զիւղերում վուշի և թարայի արդիւնաբերութիւնը:

Վուշից պատրաստած զանազան չափի թելերի պատրաստի տեսակները դուք կարող էք տեսնել այստեղ: Նրանց ուղարկում է Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտի պահեստին Տատարնիկովի գրասենեակը Մօսկուայից, հետևեալ գներով (կարդալ պրէյսկուրանտը):

Ինչ վերաբերում է բամբակէ մանածնե-

րին, մինչև այժմ նրան Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտի պահեստը ստանում էր Բէլկինի Մօսկուայի պահեստարանից հետևեալ գներով (կարդալ պրէյսկուրանտը):

Այդ գները պէտք է համեմատաբար բարձր համարել, մանաւանդ որ Կովկասեան Տնայնագործական Կոմիտէտի պահեստարանից բաց թողնելիս կարիք է լինում գրները աւելացնել 7-8-10 0/0-ով: Դրա պատճառը կայանում է նրանում, որ պահեստը բերել է տալիս մանածները ամեն մի անգամ փոքր քանակութեամբ, որովհետև այլ կերպ վարուել նա չէ կարող անհրաժեշտ միջոցների բացակայութեան պատճառով: Բամբակէ մանածների մի քանի տեսակները թիֆլիսում վաճառում է Մելիք-Մարութեանների Ֆիրման, որ գտնուում է Սիօնի փողոցում, նաև Սահակեանի խանութը:

Գործուածքների աւելի կոպիտ տեսակների համար յանձնարարուած է թիֆլիսի Լինժիներ Մամուղբեկովի բամբակէ մանածը, որ պատրաստուած է իր մանարանում, Վօրօնցօվսկայա փողոցում, և գնահատուած է 2-3 բուրլի պակաս, քան Մօսկուայի Ֆարրիկաների մանածները: Բայց, դժբախտաբար, այդ մանածը շատ է փչանում և ներկուած դրութեամբ չէ ծախուում, այնպէս որ վերջի վերջոյ, նրա ներկայ գներով, նրանից պատրաստած արտադրութիւնները առանձին օգուտներ չեն տալիս:

Վերջապէս գոյների վերաբերմամբ բուր-

դի համար անհրաժեշտ է նկատել, որ նրանց ընտրութիւնը մեծ դժուարութիւններ է ներկայացնում և միւլենոյն ժամանակ ունի շատ մեծ նշանակութիւն: Վերջին ժամանակներս կովկասեան գորգադործները սկսել են գործածել անիլինի էթան ու դիմացկուն գոյները նիտֆալի դիմացկուն գոյների փոխարէն: Այդ անխուսափելիօրէն պատճառ է լինելու կովկասեան գորգերի գների ընկնելուն և գորգագործութեան արհեստի ոչնչացմանը: Անհրաժեշտ է այդ բանի դէմ վըճուականապէս մաքառել: Անհրաժեշտ է հոգ տանել տարածելու արիզարինի չը խունացող գոյները: Նրանք թէև թանգ են գընահատում, քան անիլինինը, բայց և այնպէս բաւականաչափ դիմացկուն են նրանցից: Այդ գոյների նմուշները և նըրանց գործածութեան խորհուրդները միշտ կարելի է ստանալ տնայնագործական կոմիտէտի պահեստում:

Անցնելով այժմ տնայնագործներին ջուլհակութեան գործիքներ մատակարարելու հարցին, հարկաւոր է ասել, որ այդ տեսակ գործիքներ տնայնագործներին տալիս է կովկասեան Տնայնագործական կոմիտէտը, ստանալով նրանց Մոսկուայի ֆարբիկանտ Օսիպովից իրան համար նշանակուած գներով (կարգալ պրէյսկուրանտը):

Ինքնաշարժ տօրքերը (станки само-леты) և գորգայինները, նմանապէս և բնագործները համեմատաբար էթան գնով (27-30 ռուբլի ամեն ստանօկի համար և 8—10

րուբլի բնակիչների համար) պատրաստում է պ. Ղամբարեանցի գութաններ պատրաստող «Նադեժդա» արհեստանոցը Ղարաբլիսայում:

Գորգային ոճաւոր նկարների նմուշները պատրաստում է կովկասեան Տնայնագործական կոմիտէտի նկարիչ պ. Ստրուէն: Այդ նկարները կարող էք տեսնել այստեղ ցուցադրուած: Այդ նկարների ալբօմը մտադրութիւն կայ ժամանակով լոյս ընծայել առանձին հրատարակութեամբ: Ինչ վերաբերում է զանազան մետաքսէ, բամբակէ և վուշի գործուածքների ոճաւոր նկարներին, նրանց հաւաքելը դեռ ևս նոր է սկսում և մօտիկ ապագայի խնդիր է հանդիսանում:

Վերջացնելով ներկայ դեկուցումը, չենք կարող ցանկութիւն չը յայտնել, որպէսզի զանազան մթերքներ ու գործիքներ գնելիս կովկասի տնայնագործները դիմէին կօօպերատիւ, այսինքն ընկերակցական սկզբունքին, որը բաւականին կը դիւրացնէ և կը կըճատէ առանձին ընտանիքների ծախքերը, միւլենոյն ժամանակ հնարաւորութիւն կը տայ տնայնագործական գործիքներից հերթով օգտուելիս աւելի լաւ օգտագործել այդ գործիքները: Տնայնագործների այդ ընկերակցական համերաշխութեան մէջն է նրանց ոյժը և նիւթական բարեկեցութեան գըրաւականը:

## ПРОДАЖНЫЯ ЦѢНЫ

на различные материалы склада Кавказскаго Кустарнаго Комитета.

### П Р Я Ж А

**Л Ы Н Я Н А Я** Татарникова въ Москвѣ:

	Некрученая суровая	
№ 14	12-13 р. пудъ	
№ 16	12 р. 75 коп.-13 р. 75	
№ 18	13 р. 50 коп.-14 р. 50	
№ 20	14 р. 25 коп.- 15 р. 25	
№ 24-28	16 р. 18 коп.- 18 р. 48	
№ 30	19 р. 50 к.	

Некрученая бѣлая тѣже номера на 5 0/0 дороже. Крученая суровая

№ 4/2	11 р. 50 к. пудъ
№ 6/2	12 р. 25 к.
№ 8/2	13 р. —
№ 10/2	13 р. 75 к.
№ 12/2	14 р. 50 к.
№ 14/2	15 р. 25 к.
№ 16/2	16 р. 25 к.
№ 18/2	17 р. 25 к.
№ 20/2	18 р. —

№ 24/2	19 р. 68 к.
№ 26/2	21 р. 06 к.
№ 30/2	23 р. 40 к.

Крученая бѣлая тѣже номера на 5 0/0 дороже.

При продажѣ изъ склада набавляется отъ 5 0/0 до 10 проц. стоимости материаловъ для покрытія накладныхъ расходовъ по пересылкѣ и доставкѣ ихъ въ складъ Кустарнаго Комитета.

Пряжа льняная Бѣлкина въ Москвѣ:

Некрученая суровая

№ 16—18	13 р. 50 к.-14 р. 25 п.
№ 20—22	15 р. — — 15 р. 75
№ 24—26	16 р. 75 к.-17 р. 75
№ 28—30	18 р. 75 к.- 19 р. 75

За отбѣлку—1 руб. 20 к. пудъ.

Накладные расходы отъ 5 проц. до 10 проц.

Бумажная пряжа Бѣлкина въ Москвѣ.

Суровая (кремъ) Утокъ

№ 6—8	5 р. — 5 р. 05 к. за пачку 11 ф.
№ 10—12	5 р. 15—5 р. 25 к.
№ 14—16	5 р. 30—5 р. 40 к.
№ 20 —	5 р. 75 к.

Варерь

№ 24	7 р.
№ 32	7 р. 25 к.
№ 40	8 р. 25 к.

## Крученая

№ 22	7 р. 30 к.
№ 26	7 р. 55 к.
№ 32	7 р. 80 к.
№ 44	9 р. 50 к.

За отбѣлку—60 к. за пачку.

За окраску въ прочные цвѣта 3 руб. 50 к.  
за пачку.

Накладные расходы 5—10 проц.

Пряжа шерстяная **И. В. ЛАПИНА.**

Станція Невинномыская

Некрученая въ 1 нитку

№ 6, 1 18 р. 50 к. пудъ.

Крученая въ 3 нитки

№ 61	17 р. 50 к.
№ 6	16 р.
№ 5	14 р. 50 к.

Пряжа бумажная Тифлисская:

**Ватеръ** кремъ суров.

№ 14	18 р. 75 к. пудъ.
№ 8	18 р. —

Ткацкіе инструменты **Осипова** въ  
Москвѣ.

Челноки дерев. съ кондукторомъ

2 р. 25 коп. шт.

Желѣзные

8/4	— 90 коп.
8/5	1 р. —

Ремизы съ глазкомъ метал.

№ 5	1 р. 90 к. тыс.
№ 6	1 р. 80 к.
суровые	1 р. 70 к.

Берда разныя отъ 1 р. до 8 руб. тыс.

Рядки разныя отъ 8 р. до 16 руб. „

Шпули 1<sup>1</sup>/<sub>2</sub> коп. шт.

Регуляторы 9 р. шт.

Шафтъ машина Вѣнская (Шрама)

24 руб. шт.

Станки—самолеты (деревян. части) караклис-  
ской плугостроительной мастерской Гам-

барянца 27 руб. 50 коп.—30 р.

Ковровые станки 25 руб. „ 30 р.

Ализариновыя краски Фр. Байера для

шерсти разныхъ цвѣтовъ отъ

1 р. 85 к. до 3 р. фунтъ

Огарки 6 р. 50 к. пудъ.

Лупы отъ 1 р. до 3 р. за шт.

Мѣдныя пластинки (прутки)

2 арш. 4/мм. 1 рубль. 85 к.

3 арш. 6/мм. 2 р. 95 к.

4 арш. 8/мм. 3 р. 25 к.

Шерсть очищенная Казбекская и Тонетская

5—6—7 руб.

Клѣтчатая бумага 12 коп. листь.

«Ձեռն-Քի ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ»:

Տիկ. Մ. Ա. Վերմիշենանի

(կարդացուած 5 ապրիլ)

Երկու տարուց աւելի ապրելով արտասահմանում և վերադառնալով իմ հայրենի թիֆլիս քաղաքը, ես զարմացայ, տեսնելով այն, ինչ որ կարճ ժամանակամիջոցում քաղաքը կարողացաւ անել:

Արտաքուստ նա եւրոպական քաղաքի տըպաւորութիւն է թողնում. այդ բնոյթը տուել է նրան էլիքտրաքարը: Շատ ու շատ բաներ մենք կարողացել ենք իւրացնել արտասահմանից, միայն ոչ մի կերպով չենք կարողանում ներս մտցնել մեր ներքին, ընտանեկան կեանքի մէջ այն կուլտուրան, որով այնքան արդարացի կերպով պարծնում է Արևմուտքը և որը ամենից աւելի մտցնում է իրանով կիւնը:

Այնտեղ կիւնը իր աշխատանքի ընդունակ լինելը երևան է հանում շատ բազմակողմանի կերպով: Կամ նա տանտիկին է բառի բուն նշանակութեամբ, ապրում է ընտանիքի շահերով, աշխատում է իր մօտ տանը, առանց աղախնի, ինքն է կատարում ամբողջ աշխատանքը և այդպիսով խնայում ամուսնու, հղբօր, հօր աշխատանքի վաստակը և՛

կամ թէ աշխատանք է անում կողմնակի տեղում:

Նրա վաստակը շատ զանազան է, և ամենուրեք նա նախ և առաջ չէ ամաչում աշխատել: Նրան հարող ես տեսնել և դաշտերում, խաղողի այգիներում, գործարաններում, գործատներում, արհեստանոցներում, պօստ — հեռագրատանը, չասինք դեռ աւելի ինտելիգենտ աշխատանքներում, ուր նա ամեն տեղ զգում է իրան իր տեղում:

Վաղ մանկութիւնից, նա գործնականապէս սովորում է կառավարել ընտանեկան տնտեսութիւնը իր տան մէջ և զըլլուցում զբազիտութիւն սովորելու հետ միաժամանակ: Հէնց մանկութիւնից օգնող ձեռք հանդիսանալով ընտանիքում, նա ոտք է դնում կեանքի մէջ արդէն նախապատրաստուած և նրա համար դժուարութիւն չէ ներկայանում խելացի կերպով տանել ինքնուրոյն իր տնտեսութիւնը: Եւ այդպէս անում են ոչ միայն ոչ հարուստները, կարօտութեան մէջ գտնուողները, այլ և միջոցներ ունեցող ընտանիքները:

Այն տանը, ուր ես ապրում էի, իմ ժամանակ մի շվէյցարացի, որը տարեկան 100 հազարի եկամուտ ունէր, ամուսնացաւ իրանից ոչ պակաս հարուստ մի օրիորդի հետ: Ես զարմացայ, երբ իմացայ որ նրանք իրանց համար աղախին չեն որոնում: Նա ամուսնութեան հէնց առաջին օրից սկսած ուրախութեամբ կատարում էր բոլոր աշխատանքները, նոյն իսկ այն՝ ինչ որ մեզանում

միայն ծառայի գործ են համարում, իսկ ազատ ժամանակ ամուսնու հետ միասին զբօսանքի էր գնում իր սեփական աւտոմօբիլով: Եւ մենակ նա չէր այդպէս:

Եօթ հազար ազգաբնակիւթիւն ունեցող ամբողջ քաղաքում միայն 3 ընտանիքներ ունէին իրանց խոհարարուհին, ֆնացեալները կատարում էին իրանք, և ազատ էին ծառայների վրայ տրտնջալուց, որը մեր օրուայ չարիքն է կազմում:

Արտասահմանում կինը աշխատում է գլխացորէն, ուրախութեամբ, խէթ աչքով նա չէ նայում, որ աշխատանքը տղամարդկանց բաժինն է, այդ պատճառով էլ այնտեղ չեն հանդիպի ձանձրացող անձանց. ժամանակ չը կայ, աշխատանքը առողջ մթնոլորտ է ստեղծում, և աշխատող կնոջ շուրջն էլ ամուսինը և զաւակները զգում են իրանց առոյգ:

Կնոջ առօրեայ աշխատանքի մէջ էլ թագնուած է նրանց ընտանիքի բարեկեցութիւնը, այն նիւթական հանգիստը, որից դուրկ են մեր ընտանիքները. կինը իր հերթին վայելում է յարգանք և իրաւահաւասարութիւնը նրանցում ներկայանում է բնական կերպով:

Իհարկէ, մեր կանանց մէջ ևս քիչ չեն աշխատողները, բայց և այնպէս մեզանում աղջկերանց ու կանանց խոշոր մասը ամաչում են աշխատել, մանաւանդ մեր քաղաքային տեղացի ազգաբնակիւթեան շրջանում:

Միակ աշխատանքը, որ նրանք համարում

են իրանց համար կարելի, իրանց արժանապատուութիւնը վայր չը ձգող, դա «ասեղն է»: Ահա թէ ինչով է բացատրում մեզանում արհեստանոցների այնչափ առատութիւնը, բայց վերաւորական է, որ դրանում ևս օտարուհին մեզանում դարձեալ առաջնակարգ տեղ է գրաւում, իսկ մեր ունևոր տիկիներն ըր ամենից շատ վաստակ տալիս են օտարուհիներին, քան թէ իրայիններին: Մերոնք դեռ ևս չեն կարողանում մշակել իրանց մէջ ոչ նրանց վարպետութիւնը և ոչ էլ նրանց ճաշակը:

Ասեղը, իհարկէ, անհրաժեշտ մի իր է տան մէջ, սակայն նա պարունակում է իր մէջ նաև քայքայիչ թոյն: Կինը, աղջիկը, որ ամբողջովին անձնատուր է լինում նրան, ակամայից խորասուզում է ժապաւէնների, բանտիկների, մօդաների և այլ մանր մուներ հետիկների, մօդաների և այլ մանր մուներ հետաքրքրութիւնների մէջ, որոնք ակամայից թունաւորում են այդ մթնոլորտով. և քանի քանի երիտասարդ ոյժեր ոչնչանում են շնորհիւ միայն այն գայթակղութեան, որը բերում են նրանց պատուէր տուողները:

Ահա այդ բոլորը դիտելով, ես վճռեցի վերադառնալ հայրենիք մի որևէ նոր բանով, ես գլխաւորապէս ուզում էի սովորեցնել մանուկներին, երիտասարդութեանը բոնեի դասակարգերից չամաչել աշխատելու, ուստի իմ զաւակներին հնարաւորութիւն տուեցի այնտեղ ուսուցնասիրել «ձեռքի աշխատանքը», ինքս ծանօթացայ նրանց կազմակերպութեան գործի հետ, և, 100 բուբի

ուեննալով ձեռքիս, համարձակուեցի բանա  
իմ դասարանները:

95 ըուըլով գնեցի անհրաժեշտ գործիքնե-  
րը, ներկեր, կաշի, 5 ըուըլի տուեցի կան-  
խավճար բնակարանի համար:

Հրաւիրեցի իբրև ուսուցչուհի Օրնադսկուն  
գործնական արուեստի համար և 1908 թուի  
փետրուարի 1-ից սկսեցի աշխատել շատ հա-  
մեստ պայմաններում մի սենեակում, ուր  
բացի սեղանից և աթոռներից ուրիշ ոչինչ  
չը կար:

Նշանակեցի ոչ բարձր գին. ամսական 5  
ըուըլի մեծերի համար և 3 ըուըլի երեխա-  
ների համար:

Աշակերտներ քիչ քիչ եկան, հետաքրքրուե-  
ցին: Այնպէս որ նոյն տարին մայիս ամսին  
կարողացանք արդէն կազմակերպել աշակեր-  
տական աշխատանքների ցուցահանդէս, որին  
այցելեցին 300 հոգուց աւելի: Յուցահանդի-  
սից յետոյ աշակերտների թիւը հասաւ մին-  
չև 35 հոգու:

Սկսեցինք մենք հասարակ գործերից, շու-  
կայում վաճառուող կճուճներից, աշխատելով  
նրանց տալ գեղեցիկ տեսք, վրաներին գա-  
նազան նկարներ ու զարդարանքներ, և ներ-  
կելով նրանց: Ստացուեցին օրիգինալ վա-  
զաներ: Ապա զբաղուեցինք փայտի վրայ այ-  
րագրելով, սովորեցնում էինք հասարակ ու  
խոր ձևերը, թաւիշի ու գազի վրայ նկարե-  
լով:

Սկզբում թէ աշակերտները և թէ մենք  
գժուարութիւնների էինք հանդիպում, որով-

հետև նրանք ոչ մի նախապատրաստութիւն  
չունէին նկարելու մէջ, և ես վճռեցի, որ  
այդպէս այլևս անկարելի է շարունակել աշ-  
խատել, որ հարկաւոր է ընդարձակել դըպ-  
րոցը և ամենից առաջ ուղիղ հիմքերի վրայ  
դնել նկարչութիւնը, կաւագործութիւնը  
(пѣпка), առանց դրան միտք չունէր պա-  
րապմունքները շարունակել:

Առանց նկարչութեան ոչ մի արհեստ միտք  
չունի, այդ է պատճառը, որ այնքան լուրջ  
տեղ են տալիս նրան արտասահմանում: Զուր  
չէ որ նկարչութեան թուանշանը այնտեղ հա-  
ւասար է առարկաների թուանշաններին:  
Սակայն պէտք է խոստովանել, որ այդ քիչ  
է համոզում իմ հասակաւոր աշակերտներին,  
և առայժմ երեխաները միայն պարապում  
են, թէև վճարը նշանակուած էր դարձեալ ոչ  
բարձր՝ ամսական 2 ըուըլի:

Մօտ ժամանակներս միայն եկաւ 5 հո-  
գուց բաղկացած մի խումբ, որոնք ձեռագոր-  
ծի վարժուցութեան քննութիւն պէտք է բըռ-  
նեն և նրանք պէտք է քննութիւն տան նաև  
նկարչութիւնից:

Թէ երեխաների և թէ հասակաւորների վե-  
րաբերմամբ գործադրելի է ամբիկական  
սիստեմը, որը մեծ ազատութիւն է տուիս  
ինքնուրոյն աշխատանքին, իհարկէ, ուսուց-  
չի ղեկավարութեամբ, և կարող եմ ասել,  
որ այ. Արդութեանը աջող կերպով իրագոր-  
ծեց այդ սիստեմը: Գեղարուեստական մասը  
և նկարչութիւնը ինձ թւում էին զեռևս  
ոչ բաւարար, որպէսզի ես իմ դպրոցը ա-

նուանէի «Ձեռքի աշխատանքի դասարաններ» և ես կանգ առայ նոր մտքի վրայ՝ բանալ կողովագործութեան և բամբակագործութեան բաժանմունք:

Օգոստոսին ես դիմեցի փոխադարձ վարկային ընկերութեանը՝ խնդրելով բանալ ինձ համար կրեդիտ 400 ըուրլու այդ բաժանմունքը բանալու միտքը գլուխ բերելու նըպատակով: Յանձին իշ. Գ. Մ. Թումանեանի և Ի. Մ. Պսարովի ես մեծ աջակցութիւն գրտայ, նրանք թոյլատրեցին ինձ կրեդիտի հարցը: Ես հրաւիրեցի մի ինստրուկտոր Ստրշենիցկուն, որը ուսումնասիրել էր այդ գործը Վարչավայում, այդ բաժինները կառավարելու համար:

Իբրեւ տուեցի անհրաժեշտ նիւթերը, գործիքները Օդեսայից և Վարչաւայից, ես պօնական բամբուկ, վարձեցի աւելի մեծ բնակարան, կահաւորեցի աւելի լաւ, և աշխատանքները առաջ գնացին: Կովկասում բամբուկ ստացում է, սակայն չը կայ մի դպրոց, ուր սովորէին նրանից կահկարասիներ պատրաստել: Մեր մագազինները չեն թոյլ տալիս ոչ ոքի իրանց արհեստանոցները մտնել, Չակվում չեն ընդունում աշակերտներ: Թագցնում են թէ նըրանք և թէ ուրիշները ինչպէս հարկաւոր է կռացնել բամբուկը: «Ձեռքի աշխատանքի դասարաններում» այդ բաները ցոյց ենք տալիս և սովորեցնում աշակերտներին: Կահկարասիները պատրաստում են նրանց աչքերի առջև: Փոքր առ փոքր հասարակու-

թիւնը գալիս է մեզ մօտ պատուէրներ տալու և այժմ ստացուած պատուէրների համաձայն պատրաստուած են շիրմաներ, էտաժերկաներ, սեղաններ, որոնք իրանց էժանութեամբ անհամեմատ պակաս են մագազինների գներից:

Ինչ վերաբերում է կողովագործութեան նա կարող է գիւղական ազգաբնակչութեան մէջ անհրաժեշտ աղբիւրներից մէկը դառնալ: Մրգեղէնների ուղարկելը դէպի Ռուսաստանի ներքին գաւառները մեր եկամուտի աղբիւրներից մէկն է, մինչդեռ մենք կողովները ստանում ենք կամ Ռուսաստանից և կամ Յունաստանից:

Սոյն տարուայ յունուար ամսից ուսուցչուհի եմ հրաւիրել Սիմօնովիչին յախճապակու վրայ նկարչութեան համար (Փարֆորի վրայ):

Անցեալ սեպտեմբերից աշակերտների ու աշակերտուհիների թիւը շարունակ աւելանում էր, այդ պատճառով էլ օգնական հրաւիրեցի նկարչուհի օր. Եգերին:

Այժմ սովորողների թիւը հասնում է 80-ի. բացի դրանից, ես վճռեցի բանալ առաւօտեան դասարաններ մինչդպրոցական հասակի երեխաների համար՝ սկսած 5 տարեկանից մինչև 8-ը, նրանք անցնում են միկանից մինչև 8-ը, կաւագործութիւն (плетка), կողովագործութիւն, ֆրանսերէն լեզու, գիմնաստիկա, պարեր և պլաստիքական շարժումներ երաժշտութեամբ շվեյցարական նորագոյն մանկավարժ Delacray-ի սխեսմով:

Նրանց հետ պարապուժում եմ ես ինքս և հրաւիրել եմ իբրև օգնականուհի Ջիմար-ջիձէին:

Չեմ կարող չը յիշատակել, որ գործի աջողութեանը շատ նպաստել է դասատուների խմբի բարեխիղճ վերաբերմունքը դէպի իրանց ստանձնած գործը:

Ծննդեան տօներին կազմակերպուած էր երկրորդ ցուցահանդէսը, որին բարեբաճեց այցելել կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկովան:

Կոմսուհին նայեց աշակերտական բոլոր աշխատութիւնները, բարեհաճեց գովել ինչպէս աշխատանքները, այնպէս և այդպիսի դպրոցի բացումը քաղաքում և նուիրեց 100 ռուբլի ուսումնարանի աջակցութեան համար, որի հաշուով իր թոյլաւութեամբ և ընդունուեցին երկու չքաւոր երեխաներ:

Ապա, քաղաքագլխի պաշտօնավարին, վարչութեան անդամներին և ուսումնարանական ու ֆինանսական յանձնաժողովներին իմ կողմից ուղարկուած հրաւերին՝ այցելելու դպրոցը, բաւականութիւն ունեցայ տեսնելու նրանց իմ դպրոցում մարտի 7-ին:

Նրանք, ըստ երևութին, համակրութեամբ վերաբերուեցին այդ դպրոցին, բայց, հասկանալի է, նա չէ կարող լիովին գոհացնել նրանց:

Ես ի նկատի ունիմ բանալ նոյն «դասարաններին» կից և ուրիշ բաժանմունքներ, որոնք կարող կը լինէին բաւարարել աղքատակուլութեան կարիքները, ինչպէս՝ կօշկակարական, ատաղձագործական, փականա-

գործութեան, յարդագործ զլխարկների, տնայնագործական կուրսեր, բանալ օրինակելի լուացարատուն և այլն. մի խօսքով այն բոլորը, ինչ որ չունեոր դասին կարող է նիւթական օգնութիւն տալ, իսկ ունեորին՝ տնտեսութիւն:

Այդ ամենի համար հարկաւոր է փող, և միջոցներ գտնուելու համեմատ էլ ես յոյս ունիմ իրագործել այն ամբողջ ծրագիրը, որը ես նկատեցի իմ «Չեքի աշխատանքի դասարանների» համար:



# ՈՃԸ ԵՒ ԳՈՅՆԵՐԸ ՀԱՅ ԳՈՐԾՈՒԱԾ- ՔԻ ՄԷՉ

Գ. ԼԵՆԻՆՆԱՆԻ

(Կարգացուած 5-ին սպրիւն)

Տնայնագործական արդիւնաբերութեան մէջ իւր գլխաւոր և որոշակի տեղն ունի գրաւած գործուածային արուեստը, ինչպէս սովորական է ասել ջուլհակութիւնը: Բազմաճարանային արդիւնաբերութեան զարգանալով, նախնական ջուլհակութիւնը, գործուածային արուեստը քաղաքացու ընտանիքից վերացաւ եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծ չափով և մնաց բաժին գիւղացուն, շինականին: Բայց իւր փոքր չափով էլ ձեռարուեստը, ձեռքի աշխատանքը միշտ մնաց բարձր և սիրելի այն ամենի համար, որոնք գիտեն գնահատել որակի արժէքը և տարբերել անհատական, տնային աշխատանքը գործարանային շարժոն, մեքենական աշխատանքից: Իսկ շատ գործեր էլ կան, հէնց գործուածային և հիւսուածային արուեստների մէջ, որոնք միշտ գերազանց են գործարանային արդիւնաբերութիւնից: Սօսքս գորգերի, կապերտների, շալերի և նման գործուածքների մասին է, որոնք անպայման դեռ շատ

երկար ժամանակ, գուցէ և ընդ միշտ, սեփականութիւն կը մնան տնայնագործական արդիւնաբերութեան:

Ես չեմ խօսելու իմ զեկուցումի մէջ գործուածների նիւթիդէնի՝ այսինքն բրդի կամ թելի մասին. դրանց վերաբերեալ անշուշտ խօսողներ կը լինեն և եղան աւելի գործին ծանօթ անձնաւորութիւններ. ես խնդրին կը մօտենամ բացառապէս զեղարուեստի տեսակէտից, — գործուածքների նկարների և գոյների մասին մի քանի առարկութիւններ և առաջարկութիւններ անելու:

Գործուածային արուեստը ջուլհակութիւնը հայոց մէջ այնքան հին է, որքան հին է ինքը հայ ժողովուրդը, ինչպէս և ուրիշ ազգերի մէջ էլ նոյնն է եղել, որ գործարանային արդիւնաբերութիւնից շատ առաջ, նախնական շրջաններում, եղել է բացառապէս տնային աշխատանք և յաւելեալ դէպքում միայն արդիւնաբերութեան ապրանք: Այսինքն ամեն մի ընտանիք մասնէ, գործել և հիւսել է այն, ինչ որ անհրաժեշտ է եղել իր առաջնակարգ պէտքերի համար: Մինչև այժմ էլ, դեռ շատ գաւառներում ու գիւղերում հազնում են իրենց գործած կտաւը և շալը և գործարանային ապրանքներին դիմում են միայն բացառիկ դէպքերում: Ամենաառաջնակարգ պէտքերը հոգալուց յետոյ, երբ ընտանիքի մէջ նիւթի՝ բրդի և թելի առաւելութիւն է նկատուել, հանդէս են եկել դարձեալ պիտանի գործուածքներ ընտանիքի միւս պէտքերի համար, ինչպէս յատակին փոխու համար

գորգեր և կապերտներ, իրեր մի անդից մի տեղ իրենց հետ վերցնելու համար՝ խուրճիկներ, մաֆուռներ և այլն: Ահա այստեղ առաջ է գալիս օգտակարութեան, անհրաժեշտութեան կգաղափարի հետ նաև գեղեցկութեան, հաճելիութեան գաղափարը: Եթէ, օրինակի համար, ցրտից կամ անձրևից պաշտպանուելու համար մի թաղիք, մի փալաս, մի եսփունջի կամ մի կոպիտ վերնազգեստ էին պատրաստում, չէին մտածում, որ նա պէտք է գեղեցիկ լինի, այլ միագոյն տաք, բայց երբ յատակը, առաստաղը կամ պատերը ծածկելու համար կապերտներ և գորգեր սկսեցին գործել, մտածում էին գեղեցիկ, ծաղկաւոր զարդարուն և բազմագոյն անել: Քոյրը իր եղբօր, կամ նորահարսը իր փեսայի համար գործած խուրճիկի վրայ կամ բաժինքի մաֆուռի վրայ բոլոր գեղարուեստական շնորհքը ցոյց էր տալիս, նախընտրելով, զարդարում:

Ստեղծուեց օրնամենտացիան, զարդարանքը, այսինքն միակերպութեան հակառակ՝ բազմազան գրուածները և գոյները գործածութիւնը:

Ի՞նչ նիւթեր, ի՞նչ էլեմենտներ պէտք է ծառայէին օրնամենտներ կազմակերպելուն:

Ամենքից առաջ իւրաքանչիւր անհատ առաջնորդ ունէր իր երևակայութիւնը, իր ստեղծագործական ոյժը, եթէ նա լոկ ընդօրինակիչ չէր, յետոյ բնութեան գրկում ապրող և կեանքի մեծ մասը բուսական և կենդանական աշխարհում անցկացնող գիւ-

ղացին կամ շինականը նիւթ պէտք է վերցնէր անշուշտ բոյսերից, ծաղիկներից և կենդանիներից: Իրանից էլ առաջ են եկել ինչպէս ամեն տեղ և ամեն ժողովուրդի մէջ, այնպէս էլ հայոց մէջ օրնամենտացիայի երեք հիմնական տեսակները:—

Ձևական օրնամենտ узорчатый орн.

Բուսական օրնամենտ растительный орн.

Կենդանական օրնամենտ животный орн.

Վերջին երկու տեսակի օրնամենտներն էլ եղել է ձևաւոր, ոճային (стилизованный), այսինքն բոյսերը, կենդանիները ոչ թէ իսկութեամբ էին ընդօրինակում, այլ հիւսուած, տերևների, ծաղիկների և կենդանական տարրերի հետ մի ամբողջութիւն կազմելով: Այս երևոյթը նկատուում է ամեն տեղ մանրանկարչութեան մէջ, ճարտարապետական օրնամենտների մէջ, ինչպէս և գործուածային արուեստի մէջ:


Ուշադրութեան արժանի երևոյթն այն է, որ տարբեր սզգերու ժողովուրդները տարբեր տեսակ էին օգտուում միևնոյն նիւթերից, նայելով իւրաքանչիւրի միջավայրի, տեմպերամէնտի և այլ պայմանների որպիսութեան և ազդեցութեան: Ահա հենց այստեղից է որ սկիզբ է առնում ոճը, ծաշակը: Եթէ որոնելու լինինք հայ ոճ, նախ պէտք է ծանօթանանք մօտիկ արևելքի, այսինքն Պարսկաստանի և Տաճկաստանի ոճերին, որոնց հետ մենք դարերով շփուում ենք ունեցել և որոնց հետ մենք կարող ենք փոխառութիւններ արած լինել: Փոխառութիւնները լի-

նում են երբեմն գիտակցաբար, երբեմն ազգուած, անգիտակցօրէն: Յիշեալ երկրներն էլ կարող են, իհարկէ, իրենց հերթին օգտուած լինել իրենց հարևաններից, Հնդկաստանից, Բուխարայից, Եգիպտոսից և այլն: Եւ անա ընաւորութեան ոճերի խառնուրդը կամ խմբակցութիւնը մի անունով կոչուած է արեւելեան ոճ: Միայն թէ իւրաքանչիւր ազգ այդ ընդհանուրի մէջ ունենում է նաև իր առանձնայատուկ տարրերը, իր ինքնուրոյն էլեմենտները, որոնք ընրոշում են և տարբերում միշտ միւսից: Այդպէս է եղել գոնէ մանրանկարչութեան և այլ գեղարուեստական օրնամենտների զբոլթիւնը, նոյնը կը լինի անշուշտ և գործուածային արուեստի մէջ:

Քննել այժմ այդ գործը, ուսումնասիրել հայ ոճը տնայնագործական արուեստի մէջ, խիստ վաղածամ է, որովհետև ոչ որևէ գիտական աշխատութիւն կայ այդ առթիւ հրապարակի վրայ, ոչ նկարների ալբոմներ ու ժողովածուներ ունինք, ոչ էլ տնայնագործական թանգարան: Իմ այս համեստ գեկուցումի մէջ վստահանում եմ ցոյց տալու միայն մի քանի գլխաւոր և ընորոշիչ էլեմենտներ, որոնք ծանօթ են ինձ հայ միջնադարեան նկարչութիւնից (որի ուսումնասիրութեամբ ես զբաղուել եմ տարիներ) և որոնք իրենց ձևերով և գոյներով ոչ միայն շատ չեն տարբերում գործուածքների մէջ երևացող ընորոշիչ տարրերից, այլ և կարե-


լի է ասել նմանութեան ակնյայտի ապացոյցներ են երևան հանում: Ապացոյցներ, որոնք միևնոյն ժամանակ յայտնի են կացուցանում հայ և հարևան ազգերի օրնամենտի տարբերութիւնները և փոխառութիւնները:

ա. Ձևաւոր օրնամենտներում՝ պարսկական և տաճկական՝ կամ լաւ է մի անունով կոչել իսլամական, նկարչութեան մէջ—գերակշռում են աւելի կորագիծ ձևերը (ինչպէս որ մանրանկարչութեան մէջ, (տես ձև 1.)




ձև 1.

aa. Հայ նկարչութեան մէջ գերակշռում են ուղղաձիգ ձևերը, եռանկիւնի, քառակուսի և մանաւանդ վեցանկիւնի (տես ձև 2). նոյն իսկ եթէ կորագիծ ձևեր են պատահում, նրանք



ձև 2.

դարձեալ ներգծուած են լինում գլխաւորապէս այս երեք ձևերի մէջ. (տես ձև 3).



ձև 3.

Միջամական նկարչութեան մէջ մի շատ գործածական ձև կայ, որ ձեզանից ամեն մէկը տեսած կը լինի նրանց գործուածքների կամ շորեղէնների վրայ. դա կոչուում է բուլթա.




ձև 4.

Հայ գործուածքների մէջ այդ ձևը փոխ առնուելով վերածուել է ուղղաձևի ֆիգուրայի, տակից աւելացնելով մի ուղղանկիւնի, կամ երբեմն մի խաչ: (տես ձև 4).

ա. Բուսական օրնամենտներում նկատել եմ հետևեալը. վերոյիշեալ սիրելի ձևը շինուած է որպէս տերև:

aa. Նոյն ձևը կայ հայ նկարչութեան մէջ անկիւնաւոր գծերի մէջ:



ձև 5.

Բ. Պարսկական մի գործուածքի վրայ տեսել եմ և ընդօրինակել իմ ալբոմում կայսպ-

ցիդի Գրասիմուղէումում մի գործուածք, վրան այսպիսի ծաղիկներով.



BB. Նոյն թանգարանում որպէս հայկական կտոր կայ չիթ, որի վրայ կայ մի այսպիսի նկար. այստեղից ինչ ենք տեսնում:

Մինչ իսլամական նկարի մէջ կիսալուսինը զրուած է որպէս պատուանդան, հայկականում զրուած է ծաղիկը արդէն խաչի ձև ընդունածի տակը, որպէս անում են ի նշան յողթութեան: Սաչը հայկական է իր երկու թևերի կարճութեամբ:

Շատ եմ ափսոսում, որ չը պիտի կարողանամ ընդարձակել զեկուցումիս ծրագիրը, բայց կարծում եմ այս մի քանի նմուշներն էլ բաւական են ապացուցելու հայ ոճի առանձնայատուկ ներկայութիւնը և իր հարեւաններից կրած ազդեցութիւնները:

Նոյնն է և կենդանական օրնամենտի մէջ: Երբ գործուածքը շորերի կամ հագնելու համար է, նրա ծաղիկները մանր և խառն են, առանց թարս և շիտակի, մինչդեռ կանգուն մնացող գործուածքները մեծ մասամբ ունեն թարս և շիտակ:

Մի հետաքրքրութեան արժանի երևոյթ, որի վրայ արժէ ուշադրութիւն դարձնել, և որը ցոյց է տալիս նկարի, ստեղծագործող վարպետի երևակայական թռիչքը, այդ այն է, որ ինչպէս մանրանկարչութեան մէջ, գործուածքների նկարների մէջ էլ պատահում են երբեմն սիմբոլիք, առեղծուածային նկար-

ներ, միանկարած այնպէս, որ նայողը գը-  
ժուարանում է որոշել թէ սա կենդանի է՝ թէ  
բոյս է, կամ բուսական օրնամենտից դէպի  
կենդանականն անցնելու շրջանն է:



Յետոյ մի ուրիշ երևոյթ, որ սովորական  
է տեսնել հին յունական, հռովմէական քան-  
դակագործական օրնամենտի մէջ ու այնտե-  
ղից անցել է բիւզանդական շրջանը՝ դէպի  
Ասիա և Կովկաս, մտնելով նաև մանրանկար-  
չութեան արուեստի մէջ, այդ այն է, որ օր-  
նամենտացիայի մէջ երբ մի փոքրիկ դատարկ  
տեղ է մնում, իսկոյն այդ դատարկութիւնը  
լցում է մի ուրիշ գարդով, ուրիշ նախշով,  
աստղերով և պալմետկաներով և չի կրկնում  
շարունակելի սովորական օրնամենտը:

Նկարների մասին իմ խօսքը վերջացնե-  
լով, դեռ գոյների մասին չսկսած չեմ կարող  
մի երկու խօսք՝ չսկսել և մեր շատ գործուածք-  
ների անկանոն ձևի և երկրաչափական  
սխալի մասին: Օրինակ ուղղանկիւնի կապե-  
րը կամ գորգը տեսնում ես մի կողմը լայն  
է, միւս կողմը նեղ, և նեղ է ոչ թէ մի կամ  
երկու վերջոյ, այլ շատ անգամ մինչև կէս  
արշին և աւելի: Դա առաջ է գալիս անշուշտ  
նրանից, որ գործելիս թիւը ամբողջապէս  
պատրաստ չի լինում, այլ հետզհետէ են մա-  
տակարարում կամ ուրիշից վերցնում, որը

լինում է նախկինից քիչ հաստ կամ բարակ:  
Գործող վարպետը կամ վարպետուհին, չը  
նայելով որ պահում է իր բոլոր հաշիւը, բայց  
վերջը անսպասելի կերպով ստացում է ան-  
հաճոյ հետևանքը, լայնութիւնը կամ նեղու-  
թիւնը:

Այսչափը բաւարար համարելով նկարնե-  
րի մասին, անցնեմ գոյներին:

Գոյների գործածութիւնը մեր շատ գիւ-  
ղերում դեռ ևս նախնական դրութեան մէջ  
է, այսինքն բուրգ կամ թիւ ներկելու հա-  
մար նրանք դիմում են դարձեալ իրենց ծա-  
նօթ բոյսերին ու քարերին և նրանցից են  
ստանում իրենց հարկաւոր եղած ներկերը:  
Օրինակի համար որքան ես յիշում եմ, կար-  
միրը ներկում են տորօնով, դեղինը իշա-  
կաթնուկ կոչուած վայրի բոյսով կամ դաղ-  
ձով, նարնջագոյնը սոխի կճեպներով, կա-  
պոյտը ուղաբկում են ասիական ներկարանը  
«բոյախանէն», սևը «պուտ» կամ «մանր  
լալա» կոչուող բոյսով կամ «գաճճով», բորբո  
կամ հինայի գոյն ստանում են քնարաքեօզ  
կոչուող չորացած մամուռով և այլն: Եւ այս  
նախնական, ժողովրդական ներկերը ոչ մի-  
այն յիտ չեն մնում գործարանային ներկե-  
րից, այլ և մեծ մասամբ գերազանցում են  
իրենց դիմացկունութեամբ, զարմանալի  
փափուկ և փաղաքշող տոնով: Թիւ ներ-  
կելիս պղնձի մէջ են ձգում նաև սալօրի  
պաստեղ, կալաքար և այլ կողմնակի բաներ,  
աւելի ևս ամրացնելու և երբէք չը խուճա-

նալու համար: Մեր թեղի ներկողները փորձով գիտեն նաև որ կանաչ գոյն ստանալու համար հարկաւոր է դեղինի և կապոյտի խառնուրդը, թելի մանուածքը՝ կաժը նախ ներկում են դեղին և ապա ուղարկում են «բոյախանէն», կարասի մէջ թաթախելու: Կամ եթէ մանիշակագոյն են ուզում ստանալ, կարմիր մանուածքն են ուղարկում կապոյտ ներկելու:

Գոյնագոյն թելերը պատրաստ են, այժմ սկսում է դժուարին կողմը, այսինքն գործուածքը, որի ժամանակ պէտք է ճաշակ ունենալ գոյների ներդաշնակութեան, գոյների միացումի համար:

Որքան ես նկատել եմ և պատահել են ինձ տեսնել մեծ թնուով զանազան զաւառներում տնայնագործական աշխատանքներ, եկել եմ այն ճիշտ համոզումին, որ գործողը, վարպետը կամ վարպետուհին միշտ աչքի առաջ է ունեցել գործուած իրի, առարկայի ինչ նպատակի ծառայելը և այնպէս է դասաւորել գոյները: Օրինակի համար եթէ գործուել է մի գորգ կամ կապերտ յատակին կամ տախտերին փռելու համար, անպատճառ Փօնը վերցրած է լինում սև կամ մի մուգ գոյն, որպէսզի շարունակ ոտքի տակ լինելով և գործածուելով՝ շուտ չը կեղտոտուի, այսինքն անմաքրութիւնը չերևայ: Եթէ պատի խփելու կամ բաժինքի համար է գործուել նոյն առարկան, Փօնը մենք տեսնում ենք շատ վառ գոյներով, կարմիր, նարդճի և այլն: Եթէ յատկապէս վաճառ

հանելու համար է գործում մի գորգ կամ կապերտ, վարպետներն աշխատում են աչք գրաւելու համար, աւելի գոյների բազմադանութիւն առաջ բերել և դարձնել խայտաբղէտ, ինչպէս իրենց նորահարսի շորերը:

Նոյն երևոյթը նկատում է և միւս գործուածքների մէջ. հագնելու իւրաքանչիւր շորին տրւում է իրեն համապատասխանող գոյն:

Իսկ ինչ է նկատում գոյների ներդաշնակութեան գործում: Այստեղ արդէն հանդիպում ենք խիստ բազմատեսակ և շատ անգամ անհասկանալի միացումների և խառնուրդների: Մի տեղ պատահում է մեզ տեսնել մի գործ. գոյների վերին աստիճանի կանոնաւոր, գեղեցիկ, ճաշակաւոր յորինուածքի, համակարգութեան, մինչև իսկ զարմանալի ներդաշնակութեան, որ կարծես խեղճ, ումիկ վարպետը հիմնովին ծանօթ է եղել գոյների տեսութեան թէօրիային, միւս տեղ դրա հակառակ պատահում են այնպիսի գործեր, որոնք իրենց գոյների ողորմելի, միամիտ ու շատ աններդաշնակ դասաւորումով միտ ու շատ աններդաշնակ դասաւորումով նայողի աչքն են ծակում: Այստեղ է որ անհանալի է տնայնագործի, վարպետի կամ վարպետուհու անհատական կարողութիւնը, ճաշակի զարգացումն ու հասկացողութիւնը: Երբեմն լաւ, ընտիր գործի մէջ գոյնի մի սխալ գործածութիւն՝ և անաւամբողջ գործը փչացնում է իր գեղեցկի արժէքը: Օրինակ սև Փօնի վրայ, որը հաւաքում է և միացնում ամբողջացնում բոլոր գոյները և լրաց-

նում գործուածքը իր շրջանակի հետ, յան-  
յարծ հէնց մէջ տեղում գործ է ածուում  
սպիտակ ծաղիկներ, որ դուրս է պրծնում  
սև ֆօսից և կարծես ուղիղ երկո՞ւ կէսի բա-  
ժանում գորգը կամ կապերտը:

Ափսոս որ հնարաւորութիւն չունիմ այս-  
տեղ ցուցադրելու ձեր առաջ այդպիսի գոր-  
ծերի նմուշներ, որ աւելի ակնյայտնի լի-  
նի իմ ասածները, բայց իհարկէ ձեզանից  
իւրաքանչիւրը կարող է այդ նկատել:

Չը մոռանամ ասել, որ դեռ կայ մի ուրիշ  
խայտառակ հանգամանք, որը կատարեալ  
փչացնում է գործը. այդ այն է, որ գործե-  
լու ժամանակ յանկարծ գոյների մէկը կամ  
երկուսը պակասում են. նոր թել են ներ-  
կում, կամ ուղարկում ներկելու և այս ան-  
գամ ներկը քիչ բաց կամ քիչ մուգ է լինում  
առաջինից, կամ նոյն իսկ խունացող ներկ է  
լինում և ի՞նչ է ստացւում, երևակայելը  
գժուար չէ, նոյն նախշի կամ ծաղկի մի կէ-  
սը մի գոյնով, միւս կէսը մի գոյնով:

Այժմ տեսնենք թէ հնարաւոր է որոշել  
ընդհանրապէս հայ գործուածքների գոյները  
մօտիկ արևելքում, այսինքն Պարսկաստա-  
նում, Խիվայում, և Բուխարայի կամ առհա-  
սարակ Միջին-Ասիայի գործուածքների գոյ-  
ներից:

Այս հարևան ժողովուրդները, դարերի  
ընթացքում ապրելով մեծ մասամբ նոյն  
մթնոլորտով, նոյն կեանքով, այնքան խտա-  
ցած են իրենց կուլտուրայով, որ շատ դը-  
ժուար պիտի լինէր որոշակի սահմաններ

դնել իւրաքանչիւր ազգի արտադրած տնայ-  
նագործական աշխատանքների վրայ: Լեզուն,  
որ ազգը պահող, հարևանից տարբերող մի  
զօրեղ ֆակտոր է, չի մնացել առանց ազդե-  
ցութեան, և իր կազմակերպուելու միջոցին  
բազմաթիւ բառեր է ընդունել հարևաննե-  
րից, ո՞ւր մնաց թէ ազատ լինէր ազդեցու-  
թիւնից մի գորգ, մի կապերտ, իրք որ ա-  
ռանց ազգի խտրութեան ընդհանուրի սե-  
փականութիւն է: Այնպէս որ որոնել հայ  
գործուածքների և նրանց գոյների մէջ որն  
է օտարամուտ և որը հարազատ՝ դա ոչ միայն  
դժուար, այլ և ապարդիւն և անհնարին աշ-  
խատանք է. ստիլը, ոճը, այդ դեռ հասկա-  
նալի է, որ իւրաքանչիւր ազգ կարող է իւր  
ոճը, իւր ճաշակն ունենալ: Բայց գոյները չէ՞  
որ ամենքին են: Մնում է մեզ այս միայն  
որոնել թէ ո՞ր գոյնը որ ազգի համար աւե-  
լի սիրելի և շատ գործածական և գոյնե-  
րի ի՞նչ տեսակ շաղկապ և ներդաշնակութիւն  
է սիրել այս կամ այն ժողովուրդը: Սա ան-  
հնար չէ. անհնար չի լինի այն ժամանակ,  
երբ կունենանք մեր առաջ վերոյիշեալ ազ-  
գերից իւրաքանչիւրի գործուածքներից հա-  
րուստ պաշար, կամ գոնէ նմուշների արօժ,  
և կունենանք յատկապէս հայ գիւղերից հայ  
վայրերից հաւաքած գործեր, տեղեկանալով  
միևնոյն ժամանակ թէ ի՞նչ օրինակներից  
են օգտուել նրանցից իւրաքանչիւրը: Սա  
մի այնպիսի գործ է, որ մեծամեծ ծախքերի  
և երկար տարիների աշխատանք է պէտք  
որ անցնի մասնագէտ ստելիստ նկարիչների,

ազգագրագէտների և հնագէտների ձեռքից:

Դերմանիալում սկսել են այդ գործով պարապել. Լայպցիգի մի յայտնի հրատարակչական ֆիրմա լոյս է ընծայել մի շքեղ մեծադիր այլոմ արևելեան հին և նոր գորգերի:

«Orientalische Teppiche» Verlag von Karl Hiersemann in Leipzig. p. 400 M. որ արժէ մեր փողով—մօտ 180 ռ-

Ցանկալի էր մեր Տնայնանագործ. ընկերութիւնը մի օրինակ բերել տար այդ հրատարակութիւնից:

Մենք, հայերս ի հարկէ երազել անգամ չենք կարող այդպիսի հրատարակութիւններ անել, որ տամնեակ հազարների գործ է:

Ինքս, պէտք է ասել, յատկապէս գործուածքներով, գորգեր և կապերտներով կամ նրանց նկարների ու գոյների ուսումնասիրութեամբ չեմ պարապել, այլ ծանօթ լինելով վերոյիշեալ ազգերի նկարչութեան ստիլի և պատմութեան և սիրած գոյներին, նկատել եմ, ինչպէս վերևում էլ ասացի, որ նոյն հանգամանքներն երևում են և գործուածային արւեստի մէջ. օրինակի համար, կանաչ և դեղին գոյների որքան յաճախ և ճոխ գործածութիւնը պարսկական գեղարուեստական գործերում, շատ է պատահում և նրանց կիրպասեղէնի, շալերի և այլ գործուածքների մէջ: Յաղճապակու մութ կապոյտը, որ նրանց կրօնական շէնքերի գծերէն են ծածկում, նոյն կապոյտը անպակաս է և նրանց տնայնագործական համարեա բոլոր գործե-

րում, սկսած մեծ ամանեղէններից մինչև սուրճի փոքրիկ գաւաթները, սկսած գորգերից մինչև ձեռքի թաշկինակը և հացի սըփուոցը:

Քրդական գործուածքները մանաւանդ կապերտներն ու ջեջիֆները, սովոր ենք տեսնել աւելի լայն և շերտաւոր ձևերի նկարով ու գոյներով և այդ գոյների աստիճանական դասաւորութեամբ՝ ինչպէս ծիածանը: Դրա համար Շիրակի ժողովրդի մէջ 100-անոցին փոխարեքական մտքով ասում են «քրդի կարպետ». «Մի քրդի կարպետ մանրացրու»... և այլն:

Ես վերջացնում եմ իմ համեստ գեղուցումը, խնդրելով յարգելի համագումարից աչքի առաջ ունենալ իմ հետևեալ ցանկութիւնները:

ա. Որ առաջարկել Հայոց Տնայնագ. Ընկերութեան ուշադրութեան տոնել գործուածային արուեստ սովորող աշակերտներին վարպետ կամ վարպետուէի կոչուելուց առաջ ծանօթութիւն ձեռք բերեն տեխնիկական նկարչութեան: Մինչև որ ապագայում բացուելիք այդ տիպի դպրոցում կը մտցուի այդ առարկան որպէս պարտադիր առարկայ:

բ. Որ Տնայնագործ. Ընկ. ամարնային ամիսներին մի երկու նկարիչների կամ նկարողների (рисовальщикъ) որոշ գումար յատկացնելով յանձնարարի նրանց դանազան լայօններ ճանապարհորդելով արուեստի վերաբերեալ նկարների նմուշներ հաւաքեն:

գ. Որ Ընկերութիւնը այդ նմուշները ի

մի հաւաքելով յանձնի արուեստին և ոճին տեղեակ անձերից կազմուած մի յանձնաժողովի հաւանութեան և հրատարակի մի այլում:— Այլում առ այժմ ոչ զիտական կամ գեղարուեստական նպատակով, այլ մատչելի գնով ձեռնարկ գաւառներ ուղարկելու համար:

գ. Որ մի շրջաբերական նամակով Ընկերութիւնն զգուշացնէ բոլոր ջուլհականոցներին չաղաւաղել արևելեան ոճը, զիտաւորեալ կերպով չթերից կամ շպալերներից օրինակներ վերցնելով և ազատեն իրենց «եւրոպականացնելուց»:

ե. Գիւղերում և զանազան վայրերում որպէս ներկ գործածուող բոյսերը, արմատները, հողերը և հանքերը ցուցակագրել տան իրենց տեղական անուններով, ուսուերէնով և լատիներէնով և եթէ նրանցից կայ, իւրաքանչիւրը սրտեղ, տարուայ սր եղանակի և ի՞նչ քանակութեամբ է ձեռք բերուում. այդ տեղեկութիւնները նմուշների հետ ներկայացնել ուր հարկն է կուտուրականացնելու: Որպէսզի նոյն ներկերից կարելի լինի փոշի կամ հեղուկ ստանալ և պատրաստի տեղափոխել ամեն մի գաւառ:

զ. Որ ընկերութիւնը անպայման տարին մի անգամ ցուցահանդէս վաճառք սարքի Թիֆլիսում, թէ հայ տնայնագործութեան արդիւնքներ ի ցոյց հանելու և թէ վաճառելու համար: Մի գեղեցիկ գործ որ միանգամից կը ծառայի երկու նպատակի:

## ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏՆԱՅ- ՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Ս. Փափագեանի

(Կարգացուած 5-ին սպրիւի)

Ժամանակը իւր անդիմադիր առաջխաղացութեամբ կատարելագործութիւններ է ծնանում. կատարելագործութիւն գիտութիւնների, կատարելագործութիւն արհեստների, որոնց արտագրութեան աղբիւրներն են գործիքները հնարագիտութիւնները և գիւտերը, և դրանցով է որ կարող կը լինեն վերանորոգուած ծաղկել գիտութիւններ և արհեստներ:

Ես թողնում եմ ինձ անմատչելի եթերները, որովհետեւ իմ մտաւոր թոյլ ուժովը և ոչ մի ուսումնասիրութիւնը չեմ կարող ներկայացնել: Միայն թոյլ եմ տալիս ինձ իմ մասնաւոր ուսումնասիրութեամբ արհեստի վերաբերեալ մի քանի գծեր ներկայացնել ձեզ, պատկառելի Համագումարի անդամներին:

Ինչպէս ամէն արհեստ, նոյնպէս և տնայնագործական արհեստն ունի իւր զանազան հին և նոր ձևերի գործերը և գործիքները: Մինչև այժմս ես տեսել եմ միայն երեք ձևի գործիքներ: Վառում, ուր այդ արհեստը արդէն շատ վաղուց ունի իւր նշանակութիւն

նը, իմ ժամանակ, այսինքն մօտ 23 տարի առաջ, գետնափոր տորքերով գործում էին կտաւ շալերը և այլն: Նոյն ձևով էս այս տարի տեսայ Փամբակի շրջանում Համամլիյում և Ղըլաղում: Այդ տեղում նոյնպէս տեսայ պարզ ձևով, ծառի հաստ անտաշ ձիւղերով պատրաստուած գետներես տորքերը, որ գործ էին ածում շալիղէն, չուխայ գործելու: Համեմատութիւնը գետնափոր և գետներես տորկերի շատ տարբեր են իրարուց առողջապահական տեսակէտով: Թէև նրանց երկու տեսակ տորքերն էլ գործածուած են մի եղանակով, այն է, մաքոյկը ձեռքով ձրգում և վերցնում: Դրանց հետ համեմատելով մեր մայր ջուլհականոցի տորքերը, մեծ տարբերութիւն ենք գտնում թէ գործիքների բաւական կանոնաւորութեան և թէ դիւրացուցիչ գործելու եղանակի վերաբերութեամբ. բայց այդ սխտեմով պատրաստուած տորքերը ամէն տեղի համար յարմար չեն: Թիֆլիսի արհեստանոցում բազմաթիւ փործերից և դիտողութիւններից յետոյ ընդունուած տորքերը ամենայարմարն են: Իհարկէ մենք չենք տեսել թէ Ռուսաստանում կամ Եւրոպայում ինչ տեսակ կատարելագործուած ջուլհակային գործիքներ կան, այդ պատճառով էլ եղածով գոհ ենք, աչքի առաջ ունենալով նահապետական ձևով գործիքների հակաառողջական և սակաւարդիւնաւէտ լինելը:

Թողնենք գործարանները, անցնենք սովորողների բնակարանները: Շատ անգամ պո-

վորող աշակերտուհիներէցս շատերը ինձ հարց են տուել, թէ մենք ի՞նչ պէտք է անենք սովորելուց յետոյ, արդեօք կը բացուեն գործարաններ, որ մենք այնտեղ աշխատենք, թէ պրաքտիք աւելացնելու և թէ նիւթապէս օգտուելու. թէ՞ մենք մեղ համար մեր տներում պիտի գործադրենք այդ արհեստը. ումանք ճարահատեալ համաձայնում են գործարանում ծառայել քան թէ տանը պարապ մնալ: Իսկ մեծագոյն մասը ցանկալի են համարում իրենց սովորածը իրանց տներում գործադրել աւելի յարմար գործիքով, եթէ միայն յաջողուի ունենալ:

Այժմեան աշակերտուհիներէս մէջ դարձեալ ասողներ կան, որ, օրինակ, էս մի սենեակ ունեմ, բայց ուզում եմ որ սովորելուց յետոյ գիտցածս տանս գործադրեմ: Կարելի է ութ-տաս օրով ժամանակ չեմ ունենար գործելու, չնայելով որ գործն արդէն սկսած և բաւական էլ գործած եմ, այդ դէպքում ի՞նչպէս անել, քանդել գործը և գործիքներ մասերի բաժնած դէս դէն դնել մինչև դարձեալ գործի շարունակութիւնը. այդ կերպ գործողութիւնը եռանդը սառեցնում է և սիրտ կտրում գործից: Մենք ուզում ենք նոր ձևի գործիքներ յարմար մեր բնակարանին: Եղիլ են շատ սովորելու ցանկութիւն ունեցողներ, որ դարձեալ այդ միտքն են յայտնել ասելով.— Մենք ջուլհակութիւնը ասում, նոյն իսկ կարից: Բայց վերոյիշեալները գործադրելու համար չունինք այնպիսի

յարմար գործիքներ, ինչպէս է կարի մեքենան:

Բոլոր այդպիսի ցանկութիւն ունեցողներին յուսադրել եմ, որ գուցէ մի ժամանակ կունենաք ձեր ցանկացած յարմար գործիքները, և ճշմարիտ ինչո՞ւ չ'լրացնել նրանց արդարացի պահանջը:

Մենք վերև ասացինք և ապացուցուած փաստ է, որ նոր ժամանակի հետ նոր գիտութիւններ և արհեստներ երևան են գալիս, բայց զանազան միջոցներով. 1) ստացականութեամբ, այն է որ մարդիկ մի այլ անձնաւորութիւնից սովորում են որ և է բան և ապա գործադրում. 2) կան մարդիկ որ, արհեստ կամ գործը մի այլ՝ արդէն պատրաստուած գործից կամ արհեստից սրամտութեամբ ընդօրինակում են. 3) կան անհատներ, որ միևնույն անգամ նկարներից կարող կը լինեն ձևակերպել արհեստներ և նոյն փոկ արհեստները ձևակերպող գործիքները. 4) Ամէնագլխաւորը գիւտն է, օրինակ մի գործ, որ տեսնուած չէ մի երկրի հրապարակում, կամ այնտեղի մարդիկ տեսած կամ լսած չեն այդպէս մի ձևակերպութիւն, մի արհեստ որ և է տեղում: Ուրեմն արհեստները շքեզացնող թագուհին գիւտն է:

Գիւտը, գործողի մտքի և նրա հանճարի ամենանուրբ ծնունդն է, միայն թէ այդպէս մտքերը հազուագիւտ են, գիւտերը իրենց ստեղծողի մտաւոր աշխարհում պատկերանում են, ինչպէս արդէն պատրաստուած առարկաները: Գիւտ անողը շատ էլ չի դը-

ժուարանում նրան լոյս աշխարհ բերել, որովհետև գիւտերի ձևակերպութեան մասին գուցէ չի էլ մտածել: Այլ ձևակերպութիւնները ինքնիրեն գոյանում, այդպէս հազուագիւտ հանճարներից շատերն են կորչում խաւարի մէջ երբէք լոյս չ'տեսած, որովհետև նրանց գնահատութեան մասին ոչ մի միջոց չ'կայ մեզանում:

Մօտ օրերս ես ցանկացայ մի թոուցիկ ուսումնասիրութիւն անել Վանի արհեստգիտական առաջադիմութեան մասին: Մի պարոն տուեց ինձ բաւական հետաքրքիր բացատրութիւններ երկու ոսկերիչների բնական զարգացողութեան վերաբերեալ: Նա ասաց, թէ՛ պարոն Յովհաննէս Պոսոզանջեանց մի գեղեցիկ գործ է պատրաստել, ներկայացնելով բնութեան բոլոր հրաշալիքներով զարդարուած մի տեսարան, չափազանց զրաւիչ և հաճելի նայելու համար:

Անա տեսարանի կազմակերպութիւնը: Դիրքը կրեք արշին լայնութեամբ և նայեալ երկարութեամբ, բարձրութիւնը երկու արշին, ապակիէ շրջանակի մէջ գետեղուած, որի մի կողմը կարողանա ճաշակով մէջ գեղեցիկ տուն և մէջը զարդաշինուած է մի շատ գեղեցիկ տուն և մէջը զարդաւորուած տնական բոլոր շքեղ առարկաներով, սեղան և աթոռներով, գեղեցիկ ճահերով և փուտածքներով. և այլն: Տան տէրը նստած պատշաճութեամբ լրագիր է կարդում, իսկ թոռնիկները նրա շուրջ պատշաճութեամբ վրայ նստած են: Եւսքի շրջակայքը ներկայացնում է ձմեռնային թոռնիկները ցրտից ստուել և թափուել են ուր, ուր թոռնիկները եղանակում գտնուած է ձմեռի մեղմ ծառերի ամբողջ շարք: Եւսքի մի կողմ զարուհ է, ծառերը ծաղկել են և սպիտակ թերթիկները թափուել են գետին, թոռնիկները ծառի վրայ երգում

են, և մի մարդ պառկել է մարդագետնի վրայ և քնել: Երբորդ մասը ներկայացնում է ամառը, պողպատու ծառերը հասուն պտուղներով դարձրուած, մի աղամարդ ծառն է բարձրացել և զգուշութեամբ վար է ձգում հասած պտուղներից և որի դիմաց ներքև կանգնած կինը զոգ քացած ընդունում է: Երևիսնները, արդէն վաղուց հասած և ինքնիրեն թափուած պտուղներն են հաւաքում: Մի այլ կողմ ներկայացնում է աշունը, որ մի լեռ է իւր շրջականներով: Լեռան վրայ վայրենի դադանները և թռչունները: Բուսականութիւնը թրջումը, որտեղը գնացել որս անելու: Լեռան ստորոտում կայ մի լիճ, որի մօտից կամուրջի վրայով կանցնի հովիւր իւր ոչխարներով և տաւարներով: Գիւղացին աշխատանքից արօրով յետ է դառնում, շունն էլ յետեից: Այդ տեսարանի կենտրոնում մի ակաղան կայ, ուր լող են տալիս բազիրը և սողերը: Տեսարանի այս բոլոր իրերը նա շինած է մետաղից և այլ իրերից, շատ հմուտ ձեռքով և բնականին յարմարեցրած:

Անցնենք Վանում գտնուող յայտնի ոսկերչապետ պ. Գէորդ Կոյումզիբաշեանի գիւտի մասին խօսելու, որ աւելի գնահատելի և ուշագրաւ է: Նրա գիւտը արծաթից շինած մի երկրագունդ է և պատուանդանի վրայ յենւած արծաթէ մատուցարանի մէջ:

Մատուցարանի երկարութիւնը 40 սանտիմետր է 27 և 1/2 լայնութեամբ: Միջում փորագրուած է նրկարները, նշանաւոր և յայտնի շինութիւնները և սւււատով գոյն տուած: Մատուցարանի ոտքը կազմուած է արծուի թեւերի կամ առիւծի թաթերի ձեով, որի մէջ երկրագնդի շուրջը փռուած և նստած ձեով՝ դահազան կենդանիների բնական արձանները, օրինակ գալ, եղջերու, սնդեղջիւր, առիւծ և այլն: Երկրագնդի կլորութեան վրայ փորագրուած են հին և նոր աշխարհները, իրենց պատկանող քաղաքներով, որ յայտնի է սեւալի գոյնով գրութեամբ: Հետաքրքրութեան ամենադիւտուր կէտն այն է, թէ ինչպէս բնական

կերպով գունտը իւր առանցքի վրայ կը դառնայ 24 ժամ մի անգամ, և տարին մի անգամ էլ արևի շուրջը: Որպէս զի արևը, լուսին և մոլորակները փայլն և շողողան իրենց բնական շողով թէ գիշեր և թէ ցերեկ, պատրաստուած է ազամանդների կտոր կտոր շարքով: Իսկ լուսինը որպէս զի տարբերուի միւսներից և իւր բնական վիճակն ունենայ, ազամանդները կխալուանի ձեով է շարուած: Մնացած մոլորակները բնական մեծ և փոքր չափով: Երկրագնդի բոլորտիք դասաւորուած է, օրինակ, ամսացոյցները, օրացոյցներ, ժամեր և րոպէներ, որ վարկեան առ վարկեան առանց արգելքի գործում են, նոյնպէս սարքուած է կողմացոյց և ջերմաչափ գնդի բոլորտիքը:

Ահա հաւաքածս տեղեկութիւնները մի քանի նուրբ և գեղագիտական գործերի մասին, որոնց մասին լսել եմ և ուրիշներից: Միթէ այդպիսի լաւ կազմուած տեսարանները, այդպիսի նուրբ և գեղեցիկ գործերը, ուսումնարանական առարկայ դառնալու յարմար չեն: Մանաւանդ այդ երկրագունդը: Միայն պէտք է գնահատել այդպէս աշխատանքները և նրանց հրապարակ դուրս բերել:

Յիշատակելով տաղանդաւոր աշխատանքի արդիւնքների մասին և խոնարհուելով ձեռքի տաղանդի առաջ՝ ես կարծում եմ, որ պէտք է խրախուսուեն նաև այն փոքրիկ ջանքերը, որ կատարուած են արհեստի մէջ: Դրդուած այդ հայեցակէտից, վստահանում եմ դնել յարգելի Համագումարիդ սեղանի վրայ իմ համեստ և պարզ հնարագիտութիւնս, որ կարող է ջուլհակութեան գործում օգտակար լինել: այն է, որ ես ծրագրել եմ օտքի մի այլ ձևակերպութիւնը, որի մասին արդէն շատ վաղուց, անցեալ տարի Ղշլաղ գիւղից գրել

եմ պ. Քալանթարին և խնդրել նրա ուշադրութիւնը: Այնուհետև ուրիշներն ևս ապարէզ հանեցին տօրքերի զանազան ձևակերպութիւններ:

Իմ ծրագրած նոր տօրքը մի պահարան է, տանու հագոճատեղէն պահելու հասարակ պահարանից քիչ աւելի մեծ լայնքով, որը հեշտութեամբ կարելի է տան մէջ պահել. նրա հետ գտել եմ մի քանի գործերի այլ եղանակներ, որոնք բաւական հեշտացնում են գործը: Այդ տօրքով կարելի է գործել բոլոր այն կտորները և նմուշները, ինչ որ գործարանային տօրքերով, ենք գործում: Գտել եմ նոյնպէս մի քանի գործուածքներ և նմուշներ:

Իհարկէ դրանք պարտական եմ լոյս աշխարհ բերել, բայց միայն քաջալերութեան դէպքում: Եթէ տրուի ինձ միջոց և գնահատուի իմ այդ գործը: Դրանով թէ դէպի Հայ Տնայնագործական Ընկերութեան Մայր ջուրկանոցը իմ պարտականութիւնս կատարած կը լինեմ, և թէ վերև յիշատակած ցանկացողների տանու տօրքեր՝ ունենալու պահանջը կը լրացուի:

Ձեմ մոռանալ ասելու նոյնպէս, որ թէև ես ունեմ այլ ձևակերպութիւններ ևս, ինչպէս է թէօրիական տօրք, տանու հենարան, հինակալ և այլն, բայց այդ թողնում եմ ապագայի խնդիրը դարձնելու:

Յուսալով, որ յարգելի Համագումարդ ցոյց կը տայ ինձ իր օժանդակութիւնը և աջակցութիւնը, վերջացնում եմ խօսքս:

## ՊԱՐԲԵՐՍԿԱՆ ՎԱՃԱՌԱՆԱՆԴԵՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Այ. Քալանթարի

(Կարգացուած 5 ապրիլ)

Այն զեկուցումների մէջ, որոնք կարդացուեցին Համագումարում, չը շօշափուեց ծրագրի այն կէտը, որ վերաբերում էր վաճառահանդէսներ կազմակերպելու հարցին:

Վաճառահանդէսը կամ «բազարը» ունի կատարելու որոշ դեր, մանաւանդ սկզբներում, երբ վաճառահանութեան միւս աւելի մշտական և հիմնաւոր եղանակները դեռ չեն մշակուած և իւրացուած:

Մեր զեկուցումների մէջ մենք կանգ առանք պահեստների, թանգարանների և մըլտական բիւրօների հաստատութեան մասին: Եւ մենք պէտք է ամեն ջանք գործ դնենք, որ այդպիսի մշտական վաճառատեղերը շուտով իրականութիւն ստանան մեր կեանքի մէջ և աջակցեն մեր տնայնագործներին իրանց պատրաստած իրերը ձեռնտու պայմաններով վաճառահանելու:

Մանաւանդ չը պէտք է մոռանալ և այն, որ տնայնագործութեան ձիւղերը բազմազան են և նրանց արդիւնքների մէջ կան

այնպիսիները, որոնք իրանց ներկայ դրու-  
թեամբ պահանջուում են սպառողների կող-  
մից, բայց հասնում են վերջիններին ձեռքը  
բազմաթիւ միջնորդների շարքերով անցնե-  
լուց և բաւական թանգանալուց յետոյ:

Թէ նոր արհեստների արդիւնքները շու-  
կայ հանելու և թէ հին տնայնագործու-  
թեան արդիւնքները սպառողների հանդէպ  
դնելու յարմար՝ առաջին քայլերում նպա-  
տակայարմար պէտք է ճանաչուեն պար-  
բերական վաճառահանդէսները՝ տարեկան  
կամ տարին մի քանի անգամ:

Վաճառահանդէսի միջոցով ծանօթացնե-  
լով մեր կերտուածքները հասարակական ա-  
ւելի լայն խաւերին, կը որոշէինք շուկայի  
պահանջներն ու տրամադրութիւնը և հող  
կը պատրաստէինք աւելի ընդարձակ վա-  
ճառահանութիւն կազմակերպելու համար:  
Տնայնագործական իրերի ամենամեծ և լա-  
ւագոյն վաճառանոցը հէնց ինքը գիւղական  
ազգաբնակութիւնը կարող է լինել, որը  
մի տեղում կարգիւնաբերէ մի իր, որը կը  
փոխանակէ ուրիշ տեղերում պատրաստուող  
իրերի հետ: Բայց սպառողների մի որոշ  
թիւ էլ կը լինի քաղաքների ազգաբնակու-  
թեան և աւելի հեռուոր տեղերում ալրող-  
ների մէջ: Թէ այդ փոխանակութիւնը կազ-  
մակերպելու և թէ իրերի մի մասը աւելի հե-  
ռուները վաճառահանելու նպատակով պէտք  
է փորձել կազմակերպել վաճառահանդէսներ գա-  
ւառական որոշ կէտերում և երկրի կենտրո-  
նական վաճառանոցներում:

Եւ իմ գործնական առաջարկն այն է, որ  
հետեւեալ տարի մենք կազմենք մի կամ մի  
քանի տեղերում վաճառահանդէսներ՝ հարթե-  
լու ճանապարհ տնայնագործական արդիւնք-  
ների վաճառահանութեան համար:  
Խնդիր է ծագում, թէ երբ նշանակենք  
վաճառահանդէսը, աշնանը, ձմեռը թէ գար-  
նանը:

Այլքի առաջ ունենալով, որ տնայնագործ-  
ները ամառուայ ընթացքում զբաղուած են  
լինում գիւղատնտեսութեամբ և որ միայն  
աշնանից են սկսում պարապուել տնայնա-  
գործութեամբ և աշխատում են մինչև գա-  
րուն, մինչև նոր երկրագործական աշխա-  
տանքների սկզբնաւորութիւնը, տրամաբա-  
նական է ենթադրել, որ տնայնագործական  
իրերի ամենամեծ հաւաքածուն կը լինի  
գարնանը: Բայց միևնոյն ժամանակ չը  
պէտք է վրիպի տեսութիւնից և այն,  
որ տնայնագործական շատ իրեր հարկա-  
ւոր են սպառողի համար աշնանը կամ  
ձմեռը և ուրեմն անհրաժեշտ է, որ նրանք  
առաջարկուեն սպառողին աւելի վաղ:

Եթէ կարելի լինէր երեք շրջանաժամե-  
րումն էլ նշանակել, անշուշտ դրանով մենք  
բաւարարութիւն տուած կը լինէինք դա-  
նազան տեսակ սպառողների պահանջին:

Բայց առաջին տարուց ձեռնարկել մի  
քանի վաճառահանդէսների՝ կազմակերպու-  
թեան՝ դժուար կը լինի, ուստի նախնական  
փորձի համար պէտք է կանդ առնել առ-  
այժմ մի վաճառահանդէսի վրայ և նրա

տուած արդիւնքից և դասից օգտուել  
հետեւեալների կազմակերպութեան համար:

Պահեստի և մուզէյի հիմնելուց յետոյ  
վաճառահանդէսների կազմակերպութիւնը  
կարող է շարունակուել կամ դադարեցնուել  
նայած հանգամանքներին. բայց սկզբում  
վաճառահանդէսները կը նպաստեն տնայնա-  
գործութեան և այն բանով, որ նրանք կը  
ժողովրդականացնեն զիւղական գործուածք-  
ների և կերտուածքների վաճառահանու-  
թեան և սպառման գործը:

Շատերը ցաւ են յայտնում, որ ներկայ  
Համագումարի ժամանակ չէր յայտարար-  
ուած վաճառահանդէս և որ այստեղ ցուցա-  
դրուած իրերը չեն վաճառուում, մինչդեռ  
պահանջողներ կան:

Մենք ներկայ Համագումարում իրերը ցու-  
ցադրելու ժամանակ բոլորովին ուրիշ հայի-  
ցակէտ ենք ունեցել: Մենք ներկայացրել ենք  
իրերը միայն նրանց ցոյց տալու, միայն դի-  
տելու համար, որպէս զի գաղափար տրուած  
լինի, թէ ինչ են պատրաստում մեր նորա-  
բաց արհեստանոցները, առանց վաճառահա-  
նելու նպատակի: Իսկ փորձի համար նոյն  
իսկ այստեղ Համագումարի ընթացքում մի  
վարպետի ձեռքով պատրաստում էինք և-  
րեսարքիչներ, որը կարող ենք վաճառել  
ցանկացողներին իբրև յիշատակ՝ իւրաքան-  
չիւրը 25-ական կոպէկով: Մենք վերցրինք  
1<sup>1</sup>/<sub>2</sub> Ֆունտ թել և նրանից պատրաստե-  
ցինք 10 հատ երեսարքիչ. հիթէ թելը  
հաշուենք նոյն իսկ 1 ր. 50 կ., իսկ սրբիչը

25 կոպէկից, բոլոր ծախքը դուրս գալով  
կը ստանանք բանուորի վարձատրութիւնը:

Այդպիսի հարցեր դրուած են այժմ ամեն  
տեղ. Գանձակի, Համամուլի և այլ տեղերի  
արհեստանոցներից հարցնում են՝ թէ ինչ-  
պէս կազմակերպել արտահանութիւնը:  
Պէտք է ճանապարհ ցոյց տալ այդ դիմող-  
ներին: Ելքի եղանակներից մէկն էլ այն է,  
որ փորձենք վաճառահանդէս կամել և այն-  
տեղ ներկայացնել մեր պատրաստուած ի-  
րերը:

Եթէ կանգ առնենք ձմեռուայ կիսի, օ-  
րինակ դեկտեմբեր ամսի կամ հետեւեալ  
տարուայ մեծ պասի վրայ և իբրև փորձ  
կազմենք վաճառահանդէս՝ մենք մի քայլ  
առաջ գնացած կը լինենք, նոյն իսկ եթէ  
վաճառահանդէսը չունենայ կատարեալ ա-  
ջողութիւն: Կամ թէ ընդունելով յարուցած  
առաջարկը՝ թողնենք ժամանակի որոշումը  
Տնայնագործութեան Ընկերութեան վար-  
չութեանը, որպէսզի նա խորհրդակցելով  
տնայնագործութեամբ զբաղուող միւս հաս-  
տատութիւնների հետ՝ ընտրի նպատակա-  
յարմար ժամանակ:

# ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԻՍՏԵՐԸ

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

(3 ապրիլի 1909)

Տնայնագործական Համագումարի բացման հանդէսը կատարելուց յետոյ տեղի ունեցաւ անմիջապէս նրա առաջին նիստը:

Համագումարի նախագահ Ալ. Քալանթար նախ քան հերթական խնդիրներին անցնելը՝ առաջարկեց ընտրել մի քարտուղար:

Ընտրուեց Ս. Նսայեան:

Սկսուեցին պարապմունքները: Առաջին զեկուցումը կարդաց Ալ. Քալանթարը «Տնայնագործութեան հիմնական խնդիրների մասին» (տես երես 33-66), որի եզրակացութիւնները զեկուցանողը հարկ համարեց կրկնել նաև ուսերէն լեզուով՝ մատչելի դարձնելու համար բոլոր ժողովականներին:

Այդ եզրակացութիւնները զետեղուած են ներկայ գրքի 63-66 երեսներում:

Համագումարին մասնակցողներից առաջինը խօսք խնդրեց Յ. Փիրալեան: Նանկատեց, որ իւրաքանչիւր արհեստանոցի համար կառավարութիւնից 200 բուրլի նպաստ խընդ-

րելը շատ քիչ է: Աւելի նպատակայարմար կը լինէր ու արդարացի արհեստանոցի նախահաշուի գոնէ կէսը վերապահել կառավարութեանը, որովհետև պէտք է աւելացնել նիւթը և վարպետների ուժիկը: Ապա շօշափելով ինստրուկտորների խնդիրը՝ գտնում է նրան ամենից կարևորը տնայնագործութեան համար, ուստի անհրաժեշտ է համարում միջնորդութիւն յարուցանել կառավարութեան առջ, որպէսզի կովկասում բացուի ինստրուկտորական դպրոց կանանց ու տղամարդկանց բաժանմունքներով, համաձայն իրանց պարապմունքների:

Նախագահ Ա. Քալանթար. — Միանգամայն արդարացի եմ գտնում պ. Փիրալեանի առաջին նկատողութիւնը, որ կառավարութիւնը իր վրայ առնի արհեստանոցների առաջին և երկրորդ տարիների ծախքերի կէսը, և դրանով հնարաւորութիւն տայ գիւղացիներին հէնց սկզբից և եթ առաջ տանելու գործը առանց ծանրաբեռնուելու:

Տիկ. Ն. Ղամբարեան. — Ո՞րտեղ պէտք է բացուի կենտրոնական դպրոցը:

Նախագահ. — Իմ առաջարկը երեք շրջանի մասին է միայն. այսինքն՝ բանալ դպրոցներ առաջինը Ղարաքիլիսայում կամ Համամլում, երկրորդը Յիւրիվալում և երրորդը Գանձակում կամ Շուշում: Նրանք պէտք է պահուեն պետական կամ գեմատվային հաշուով:

Գ. Առնեան. — Ես կուզէի իմանալ թէ ձեր զեկուցման վերջում առաջ չբերուած թեզիսները լինչպէս են դասաւորուած, ըստ անհրա-

ժեշտութեան, թէ՛ որ և է այլ սխտեմով: Եթէ ըստ անհրաժեշտութեան, այն ժամանակ նկարների և օրինակների վերաբերեալ կէտին ես առաջնակարգ տեղ կը տայի: Մի-և նոյն ժամանակ ես կառաջարկէի հրատարակել առանձին ձեռնարկ կամ արժօմ-ժողովածու այդ նկարների: Ուստի այդ նպատակով վատ չէր լինի յանձնարարել մէկին, որպէսզի նա ամառը գնայ շրջագայելու, ուսումնասիրելու նկարների ոճը և հաւաքելու օրինակներ:

Տ. Ն. Ղամբարեան.—Առանց այդ էլ պ. Քալանթարի գեկուցման մէջ կարևոր տեղ է տրուում նկարներին, ոճին: Ինչ վերաբերում է պ. Լևոնեանի առաջարկին ոճի ուսումնասիրութեան մասին, ես համամիտ եմ, այն տարբերութեամբ միայն, որ այդ աշխատանքը յանձնուի կատարելու ոչ թէ մէկին, այլ մի քանիսին, գուցէ զրա համար յատուկ մասնաժողով կամ կոնկուրս նշանակելով:

Յ. Փիրալեան.—Այլ օմի հրատարակումը ես համարում եմ վաղաժամ, դա կարելի էր անել յետոյ էլ: Իմ կարծիքով, աւելի անհրաժեշտ է օրինակների նմուշներ, օրնամենտների նկարներ և համապատասխան նիւթեր հաւաքելը, որպէսզի նրանց հիման վրայ յետագայում կարելի լինի ուսումնասիրել ոճը և թոյլ չը տալ նրանց անյայտանալու:

Գ. Լևոնեան.—Ճշմարիտ է պ. Փիրալեանի նկատողութիւնը: Բայց միթէ չէ՞ կարելի նիւթեր հաւաքել, որոնք կարող են կորչել և որոնցով միայն կարելի է ուսումնասիրել ոճը:

Թեր և դէմ՝ առարկութիւնները լսելուց յետոյ Համագումարը ընդունում է, որ պէտք է նիւթեր հաւաքել ոճը մշակելու համար:

Պ. Ղարախանեան.—Ես կը շօշափեմ ինտրուկտօր՝ հրահանգիչներին՝ դպրոց բանալու խնդիրը: Որովհետև կառավարութեան դրպրոցի բացումը կարող է ձգձգուել, ուշ բացուել կամ բոլորովին չը բացուել, ուստի ես աւելի նպատակայարմար եմ գտնում այժմից իսկ կազմակերպել գործը, միջոցներ ձեռք առնել և ժարդիկ ուղարկել Ռուսաստան կամ արտասահման կատարելագործուելու այդ արհեստում, որոնք ապա վերադառնալով շատ օգտակար կարող էին հանդիսանալ:

Ա. Քալանթար.—Այդպիսի մի փորձ արդէն արուած է: Հայ Տնայնագործական Ընկերութեան արհեստանոցի մէջ սովորած աշակերտուհիներից մէկը՝ տիկին Բրօյեան Տնայնագործական Կոմիտէտի միջոցով ուղարկուած է Սօսնեվիցի կատարելագործուելու:

Շիրինեան.—Ինձ համար անհասկանալի է թուում, թէ ինչպէս կարող է օգտակար լինել տնայնագործութիւնը, քանի որ շուկայում գործարանական արտադրութիւնը սկսել է մրցել նրա հետ իր էթանութեամբ, դուրս է վանում և մեղցնում նրան: Հարկաւոր էր պարզել թէ ինչքան ձեռնաու է տնայնագործութիւնը գիւղացիներին: Զեկուցանողը այդ կէտը չէ քննում, ուստի ես կը խնդրէի բացատրել:

Ա Քալանժար.— Իմ զեկուցման մէջ ես յառեկապէս կանգ առայ հէնց սկզբից այդ կէտի վրայ: Տնայնագործութեան այս ու այն ճիւղի տնտեսական արժէքը հարկաւոր է պարզել, ուսումնասիրել, որովհետեւ մի քանի տեղերում մանր արհեստը սկսում է ոչնչանալ, տեղի տալ խոշոր արդիւնաբերութեանը: Չը նայելով դրան, եւրոպական մի քանի երկիրներում, ինչպէս Շվեդիայում, Գերմանիայում, Աւստրիայում, Շվեյցարիայում և նոյն իսկ այնպիսի խոշոր արդիւնաբերական երկրում, ինչպէս Բելգիան է, դեռ պահպանւում են տնայնագործութեան զանազան ճիւղերը: Դա կարևոր հանգամանք է, որը չը պէտք է վրիպի քննադատողների ուշադրութիւնից, երբ նրանք խօսում են տնայնագործութեան անմիջական ջնջման մասին: Համեմատական ուսումնասիրութեամբ կարելի է միայն որոշել և պարզել նրանց արժանաւորութիւնը և գոյութեան իրաւունքը: Իմ զեկուցման թեզիսներին առաջին կէտերից մէկը վերաբերում է հէնց այդ խնդրին:

Շիրինեան.— Ուրեմն աւելի լաւ չէր լինի՞ նախ այդ խնդիրը ուսումնասիրել և ապա միայն գործի դիմել. որովհետեւ մենք արդէն տեսնում ենք, որ տնայնագործութեան արհեստը կուլտուրայէս աւելի բարձր երկիրներում, ինչպէս Եւրոպայում, մեռած է արդէն և, ընդհակառակը, նա զարգացած է ցածր կուլտուրայի վրայ կանգնած, յետամնաց ազգերի մէջ: Դա ցոյց է տալիս, որ

տնայնագործութիւնը անպայ չունի: Նա դատապարտուած է մեռնելու:

Յ. Փիրալեան.— Այստեղ ասացին, որ տնայնագործութիւնը մեռած է: Դա չարաչար սխալ է. այդ կեանքը ինքն է հերքում: Նախ պէտք է նկատեմ, որ կուլտուրական արտասահմանում տնայնագործութիւնը ամենևին չէ ոչնչացել. Անգլիայում, Շուտլանդիայում, Սկանդինաւիայում, Բելգիայում, Դանիայում նա դեռ ևս բարձր է գնահատուում և պահպանում է իր գոյութիւնը գործարանների մրցութեան հանդէպ: Բայց թողնենք այդ և վերադառնանք մեր իրականութեանը, Բնչպիսի կացութեան մէջ է մեր գիւղացին. գիւղերում աշխատող ձեռքեր շատ կան. նրանք մեծ քանակութեամբ տարածւում են քաղաքները, գլխաւորապէս Բագուն, կրում են զրկանքներ, կատարում են չարքաշ աշխատանքներ, շատ անգամ պտտում են անխատանքներ, շատ անգամ պտտում են անգործ: Նրանք, իհարկէ, ուրախ կը լինէին մնալ իրանց գիւղում, ստանալ չնչին օրավարձ, միայն թէ ապրելու հնարաւորութիւն ունենային, բայց, դժբաղդաբար, չը կան գործարաններ և արհեստանոցներ գիւղական շրջաններում, որտեղ նրանք աշխատանքի գնային և իրանց ապրուստը հոգային: Ահա մեր ներկայ կեանքի այդ անտանելի պայմաններում արհեստների տարածումը գիւղերում պէտք է լինի մեր առաջնակարգ հոգսերից մէկը: Տնայնագործութիւնը ձեռնտու է գիւղացուն, որովհետեւ նա հնարաւորութիւն կը տայ աշխատաւորին օրական թէկուզ 30

կոպէկ վաստակ ստանալու: Այդ հանգամանքը դրդում է մեզ գերադասութիւն տալ տնայնագործութեան արհեստին և զարկ տալ նրա զարգացմանը:

Ե. Արիստակէսեան.— Ես կարծում եմ, որ շրջանային դպրոցներից դուրս դպրոց պէտք է բանալ նաև Թիֆլիսում: Կենտրոնական դպրոցը կը նպաստէր գործի կատարելագործմանը, տալով ինստրուկտորներ, կը ստեղծէր գիւղացիների համար հասարակ ձևի գործիքներ և այլն: Պէտք է ուշադրութեան առնել, որ մեր ներկայ վարպետները համարեա անհմուտ են, դպրոցը առիթ կը տար նրանց հմտանալու, կատարելագործուելու: Այստեղ ձառախօսներից մէկը խաչ քաշեց տնայնագործութեան վրայ: Ապացոյց, որ այդ շատ թիւը կարծիք է, ես օրինակ կը բերեմ Թիւրքիան, ուր մինչև այսօր էլ մանուածքներն ու մետաքսէ գործուածքները կարողանում են մրցել առանց մաքսավճարի ներմուծուող եւրոպական ապրանքների հետ: Թւում է ինձ, որ Կովկասում ևս տնայնագործութեան դեռ շատ ձիւղերը կարող էին դիմանալ գործարանական մրցութեան, եթէ միայն լուծուէր մանարանների խնդիրը, դրանով գործը կը դիւրանար և ջուլհակութեան արհեստը արագ կերպով կը տարածուէր: Գիւղացիներին առ այժմ պէտք աշխատել տալ ուրեմն այն՝ ինչ որ հնարաւոր է. այնուհետև կեանքը ինքը կառաջադրի իր պահանջները և ուղղութիւն կը տայ նրան:

Ս. Արովեան:— Այն խնդիրը, որ շօշափուում է այստեղ, շատ լուրջ է և անկարելի է նըրան անուշադիր թողնել: Տնայնագործութիւնը հետզհետէ ընկնում է կուլտուրական երկիրներում, նոյնը պէտք է լինի ժամանակի ընթացքում նաև Կովկասում: Սակայն նախ քան ընկնելը, նա պէտք է զարգանայ, ծաղկի, մինչդեռ արդիւնաբերական գործարարական կեանքը Կովկասում քանի որ գտնուում է դեռ ևս սաղմային դրութեան մէջ, տնայնագործութիւնը, արհեստները պէտք է իշխէին վերջինում: Ահա այդ հանգամանքը առիթ է տալիս մեզ կարծելու, որ անհրաժեշտ է տարածել արհեստները, զարկ տալ տնայնագործութեան այն ձիւղերին, որոնք արժանի են աջակցութեան, կարող են երկար կեանք ունենալ, և կամ կարող են զարգացնել ժողովրդի ճաշակը:

Լ. Զարաֆեան.— Այստեղ խօսեցին Թիֆլիսում դպրոց բանալու մասին, բայց քանի որ այդ դպրոցի նպատակն է ծառայել գիւղական ազգաբնակչութեանը, արհեստի գիւղերում ծառայելուն, ուստի ցանկալի է, որ դպրոցն էլ լինի գիւղական շրջանում: Հայ Տնայնագործական Ընկերութիւնը, օրինակ, Թիֆլիսում բաց արեց իր արհեստանոցը, բայց պ. Քալանթարի խորհրդով նա տեղափոխուեց գիւղերը, ուր այդ գործը իսկոյն կենսունակութիւն ստացաւ: Եւ առհասարակ տնայնագործութեան տեղը գիւղն է: Քաղաքում նա ապրել չէր կարող: Գիւղերում առ այժմ իբրև նոր սկսուած մի գործ,

թէ և նա տալիս է դեռ կոպիտ արտադրութիւններ, բայց և այնպէս նրանք դիմացկուն են և, իհարկէ, ապագայում աւելի ևս կը կատարելագործուեն:

Պետրոսեան. — Խօսող չլալարոններից երկուսը շատ ճիշտ նկատեցին, որ կուլտուրական զարգացման հետ անխուսափելիօրէն ընկնում է տնայնագործութիւնը: Այստեղ օրինակ բերեցին Տաճկաստանը, ուր իբրև թէ մինչև այսօր էլ տնայնագործութիւնը մնում է գերազանցող գործարանականի հանդէպ: Չը գիտեմ որքան ճիշտ է այդ: Բայց ես կը բերեմ դրա հակառակ մի այլ երկիր՝ Պարսկաստանը: Դեռ ևս 60-ական թուականներին Սալմաստը ներկայացնում էր մի գործարանական Բալախանի իր գորգագործութեամբ, նոյնը և Թաւրիզը: Սակայն նրանցից այսօր միայն բեկորներ են մնում: Սալմաստում գորգագործութիւնը ոչնչացել է, իսկ Թաւրիզում մնում է միայն մի հատիկ գործարան: Այն հսկայական արտագաղթը, որ վերջին տարիներս սկսուած է Սալմաստում, տնայնագործութեան, գորգագործութեան անկման շնորհիւն է: Այդ բոլորը տեսնելով, իզուր է ջանք գործ դնել վերակենդանելու այդ մեռնող ճիւղը: Խօսեցին այստեղ նաև տնայնագործական դպրոցներ ու արհեստանոցներ բանալու մասին. իր ներկայ կրթական դպրոցները չը պահող ժողովուրդը հազիւ թէ պահի այդ տեսակ արհեստանոցները: Իսկ կառավարութեան օգնութեան դիմելը անօգուտ է. քանի որ մի շարք այդ տեսակ

դիմուհները, ինչպէս՝ ոռոգման, մասնագիտական կրթութեան և այլ խնդիրներումնա մինչև այժմ շատ դանդաղ է շարժուել: Գալով պ. Փիրալիանի ասածներին թէ գիւղում պարապ ձեռքեր շատ կան, գլխաւորապէս կանայք, պէտք է առարկեմ, որ գիւղացի կանայք երբէք պարապ չեն լինում. տարին բոլոր ծանրաբեռնուած են ու տնայնագործական աշխատանքի կարօտութիւն չունեն: Աւելի լաւ է արհեստները զարգացնելու համար տնայնագործութիւնը աւանդել գիւղական դպրոցներում:

Նախ. Ա. Քալանթար. — Ես մեր երկրի կեանքից շատ օրինակներ կը բերէի ցոյց տալու թէ լրացուցիչ աշխատանքի պահանջը ամենեւին այնպէս փոքր և չնչին չէ, ինչպէս ճշգրտում է ընդգծել վերջին ճառախօսը: Վերցնենք մեզ մօտիկ շրջաններից Արագածի շուրջը դետեղուած վերին գիւղերը և ամբողջ Աբարանալը, այն շրջանը, ուր գտնուում են Աղղուլա, Քեշիշքեանդ, Մնջուխու, Հաջիխալի, Գեօզալգարա, Դանագիրմազ, Մելիքքեանդ, Արսղազիրման, Փամբ, Խանվալի և մօտակայ բնակութիւնները: Վերցնենք նոյնատեսակ մի շրջան սկսած Աղղուլա գիւղից մինչև Ախալքալաքի գաւառի սահմանները, ուր գտնուում են Բօգեօխու, Դիւզքեհանդ և ուրիշ գիւղեր: Նոյնպիսի շրջաններ կան և Գեղարքունիքում և Ջաւախքում և Սիւնիքում և Ղափանում: Այդ բոլոր տեղերում շատ կարճ է ամառը և երկրագործական պարապմունքների ժամանակամիջոցը, ընդամենը մի

չորս կամ հինգ ամիս, փնացած ամիսներում գիւղացու ձեռքերը պարապ են և աշխատանք են որոնում: Ահա այդ աշխատանքի աղբիւրները աւելացնելու ինդիւրն է, որ բուրբուրին փոխում է նախորդ ճառախօսի եզրակացութիւնը: Ես բազմաթիւ դէպքեր եմ ունեցել խօսելու զիւղա՛կան ժողովրդի հետ և գիտեմ, որ եթէ իսկապէս մեղ աջողուէր ձեռնտու արհեստներ տալ նրա ձեռքը, մինք որոշ չափով նպաստած կը լինէինք նրա տնտեսական բարգաւաճմանը:

**Իշխանուհի Մ. Մ. Թումանեան.**—Այստեղ ումանք ասացին, որ տնայնագործութիւնը մեռնում է, բայց հէնց այդ պատճառով էլ պէտք է աշխատել կենդանութիւն տալ նրան, մանաւանդ որ ժողովուրդի շահերն են այդ պահանջում:

**Յ. Արիստակէսեան.**—Ճառախօս Պետրոսեանը ասաց, որ Սալմաստի արտագաղթը գորգագործութեան անկման արդիւնքն է: Ես ապրելով Պարսկաստանում, մօտիկ ծանօթ եմ Սալմաստի դրութեանը և պէտք է առարկեմ, որ, ընդհակառակը, արտագաղթի վարակիչ դարձած շարժումն է, որ խիղզում է և վայր գցում թէ տեղական գիւղատնտեսութիւնը և թէ տնայնագործութիւնը:

**Յ. Շապտինգեան.**—Այն գործուածքները, պիկէյները և այլն, որոնք պատրաստուած են մեզանում՝ Փամբակում, դեռ չեն վարձատրում աշխատողներին: Տնայնագործական ընկերութիւնը առ այժմ պէտք է ուշք դարձնէ ոչ թէ բամբակէ, այլ բրդէ գոր-

ծուածքների վրայ. որովհետև մեր գիւղացիների համար նա է շահաւէտ:

**Նախագահ Ալ. Քալանթար.**—Այս, պէտք է զարգացնել բրդեղէն գործուածքների պատրաստութիւնը և ես յատուկ զեկուցում ունիմ այդ մասին անելու Համագումարին: Արհեստի իւրացման տեսակէտով, կրթական նպատակներով մեր արհեստանոցներում մինչև այժմ մեծ տեղ են բռնել բամբակեղէն գործուածքները: Բայց այն՝ ինչ որ սովորում է աշակերտը, յետոյ մի քանի լրացուցիչ դասերով գործադրում է բրդագործութեան մէջ: Եւ մինք մտցրել ենք և մտցնում ենք բրդէ գործուածքներ: Միևնոյն ժամանակ ուշադրութիւն պէտք է դարձնենք և մետաքսեղէնների վրայ: Երբ բրդէ ձանարաններ կը բացուեն և մենք հնարաւորութիւն կունենանք աւելի էժան գնով թելեր ձեռք բերել, բրդէ գործուածքներ շատ կարող ենք պատրաստել և վաճառքի հանել շահելու նպատակով:

**Մ. Աղաբաբեան.**—Ես կառաջարկէի, որ Տնայնագործական Ընկերութեան վարչութիւնը խոստացուած ձեռնարկները շուտափոյթ հրատարակէ: Բացի դրանից ջուլհակութեան հետ միասին անհրաժեշտ է մտցնել նաև գորգագործութիւնը, կողովագործութիւնը, բրուտային աշխատանքները կային:

**Ա. Քալանթար** յայտնում է, որ մի ձեռնարկ արդէն պատրաստ է և պէտք է լոյս տեսնէր մինչև այս Համագումարը, բայց

վիճատ վարանքն չը կարողացաւ իւր խոստումը կատարել:

Համագումարը վերջում ընդունում է կեկոնցանոց Ա. Քալանթարի առաջադրած բոլոր թեզիսները, թողնելով դպրոցի խնդիրը յետագայ նիստում քննելու:

Նախագահ Ա. Քալանթար ժամը 2 1/2-ին յայտարարեց նիստը փակուած, և հրաւիրեց ժողովականներին յաջորդ նիստին, նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, Համագումարի պարավունքները շարունակելու համար:



## ՆՈՍ ԵՐԿՐՈՐԴ

Ապրիլի 3-ին, երեկոյեան ժամը 7-ին.

Նախագահում էր Ալ. Քալանթար: Ներկայ էին Համագումարի բոլոր անդամները: Դահլիճը լի էր երկսեռ հանդիսականներով:

Բանալով Համագումարի երկրորդ նիստը, նախագահ Ալ. Քալանթար մատնանշեց, որ այդ երեկոյեան զբաղմունքները լինելու են, գլխաւորապէս, գորգագործութեան վերաբերեալ խնդիրների մասին: Այդ առիթով Համագումարում կարգացուելու են մի քանի զեկոնցումներ՝ ուսուցիչ Ա. Փարեմուզեանի զեկոնցումը գորգագործութեան մասին, Ե. Խարազեանի զեկոնցումը գորգագործութեան շահաւէտութեան աստիճանի մասին, իր Ալ. Քալանթարինը՝ պարսկական գորգագործութեան մասին, իշխանուհի Մ. Մ. Թումանեան գորգագործութեան կենտրոնական դպրոցի մասին:

Նախագահ Ալ. Քալանթար կարդում է նախ Փարեմուզեանի զեկոնցումը (տես երես 67—71), ուր նա մեծ պաշտպան է հանդիսանում գորգագործութեան, գերադասելով նրան տնայնագործութեան միւս ճիւղերից և յետոյ Ե. Խարազեանի զեկոնցումը գորգագործութեան շահաւէտութեան աստիճանի մասին (տես երես 72—75):

Նրանից յետոյ պ. Ալ. Քալանթար Համագումարին զեկուցանում է Պարսկաստանի գորգագործութեան մասին (տես երես 76—80) իր ժողոված տեղեկութիւնները, որոնք ցոյց են տալիս, որ գորգագործութիւնը այնտեղ դեռ չէ ենթարկուել մեծ փոփոխութիւնների և շարունակ առաջ է ընթանում իր աւանդական եղանակով:

Կարդացում է և Ե. Խարազեանի զեկուցումը Ուզունլար գիւղի գորգագործութեան արհեստի մասին մի քանի հետաքրքրական հաշիւներով աշխատանքի գնահատութեան և արհեստի շահաւէտութեան աստիճանի վերաբերութեամբ (տես երես 72—75)

Ապա իշխանուհի Մ. Մ. Թումանեան կարդում է իր զեկուցումը Թիֆլիսում կենտրոնական գորգագործական դպրոց բանալու մասին (տես երես 81—88):

Նախագահ Ալ. Քալանթար նկատում է, որ առաջին երեք զեկուցումները յատուկ առաջարկներ ու վիճելի կէտեր չէին պարունակում իրանց մէջ, իշխանուհի Թումանեանի զեկուցումը պարունակում է մի դժբախտ որոշ առաջարկ, որի նկատմամբ Համագումարը իր վերաբերմունքը պէտք է ցոյց տայ: Ընդունել թէ յատուկ մասնաժողով ընտրել և խնդիրը յանձնել նրա եզրակացութեան:

Օր. Ս. Եկմալեան: — Գորգագործութեան դպրոց ունենալը, ի հարկէ, կարևոր է: Իմ կարծիքով սակայն անընդունելի են թուում մի քանի կէտեր: Իշ. Թումանեանի առա-

ջարկած ծրագրով այդ դպրոցը ունենալու է երկու տարուայ դասընթաց, ուր ընդունուելու են աշակերտուհիները 10 տարեկանից սկսած: Այդպիսով այնտեղից դուրս եկող վարժուհիները պէտք է լինեն 12 տարեկան: Դա անկարելի է: Բացի դրանից երբ այդ դպրոցը կոչուած պէտք է լինի ծառայելու գիւղին, ուրեմն էլ ինչ միտք ունի բանալ նրան Թիֆլիսում: Պէտք է բանալ գիւղական շրջաններում: Այդ դպրոցում հարկաւոր է ընդունել որոշ վրասական պատրաստութիւն ունեցող ինտելիգենտ անձինք ոչ պակաս 15 տարեկանից: Մի ուրիշ նկատողութիւն ևս, որը վերաբերում է գորգագործութեան տեխնիքային զեկուցանողը ասաց, որ գլխաւոր բանը հէնքն է: Իսկ ես կարծում եմ, որ գլխաւորը փորձունքն է, միջնաթելը: Օգտուելով առիթից ես առաջարկում եմ բարեփոխութիւններ մտցնել գործիքների մէջ, օրինակ՝ մտցնել սանդր: Եզրափակում եմ ասելիքս, որ դպրոցը պէտք չէ բանալ Թիֆլիսում, ուր աշակերտուհիներ գիւղերից չենք ունենալ:

Յ. Փիրալեան. — Բոլորն էլ ընդունում են, որ կենտրոնական քաղաքում լինի մի մարմին ընդհանուր գործերը ղեկավարելու համար: Բայց դպրոցի խնդրում տարածայնութիւններ են ծագում, որովհետեւ շփոթում են իրար հետ երեք նպատակ. 1) ինստրուկտորներ պատրաստելու ցանկուծութիւնը, 2) ոճի և գեղարուեստական մօտի-



են վարպետ պատրաստող դպրոցներ մի քանի շրջաններում: Այդ էր պատճառը, որ ես էլ անցեալ նիստում առաջարկեցի բանալ այդպիսի դպրոցներ Փամբակի շրջանում, Գանձակի կամ Շուշու շրջանում և Յիսինվալում: Երբ մենք պարզած և որոշած կը լինենք տեղը և մեր պահանջները, աւելի հեշտ կը լինի խնդրի լուծումը:

Յ. Փիրալեան.—Աւելի լաւ կը լինէր ինստրուկտորական դպրոցի հարցը վերցնել հերթականից: Պէտք է նկատել, որ 1905 թուականին մի յատուկ պաշտօնական մասնաժողով, որին մասնակցում էի և ես, որոշեց թիֆլիսում բանալ տնայնագործական ինստրուկտորական դպրոց 19,000 ըուբլի նախահաշուով: Այդ խնդիրը արդէն ընդունուել է Պետական Դումայում և յոյս կայ որ մօտիկ ապագայում կը բացուի: Եթէ այժմ մենք այստեղ արտայայտենք նրա անհրաժեշտութիւնը, այդքանն էլ բաւական է: Իսկ մինչ այդ՝ մենք շարունակենք մեր ոյժերով վարպետներ ու բանուորներ պատրաստել ու տնայնագործութեան արհեստները տարածել գիւղերում:

Նախագահ Ալ. Քալանժար.—Ինստրուկտորական կազմ ունենալը շատ կարեւոր է, և Համագումարը անշուշտ հաւանութիւն էլ կը տայ այդ տիպի դպրոցին, եթէ իրագործելը դժուարութիւններ չը հանդիպէր նիւթականի կողմից: Բայց ինչպէս էլ վըճուուելու լինի այդ հարցը, դարձեալ աւելի մեծ այժմէութիւն է պահպանում միւս հարցը,

այն է ունենալ հասարակ վարպետներ պատրաստող դպրոցներ, գորգագործութեան, բամբակագործութեան, ծղնօտագործութեան, կողովպարծութեան ձիւղերի համար: Գուցէ Համագումարը աւելի նպատակայարմար կը գտնէ ունենալ հէնց այդ տեսակ երեք դպրոցներ, իսկ թիֆլիսում ունենալ միայն կամ մի ղեկավար կօմիտէտ:

Յ. Փիրալեան.—Ոճի ուսումնասիրութիւնը պէտք է կատարուի կենտրոնում, անպայման թիֆլիսում, իսկ փորձառու վարպետներ և բանուորներ տալը՝ տեղիւրում: Հարկաւոր է կենտրոնական թիֆլիսում հիմնել բիւրօ ոճի և գեղարուեստի մըշակութեան համար ու առանձին էլ գլխաւոր ղեկավար մարմին: Ուսուցման գործը յանձնել ինստրուկտորներին իրանց տեղերում՝ գիւղերում աւանդելու:

Յ. Արիստակէսեան.—Անհրաժեշտ է մի դպրոց ունենալ թիֆլիսում, ուր և գործիքները կը պատրաստեն: Այստեղ առարկում էին, որ գիւղերից աղջկերք չեն գալիս: Բայց մենք կարող ենք որբերին բերել: Փորձը ցոյց տուեց, որ վարպետներ ուղարկում ենք գիւղերը, պատրաստի գործիքներ չկան, չըկան էլ հմուտ պատրաստողներ, իսկ իրանք վարպետներն էլ ծանօթ չեն գործիքների պատրաստութեան հետ և ահա դժուարութիւններ են առաջ գալիս, գործը դանդաղում է:

Նախագահ Ալ. Քալանժար.—Որպէսզի անորոշ և խառն վիճաբանութեան մէջ չընկնենք

ու գործնական քայլ արած լինենք, ընտրենք մի մասնաժողով, որը ուշադրութեան արժան էր և ուրիշ նկատողութիւններ ու խորհրդածութիւններ, որովհետև միւս բոլոր զեկուցումներն մէջ էլ շօշափուում է դպրոցի խնդիրը, և յանձնենք նրան քննելու՝ թէ ի՞նչ աիպի և սրտեղ յարմար է բանալ դպրոցները: Ապա նրա եղբակացութիւնը լսելով, վերջին նիստում մենք կարող կը լինենք զբաղուել այդ խնդրով ու լուծումն տալ նրան: Մասնաժողովը կարող էր աւելի լուրջ կերպով զբաղուել:

Համագումարը այդ մասնաժողովի համար ընտրում է իշխանուհի Մ. Մ. Թումանյանին, օր. Ս. Եքմալեանին, Յ. Փիրալեանին և Ի. Քութաթեալեանին:

Ե. Լալայեան. — Ինձ համար ցանկալի է, որ Համագումարը ղեկի աւելի գործնական միջոցի: Ոճի ուսումնասիրութիւնը պէտք է թողնել տնայնագործական ու ազգագրական ընկերութեան: Առհասարակ դիտական դերը վերաբերում է այդ գործին նուիրուած ընկերութիւններին: Իմ կարծիքով, աւելի լաւ է ամեն մի գաւառ ինքը ասէ, թէ ինչ է հարկաւոր իրան և ըստ այնմ էլ հիմնէ դպրոցին կից իր ցանկացած ճիւղերը: Այդ պատճառով մենք հիմք չէինք ունենայ մի կենտրոնական դպրոց հիմնել, ինստրուկտորներ պատրաստել:

Դ. Կապանցի Ալ. Քալանթար. — Մենք արդէն ընտրեցինք մասնաժողով, որը և զբաղուե-

լու է այդ խնդրով. ուստի այլ ևս չը ծանրանանք դպրոցական հարցի վրայ:

Յ. Գնչեան. — Պ. Լալայեանի այն ասածի առիթով թէ ամեն մի գաւառի ցանկացած ճիւղը հիմնել դպրոցին կից, պէտք է նկատեմ, որ դա կը լինի դիւլետանութիւն: Մեր դպրոցները մինչև այժմ էլ զիտական լուրջ հիմունքների վրայ զրուած չեն: Արհեստների մէջ էլ կարելի է մտցնել գեղարուեստ, գիտութիւն: Ես նկատում եմ, որ պահանջ կայ մի ընդհանուր դպրոցի, որտեղ պատրաստուէին կուլտուրական ուսուցիչներ: Ես առաջարկում եմ ունենալ մի տեխնոլոգիական ինստրուկտոր, և եթէ հիմնուած կը լինի Թիֆլիսում մի կենտրոնական դպրոց, ընդունել այնտեղ ուսանելու եթէ կարելի է ցենզաւոր ուսուցիչներ:

Ե. Լալայեան. — Իմ խօսքը գործնականի մասին է, որպէսզի շուտով օգնութեան հասնենք մեր ժողովրդին: Թիֆլիսում կենտրոնական դպրոց պահելը մտապատրանք է: Հասարակ գիւղացի կիւնը Թիֆլիզ չի գալ, իսկ Թիֆլիսում պատրաստած ձեր ուսուցիչը գիւղ չի գնալ: Պէտք է աչքից չը տալ այն հանգամանքը, որ տնայնագործական արհեստները մեզանում ևս մշտենջնաւոր չեն լինելու, որ կուլտուրան, գործարանները վերջ ի վերջոյ դուրս են մղելու նրան ասպարէզից:

Յ. Գնչեան. — Ուրիշ խօսքով, պ. Լալայեանը խաչ է քաշում տնայնագործական արհեստների զարգացման գործի վրայ: Մինչդեռ

մեր նպատակն է աւելի առաջ տանել արդիւնագործութիւնը:

Ե. Լալայեան.—Իմ միտքը դուք չը հասկացաք: Ես խաչ չեմ քաշում:

Նսխագահ Ալ. Քալանթար.—Թողնենք, պարոններ, այդ ձևի վիճարանութիւնը: Դպրոցի հարցը կը լուծի մասնաժողովը: Տնայնագործական աջակցութեան ձևերը զանազան են, մի տեղ կազմակերպուած է վաճառահանութիւնը, մի ուրիշ տեղ հիմնուած են դպրոց, մի երրորդ դէպքում հոգս են տանում ինստրուկտորների մասին: Եթէ, օրինակի համար, մենք զբաղուէինք ի միջի այլոց նոր տեսակի տօրքեր տարածելու գործով և բարելաւէինք տեխնիկան, դա էլ օգտաւէտ գործերից մէկը կը լինէր: Պէտք է մտցնել նոր յարմարութիւններ, կարգաւորել գոյների ու թելերի խնդիրը և այլն: Ուստի թողնենք դպրոցական հարցը և անցնենք գեկուցումներին:

Պ. Ղարախանեանը կարդում է իր գեկուցումը «Տնայնագործական հին կուլտուրայի գնահատելի ճիւղերը» վերնագրով (տես երես 90—95): Զեկուցումը ընդունուած է սուսանց վիճարանութեան:

Յ. Գննչեան—կարդում է իր «Տնայնագործական կազմակերպութեան խնդիրներ» անունով գեկուցումը (տես երես 96—104):

Ներկարար Հայկազեան.—Ես ուսումնասիրելով ներկարարութեան արհեստը, եկել եմ այն եզրակացութեան, որ գոյները գործադրելու համար էլ յատուկ գիտութիւն է

հարկաւոր, բաւական չէ միայն ունենալ ներկեր, այլ և պէտք է տեխնիկական ուսումնասիրութիւն: Ես բազմաթիւ օրինակներ կը ներկայացնեմ ապացուցանելու, թէ ինչ պայմաններ են ազդում ներկելու արհեստի մէջ: (Հայկազեանը բերում է հետաքրքրական օրինակներ):

Յ. Փիրալեան.—Զեկուցանող պ. Գննչեանը շատ լաւ ընդգրկեց կառավարչական և հասարակական տնայնագործական ընկերութիւնների գործունէութիւնը: Կառավարութեան և ղեկավարին պրակտիկայով հաստատուած է ինժեներ տեխնոլոգի և պահեստների գոյութեան անհրաժեշտութիւնը: Բայց և այնպէս մեծ միջոցներ է պահանջում այդ գործի կազմակերպութիւնը: Կովկասի համար մենք հաշուեցինք, որ 500,000 ռուբլի գումար է հարկաւոր: Այդ տեսակ կազմակերպութիւնները հնարաւոր են այն դէպքում, եթէ միայն լինեն մասը ղեկավարին միութիւններ: Ես ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ մի ուրիշ հանգամանքի վրայ: Մեր երկրի համար կարևոր նշանակութիւն ունի ներկարարական գործը, ամբողջ Ռուսաստանում լուրջ մասնագէտ չը կայ, բացի զբանից այդ ճիւղի վերաբերեալ տեխնիքական նորութիւնները յայտարարուած են այն ժամանակ միայն, երբ արդէն հնացած են: Ուստի կարծում եմ, անհրաժեշտ է ունենալ ինժեներ-տեխնոլոգ մասնագէտ ներկարար, մասնաւոր կովկասի համար:

Յ. Գննչեան.—Ուրախութեամբ լսեցի պ.

Փիրալեանի առարկութիւնը, սակայն եւ մի-  
այն ուրուագծեցի գործունէութեան ընդհա-  
նուր ուղղութիւնը: Ըստ երևոյթին, պարզ-  
ւում է մի բան, որ մասնագէտներ չը կան:  
Սակայն կարծում եմ իմ առաջարկուած ծը-  
րագրի մի քանի մասերը իրագործելի են:

Նախագահ Ալ. Քալանձար.—Առաջարկը հա-  
ւանութիւն է գտնում և դէմ առարկողներ  
կը կան, ուստի ցանկալի համարենք այդ-  
պիսի մի ինժեներ-տեխնոլոգ ունենալ ընդ-  
հանուր՝ Կովկասի համար:

Յ. Փիրալեան.—Կառաջարկէի աւելացնել  
նաև, որ անհրաժեշտ է յատուկ ներկարար  
մասնագէտ-ինժեներ ունենալ:

Առաջարկը ներկայացնում է պատճառա-  
բանեալ ձևով:

Նախագահ Ալ. Քալանձար.—Պ. Գինջեանի  
առաջարկած թեզիսներից վիճելի եմ գըտ-  
նում միայն գործիքներ պատրաստելու ընդ-  
հանուր կենտրոնական արհեստանոց ունե-  
նալը, որովհետև այնտեղ անհնարին է ամեն  
բան պատրաստել:

Յ. Գինջեանը բացատրում է, թէ ինչ պատ-  
ճառներից գրգռուած նա առաջադրում է այդ  
խնդիրը: Որովհետև գիւղացին անձանօթ  
լինելով գործիքների կազմութեանը, անկա-  
րող է և հնարաւորութիւն չունի պատրաս-  
տել տալ իր տեղում գործիքների բարդ մա-  
սերը:

Ն. Ալալեան.—Ամենևին պէտք չէ կրո-  
պական ձևի նրբացրած ու կատարելագոր-  
ծած գործիքներ մտցնել գիւղերը, որ ժողո-

վուրդը, անկարող լինելով գործադրել, ստիպ-  
ւած լինի դէն ձգել:

Յ. Գինջեան.—Մենք ամենևին նպատակ չու-  
նենք բարդ բան տալ ժողովրդին, այլ ա-  
ւելի յարմարեցրած: Մանաւանդ որ իմ ա-  
ռաջարկը փորձնական բնաւորութիւն ունի:

Յ. Փիրալեան.—Երևի պ. Գինջեանը ծա-  
նօթ չէ կառավարչական կազմակերպութեան  
հետ, թէև նկատում է կեանքի պահանջը:  
Գործիքները այլ ևս դժուարութիւն չեն  
ներկայացնում մեր գիւղացու համար, ուս-  
տի և արագութեամբ տարածում են, ինչ-  
պէս որ նոր ձևի գութաններն են տարած-  
ւում:

Նախագահ Ալ. Քալանձար.—պ. Գինջեանի  
ասելով, այդ արհեստանոցը լինելու է փորձ-  
նական: Դա արդէն այլ խնդիր է: Այնու-  
ամենայնիւ դեռ ևս լաւ պարզուած ու մշակ-  
ւած չէ այդ առաջարկը: Իմ կարծիքով, այդ  
տեսակ արհեստանոց ունենալը անհնարին  
կը լինի:

Յ. Գինջեան.—Ուրեմն ինչ անել այն  
դէպքում, եթէ մի որևէ խուլ անկիւնում,  
ուր չը կան արհեստաւորներ կամ կանոնա-  
ւոր արհեստանոց, մի որևէ բան կուտրում  
է և հարկաւոր է շինել տալ: Ո՞ւմը դիմել:

Նախագահ Ալ. Քալանձար.—Դիմեցէք Տնայ-  
նագործական ընկերութեան վարչութեանը  
կամ ինստրուկտորներին և նրանք պատ-  
րաստել կըտան գոյութիւն ունեցող ար-  
հեստանոցներում կամ գործարաններում:

Յ. Փիրալեան.—Երբ կայ շրջանային ինս-

տրուկտոր, ինքնըստինքեան կենտրոնական արհեստանոցը աւելորդ է գառնում և զրա հարցը վերանում է:

Նախագահ Ալ. Քալանժար.— Եթէ նոր առարկողներ չըկան, կենտրոնական արհեստանոցի խնդիրը ես կըհամարեմ վերացած:

Նախագահ Ալ. Քալանժար դիմում է ժողովականներին հարցնելով՝ եթէ նոր առարկողներ չը կան, նիստը համարենք այսօր վերջացրած: Նախագահը յայտնում է, որ տ. Վերմիշեանը հրաւիրում է Համագումարի անդամներին այցելել իր դպրոց-արհեստանոցը տեսնելու:

Ժամը մօտ 11-ին նիստը փակուում է: Յաջորդ նիստը նշանակուած է ապրիլի 4-ին, առաւօտեան ժամը 11-ին:



## ՆԻՍՏ ԵՐՐՈՐԳ

(Ապրիլի 4-ին)

Նիստը սկսուեց առաւօտեան ժամը 11<sup>1</sup>/<sub>2</sub>-ին, բազմամարդ հասարակութեան ներկայութեամբ:

Նախագահում էր պ. Ալ. Քալանժար: Բանալով համագումարի III-րդ նիստը, նախագահը նկատեց, որ Համագումարը այդօրուայ իր նիստում պէտք է զբաղուէր մի շարք զեկուցումների ընթերցանութեամբ և քննութեամբ, որոնք ստացուած են զանազան բաժանմունքներից և վերաբերում են Համագումարի ծրագրի կէտերին: Այդտեղ շօշափուում են նաև բազմաթիւ ուրիշ խնդիրներ, վերաբերեալ զանազան մթերքների մշակութեան:

Առաջին զեկուցումը կարգաց Յ. Աղաբաբը «Գանձակի արհեստանոցը և տնայնագործական հարցեր» (տես երես 105—117):

Նախագահ Ալ. Քալանժար, — թւելով զեկուցանողի թեզիսները, նկատում է, որ Համագումարը անցեալ նիստերում նկատի է առել շօշափուում կէտերը, բացի միայն մէկ կէտից՝ այն է արհեստանոցներին կից զբաղիտական դպրոցներ հիմնելուց, որը վիճելի է:

Երկրորդ զեկուցումը պատկանում էր Շուշու բաժանմունքին և կրում էր հետևեալ վերնագիրը Ճուշու ջուլհականոց-զըպրոցը և պատասխան ծրագրի հարցերին» (երես 118—122):

Ուսուցիչ Յ. Շապտինգեան կարդում է Համաժողովի տնայնագործական ընկերութեան զեկուցումը (տես երես 123—126): Ուսուցիչ Ղազարեան կարդում է Ղշլաղի (Փամբակի շրջանի) արհեստանոցի վարչութեան զեկուցումը (տես երես 128):

Այս նոխագահի հրաւերով Պարնի գիւղի (Փամբակի) արհեստանոցի ներկայացուցիչ գիւղացի Ս. Բայաղեանցը, որ իր ընտանիքով պարապում է տնայնագործութեան արհեստով, տեղեկութիւններ է հաղորդում բրդի գործուածքների մասին. նրա ասելով, բրդի արշինը նստել է իրանց վրայ 40 կ, իսկ բամբակը 15—20 կ. նա բացատրում է, որ գգելու և մանելու խնդիրը մեծ դժուարութիւն է ներկայացնում արհեստի, առաջադիմութեան գործում: Գիւղացին ինքը հնարաւորութիւն չունի համապատասխան թելեր պատրաստելու, բայց և այնպէս նա յայտնում է, որ գիւղացու համար աւելի ձեռնտու է բրդէ գործուածքներ պատրաստելը, քան բամբակէ: Վերջում նա պարզ ու անպաճոյճ կերպով դիմում է Համագումարին և խնդրում միջոցներ տալ գիւղացուն գոնէ այդ արհեստով ապրելու (տես զեկուցումը երես 129—134):

Մ. Ղազարեանը նկատում է, որ նախորդ խօ-

սողի տուած տեղեկութիւնները վիճելի են, բրդէ գործուածքը նստում է արշինը ոչ թէ 40 կոպէկով, այլ 65—70 կոպէկ: Բայց դա պայմանական նշանակութիւն ունի, որովհետեւ պատրաստուած իրն էլ իւր բարձր ուցած գներ ունի: Պէտք է նկատել, որ Փամբակի երիտասարդութիւնը, եթէ տաք կերպով է կպել տնայնագործական արհեստի տարածման գործին, դա առաջ է գալիս նրանից, որ նա այսօրուայ օգտի մասին չէ խորհում, այլ նայում է նրա վրայ իբրև կրթական մի գործի վրայ, որը օգտակար է ժողովրդի համար:

Ալ. Քալանթարը—յայտնում է, որ իր գիւղի մշակութեան մասին ինքը իր զեկուցումը մտադիր էր տալ մի փոքր ուշ, բայց որովհետեւ այդ խնդրի շուրջը արգէն վիճարանութիւն է սկսուած, ուստի աւելի նպատակայարմար է գտնում հանդէս գալ հէնց այժմ:

Կարդում է իր զեկուցումը (տես երես 156—162):

Այդ զեկուցումով խնդիրը համարւում է լուսարանուած և մի քանի բացատրութիւններին յետոյ, որոնք վերաբերում են մանաւրանների համար պահանջուող ծախրերին, ընդգծում է որ ջուլհականոցները պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն բրդեայ գործուածքների վրայ:

Յ. Արիստակէսեան, ցոյց տալով Բագուի արհեստանոցում գործուած կտորները, յայտնում է, որ նրանց թելերը բերել են ար-

րուած եղել Մօսկուայից և նստել է Ֆրունտը 1 բուրլի 10 կոպէկ:

Այդ թելերից օրական պատրաստուում է 3 արշին կտոր: Եթէ հաշուելու լինենք ամեն մի արշինում 10 կոպէկի փշացող թելեր, դուրս կը գայ ուրեմն, որ այդ կտորի արշինը նստում է 1 ը. 40 կոպ. բանուորի վարձով, վերջինս ընդունելով 20 կոպէկ ամեն մի արշինի համար: Բայց պէտք է ի նկատի առնել, որ օրական 3 արշին գործում են արհեստին ոչ այնքան հմուտ ու վարժ բանուորուհիները, որոշ ժամանակի պրակտիկայից յետոյ նրանք կարող են տալ ոչ պակաս քան 4 արշին օրական, ուրեմն օրավաստակը կը հասնի այդպիսով 80 կոպէկի: Գիւղացիները այդչափ էլ կարող են պատրաստել և, ի հարկէ, 80 կոպէկ օրավաստակը նրանց համար մեծ բան է: Այդ նա ասում է ապացուցանելու բրդեայ գործուածքների շահաւէտութիւնը. ապա կարդում է իր զեկուցումը (տես երես 145—149):

Նախագահ Ալ. Քալանժար. — Զեկուցումների մէջ այն միտքն է յայտնուած, որ բացի ջուլհակութիւնից պէտք է սովորեցնել և ուրիշ տնայնագործական արհեստներ: Դա անվիճելի է: Տնայնագործութեան Ընկերութիւնը նպատակ ունի զբաղուել տնայնագործական դանազանատեսակ արհեստներով և անշուշտ նա կը ձեռնարկի նրանց ուսուցմանը. բայց Ընկերութիւնը ներկայումս աննպատակայարմար է գտնում միանգամից ձեռք զարկել շատ գործերի և նրանց

վատ կատարել: Ուստի նա սկսելով ջուլհակութիւնից, ցանկանում է նրան այնքան դեկավարել, մինչև կարելի լինի գործնական հողի վրայ դնել նրան և զարգացման ճանապարհի վրայ: Նա սկսել է տնայնագործութեան միւս ճիւղերի մասին հոգատարութիւն իր գործունէութեան առաջին քայլերից և բանակցութեան մէջ է եղել սկզբից հանգուցեալ բժշկուհի տիկին Մ. Օհանեսանի հետ:

Այգօրինակ ճիւղերի, ինչպէս կաւագործութեան, բրուտութեան ջերմ քարոզիչներից առաջինն էր հանգուցեալը, որը կարգաց թիֆլիսում մի զեկուցում, գործեց Գանձակում և նպաստեց կազմակերպելու Շուշում. ուստի առաջարկում է Համագումարին յոտնկայս յարգել հանգուցեալի յիշատակը, որը և կատարում է պատկանելի լուութեան մէջ: Այնուհետև պ. Քալանժարը կարգաց հանգուցեալի նամակից հետևեալ կտորը.

«Արհեստների հարցը ես ուսումնասիրել եմ տարիների ընթացքում և շատ ճիւղեր ինձ հետաքրքրել են, սրտնցից ես հաւաքել եմ նմուշներ: Բայց այս բոլորից պէտք է ջօկել ամենաարժանը և ամենագործնականը: Օրինակ, հիմայ առաջին դրած է մի ժողովածու բրուտային իրեղէնների՝ ամենահասարակ ամաններից մինչև զեղեցիկ վազաներ: Ինչպէս գիտէք այդ ճիւղը տալիս է բազմաթիւ Շվեյցարացիների Thun քաղաքի և շրջակայ զեղերի բնակիչներին, Լայպցիգի շրջակայքի բնակիչներին և շատ ուրիշներին մի կտոր հաց: Մենք կովկասցիներս ամեն մի հասարակ քաղցրեղէնի բանկա և ուրիշ ամաններ գտում ենք Ռուսաստանում և թանգ դներով, Վրաս-

տանում փորձեր արել են, բայց անաջող: Գանձակի մօտ Զուռնաբազ գիւղում, Շուշուայ մօտ Պեխի աղբերի մօտ կայ շատ լաւ հող, որից կարելի է լաւ իրեր պատրաստել: Միայն հարկաւոր է փոքր կապիտալ բերել տալու ոտաշարժ բրուտային գործիքներ (ножные гончарные станки), վառարաններ շինելու և ամենից առաջ մի լաւ ուսուցիչ բերելու: Ֆինլանդիայում կան շատ լաւ վարպետներ այդ գործի, որոնք ուրախութեամբ կը գան:

Ես մի քանի օրով ստիպուած եմ գնալ Մոսկուա: Ինչքան էլ աշխատեցի ամեն ինչ նամակով պատուիրել, անկարելի եղաւ. մի քանի բաներ ինքս պիտի ընտրեմ և ինքս խօսեմ գործարանատէրերի հետ, թէ չէ շատ անպէտք նմուշներ էին ուղարկուած շարունակ: Յետոյ Մոսկուա կուստարնի կօմիտէտում շատ լաւ զանազան գործիքներ և իրեր կան, որոնք կարող են մեզ համար շատ օգտաւէտ լինել:

Ֆինլանդիայից ծանօթներս ինձ խոստանում են ամեն տեսակ աջակցութիւն: Եթէ դրամ լինէր, կը խնդրէի, որ մի լաւ բրուտ ուղարկէին:

Կտրծում եմ աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ Համագումարը այս տեսակ մի որոշում կայացնէր, որ՝ ցանկալի է արհեստների բոլոր ճիւղերի տարածումն ու զարգացումը: Համակրութեամբ վերաբերուենք այդ բոլոր առաջարկներին, բայց որոշում չը կատարենք այս ու այն արհեստի անմիջական և պարտաւորական ուսուցման մասին հէնց առաջիկայ տարում, որպէս զի յետոյ անկարող չը լինենք իրազործելու:

Համագումարը ապա լուծւում է Ղարաքիլիսայի ճիւղի զեկուցումը (տես երես 135—141). Վաղարշապատի շրջանի վարպետ Արշակ Մակարեանի զեկուցումը (տես երես 142—144) Ուզուէլար գիւղից Ս. Խարապեանի

զեկուցումը (տես երես 150—153): Նստեկարգացուեց մի համառօտ տեղեկութիւն Ալէքսանդրօպօլի արհեստանոցի մասին (տես երես 154—150):

Օր. Երմայան, խօսք խնդրելով նախագահից. յայտնում է, որ ինքը մի նկատողութիւն ունի անելու ժողովին: Արհեստանոց-դպրոցներ ունենալու առաջարկը Ալ. Քալանթարի առաջին զեկուցման թէղիսների մէջ արդէն կար և ընդունուեց Համագումարի կողմից: Հարցը կրկին շօշափուում է միւս զեկուցումներում: Լսելով բոլոր առարկութիւնները, ես աւելի և աւելի համոզուած եմ, որ պէտք է պաշտպանել շրջանային դպրոցների առաջարկը և ես անպայման դէմ եմ այստեղ, Թիֆլիսում, դպրոցի կենդրոնացնելուն: Երբ Համագումարին կը ներկայացուի դպրոցական մասնաժողովի զեկուցումը, դուք կը տեսնէք, որ նա ձայնների մեծամասնութեամբ ընդունել է Թիֆլիսում միակ դպրոց բանալու առաջարկը: Ես առանձին կարծիք յայտնեցի: Եթէ ինձ առարկեն, թէ Թիֆլիսի կենտրոնական դպրոցը պէտք է ինստրուկտօրներ պատրաստէ և ուրիմն զեկավարներ տայ երկրին, ես կասեմ, որ ներկայ Համագումարը հաղիւ թէ ձեռնհաս լինի ինստրուկտօրական դպրոցի խնդիրը լուծելու, որը վերաբերում է ընդհանրապէս Կովկասին, նրա բոլոր մասերին: Իմ կարծիքով, ընդունուած տիպի դպրոցները պէտք է բանալ երեք մասերում, ինչպէս

որ առաջարկում էր Քալանթարը, որին ես համամիտ եմ:

Այնուհետև նախագահ Ալ. Քալանթար կարդում է Մ. Սողոմոնեանի զեկուցումը «Տնայնագործութիւնն ի Կովկասում և Ռուսաստանում», որ պարունակում է իր մէջ, մի շարք տեղեկութիւններ՝ թէ ինչպիսի հիմքերով է կազմակերպուած տնայնագործութեան գործը Մօսկուայի զեմստւոյի մէջ թէ ինչպիսի ուղղութիւն պիտի տալ մեղանում, և վերջում անում է մի շարք առաջարկներ գործի աջողութեան համար: (Տես երես 163—175):

Նախագահ Ալ. Քալանթարը, ուշադրութիւն հրաւիրելով զեկուցանողի առաջարկներին զլիսաւորապէս մուգէյի վրայ, նկատում է, որ նրանք կազմակերպչական մի նախագիծ չեն, այլ զեկուցանողը անձամբ տեսել է այնտեղ գործնականում, գործի կազմակերպութեան հաշիւը ներկայացրել է շատ համեստ, մինչդեռ, ընդհակառակը, մեծ ծախք կը պահանջուի:

Մ. Ղազարեանը առաջարկում է, որ համագումարը բարոյական պարտականութիւն զնի լնկերութեան վարչութեան վրայ մեր գործուածքների լաւագոյն նմուշներից ուղարկելու Մօսկուայի զեմստւոյին մուգէին:

Նախագահ Ալ. Քալանթար պատասխանում է այդ առաջարկին, որ վարչութիւնը ինքն էլ զգում էր զրա կարևորութիւնը, սակայն զգուշացաւ այդ քայլը անելուց, որովհետև

գործուածքները դեռ կրթական բնակորութիւն են կրում, իսկ եթէ յանկարծ պահանջ ստացուէր, սրտեղից պէտք է կատարէինք այդ պահանջը, երբ մենք պատրաստում ենք չնչին քանակութեամբ, այն էլ միայն կրթական նպատակով:

Պ. Ղարախանեանը շեշտում է, որ դպրոցների խնդիրը ապագայի գործ է, մենք արդէն վարպետներ ունենք, իսկ թելը առնում ենք քաղաքից. ահա էականը թելի խնդիրն է: Գործի յետաձգութիւնը զրանց մէջն է կայանում—պէտք է միջոց տալ մեր զիւղացուն, որ ինքը իր հում նիւթերը վերածի թելի ու ապա պատրաստի գործուածքներ:

Մ. Ղազարեան հարց է տալիս, թէ ինչ յարաբերութիւն ունի հայ Տնայնագործական Ընկերութիւնը կուստարնի կօմիտէտի հետ:

Ալ. Քալանթար բացատրում է, որ կուստարնի կօմիտէտը կառավարչական հաստատութիւն է, որը աշխատում է աջակցել, խրախուսել ու նպաստել տնայնագործութեան զարգացմանը Կովկասում: Ներկայ համագումարի մէջ կօմիտէտը մասնակցում է ոչ միայն իր մի քանի անդամներով, այլև իր իրերը ցուցադրելով: Կօմիտէտը անշուշտ համակրութեամբ է վերաբերում Տնայնագործական Ընկերութեան, ինչպէս նա կը վերաբերուէր և ուրիշ այդ տեսակ հաստատութիւններին: Ես, Հայ Տնայնագործական Ընկերութեան նախագահս, անդամ եմ այդ կօմիտէտին և նրա գործավար Փիրա-

լեանը փոխ-նախագահ է մեր Ընկերութեան մէջ: Երկու հաստատութիւնների մէջ տիրում է համերաշխութիւն և գործակցութիւն: Այնուհետև հաջորդելով, որ խնդիրք է սրբուած ում հարկն է Տնայնագործական Ընկերութիւնը դարձնելու գիւղատնտեսական-տնայնագործական ընկերութիւն, Ա. Քալանթար խորհուրդ է տալիս այն անձերին, որոնք, նկատելով հայ Տնայնագործական Ընկերութեան ու պետական կուստարնի կօմիտէտի համերաշխութիւնը, հարցնում են, թէ ումը դիմել հարկաւոր դէպքերում, թող առանց վախենալու՝ թէ խնդիրները մի գուցէ կորչեն, դիմեն զբանցից որին ուզում են՝ այն է կուստարնի կօմիտէտին, Գիւղատնտեսական ընկերութեանը, հայ Տնայնագործական Ընկերութեանը թէ նոյն իսկ «Գիւղատնտես» շաբաթաթերթին, որովհետև այդ հաստատութիւնները սերտ կերպով շաղկապուած են իրար հետ:

Վերջում Ա. Քալանթարը կարդում է իր գեկուցումը «Զուլհականոցի կազմակերպութեան մասին» (տես երես 176—183), որով աշխատում է պատասխան տալ այն հարցին, թէ ինչ արժէ ջուլհականոցի կազմակերպութիւնը կէս տարուայ, ինն ամսուայ և մի տարուայ համար:

Զեկուցումը առաջ է բերում լրացուցիչ հարց ու փորձեր արհեստանոցի ընդարձակման դէպքերի մասին:

Համագումարը ընդունում է բոլոր գեկուցումների եզրակացութիւնները ընդհանուր

անմամբ, յետաձգելով վախճանական ձևակերպութիւնը վերջին ժողովին, երբ կարողացուած կը լինեն և միւս գեկուցումները:

Ժամը 21/2-ին, նախագահը, Համագումարի նիստը համարելով փակուած, յայտնեց, որ յաջորդ՝ IV-րդ նիստը, տ. Սիրանոյշի յօթեւանական ներկայացման պատճառով, այդ ներկայ չէ կայանալու—անդամներից շատերը գնալու են ներկայացման:

Նիստը կը կայանայ հետևեալ առաւօտ, կիրակի օր ապրիլի 5-ին, ժամը 11-ին:

Միևնոյն ժամանակ յայտնեց, որ Համագումարին մասնակցող անդամներից շատերը դիմել են իրան, խնդրելով օգտուել դէպքից և ծանօթացնել նրանց սերզատ մեքենաների հետ, որոնք կան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Այդ հիման վրայ նա խոստանում է հետևեալ օր առաւօտը նախ ընդհանրական պարագմունքներին դիմելը կարդալ մի դասախօսութիւն սերզատների մասին և ցոյց տալ նրանց գործի մէջ:

## Ն Ի Ս Տ Չ ՈՐՐՈՒ Գ

5 ապրիլի

Նիստը բացուեց առաւօտեան ժամը 11-ին, երկսեռ բազմամարդ հասարակութեան ներկայութեամբ և մասնակցութեամբ Համագումարին մասնակցող, համարեա, բոլոր անդամներին:

Նախ քան Համագումարի զբաղմունքներին անցնելը, նախագահ Ալ. Քալանթար, համաձայն Համագումարի անգամներից շատերի ցանկութեան, ծանօթացրեց հանդիսականներին սերզատ մեքենաների գործունէութեան, նրանց տեսակների, ինչպէս Պերֆեկտ Կնուդսէնի, Ֆորտունայի, Մելոտտի, Տորուեարի, Ալֆալաւալի և այլն, ու յատկութիւնների հետ և փորձով ցոյց տուեց՝ թէ ինչպէս են ամենակարճ ժամանակամիջոցում կաթից սեր ստանում:

Սերզատ մեքենայի վրայ փորձը կատարելուց յետոյ, ժամը 11 և կէսին, Համագումարը վերսկսեց իր հերթական զբաղմունքները՝ լսելու մի շարք զեկուցումներ:

Առաջին զեկուցումը կարդաց՝

Յ. Փիրալեան. «Ընկերակցութիւնները տրնայնագործութեան մէջ» վերնագրով, ուր զեկուցանողը մատնանշելով ընկերակցու-

թիւնների օգտակարութիւնը գիւղերում, մանաւանդ տնայնագործական արհեստների զարգացման գործում, առաջարկում էր կազմել յատուկ կոմիտէտ ընկերակցութիւնների գաղափարը քարոզելու և գործնական ցուցմունքներ տալու ու զեկավարելու նրանց կազմակերպութեան գործերը (տես երես 184—197):

Նախագահ Ալ. Քալանթար ընդգծում է զեկուցման էական կէտերը և առաջարկում է ցանկացողներին խօսել զեկուցման առիթով: Յ. Գննցեան. — Պ. Փիրալեանի զեկուցման մէջ շօշափուած էր ամենաէական և հրատապ խնդիրը, այն է՝ կազմակերպել գիւղական աշխատանքներ: Շատ ճիշտ էր նրկատուած, որ զանազան գիւղական պարագիտների ու խանութպանների ընչաքաղցութեան ու աշխատանքի շահագործութեանը վերջ տալ անշուշտ կարելի է միայն կօօպերացիայի կամ ընկերակցութիւնների շնորհիւ: Բայց ես ուզում եմ այդ զեկուցման մէջ ուղղումն մտցնել՝ թէ ինչպէս հիմնել առհասարակ կօօպերատիւ միութիւնները մեր գիւղերում: Ցանկալի էր, որ ներկայ Տնայնագործական Համագումարը մտցնէր այսպիսի ուղղումն, որ նա գըտնում է նպատակայարմար, որպէսզի Գիւղատնտեսական Ընկերութիւնը, կուստարների կոմիտէտը կամ թէ տնայնագործական ընկերութիւնը իր վրայ վերցնէր նախաձեռնութիւնը կազմակերպելու տնայնագործական ընկերութիւններ գիւղական շրջան-

ներում և այդ նպատակով ցուցմունքներ տալու համար պահելու յատուկ ինստրուկտորներ: Ապա թէ՛ ոչ գիւղացին ինքը, իր սեփական նախաձեռնութեամբ, ոչինչ անել չէ կարող:

Մ. Ղազարեան.—Երեք տարի ապրելով գիւղերում, ես եկայ հզրակացութեան, որ գիւղացիների դրութիւնը պէտք է բարւոքութիւն իրանց աշխատաւորների շնորհիւ: Կօօպերատիւ միութիւնները պէտք է լինեն դասային, այլապէս գիւղական կուլակները կարող են մտնել միութիւնների մէջ և կը սկսեն գործը վարել իրանց կամայականութեամբ և շահագործել նրան իրանց օգտին: Այլ բան է եթէ, մտցուած լինէր մեղանում գեմատիօ. նա արգարև կարող էր այդ գործի կազմակերպութիւնը անել ցանկալի հիմքերի վրայ: Այդպիսով, մինչև որ չը մտցուի մեղանում գեմատիօ, անհնարին է մտցնել նաև կօօպերացիաները: Մեղանում տնայնագործական արհեստի շուրջը կազմուեց մի խմբակ, որը ուզում էր դառնալ գիւղատնտեսական ընկերութիւն և խոստանում էր անդամների ստուար թիւ գրաւել շրջակայ գիւղացիներից, սակայն գործը գլուխ չեկաւ մինչև այժմ, որովհետև ղեկավարող չը կար: Իսկ առանց ղեկավարի ոչինչ չէ կարելի անել:

Յ. Փիրական առարկելով Գինջեանին, նկատում է, որ կօօպերացիաները ինչպէս կազմակերպելու մասին այժմ ոչինչ սասել չէ կարող, որովհետև իր ձեռքի տակ չունի

կանօնադրութիւնը, բայց կարող է յանձնարարել կարգալու «Գիւղատնտես» շաբաթաթերթը, որի մէջ տպագրուած է այդպիսի կանօնադրութիւն: Աւելի մանրամասն ու գործնական ցուցմունքներ կը տայ գիւղատնտեսների համագումարը, որը կայանալու է առաջիկայ աշնանը: Ինչ վերաբերում է գործը կազմակերպելու համար յատուկ յանձնաժողով ունենալուն, որպէսզի պրօպագանդա անի և գործնական աջակցութիւն ցոյց տայ գիւղացիներին, ինքը արդէն իր ղեկուցման մէջ ցանկութիւն յայտնեց այդ մասին: Իսկ մինչև այդ յանձնաժողովի ընտրուելը՝ գործի կազմակերպելը կարող է իր վրայ վերցնել նաև մեր Տնայնագործական Ընկերութիւնը: Ապա անցնելով Մ. Ղազարեանի դիտողութեանը կուլակների մասին, շեշտեց, որ կուլակը ամենուրէք եղող թշնամի է, նա կայ գեմատիօյում, քաղաքային ինքնավարութեան մէջ, և ահա աշխատաւորների պարտքն է մրցել նրա դէմ: Ճառախօսը ինքն էլ է անհրաժեշտ համարում գեմատիօյի կարիքը, սակայն բոլորովին անտեղի կը լինի ձեռքերը ծալած նստել ու սպասել գեմատիօյի մտցնելուն: Եւ այժմ, քանի որ գեմատիօ չունենք, կասկածից դուրս է, որ պէտք է կազմակերպուել և մանր կօօպերատիւներով դիմադրել աշխատաւորներին շահագործող կուլակներին:

Նախագահ Ա. Քալանժար.—Անվիճելի է կօօպերացիաների օգտակարութիւնը: Պ.

Փիրալեանի թեզիսը հետևեալն է. «նպատակայարմար է համարուում հիմնել յատուկ կոմիտեա տարածելու գիւղերում ընկերակցութիւնների գաղափարը և գործնականապէս աջակցելու ընկերակցութիւնների կազմակերպութեանը: Համագումարը կարող էր այդ ձևակերպութիւնը համակրութեամբ ընդունել, իսկ մինչ այդ կարելի է մի շարք միջոցներ ևս ընդունել, այն է, խնդրել Հայ Տնայնագործական Ընկերութեանը և միւս հաստատութիւններին իրանց վրայ առնել այդ գործի կազմակերպութեան նախաձեռնութիւնը: Եթէ Համագումարը ընդունում է այդ ձևակերպութիւնը, ես կարող եմ շնորհակալութիւն յայտնել ղեկուցանողին և ապա անցնել Բողոքիչի ղեկուցմանը:

Ընդունուում է ղեկուցանողի թեզիսը նախագահի ձևակերպութեամբ:

Բողոքիչը կարգաց իր և Բեզպալովի կազմած ղեկուցումը «տնայնագործներին մթերքներ և գործիքներ մատակարարելու խնդրի մասին», որով ղեկուցանողները տալիս էին մի շարք տեղեկութիւններ թէ՛ որտեղից և ինչ պայմաններով կամ գներով կարելի է ստանալ տնայնագործութեան վերաբերեալ գործիքներ ու մթերքներ՝ պատրաստի թելեր ու գոյներ, զանազան գործուածքների նկարներ, ուզօրներ և նմուշներ: (Ձեկուցումը տես երես 198-207):

Դրանից յետոյ նախագահ Ա. Քալանթար ղեկուցեց «տարեկան վաճառահանդէսների կազմակերպութեան մասին», որով առաջարկում

էր տնայնագործական արտադրութիւնների վաճառահանութիւնը կազմակերպելու և հասարակութեանը ծանօթացնելու նպատակով, իրը և փորձ, եկող տարի կազմակերպել վաճառահանդէս (տես ղեկուցումը երես 243—247):

Ապա նախագահը առաջարկում է ցանկացողներին խօսել այդ առիթով:

Տ. Ա. Աերմիշեան, միանալով պ. Քալանթարի առաջարկին վաճառահանդէսի մասին, ուրախութիւն է յայտնում, որ առիթ է ներկայանում իրան՝ ղեկուցանելու Համագումարին իր «ձեռքի աշխատանքների դասընթացքների» մասին, ուր դասաւանդուում է ներկայումս կողովագործութեան և բամբակագործութեան արհեստը (տես ղեկուցումը երես 208—217), վերջում յայտնում է, որ մտադիր է ամարային կուրսեր բանալ իր արհեստանոցին կից վեց շաբաթուայ տեւողութեամբ, ցանկացողներին սովորեցնելու կողովագործութիւն և բամբակագործութիւն:

Իշխանուծի Մ. Թումանեանը համակրութեամբ վերաբերուելով վաճառահանդէսի մտքին, գտնում է սակայն, որ դարունը անյարմար ժամանակ է գիւղացիների համար, աւելի լաւ է նշանակել սեպտեմբերի վերջերին կամ հոկտեմբերին: Կամ, գուցէ, տարեկան երկու անգամ, առաջինը հոկտեմբերին, իսկ երկրորդը՝ զարնանը:

Օր. Ս. Երմալեանը յիշեցնում է, որ արտնայնագործական Համագումարի ծրագրում մի հետաքրքիր կէտ կայ, այն է՝ թէ տնայ-

նագործական արհեստների ճիւղերից որն է արդիւնաւէտը և ամենակարևորը: Ժողովը պէտք է պարզէր այդ խնդիրը, մինչդեռ նա դեռ ևս չէ վճռել, չէ պարզել որն է արդիւնաւէտ և որը կարևոր: Կը խնդրէինք, որ պ. Փիրալեանը հաղորդէր իր գիտողութիւնների արդիւնքը այդ առիթով:

Իշխանուհի Մ. Թումանեանը տալիս է, որ վաղաժամ է զբաղուել այդ խնդրով, որովհետև գործը նոր է և դեռ ևս գտնուած է իր նախնական դրութեան մէջ:

Նախագահ Ա. Քալանթար.— Այդ հարցը ամենակարևոր կէտն է ծրագրում: Իմ դեկուցման մէջ նա բռնում է առաջին տեղերից մէկը: Զեկուցման մէջ ասուած էր, որ պէտք է ուսումնասիրութիւն կատարել: Սակայն այն պատճառով, որ գործը նոր է, փորձնական նիւթեր շատ չեն ամբարուած, ուստի ոչ ոք զեկուցումների մէջ չէ մտնում այդ հարցի լուծման: Եւ դա շատ հասկանալի է: Աւելի հաւանական է սպասել այդ հարցի պատասխանին երկրորդ համագումարին, երբ գործի արդիւնքը ու դրութիւնը բաւականին պարզուած կը լինի արդէն: Այդ հարցը, որ դնում են այստեղ շատերը, ցոյց է տալիս, որ ամենաառաջնակարգն է, որի մասին, սակայն, սիստեմաթիկ, համեմատական լուրջ ուսումնասիրութիւն չէ կատարուած:

Յ. Փիրալեան.— Այդ համեմատական ուսումնասիրութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունի և պէտք է մտնէ տնայնա-

գործական հաստատութիւնների ծրագրի մէջ: Տնայնագործական կոմիտէն դրանով էլ զբաղուած է այժմ: Գործագործութեան մասին յամենայն դէպս քիչ բան է արուած: Ինչ վերաբերում է շուկահոլութեան, նա կար առաջ, վերացել էր և այժմ կրկին վերականգնում է: Ի հարկէ, երկու տարուայ աշխատանքների հիման վրայ դժուար է ճիշտ եզրակացութեան յանգել: Շուշու արհեստանոցն ենթադրաբար ակնարկում է մի այդպիսի համեմատական ուսումնասիրութեան վրայ, միևնրը չեն արել և դժուար էլ է անել այդչափ շուտով: Մինչև որ չունենանք փորձառու վարպետուհիներ, իրանց մասնագիտութեան հաշիւների մէջ լաւատեղեակ, մենք չենք կարող գերադասութիւն տալ որևէ մէկ ճիւղին և այժմից իսկ խօսել դրանց մասին— կը լինէր վաղաժամ: Այդպիսով ամեն բան կախուած է հմուտ վարպետուհիներից: Ուսումնասիրութիւնները պէտք է կատարել նաև մնացեալ արհեստների մասին: Օրինակ, ինչպէս տեղեկացանք Սողոմոնեանի զեկուցումից, բամբակէ գործուածքները Մօսկուայում մերինների հետ համեմատելով աւելի թանգ են նստում: Կուստարնի Մուզէյը Մօսկուայում գործարանական գործուածքների հետ միասին վաճառում է նաև տնայնագործական արտագրութիւնները, որոնք սպառում են ոչ միայն իրանց տեղում, այլ ուղարկւում են արտասահման: Այդ ամենը տեղի է ունենում գործունէութեան յայտնի շրջան անց-

նելուց յետոյ: Ինձ թուում է, որ Հափազանց մեծ նշանակութիւն են տալիս արտասահմանեան վաճառահանութեան հարցին: Մեր պատրաստած արտադրութիւնները հօ ֆարիզ չէինք ուղարկելու: Պէտք է նշանակութիւն տալ տեղական վաճառքի շուկային ու աշխատել սպառել հէնց իր տեղական շրջանում, ի հարկէ, յարմարուելով նրա պահանջներին: Նոյն իսկ չպէտք է մտածել ամեն բան Թիֆլիսում ծախելու համար: Ուստի, ես կարծում եմ, համեմատական արժէքը ապագայի գործ է: Բայց և այնպէս կան բաներ, որոնց մասին հէնց այժմ էլ à priori կարելի է ասել, որ ձեռնտու չէ, կամ ընդհակառակը: Օրինակ, առանց փորձեր անելու էլ կարող ենք դիմել այն գործունէութեան, որը մեզ համար պարզէ գորգագործութիւն ու բրդէգործութիւնը: Պէտք է մտցնել առհասարակ այն բաները, որոնք դժուարութեամբ են գտնուում մեղանում և բերում են շատ հեռու տեղերից, ինչպէս կղամիտը և այլն: Բամբակէ գործուածքները աւելի դժուարութեամբ կարող են մրցել գործարանական ապրանքների հետ և եթէ մենք նրանց պատրաստում ենք՝ դա փորձ է զանազան պահանջների մէջ և միևնոյն ժամանակ կրթական-տեխնիքական նըպատակների համար նա ունի մեծ յարմարութիւններ:

Սահակեան.—Պէտք է գործադրել այն արհեստները, որոնք տեղում յարգի են և կարող են սպառուել, օրինակ գորգագործու-

թիւն, բրդագործութիւն. մեզ մօտ աշոգութիւն կարող է ունենալ մետաքսագործութիւնը:

Նախագահ Ալ. Բալանձար ձեռնարկում է բանաձևը հետևեալ կերպով, որ Համագուծարը ընդունելով վաճառահանդէս կազմելու գաղափարը, որոշակի չէ նշանակում նրա բացման ժամանակը, թողնելով Հայ Տնայնագործական Ընկերութեանը որոշելու այդ ժամանակը, խորհրդակցելով միև հաստատութիւնների կամ հմուտ անձերի հետ:

Համագումարը միևնոյն ժամանակը աչքի առաջ կունենայ տիկին Վ. Վերմիշեանի մեծ պատրաստականութեամբ արած առաջարկը ամառային կուրսեր բանալու մասին Թիֆլիսում:

Յայտարարում է 10 ըոպէ ընդմիջում: Ժամը 1 և 20 ըոպէին նիստը վերսկսուելուն պէս:

Գ. Լևոնեանը սկսում է կարգալ իւր զեկուցումը՝ «Ոճը և ներկերը ջուլհակութեան մէջ» վերնագրով, որտեղ զեկուցանողը առաջարկում է 6 կէտերից բաղկացած թեզիսներ: (Տես զեկուցումը երես 218—234):

Յ. Փիրալեան.—Լևոնեանի զեկուցման առիթով ես, իբրև դիլլետանտ-նկարչութեան և տեխնիկայի մէջ, կը խօսեմ միայն անալիզի մասին: Նկարների անալիզով, զբժբաղդարար, մեզանում չեն զբաղուում: Այն տեղեկութիւնները, որ տուեց զեկուցանողը ոճի ձևերի մասին, ես թոյլ եմ տալիս ինձ կասկածելու: Օրինակ, շատ տեղերում մահ-

մեղական ազգաբնակութեան մէջ, ինչպէս Անդրկասպիան երկրում, կանուղղագիծ ձևեր, որոնք ամենևին կապ չունեն հայկական ոճի հետ, մինչդեռ ուղղագիծ ձևերը զեկուցանողը վերագրեց հայերին: Շատ դժուար է տարբերել ոճերը: Ռուսաստանում չը կայ ուսումնասիրութիւն նկարների, օրնամենտների և ձևերի վերլուծութեան մասին: Լոյս է տեսել անգլիերէն լեզուով մի այդպիսի աշխատութիւն, որը և թարգմանուած է ռուսերէն: Վերջինս էլ միակ լուրջ աղբիւրն է ներկայանում: Մեզ համար կարևորը այդ անալիզն է, երբ կը կատարուի այդ անալիզը, ահա այն ժամանակ միայն կարելի է խօսել ոճի մասին: Ես, իբրև այդ գործին մօտ կանգնած մի անձ, կը խնդրէի մեր նկարիչներին զբաղուել այդ անալիզի գործով: Ինձ մօտ կան անգլիական մօնագրաֆի ձեռնարկներ, ես մեծ ուրախութեամբ կը դնէի նրանց ցանկացողների տրամագրութեան տակ օգտուելու: Ես առաջարկում եմ մեր նկարիչներին լուրջ զբաղուել զբանով, որովհետև մեզանում ուղղակի այդ բանը չը կայ:

Իշխանուհի Մ. Թումանեանը ուշադրութիւն է հրաւիրում տնայնագործական արհեստների երկու ճիւղի վրայ՝ ասեղնագործութեան և ծղնօտագործութեան, որոնց նմուշները ցոյց է տալիս ժողովականներին և որոնք աւանդում են Բարեգործական Ընկերութեան որբանոցում: Ասեղնագործութեան նմուշները որբանոցի աշակերտուհիների

պատրաստած էր, իսկ ծղնօտագործութեանը՝ իշխանուհու և դեռ ևս չէ մտցուած որբանոցում: Ծղնօտէ գործուածքների նմուշներ՝ գլխարկներ պատրաստելը իշխանուհին սովորել էր դեռ ևս Շվեյցարիայում եղած ժամանակ, այն էլ միայն շվեյցարական ծղնօտներից, որոնք նուրբ են և դիմացկուն, չեն կոտրուած: Վերջում կոչ արեց ներկայ հողորներին աշխատել ծղնօտագործութիւնն և ասեղնագործութիւնը տարածելու մեր գիւղերում:

Նախագահ Ալ. Քալանժար յայտնում է, որ Թիֆլիսի Հայուհեաց ընկերութիւնը, ցանկանալով ցոյց տալ իր արհեստանոցը Համագումարի անդամներին, խնդրել է ինձնից յայտնել, որ ցանկացողները յաջորդ օրը ժամը 12-ին կարող են գնալ տեսնելու կանանց կար ու ձևի նոր արհեստանոցը, որը գտնուում է Պանօվսկայա փողոցում № 19: Օգտուեցէք դէպքից ծանօթանալու կուլտուրական համակրական մի գործի հետ, որը զարգանալով կարող է ապագայում աւելացնել աշխատանքի աղբիւրները բանուկ ձեռքերի համար:

Ապա տիկ. Հ. Փափազեան. — կարգում է իր պատրաստած զեկուցումը «կատարելագործութիւնների անհրաժեշտութիւնը տնայնագործութեան մէջ» (տես երես 235—242) վերնագրով, ուր այն միտքն է յայտնում, որ գիւտերի ու կատարելագործութիւնների համար հարկաւոր է խրախուսել և յիշատակելով մասնաւորապէս իր մտքրած կատարելա-

գործութիւնը տօրքերի մասերի մէջ, ընդգըծում է կատարելագործողներին աջակցութիւն ցոյց տալու կարևորութիւնը:

Նախագահ Ա. Քալմանար քացատրում է Համագումարին, որ տ. Ս. Փափազեան, պ. պ. Կ. Ղամբարեան, Մ. Թամրազեան և այլն մի քանի փոփոխութիւններ ու կատարելագործութիւններ են մտցրել տնայնագործական տօրքի մէջ, ու սպասում են որևէ կերպով խրախուսանքի: Շատերն են փորձել փոփոխութիւններ մտցնել, ոմանք անաշոյղ են, բայց և այնպէս պէտք է միջոցներ գտնել խրախուսելու և գնահատելու աշխատանքը: Տնայնագործական կօմիտէտում ևս ես հարց եմ զարթեցրել, որ որևէ գումար յատկացուի այդ տեսակ փորձերը խրախուսելու համար: Բացի աիկին Ս. Փափազեանի պահարան-տօրքից, կան և մի քանի ուրիշ կատարելագործութիւններ էլ: Արդ՝ ի՞նչպէս անենք, որ այս կամ այն վարպետին օգնութեան հասնենք: Ի՞նչ ձև տանք դրան: Իժուարութիւնը այդ է: Արտօնութիւն վերցնելու կայ արդեօք որևէ ձև: Միակ ձևն է, կարծում եմ, առաջարկել, որ պէսզի կուստարնի կօմիտէտը կամ Հայոց Տնայնագործական Ընկերութիւնը քննութեան առարկայ դարձնեն ու որոշ ձև տան այդ խնդրին:

Մ. Ղազարեանը, նկատելով, որ կատարելագործութիւնը դեռ ևս գիւտ չէ, առաջարկում է ամենմիայնպիսի գիւտ կամ կատարելագործութիւն նախ հիմնական ստու-

գութեան ենթարկել ու ապա միայն գործածութեան մէջ մտցնել:

Յ. Փիրալեանը յայտնեց, որ երկրագործական միջխտրութիւնը առհասարակ որոշ գումարներ տալիս է, իբրև բաշակերութիւն կատարելագործութիւններ անողներին: Ի հարկէ, ներկայ դէպքումն էլ միջխտրութիւնը կը տար, միայն թէ երկար ժամանակի աշխատանքով պէտք է ապացուցուի նրա օգտակարութիւնը և գործնականութիւնը:

Յ. Գննչեան առարկեց պ. Փիրալեանին, որ խրախուսելու համար երկար փորձեր անելու հարկ չը կայ: Պէտք է խիստյն ստուգել կատարելագործութիւններն ու գիւտերը և, եթէ արժանի է, խրախուսել:

Ի. Քուժաժեյաձէն նախազգուշացնում է, որ առանց հիմնական փորձերի ու գործածութեան՝ դժուար է նիւթական խրախոյս տալ: Օրինակ բերելով Քութայիսի շրջանից մետաքսէ մանարանների դէպքը, մատնանշում է, որ Մօսկուայի տօրքերի մէջ այստեղ մտցրած փոփոխութիւններն ու նորութիւնները դուրս եկան աննպատակալարմար: Ապա, օրինակ բերելով նաև մեղուաբուծութիւնից փեթակների խնդիրը, յայտնեց, որ հարկաւոր է զգոյշ լինել, լաւ փորձել և ինքը, գոնէ, ձեռնպահ կը մնայ այդ հարցում:

Յ. Գննչեան նորից է շեշտում, որ տեխնիքական գործը առաջ չի դնայ, եթէ չը խրախուսենք: Ուստի պնդում է որ, պէտք

է խրախուսել, նշանակել մրցահանդէս կամ հօնկուրս:

Ի. Քուժամեյածէն առարկում է որ, իր յիշած օրինակներն էլ վերաբերում են տեխնիկային, նրանց հեղինակները զիլլետանտներ չեն, ոչ էլ հասարակ վարպետներ, այլ իսկական տնայնագործներ, կուստարներ: Գործի սկիզբն է, հարկաւոր է զգուշաբար վերաբերուել:

Նախագահ Ալ. Քալանժար, օրինակ բերելով տօրքի մէջ արուած փոփոխութեան փորձը, որից երևաց, որ ատամնաւոր անիւններից առաջինը օգտակար է, յայտնեց, որ այն ինչ մենք չենք փորձել ու համոզուել անկարելի է յանձնարարել որևէ մէկին, բայց խրախուսել կատարելագործութիւն անողներին՝ յամենայն դէպս անհրաժեշտ է:

Յ. Փիրալեան.— Գիւղացիների համար կարևոր է, որ գործիքները ունենան պարզութիւն, որպէսզի փշանալու դէպքում դժուարութեան չը հանդիպեն ուղղելու նրան: Կատարելագործութիւնը պէտք է յարմարեցուած լինի գիւղական կուլտուրայի պայմաններին: Տեխնիկն էլ չէ կարող իր գնահատութեան մէջ կանգ առնել գիւղական կուլտուրայի յարմարութեան տեսակէտի վրայ:

Յ. Գենջեան.— Բարեփոխութեան պահանջը կայ: Ուրեմն այդ սկզբունքը պէտք է ընդունել:

Օր. Ս. Երմալեանը նկատում է, որ տ. Փա-

փաղեանի գիւտը՝ տօրքը բաւարարելու է գալիս միայն քաղաքի աշակերտուհիների պահանջին, որպէսզի նրանք կարողանան ազատ ժամանակը իրանց տանը նստել և աշխատել: Ուրեմն աւելի շուտ մասնաւոր ընաւորութիւն է կրում: Եւ ահա նա խնդրում է աջակցութիւն մարմնացնել իր այդ գիւտը:

Յ. Գենջեան.— Եթէ նա ունի յարմարութիւն, արժանի է խրախոյսի հէնց այն տեսակէտից, որ աշակերտուհիները շուրճակութեան արհեստը սովորում են կարճ ժամանակում: Նախ ուրեմն սովորելու նպատակով և երկրորդ, որ աշակերտուհին կարող է ազատ ժամանակը աշխատելով ապրել: Պէտք է անպայման ծանօթանալ այդ տօրքի հետ և եթէ իսկապէս արժանի է՝ խրախուսել:

Նախագահ Ալ. Քալանժար.— Ինչպէս ուրիշ անգամներ, յուսով եմ, որ Հայ Տնայնագործական Ընկերութիւնը այս անգամ էլ կօգնի տ. Փափաղեանին իրագործելու իր միտքը: Բայց այստեղ ընդհանուր սկզբունքի հարց է շօշափուում: Ի հարկէ պէտք է փորձել արուած գիւտերը և ապա միայն յանձնարարել ուրիշներին գործածութեան: Սըրանով հարցը համարում եմ սպառուած: Եւ որովհետեւ արդէն ժամը 3-ն է, ուստի թողնելով յարուցուած բոլոր խնդիրների վերջնական լուծումը, որոշումներ կայացնելը վերջին՝ երեկոյեան նիստին, յայտարարում եմ նիստը փակուած:

Նախագահ Ալ. Քալանժար միջանկեալ տեղեկացնում է Համագումարի անդամներին, որ Նունէ Մելիք Բախտամեանը հրաւիրում է յաջորդ օրը ժամը 1—2 այցելել կանսնց գլխարկներէ իր արհեստանոցը՝ Վելեամի նովսկայա փողոցի վրայ:

## Ն Ի Ս Տ Հ Ի Ն Ք Ե Ր Ո Ր Ք

(5 ապրիլի)

Համագումարի վերջին նիստը սկսուեց երեկոյեան ժամը մօտ 8-ին: Դահլիճը լի էր հանդիսականներով: Ներկայ էին մասնակցող բոլոր անդամները:

Նախագահ Ալ. Քալանժար.— Ընալով նիստը՝ յայտնեց, որ զեկուցումները վերջացել են. մնում է լսել այն յանձնաժողովի զեկուցումը, որ ընտրուել էր Համագումարի կողմից տնայնագործական դպրոցների մասին, նաև մի քանի խնդիրներ, որոնք կան Համագումարի ծրագրում, բայց չեն շօշափուած զեկուցումների մէջ, օրինակ՝ 1) Կենտրոնական դպրոցի հարցը, 2) Համագումար հրաւիրելու, 3) Տուցահանդէս կազմելու, 4) Միջոցների խնդիր՝ թէ ի՞նչ միջոցներով իրագործել ծրագիրները և առաջարկները, և այլն:

Ծրագրած հարցերը մենք ուղարկել ենք մեր ճիւղերին և բոլոր արհեստանոցներին:

Մենք, օրինակ, հարցրել ենք. ի՞նչ միջոցներով ապահովել նոր բացուած արհեստանոցները, մինչև որ նրանք կեանքի մէջ կը հիմնաւորուեն: Ոչ ոք այդ հարցի պատասխանը չէ տուել մինչև այժմ և մեր Համա-

գումարն էլ չը շօշափեց: Առհասարակ մարդիկ շուտ շուտ կանգ են առնում կառավարչական օգնութեան վրայ, իբրև ապահովութեան միակ աղբիւրի վրայ, բայց մենք, հայ տնայնագործութեան գործերի ղեկավարողներս, ինչպէս ասացի իմ զեկուցման մէջ, հասարակական կազմակերպութեան վրայ էինք հիմնում գործը. սկզբում օգնում էր Հայ Տնայնագործական Ընկերութիւնը, սակայն շարունակել այդ օգնութիւնը նա անկարող էր միջոցների պակասութեան պատճառով: Ինչպէս յայտնի է, Ընկերութեան միջոցները գոյանում են անդամավճարներէրէց և կողմնակի այնպիսի եկամուտներէրէց, ինչպէս են երեկոյթներն ու զբօսանքները, որոնք հազիւ 1000 ըուրլու են հասնում: Ուստի հարկ եղաւ դիմել մի կողմից մասնաւոր անձերի օգնութեան, իսկ միւս կողմից՝ բացուած արհեստանոցների պահպանութեան խնդիրը ապահովել տեղական կազմակերպուած հասարակական ոյժերով շինական հառարակութիւնների օգնութեամբ: Օգնելու կարիք կայ առաջին տարին կամ գոնէ վեց ամիսը: Ահա այդ ձևով ենք մենք կազմակերպել արհեստանոցները: Մենք նախնական օգնութիւն ենք հասցրել, բայց մեր միջոցները սուղ են եղել. նոր պահանջներ են գարթնում և հարկաւոր են հիմնական միջոցներ: Համագումարը, ի հարկէ, միջոցներ տալ չէ կարող, բայց մտքերի փոխանակութեամբ այստեղ պէտք է պարզուի այդ խնդիրը: Կաւ է, որ աջողուեց

հեռաբրբրել գիւղացիներին այդ բանով, սակայն առաջին տարին, գոնէ, չը պէտք է չափազանց ծանրաբեռնել նրան ու խրրանացնել: Մենք, ինչպէս առաջ, այս տարի ևս կաշխատենք աղբիւրներ որոնել, կը դիմենք դարձեալ մասնաւոր անձերի ու հաստատութիւնների աջակցութեան: Նպաստամատոյց յանձնաժողովը անցեալ տարի տուեց 1000 ըուրլի, կը խնդրենք որ այս տարի էլ տայ: Պետերբուրգի հայոց եկեղեց. Խորհուրդը նոյնպէս տալիս էր 1000 ը., թէև մենք խնդրել էինք աւելի, կը խնդրենք աւելացնել: Ապա բացուած է ըփ. Բուզուղեանի հաշուով Ծուրբութ գիւղի արհեստանոցը, Գիւլուշամբարեանի հաշուով Գորիում և Յիւրիւ վալում, Մանթաշեանը տալիս է 500 ըուրլի և այլն:

Մասնաւոր գումարներ մի որոշ քանակով միշտ կը գտնուեն յատուկ նպատակների համար նշանակուած. օրինակ, մօտ օրերս Զարգարեանցը ինքը ցանկութիւն յայտնեց 500 ըուրլի տալ 6 ամսուայ համար ներքին Ազուլիսում նոյնպիսի արհեստանոց բանալու: Այդպիսի անհատներ տեսնելով գործի օգտակարութիւնը, կարող են հանդէս գալ: Բայց, պարզ բան է, զրանից անկախ մեր Ընկերութիւնը պէտք է ունենայ մշտական միջոց, որպէս զի մի քիչ հանդիտ կերպով կարող լինի շարունակել գործը: Ես այս երկու օրերը լսեցի շատ առաջարկներ այս ու այն ձևով արկութիւնը անելու համար: Համագումարում էլ ասուեց,

որ պէտք է նկարներ հաւաքել, ալբոմ հրատարակել: Գեղեցիկ առաջարկներ են: Սակայն լինչ միջոցներով անել այդ բոլորը: Դա գործնական հարց է՝

Ա. Աթանասեան.—Այնպէս, ինչպէս սկսել է հայոց Տնայնագործական Ընկերութիւնը և շարունակում է բանալով արհեստանոցներ, միակ ուղիղ ճանապարհն է. գործը դնել բարեգործական հողի վրայ՝ սխալ կը լինի և անկարելի է: Արհեստանոցները, երբ պատրաստում են ապրանքներ և արդիւնաբերում՝ նրանք հարթում են ճանապարհ իրանց համար: Ապրանքը ինքն իրան պէտք է ապահովէ, ստացուող արտադրութիւններով պէտք է պահել արհեստանոցները: Նըրանց վաճառումից կը գումարուի անհրաժեշտ ծախքերի փողը: Հէնց այդ տեսակետից էլ սպառման կամ վաճառահանդէսների գործը ամենագլխաւորն է և անհրաժեշտ է շուտով կազմակերպել, որպէս զի անմիջապէս սպառելով ապրանքները՝ հոգացուէին ծախքերը: Ուրեմն հիմնական միջոցը ապրանքների սպառելն է: Նրանցով միայն կարելի է պահել արհեստանոցները: Իսկ հասարակական միջոցները կամ նպաստները նախնական միջոցներ են և նրանց վրայ չը պէտք է հիմնել արդիւնագործութիւնը:

Մ. Ղազարեանը մատնանշում է, որ արտադրուող ապրանքները բնաւ չեն կարող ծածկել ընդհանուր բիւջէի մինչև իսկ տասներորդ մասը, մանաւանդ որ այժմ մեր ութամասոյ գործունէութեան արդիւնը-

ները անկարելի է վաճառել ու նրանով պահել: Պատճառն այն է, որ մեր նախնական գործունէութիւնը դեռ կրթական է, մթերքները մեղանում դեռ թանդ են ձեռք բերում: Ցանկալի է, որ գոնէ երկու տարի արհեստանոցները նպաստներ ստանան, որպէս զի հիմնաւորուեն:

Պ. Ղարախանեանը, առարկելով Աթանասեանին, որ ներկայումս արդիւններով անկարելի է պահել արհեստանոցները, շեշտում է, որ նպաստը առ այժմ պէտք է շարունակել և ապա միայն պահանջել գործից, որ իր արտադրութիւններով ապրէ: Նախ միջոց պէտք է լինի, որպէսզի ապրանք արտադրուի: Եթէ կունենանք մանաւրաններ, տեղական հում նիւթերից կը պատրաստուեն հարկաւոր թիւերը և դրա շնորհիւ գործը բաւականին կը դիւրանայ: Առ այժմ եղածը դրուած է կրթական հողի վրայ, այլ ոչ գործարանական, և դրա համար էլ նրա արդիւնքի վրայ առ այժմ յոյս դնել չենք կարող: Անկարելի է սպասել միևնոյն ժամանակ, որպէս զի գործը իրան արդարացնի: Նախ տուէք լաւ վարպետներ և հում նիւթերը պատրաստելու յարմարութիւններ:

Յ. Փիրալեան.—Երբ խօսք է լինում միջոցների մասին, ճառախօսները դիմում են ծայրայեղութեան: Ժողովրդին տուէք տեխնիքական իսկական գիտելիքներ: Նրանք իրանք կարգարացնեն իրանց: Պէտք է ուրեմն տարածել արդիւնաբերական տեխնի-

քական գիտելիքներ, բայց տարածելու համար հարկաւոր են միջոցներ: Ասել՝ թէ այդ արհեստանոցները քանի որ իսկական հիմնական գիտելիքներ չեն տալիս, պէտք էլ չէ նպաստ տալ նրանց, սխալ է: Արհեստանոցները մի որոշ ժամանակ պէտք է օգնութիւն ստանան և ապա միայն սպասել նրանցից արդիւնք: Մինք պէտք է դեռ մի 3—4—5 տարի շարունակենք մեր գործունէութիւնը սկսած ուղղութեամբ: Համագումարը անկարող է վճռել միջոցի հարցը՝ թէ որի վրայ, զլիսաւորապէս, յոյս դնել՝ կառավարչական միջոցները, թէ՛ հասարակական: Հայոց Տնայնագործական Ընկերութիւնը, գոնէ նիւթական աջակցութիւն ցոյց տալ իր սուղ միջոցներով՝ անկարող է. թւում է ինձ, որ այդ հարցը դեռևս չէ հասունացել և մենք դարձեալ պէտք է քաշ տանք գործը: Իսկ Համագումարը հազիւ թէ որևէ հաստատութեան դիմէ փող խնդրելու:

Նախագահ Ալ. Քալանձար.—Համագումարը ունի կատարելու մի բարոյական մեծ գործ: Նա լինելով հաւաքական մարմին, բաղկացած տնայնագործական արդիւնաբերութեան գործողներից և համակրողներից, պէտք է ասէ իր դրական կամ բացասական խօսքը կողմնակի աջակցութիւնների նպատակայարմարութեան կամ անյարմարութեան մասին: Եթէ նա համոզուած է, որ սկսած գործունէութիւնը իսկապէս մի օգտաւէտ կուլտուրական ձեռնարկութիւն է, ուրեմն և նա պէտք է պահպանուի և քաջալերուի հասարակու-

թեան աջակցութեամբ և օժանդակութեամբ: Տնայնագործական Ընկերութիւնը վերջին տարին ստացել է նպաստներ Պետերբուրգի եկեղեցական խորհրդից և Նպաստամատոյց Յանձնաժողովից, նա ստացել է նաև մասնաւոր անձերից գումարներ կազմակերպելու արհեստանոցներ այս և այն տեղում: Եթէ արգարևս գործը կարևոր է, Համագումարը պէտք է ընդգծէ հասարակական օժանդակութեան անհրաժեշտութիւնը: Այն հիմնարկութիւնները և անձերը, որոնք հանդէս են եկել իրանց օժանդակութիւններով, ցանկանում եմ հաւատացած լինել, որ նրանց տուած բուրլիները իսկապէս օգտաւէտ կուլտուրական գործի համար են ծախսուել և որ նրանց նպաստը կոչուած է բեղմնաւոր ձեռնարկութեան աջակից լինելու: Համագումարի լուրջ կարծիքը և կշռադատուած խօսքը պէտք է ուղեցոյց դեր կատարի հասարակական հիմնարկութիւնների համար, որոնցից իւրաքանչիւրը բաւականաչափ ազատ ժամանակ և յարմարութիւն չունի զբաղուելու տնայնագործական կամ գիւղատնտեսական կարիքների մանրամասն ուսումնասիրութեամբ և նրանց համեմատական նշանակութեան լուսարարութեամբ:

Յ. Փիրալեան.—Դա ճիշտ ձևակերպութիւն է, այդ ոգով կարելի է որոշում կայացնել, Պետերբուրգի հայոց եկեղեցական վարչութիւնը, օրինակ, դեռ լայն կերպով չէ ընդունում այդ նպաստի կարևորութիւնը: Հա-

մագուժարը կարող էր խնդիրք զարթեցնել, որպէսզի այդ նպաստը նրանք շարունակեն և աւելացնեն:

Յ. Արիստակէսնանը, պաշտպանելով այն միտքը՝ թէ արհեստից օգուտ կը ստացուի, նկատում է, որ արհեստանոցները ներկայումս տալիս են միայն աշակերտներ ու վարպետներ և այն էլ ամենակարճ ժամանակամիջոցում: Ի՞նչ կարելի է անել 6 ամսուայ մէջ: Այդքան ժամանակամիջոցը հազիր բաւական է միայն արհեստի հիմքը, ծանօթութիւնը իւրացնելու և ինչ խօսք կարող է լինել շահաւէտութեան մասին: Մինչդեռ այդ արհեստը սովորելու համար հարկաւոր է ոչ թէ 6 ամիս, իսկապէս, այլ 2 տարի: Ահա դրանից յետոյ միայն կարելի է գործ պահանջել. պահանջել, որ արհեստը ինքը ծածկէ իր ծախքերը: Եւ նա կը ծածկէ:

Լ. Զառաֆեանը նկատում է, որ բոլոր արհեստանոցները ներկայումս գիւղերում կըրթական բնաւորութիւն ունեն, այլ ոչ գործաւորական, ուստի օգուտ նրանցից չպէտք է այժմ կարելի սպասել և չի էլ կարելի նըրանց թողնել իրանց սեփական ոյժերին:

Ս. Տէր Պօղոսեանը, որ նպաստամատոյց յանձնաժողովի գործերով շրջել է Գանձակի ու Երևանի նահանգների գանազան մասերը, պատմեց՝ թէ ինչպէս գիւղացիները աւելի գերազաս են համարում խնդրել արհեստանոցներ բանալ իրանց շրջանում, քան չընչին նպաստներ ստանալ: Մի շարք գիւղեր

Շամշադինու շրջանում արդէն երկու տարի է որ դիմումներ են անում այդ ոգուով:

Ի. Քումաձեւաձէն օրինակ բերելով Իմերեթիայի շրջանում 10-ի չափ բացուած արհեստանոցների ճակատագրի մասին, որոնք ահագին եռանդ ու ծախսեր կլանեցին, բայց անկարող լինելով սպառել պատրաստած իրերը իրանց տեղում և պահպանել իրանց գոյութիւնը իրանց արտադրութեան միջոցներով, վերջ ի վերջոյ քայքայուեցին ու ոչնչացան, ուստի նախագրուչացում է Համագումարին չափազանց արագ չընդարձակել գործը, չը բազմացնել արհեստանոցների թիւը և փոխանակ 20-ի՝ բանալ 2-3-ը, բայց անցնել արհեստը հիմնաւոր կերպով: Ճառախօսը նոյնպէս անհրաժեշտ է համարում 2-3 տարի նպաստել գիւղացիներին, հակառակ դէպքում աջողութիւն չէ սպասում: Նա միևնոյն ժամանակ անտեղի է համարում յոյս դնել կառավարութեան օգնութեան վրայ, առաջարկում է չաւելացնել արհեստանոցների թիւը, խնդրել Կովկասի Բարեգործ. Ընկերութեանը իւր հաշուով բանալ 2-3 լաւ արհեստանոցներ գիւղերում, իսկ Տնայնագործական Ընկերութիւնը շարունակէ իւր օգնութիւնը: Կօօպերատիւ հիմունքներով առայժմ տպահովել գտնում է անհնարին, քանի որ նրանք իրանք պէտք է աշխատեն սկզբներում օգուտ ստանալ իրանց գործի աջողութեան համար, որից յետոյ միայն նրանք կարող

կը լինեն օգնութեան հասնել տնայնագործական գործին:

Յ. Փիրալեանը համաձայնում է Քուլթաթիլաձէի ասածների հիմնական մտքին, նըկատելով սակայն, որ նա վերաբերում է մետաքսէ գործուածքներին:

Ի. Քուլթաթիլաձէն բացատրում է, որ ինքը չուզեց նկատել այն՝ թէ բամբակէ գործուածքներին շատ մեծ տեղ է տրուում, որովհետեւ դա համարում է կրթական տեսակէտից արուած, բայց, ի հարկէ, պէտք է դիմել բոլոր գործուածքներին:

Յ. Արիստակէսեանը, կրկնելով իր նախկին ասածները, առաջարկում է վարպետներ պատրաստելու համար, 6 ամիսը համարելով քիչ, 6 ամիս էլ աշխատեցնել նրանց իբրև բանուոր, որպէսզի փորձառութիւն ստանան: Այդ 6 ամիսը նա հնարաւոր է համարում աշխատեցնել վարձով:

Մի քանի ճառախօսներ շեշտում են, որ հայ Տնայնագործական Ընկերութիւնը պէտքէ ապահովի իրան հաստատ հասոյթներով մի քանի տարուայ ընթացքում, որպէսզի կարողանայ լուրջ գործեր կազմակերպել և որոշ սիստեմով նրանց իրականացնել:

Խնդիրներ են ծագում, թէ ինչ գումար կարող է բաւարար լինել փոքր ի շատէ լուրջ գործունէութեան համար: Պարզում է, որ Ընկերութիւնը իւր տնայնագործական և առաջիկայ գիւղատնտեսական գործունէութեան ծրագիրները նոյն իսկ համեստ կերպով իրագործելու համար, պէտք է ունենայ

իւր տրամադրութեան տակ տարեկան մօտ 8—10 հազար ըուրլի գումար:

Ճառախօսները հաւաստիք են յայտնում, որ հասարակական հիմնարկութիւնները, Պետերբուրգի եկեղեցական Խորհուրդը, Նըպաստամատոյց Յանձնաժողովը և մասնաւոր անձեր արձագանք կը տան Ընկերութեան սկսած բեղմնաւոր գործունէութեան:

Նախագահ Ալ. Քալանձար, համարելով հարցը պարզաբանուած, առաջարկում է իբրև ձևակերպութիւն՝ Համագումարի կողմից դիմել Պետերբուրգի հայոց եկեղեց. Խորհրդին և Նպաստամատոյց Յանձնաժողովին հետևեալ բանաձևով. «Համագումարը, գրտնելով Թիֆլիսի հայ Տնայնագործական Ընկերութեան սկսած և շարունակուող գործունէութիւնը բեղմնաւոր և տրուած նպաստների գործադրութիւնը արդիւնաւէտ, խընդրում է շարունակել նիւթական օժանդակութիւնը և յատկացնել այդ նպատակի համար 5,000 ըուրլի»:

Առաջարկը միաձայն ընդունում է Համագումարի կողմից:

Երկրորդ Համագումար հրաւիրելու հարցի առիթով, Համագումարը ընդունում է նախագահ Ալ. Քալանձարի հետևեալ բանաձևը.

«Համակրելով երկրորդ Համագումար հրաւիրելու մտքին, վերապահում է հայոց Տնայնագործական Ընկերութեան վարչութեանը, որպէսզի կըռադատելով հանգա-

մանքները՝ յարմար ժամանակին նա հրա-  
ւիրէ համագումար»:

Նախագահ Ալ. Քալանժար.—Այժմ պէտք է  
որոշու՞մ կայացնել դպրոցական խնդրի մա-  
սին, որ մենք յետաձգեցինք, մինչև որ մեր  
ընտրած դպրոցական յատուկ յանձնաժողովը  
կը տայ իւր գեկուցումը Թիֆլիսում  
կենտրոնական գորգագործութեան և ջուլ-  
հակութեան վարպետուհիներ պատրաստե-  
լու դպրոց բանալու մասին: Ինչպէս յիշում  
են ժողովականները, Համագումարը իմ գե-  
կուցման առիթով որոշում կայացրեց՝ հաս-  
տատել շրջանական երեք դպրոց-արհեստա-  
նոցներ, մէկը Ղարաքիլիսայում կամ Համամ-  
լիում, երկրորդը՝ Շուշու կամ Գանձակի  
շրջանում, իսկ երրորդը Յիւնիվալում (Քու-  
թայիսի շրջան), որոնց նպատակը պէտք է  
լինէր վարպետուհիներ պատրաստել գեղա-  
կան արհեստանոցների համար: Այժմ հար-  
ցը վերաբերում է Թիֆլիսում կենտրոնա-  
կան դպրոց բանալուն: Կարելի է այդ եր-  
կու առաջարկները իրար հետ և հաշտեցնել,  
միացնել, կամ թէ թողնել մէկն ու մէկը  
ներանցից: Բայժոնական դպրոցը ունի իւր  
ստաւելութիւնը, այդ այն է, որ նա աւելի  
մօտ է տեղին և ժողովրդին, զբանով թերևս  
վերանան այն անյարմարութիւնները, որ  
յաճախ ծագում են կեանքում: Մինչդեռ  
կենտրոնական դպրոցը լինում է անմատ-  
չելի գաւառացու և գիւղականի համար, կա-  
պուած չափազանց մեծ արգելքների հետ:  
Կենտրոնական դպրոցի հարցը զբու՞ած էր

մի քանի տարի առաջ, բայց մինչև այսօր  
էլ նա չը կայ, որովհետև նա հետու է տը-  
նայնագործից և թանգ էլ է: Այդ առիթով  
անա պէտք է լուրջ կերպով խօսել:

Կարդացում է յանձնաժողովի գեկուցու-  
մը, որի մէջ ասուած է հետեւեալը.

«Յանձնաժողովը, որ ընտրուած էր քըն-  
նելու իշխանուհի Մ. Թումանեանի առաջար-  
կած գորգագործութեան և ջուլհակութեան  
կանանց դպրոց-արհեստանոցի նախապիծը,  
մտցրեց նախագծի § 3-ի մէջ այն փոփո-  
խութիւնը, որ դպրոցում ընդունւում են աղ-  
ջիկներ ոչ փոքր 14 տարուց, որոնք անցել  
են առնուազն տարրական դպրոցի դասըն-  
թացք: Բացի այդ յանձնաժողովը կարևոր  
համարեց դպրոցին կից ունենալ 1) պահեստ  
գործուածքներ և գործիքներ ծախելու հա-  
մար, 2) մշտական նկարիչ և 3, պարբերա-  
կան դասընթացքներ տնայնագործական  
զանազան արհեստներին վերաբերեալ: Ստո-  
րագրել են Յ. Փիրալեան, Ի. Քութաթելա-  
ձէ: Առանձին կարծիքի են ֆուսցել Սօֆիա  
Եկմալեան և իշխանուհի Մ. Թումանեան:

Իշխան. Մ. Թումանեան բացատրեց, որ  
Թիֆլիսի արհեստանոց-դպրոցը բոլոր տե-  
ղերի աղջիկներին է ծառայելու և այնտեղ  
տրուելու է հիմնական գիտութիւն, ինչպէս  
նկարչութիւն, հաշուապահութիւն և այլն,  
և այդպիսով դպրոցը աւելի ընդարձակ նը-  
պատակ ունի, քան րայժոնականը, որ ծա-  
ռայելու է աւելի սահմանափակ շրջանի: Ա-  
պա կարգում է իր առաջարկած ծրագիրը,

որի համաձայն ծրագիրը համարուում է ընդգունելի 2 կէտի ուղղումով: Զեկուցանողը ցանկալի է համարում, որ դպրոց-արհեստանոց լինի թէ գիւղական շրջանում և թէ Թիֆլիսում, միայն թէ վերջինիս աւելի առաւելութիւն է տալիս:

Մ. Ազգարեանը վաղաժամ է գտնում Թիֆլիսում կենտրոնական դպրոցի բացումը, և ընդհակառակը, ցանկալի՝ ըայօնականների բացումը գիւղական շրջաններում: Միևնոյն ժամանակ, ի նկատի առնելով գաւառական դպրոցների նիւթական աննախանձելի վիճակը, այդպիսի մեծածախս դպրոցի բանալը ճառախօսը համարում է ցնորք ու հարց է տալիս. մի քանի տարիներ առաջ կար գորգագործական դպրոց, քանի՞ վարպետ տուեց նա գիւղերին:

Պ. Ղարախանեանը միանալով պ. Քալանթարի առաջարկին՝ ըայօնական դպրոցներ բանալու մասին և անուանելով իշխանուհու առաջարկը գեղեցիկ բան, բայց ապագայի գործ, նկատում է, որ որքան մօտ լինի դպրոցը գիւղին՝ այնքան աւելի է լաւ, աւելի ցանկալի:

Օր. Մ. Եքմալեանը բաժանում է իշխանուհու զեկուցումը երկու մասի. զուտ դպրոցական մասը պէտք է լինի գաւառական շրջանում, ինչպէս պ. Քալանթարն էր ասում, ըայօնական, իսկ նիւթերի հաւաքումը, բիւրօն կատարուելի Թիֆլիսում, մանաւանդ որ գիւղացի աղջկերքը քաղաք չեն գնալ:

Եշ. Թումանեան պաշտպանելով իր ծրագիրը, մատնանշում է, որ գորգագործութիւնը ամենակարևորն է և եթէ առայժմ թողնենք այդ հարցը, առաջ չենք գնալ: Այս առարկելով իրան ընդդիմախօսողներին, բացատրում է, որ եթէ գորգագործութեան դպրոցը փակուեց՝ պատճառը գլխաւորապէս հէնց այն էր, որ գիւղական աշակերտուհիներ չը կային, եղածները Թիֆլիսեցիներ էին և նրանք էլ չուզեցին գնալ գիւղեր ու այդպիսով դպրոցը անկարող եղաւ ծառայել իր նպատակին: Բացի դրանից, իշխանուհին կանգ է առնում նաև այն հանգամանքի վրայ, որ այդ դպրոցը պահուում էր իր համեստ միջոցներով և եթէ հնարաւոր լինէր, այժմ էլ կանէր, դժբաղտաբար դա զգալի գումար է պահանջում: Ինչ վերաբերում է այն նկատողութեանը՝ թէ գիւղացի աղջկերքը քաղաք չեն գնայ, դա համարում է անտեղի, որովհետև այն ժամանակը նրանք չեն գնալ և ըայօնական դպրոցներ:

Օր. Մ. Եքմալեան ըայօնական դպրոցի յարմարութիւններին մէկն էլ համարում է այն, որ գիւղացին իր նիւթը կը տանէ դպրոց սովորելու համար, մինչդեռ քաղաքում այդ բանը չի լինի:

Ի. Քումամելաձէն դժուարանում է ասել, թէ որն է երկուսից ցանկալի. որովհետև երկուսն էլ հարկաւոր են: Սակայն անհրաժեշտ է համարում նրանց պահպանութեան միջոցների որոշումը: Կենտրոնականի համար ճառախօսը հեշտ է համարում միջոցներ գտնել,

Թէև նա աւելի շատ միջոցներ է պահանջում ընդարձակ նպատակ ընդգրկելով: Մինչդեռ ըրայժմականի համար, որը նուիրուած պիտի լինի միայն տնայնագործական արհեստին, դժուար կը լինի գտնել: Յանկալի է գտնում, որ այդ դպրոցները բացուեն կառավարութեան միջոցներով: Նա ամենից կարևորը թէ գորգագործութեան և թէ ջուլհակութեան վարպետներ պատրաստելու ինդիերն է համարում, որովհետև եղած ինստրուկտորները սուրօգատներ են միայն: Գործը, հաստատ հիմքերի վրայ դնելու նպատակով պէտք է հմուտ մարդիկ էլ տալ: Այդ պատճառով նա կարծում է, որ կենտրոնական դպրոցից էլ պէտք է սկսել և ամենևին չը վախենալ՝ թէ գիւղից չեն գայ սովորելու, օրինակ՝ գիւղերից գալիս էին Քութայիս սովորելու և շատերը գորգագործ վարպետներից դիմել են ճառախօսին ուղենալով իմանալ, թէ հրտեղ կարելի է կատարելագործուելու գնալ, բայց նա հնարաւորութիւն չէ ունեցել բաւարարութիւն տալ նրանց:

Նախագահ Ալ. Քալանթար, ամփոփելով արտայայտուած չարժիքները, յայտնում է, որ կայ երկու կարծիք՝ կենտրոնական դպրոցի կողմնակից և ըրայժմական: Երկու տեսակ դպրոցների անհրաժեշտութիւնը ընդգծում է ճառերի մէջ, ուստի Համագումարը կարող է երկուսն էլ ընդունել, թողնելով դպրոցների կազմակերպութեան մանրամասնութիւնները հմուտ անձերից բաղկացած յատուկ մասնաժողովի:

Յ. Փիրալեանը յարուցուած հարցի առիթով նկատում է, որ անհրաժեշտ է Թիֆլիսում հիմնաւորապէս պատրաստուած մի հիմնարկութիւն ունենալ, այդ տեսակէտից կենտրոնական դպրոցը Թիֆլիսում կարող էր բաւարարութիւն տալ ինստրուկտորներ պատրաստելով: Ուստի առաջարկում է հիմնել մի կենտրոնական հիմնարկութիւն դպրոցով համաձայն այն ծրագրի, որը առաջարկեց իշխանուհին, իսկ ըրայժմականի նկատմամբ որոշումը թողնել առկախ:

Օր. Ս. Երմախան.—Ինստրուկտորական դպրոցի հարցը լուծելու համար ձեռնհաս չէ համարում Համագումարը, որովհետև նա, լինելով համակովկասեան, կարող է բանալ կառավարութեան միջոցներով: Այդ հիման վրայ ինստրուկտորների ինդիերը առաջարկում է թողնել, իբրև ապագայի գործ և ընդունել ըրայժմականը, որ միայն վարպետներ պէտք է պատրաստէ:

Պ. Ղարախանեանը զարմանում է, որ դպրոցը ուղում են բանալ գիւղին օգնելու նպատակով՝ քաղաքում, այլ ոչ գիւղում: Եւ հարցնում է, ինչո՞ւ են այդպիսի դպրոցը Ռուսաստանում բացել Վիշնեւոցկում, այլ ոչ Պետերբուրգում: Պարզ հետևում է զրանից, որ գիւղացիներին արհեստների հետ ծանօթացնելու ու սովորեցնելու համար դպրոցը պէտք է հեմնել տեղն ու տեղը, այլ ոչ գիւղացուն տանել քաղաք:

Յ. Փիրալեանը շտապում է ուղղումն մտցնել իր ասածների մէջ, որ ինքը առա-

Չարկելով բանալ Թիֆլիսում հիմնարկութիւն դպրոցի բաժնով, այնքան դպրոցին չէ նշանակութիւն տալիս, որքան կենտրոնական ղեկավարող հիմնարկութեանը, որ պէտք է նմուշներ հաճաքէ, պատկերներ ու ալբոմներ հրատարակէ և այլն:

Նախագահ Ալ. Քալանձար առաջարկում է դպրոցի հարցի նկատմամբ հետևեալ ձևակերպութիւնը. «Համագումարը նպատակաշարմար է համարում ունենալ Թիֆլիսում կենտրոնական տնայնագործական-ղեկավարող մի հաստատութիւն տնայնագործական արհեստների ուսուցման ընդհանուր ղեկավարութեան համար և շրջանային դպրոցներ վարպետներ պատրաստելու համար: Իսկ կազմակերպութեան գործը վերապահում է զբաղուելու առանձին յատուկ յանձնաժողովին:

Բանաձևը ընդունւում է ժողովի կողմից: Ապա նախագահը յանձնարարելով ներկայ եղողներին ուղադրութեան մի շարք հրատարակութիւններ տնայնագործութիւնից, նաև նոր ստացուած «Սպառողի դաւանանքը» գիրքը, յայտնում է, որ Հայուհեաց Ընկերութիւնը հրաւիրում է Համագումարի անդամներին միւս օրը ժամը 12-ին այցելել իւր արհեստանոցը, իսկ Պ. Քուլթաթեւ լաձէն առաւօտեան ժամը 10-ին Շերամապահական կայարանը: Այնուհետև նախագահը աւելացնում է, որ այս ամառ գուցէ հնար լինի ամարային կուրսեր կազմել այնպիսի տեղում, ուր լինէին տնայնագոր-

ծական, կաթնատնտեսական և տ. Վ. Ա. Վերմիշեանի դպրոցի դամբիւղագործութեան արհեստները միացած մի տեղում:

Յ. Փիրալեան յայտնում է, որ զամբիւղագործութեան զարգացման մասին դիմումներ շատ են լինում, բանը նրանումն է որ ուսուցիչ քիչ կան: Ուստի նախ նպատակաշարմար է համարում ուսուցիչների տունկերի տարածումը, որի համար առաջարկում է դիմել անտառապետ Եֆիմ Պաւլովիչ Գազեանովին, քանի որ ուսուցիչների տեսակները 130-ի հասնելով՝ դժուար է որոշել, թէ որն է պիտանին, կարևորը՝ զամբիւղագործութեան համար: Տունկեր բերել տալ նաև Մօսկուայից 500 հատը 3 բուրլիով:

Նախագահ Ալ. Քալանձար առաջ է բերում բոլոր ձեւակերպութիւններ և որոշումները վերջնական հաստատութեան ենթարկելու համար և Համագումարը վաւերացնում է նրանց: Ահա այդ ձեւակերպութիւնները.—

1. Տնայնագործութեան արդիւնաւէտութիւնը պէտք է որոշել և գնահատել գիւղական կեանքի պայմաններում:

2. Պէտք է ուսումնասիրել տնայնագործական արհեստների արդիւնաւէտութեան աստիճանը երկրի զանազան մասերում և պայմաններում:

3. Տնայնագործական արհեստների

ըրջանները պէտք է բաժանել ոչ միայն ըստ տեղական մթերքների առատութեան, այլ և ազդաբնակութեան պահանջների և տնտեսական հանգամանքների համաձայն:

4. Արհեստանոցները պէտք է բանալ գլխաւորապէս գիւղական շրջաններում և օժտել նրանց՝ գործիքներով, գրադարաններով և նմոյշների հաւաքածուններով:

5. Իւրաքանչիւր արհեստանոցի շուրջը պէտք է կազմել մի վարչութիւն կամ հոգաբարձութիւն, որը աշակցէր նրա գործունէութեանը: Նոյն նպատակին կարող են ծառայել և Հայ Տնայնագործական Ընկերութեան տեղական ճիւղերը:

6. Պետութիւնը կամ հաստատութիւնները պէտք է իւրաքանչիւր գիւղական արհեստանոցին յատկացնեն առաջին և գուցէ երկրորդ տարուայ համար օժանդակութիւն, եթէ ոչ լիովին, գոնէ ոչ պակաս, քան կէսը ամբողջ նախահաշուի, թողնելով ծախքերի միւս մասը գիւղերի վրայ:

7. Արհեստանոցը պէտք է սովորեցնի աշակերտին ընդունել պատուէրներ և նրանց ճշտապէս կատարել:

8. Արհեստանոցների ղեկավարներ պատրաստելու համար անհրաժեշտ է ունենալ տնայնագործութեան մի կամ մի քանի ճիւղերի շրջանային կենտրոնական դպրոցներ յարմար կէտերում բոլոր կրթական և արհեստգիտական պարագաներով:

9. Զուլհակութեան, գորգագործութեան և միջանի ուրիշ հիւսուածային արհեստների համար բանալ շրջանային դպրոցներ առայժմ երեք կէտերում Մեծ-Ղարաքիլիսայում (կամ համամլիում) Շուշում կամ Գանձակում և Ցխինուալում:

10. Այդ դպրոցների վարպետներից կարող են պատրաստուել հրահանգիչներ կամ ինստրուկտորներ որոշ փորձառութիւնից և կատարելագործութիւնից յետոյ:

11. Շրջանային դպրոցին կից պէտք է բանալ լրացուցիչ դասընթացքներ նոր գործիքների և կերտուածքների հետ ծանօթացնելու համար:

12. Բանալ մի կենտրոնական տնայնագործական հաստատութիւն թիֆլիսում տնայնագործական արհեստների ուսուցման ընդհանուր ղեկավարութեան համար:

13. Արհեստանոցներին կից, ուր հնարաւոր կը լինի, կազմակերպել գրագիտական դասընթացք:

14. Միջոցներ ձեռք առնել պահելու իւրաքանչիւր շրջանի համար յատուկ հրահանգիչներ (ինստրուկտորներ):

15. Անհրաժեշտ է հրաւիրել մի մասնագէտ, տեխնիկ, որ իւր վերահսկողութեան տակ առնէր ամբողջ երկրի անայնագործական արհեստների տեխնիքական մասի ղեկավարութիւնը:

16. Յանկալի է, որ Թիֆլիսի հայ Տնայնագործական Ընկերութիւնը ունենայ իր յատուկ գործակալը կամ շրջիկ ղեկավարը, որ հսկի բոլոր արհեստանոցների վրայ և տայ ցուցումներ նորերը կազմակերպելու ժամանակ:

17. Զարգացնել աստիճանաբար ըստ հնարաւորութեան անայնագործութեան և միւս ճիւղերի ուսուցումը և տարածումը, գորգագործութեան, մետաքսագործութեան, զամբիւղագործութեան, կողովագործութեան, թօկագործութեան, բրուտութեան, կաշուեղէնի, փայտեղէնի, քարեայ և մետաղեայ իրերի մշակութեան: Զուլհա-

կութեան մէջ առանձին ուշադրութիւն դարձնել բրդեայ գործուածքների պատրաստութեան վրայ, կատարելագործելով արհեստը և գործուածքները:

18. Պէտք է քաջալերել թէ գործիքների և թէ արհեստների մէջ կատարելագործութիւն անողներին դրամական և այլ օժանդակութիւններով:

19. Միջոցներ ձեռք առնել ուսումնասիրելու կովկասեան ոճերը և պատրաստելու ալբօմներ՝ հրատարակութեան և ընդհանուր գործադրութեան համար:

20. Ուսումնասիրել տեղական նրմուշները և ճաշակը գործուածքների և կերտուածքների վերաբերութեամբ՝ տեղական տարազի պահանջներին բաւարարութիւն տալու:

21. Ունենալ պարսկական յայտնի գորգերի նկարները՝ գորգադործներին բաժանելու համար:

22. Վերցնել պատուէրներ զանազան հիմնարկութիւններից՝ դպրոցներից, հիւանդանոցներից, զօրամասներից, ատեաններից և մասնաւոր գրասենեակներից՝ աշխատանք տալու անայնագործներին:

23. Խնդրել Թիֆլիս քաղաքի ինքնա-

վարութիւնից և Թիֆլիսի Բօրսային Կօմիտէտից, որ նրանք միասին, աջակցութեամբ Տնայնագործական Կօմիտէտի, Հայ Տնայնագործական Ընկերութեան և այլ հիմնարկութիւնների, ինչպէս օրինակ Կովկասեան Գիւղատնտեսական և Ընկերութեան, բանան մի պահեստ-թանգարան՝ նման Մօսկուայի և Վեատկայի պահեստ-թանգարաններին:

24. Պահեստներ ունենալ նաև շրջաններում և գաւառական կենտրոններում, եթէ կարելի է նոյն իսկ իւրաքանչիւր արհեստանոցին կից:

25. Հում նիւթերի էժանացման համար ձեռք առնել մի շարք միջոցներ, մտնելով յարաբերութիւնների մէջ առաջին աղբիւրների հետ, նպաստելով բանալու բամբակի և բրդի տեղական մանարաններ, տարածելով մանող մեքենաներ, որոնք մշակէին տեղական հում նիւթը: Ձեռք բերել բուրդ գզելու և սանրելու գործիքներ շրջանային դպրոց-արհեստանոցների համար:

26. Պատրաստուած և վաճառահանող գործիքների և ուրիշ իրերի նրմուղներ ուղարկել կարևոր հաստատութիւններին և հիմնարկութիւննե-

րին, Մօսկուայի պահեստ-թանգարանին և ուրիշներին:

27. Զուգահեռներին պահպանելու և խրախուսելու նպատակով պատուէրների փորձեր անել ճօթերի, սրբիչների և ուրիշ իրերի, վճարելով արշիւնին 5—15 կօպէկ:

28. Իւրաքանչիւր տարի որոշ ժամանակ Թիֆլիսում, ապա և ուրիշ կենտրոններում բանալ շուրհակութեան և ուրիշ արհեստների արգիւնքների վաճառահանդէս:

29. Աջակցել գաւառական այն փորձերին, որոնք նպատակ ունեն կազմակերպել տնայնագործական իրերի վաճառահանումը:

30. Նպաստել տնայնագործների ընկերակցութիւնների կազմակերպութեանը և մշակել կանօնադրութեան ծրագիրներ:

31. Անհրաժեշտ է կազմել յատուկ Կօմիտէտ՝ տարածելու գիւղերում ընկերակցութիւնների գաղափարը և գործնականապէս աջակցելու այդ կազմակերպութիւնների իրագործութեանը:

32. Խնդրել Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութիւնից և ուրիշ հիմնարկութիւններից ընթացք տալու այդ գործին մինչև Կօմիտէտի հիմնուելը:

33. Խնդրամատոյց լինել, որ թէ մասնաւոր տնայնագործների և թէ ընկերակցութիւնների համար հաստատուի էժան կրեդիտ:

34. Պահպանել միութիւն տնայնագործական գործողների միջև և զարգացնել նրանց միջև սերտ և կենդանի յարաբերութիւններ համագումարներով, խորհրդակցութիւններով, ցուցահանդէսներով և հրատարակութիւններով:

35. Համագումարներ և խորհրդակցութիւններ կարևոր են պարբերաբար թէ կենտրոնական և թէ շրջանային:

36. Երկրորդ համագումարի ժամանակի նշանակելը թողնել Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան Վարչութեանը:

37. Յուցահանդէսների կազմակերպութիւնը շատ կարևոր է թէ կատարելագործութիւնները գնահատելու և տարածելու և թէ տնայնագործական իրերի վաճառահանութիւնը զարգացնելու համար:

38. Նպատակայարմար է կովկասեան մի մեծ ցուցահանդէս կազմել համառուսական ցուցահանդէսից առաջ, որպէս զի կարելի լինի կազմակերպել

կովկասեան բաժինը համառուսականում լիակատար կերպով:

39. Խնդրել Հայ Տնայնագործական Ընկերութիւնից, որ նա բանակցութեան մէջ մտնի կովկասեան Տնայնագործական կօմիտէտի, կովկասեան Գիւղատնտեսական տեխնիկական ընկերութիւնների և այլ հաստատութիւնների հետ կազմակերպելու այդ ցուցահանդէսը:

40. Դիմել Պետերբուրգի Հայ եկեղեցական կալուածքների կառավարող Խորհրդէն և Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովին հետևեալ բանաձևով. «Տնայնագործական Համագումարը, գտնելով Թիֆլիսի հայ Տնայնագործական Ընկերութեան սկսած և շարունակուող գործունէութիւնը բեղմնաւոր և մինչև այժմ տրուած նպաստները արդիւնաւէտ գործունէութեան մէջ, խնդրում է աւելացնել տարեկան նպաստի քանակը մինչև 5000 ռուբլի:

41. Ներկայացնել ներկայ Համագումարի այն որոշումները, որոնք վերաբերում են պետական աջակցութեան, կովկասեան Փոխարքային, երկրագործութեան, առևտրի և արդիւնագոր-

ծուծեան և Ֆիննանսների մինիստրութեան, խնդրելով նիւթական աջակցութիւն:

Այնուհետև յատուկ խօսք է խնդրում Ա. Աթանասեանը.

Ա. Աթանասեան.—Սրանից 4 տարի առաջ 1905 թուի աշնանն էր կարծեմ, հանգուցեալ բժշկուհի Օհանեանը Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ժողովում կարգաց մի դասախօսութիւն տնայնագործական արհեստների մասին: Ոչ ոք չէր կարող կարծել, որ երկու տարուց յետոյ նրա առաջին պտուղները պիտի քաղենք, որ նրա այդ քարոզածը այսքան մեծ գործ կը դառնայ այսօր: Բայց նրա աշողութեան պատճառը այն է, որ Տնայնագործական Ընկերութիւնը անմիջապէս կանգնեց ուղիղ ճանապարհի վրայ, տարաւ իր գործունէութիւնը գիւղերը և գործը դրեց հաստատուն հողի վրայ:

Այստեղ բոլորն էլ գիւղացու անունն են տալիս, ուստի բնական է, եթէ Տնայնագործական Ընկերութիւնը նախ կանանց ձեռագործները ուզեց արդիւնաւոր դարձնել, իբրև մի նոր եկամուտի աղբիւր գիւղացու դրութիւնը թեթևացնելու: Սակայն հետագայում գաւառի սոսկալի դրութիւնը տեսնելով, տեսնելով, որ անհրաժեշտ են աւելի արմատական միջոցներ գիւղացու տնտեսական ընկած վիճակը բարձրացնելու, հայ Տնայնագործական Ըն-

կերութիւնը որոշեց ընդառաջ գնալ այդ ժողովրդին և դարձնել Տնայնագործական Ընկերութիւնը Կիւղատնտեսական-տնայնագործական ընկերութիւն: Իմ խօսքը ի հարկէ, վերաբերում է գաւառից եկածներին: Աւելի թշուառ դրութիւն, քան այն՝ որի մէջ գտնուում են մեր գիւղերը, դժուար է երևակայել, ուստի ուրախութեամբ ողջունում եմ Տնայնագործական-Ընկերութեան այդ որոշումը, որ կոչուած է աւելի ընդարձակ չափով, արմատական միջոցներով օգնելու թշուառ գիւղացուն: Կարծում եմ, որ ներկայ դուտ տնայնագործական ժողովը կը լինի և վերջինը, հետագայում մենք կը հանդիպենք իրար աւելի ընդարձակ ծրագրով հաւաքուած համագումարում: Ուրախանում եմ տեսնելով այստեղ հայ կնոջ և հայ աղջկայ աշխատանքի արդիւնքը, բայց գիւղացի տղամարդունը չենք տեսնում և իրան գիւղացուն էլ, որը թշուառ դրութեան մէջ է այժմ, չենք տեսնում: Կովկասում չը կայ մի մարմին, որը հոգ տանի նրա մասին: Իմ շրջագայութեան ժամանակ ես սոսկալի փաստերի ականատես եղայ: Տեսայ գիւղացու ցանած սերմերը և պէտք է ասեմ, որ 100-ից միայն 32-ն էր պիտանի, ցանելուց յետոյ այն 32-ն էլ, ի հարկէ, պիտի փչանայ: Ահա թէ ինչու է սոված մնում մեր գիւղացին: Մինչդեռ նրա դրանը գիւղում ընկած էր Վիէննայից բերել տուած 95 բուրլանոց փրկարար սերմ մաքրելու մեքենան և նրա մասին գաղափար չունենա-

լով, չէր օգտուում նրանից: Ծայրայեղ տը-  
գիտութեան մէջ է մեր գիւղացին և մենք  
տեսնում ենք նրա անկարողութեան չըն-  
չին մասը միայն: Ահա այդ տեսակէտից  
ողջունում եմ Տնայնագործական Ընկերու-  
թեան որոշումը՝ դառնալ գիւղատնտեսական.  
կանայք կը գործեն տնայնագործական բաժ-  
նում, իսկ տղամարդիկ՝ գիւղատնտեսական.  
երկուսն էլ կողք-կողքի, համերաշխ լծա-  
կցելով, հանդէս կը գանք ապագայում միա-  
ցած գործունէութեամբ և աւելի բազմա-  
մարդ կը դարձնենք միւս համագումարը:

Նախագահ Ալ. Քալանթար ընդարձակ պատ-  
ճառաբանուած ճառով աւարտում է Համագու-  
մարի աշխատանքները: Իւր վերջին խօսքերի  
մէջ նա ասաց, ի միջի այլոց, հետեւեալը.

«Աերջացնելով Համագումարի պարապ-  
մունքները, հարկ եմ համարում մի քանի խօսք  
ասել: Մենք կարդացինք 26 զեկուցումներ  
ու շօշափել ենք շատ հարցեր: Սակայն այդ  
կարդացուած զեկուցումների մէջ չէ միայն  
Համագումարի ոյժը և նշանակութիւնը, այլ  
նաև մարդկանց շփման, մտքերի փոխանա-  
կութեան, բազմատեսակ խորհրդածութիւն-  
ների մէջ, որ կայացրինք այստեղ՝ մեզ ի-  
րար հետ շողկապելու ու գործին կեանք  
տալու նպատակով: Համագումարը ծանօ-  
թացնում է զանազան անկիւններում գոր-  
ծողներին իրար հետ և միացնում ընդհա-  
նուր գործակցութեան համար: Համագու-  
մարի միջոցով մենք ճանաչեցինք ու  
հասկացանք իրար: Դա է համագումար-

ների և, իթիւս որոնց, մեր Համագումարի  
էական կոչումներից մէկը: Գործը նոր է  
ծնունդ առել և ներկայ Համագումարը ներ-  
կայացաւ իբրև նրա կնունքը, նրա առաւօտը:  
Հրաժեշտի ժամին դիմելով բոլորիդ, կարող  
եմ այն ասել, որ մենք, այս ներկայ եղող-  
ներս, մի բարի գործի սերմացանների պաշ-  
տօնումն ենք, որոնք ժողովուած խորհրդակ-  
ցում էին, թէ ինչպէս աւելի նպատաւայար-  
մար եղանակով կազմակերպեն այդ նոր գոր-  
ծը: Համագումարի շնորհիւ հնարաւորութիւն  
եղաւ համախմբուելու ու պարզաբանուելու:

Շնորհակալութիւն ամենիդ, որ դուք  
ձեր մասնակցութեամբ նպաստում էք սկը-  
սուած կուլտուրական գործունէութեան:  
Այժմ դիմում եմ ձեզ, մեր մերձաւոր գոր-  
ծակից վարպետներ-վարպետուհիներիդ ուղ-  
ղում եմ իմ խօսքը ձեզ, ձեզ, որ կրում էք  
ծանրութեան մեծագոյն մասը ձեր ուսերի  
վրայ, տանում էք կենցաղավարական զրկանք-  
ներ, ստանալով անբաւարար վարձատրու-  
թիւն, մտնում էք հեռաւոր, խուլ, անգրա-  
ւիչ անկիւնները. իրաւ է, ձեր դրութիւնը  
աննախանձելի է, գործում էք դժուար պայ-  
մաններում: Բայց ահա դուք տեսնում էք,  
որ այդ ձեր գործունէութիւնը արդիւնաւար  
է, օգտակար, կուլտուրական գործ է և նա  
ձեզ ոյժ է տալիս, ոգևորում ու թեթևա-  
ցնում ձեր դրութիւնը, որովհետև դուք յոյս  
ունէք, որ ժողովուրդը գոհ կը մնայ ձեր  
կատարած աշխատանքից: Համեստ, բայց  
զրական գործունէութեամբ հանդէս եկած

մեր Ընկերութիւնը կամաց կամաց ընդար-  
ձակեց իր ծրագիրը և նա կարող է դառնալ  
մի ոյժ, որ ժողովրդին կարող է մեծապէս  
օգտակար լինել: Կուլտուրական բարգաւա-  
ճումը խոշոր նպատակ է, անպիսի գործ:  
Մենք բոլորս կապուած գործակցութեամբ,  
փոխադարձ աջակցութեամբ կը թեթևա-  
ցնենք միմեանց գործը և կը մեղմացնենք  
անխուսափելի զրկանքների ճնշումը բարի  
նպատակի ոգևորիչ էութեամբ: Շնորհակա-  
լութիւն ձեզ ձեր գործի համար. թող ներկայ  
Համագումարն էլ մի նոր քաջալերութիւն  
աւելնէ ձեզ և մենք հեռանալով այստեղից,  
նուիրենք մեզ իրական գործի, որ շողկապէ  
մեզ ժողովրդի հետ: Ուժեղացնենք միահա-  
մուռ աջակցութեամբ գեղեցիկ կուլտուրա-  
կան գործը: Յտեսութիւն մինչ նոր Համա-  
գումարը»:

(Աղմկալի ծափահարութիւններ դահլի-  
ճում):

Յ. Գենջեան.—արդարև մեծ գործ է սա և դրա  
համար պարտական ենք, պ. Քալանթար, ձեր  
եռանդին: Մեզ ոգևորել է այդ գործի մե-  
ծութիւնը. թոյլ տուէք, ուրեմն, հեռաւոր,  
խոնաւ անկիւններում ապրողների կողմից  
շնորհակալութիւն յայտնելու ձեզ, որ ոգևո-  
րում էք մեզ: (Ծանփահարութիւն):

Մ. Ղազարեան.—Իբրև գաւառական գոր-  
ծիչ շնորհակալութիւն եմ յայտնում Տնայ-  
նագործական Ընկերութեան Վարչութեանը,  
որ յիշեց գիւղը և նրա ղեկավարներին յան-  
ձին ձեզ, պ. Քալանթար, ցանկալով, որ այստեղ

կայացրած որոշումները իրագործուեն և չը  
Ֆնան սոսկ բարեմաղթութիւններ:

Նախագահ Ալ. Քալանթար շնորհակալու-  
թիւն է յայտնում արտայայտած համակրա-  
կան զգացմունքների համար և թոյլտուութիւն  
է խնդրում Համագումարի անունից դի-  
մել ում հարկն է և ներկայացնել ընդունուած  
որոշումները:

Ժողովը լիագորութիւն է տալիս, յետոյ  
նախագահը յայտարարում է Համագումարի  
պարապմունքները վերջացած և Համագու-  
մարը պաշտօնապէս փակում է երեկոյեան  
ժամը 10-ին:



The first part of the paper is  
 a list of names of the  
 members of the  
 committee. The names are  
 arranged in alphabetical  
 order. The names are  
 as follows:



The second part of the paper is  
 a list of names of the  
 members of the  
 committee. The names are  
 arranged in alphabetical  
 order. The names are  
 as follows:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԿԱՆ ՏՆԱՅ-  
ՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հրատարակութիւնները

—

1. Կանոնադրութիւն Թիֆլիսի Հայ Տնայ-  
նագործական Ընկերութեան. Թիֆլիս  
1907.
2. Համառօտ ձեւորակ ջուրհակութեան,  
նկարներով. 1909. գինն է 20 կոպէկ.
3. Կանոնադրութիւն Թիֆլիսի Հայ Գիւ-  
ղանտեսական և Տնայնագործական  
Ընկերութեան. 1909.
4. Տնայնագործական Համագումար. Թիֆ-  
լիս 1909. գինն է 70 կոպէկ.



« Ազգային գրադարան



NL0193622

31 800

